



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material




7116

91(075)  
4-70

L-41







Printed in Turkey

91(075)

20

Q-70  
u6

ԱՌ ԶԵՌՆ

# ԱՂԻԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՆՈՐ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՄԵՄԱՏ

ՏՂԱՅՈՑ ՍՈՐՎԵԼՈՒ ԶԱՐՄԱՐՑՈՒԱԾ

ՈՒ

ՅԱՏ ՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ ԶԱՐԳԱՐՈՒԱԾ



ԳՈՍՏԱՆԳՆՈՐՊՕԼԵՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ե. ՅԱՐՈՒԹԻՒՆ Ե. ՄԻՆԱՍԵԱՆ

1861

5.102

Зр 160 - Ч. 5.

13066-82 ф-

(375  
39)

2004

2012





Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ամէն լուսաւորեալ ազգերու մէջ Աշխարհագրութիւնը կարեւոր ուսում մը ճանչցուած, եւ ինչպէս Եւրոպա՝ ասանկ ալ մեր ազգին մէջ բաւական ժամանակէ՛ի վեր դպրոցներու մէջ տղոց սորվելու նախակրթական ուսումներուն մէկն եղած է: Աշխարհագրութիւնը ուրիշ ուսումներու պէս շատ ընդարձակ է. եւ շատ հեղինակներ բազմահատոր Աշխարհագրութիւններ հրատարակած են. բայց որովհետեւ դպրատանց մէջ տղոց ընդունակութիւնն ու ուսման ընթացքին համար որոշուած ժամանակը չներեր որ ընդարձակ Աշխարհագրութիւններ տղոց դասադիրք ըլլան, սովորութիւն է որ Աշխարհագրութեան սկզբունքները եւ ամենէն կարեւոր գիտելիքները առնելով՝ դպրատանց համար յատուկ դասադիրքեր կը շինուին. որոնք թէ գրութեան եւ թէ համառօտութեան կողմանէ տղոց ընդունակութեան կը յարմարին, եւ տղաք քիչ ժամանակի մէջ Աշխարհագրութեան ուսման ամենէն հարկաւոր գիտելիքները կը սորվին:

→ Երբ ազգին մէջ ալ մինչեւ հիմա քանի մը հատ ասանկ համառօտ Աշխարհագրութիւններ հրատարակուած են: Եւ ինչպէս որ ամէն բան երթալով կատարեալ կ'ըլլայ, ասանկ ալ Աշխարհագրութեան համառօտ դասադիրքերը երթալով կատարեալ եղած են: Բայց եւ այնպէս փորձով տեսած ենք որ ✓ հիմա գտնուած Աշխարհագրութեան դասադիրքերը քանի մը կարեւոր բաներու մէջ բարեկարգուելու կարօտ են. ոմանք շատ համառօտ են, ոմանք ալ տեղ տեղ չափէն աւելի երկար, վերջապէս մէկին ունեցած առաւելութիւնը մէկալը չունի: Աս բաները տեսնալով հարկաւոր սեպեցինք ✓ նոր Աշխարհագրութեան դասադիրք մը շինել. եւ ասոր համար գլխաւոր Հայերէն Աշխարհագրութիւնները եւ քանի մը Եւրոպական լեզուներու մէջ գտնուած ընտիր դասադիրքեր ալ առնելով, աս մեր նոր Աշխարհագրութիւնը շինեցինք: Կ'երբ աս Աշխարհագրութեան ուրիշներէն ունեցած առաւելութեանը վրայ իօսիլ աւելորդ է. աս ուսման տեղեակ դասատուներ, եթէ ազէկ ու անկողմնաօրութեամբ քննելու ըլլան, մեր ըրած փոփոխութիւնները, ուրիշ-


ներուն վրայ աւելցուցածնիս, [կամ անոնցմէ պակսեցուցածնիս, բռնած ընթացքնիս, եւ կարելի եղածին չափ պարզ բացատրելու ջանքերնիս, յայտնի պիտի տեսնեն :

(Ամէն մէկ երկրին սկիզբը ան երկրին վրայ համառօտ պատմական տեղեկութիւն մը դրած ենք : Նոյնպէս քաղաքներու վրայ խօսած ատեննիս անոնց մէջ պատահած երեւելի դէպքերը ու անուանի մարդոց անունները համառօտիւ յիշած ենք : Անանկ որ տղաք պատմութեան մէջ սորվածնին հոս ալ պիտի յիշեն, քանզի Աշխարհագրութիւնը տղոց սովորաբար պատմութեան հետ կամ պատմութենէ ետքը դաս կը տրուի : Քարձեալ աս ուսմունքը տրոց բոլորովին ցամաք չերեւցընելու համար շատ տեղ երկիրներու, քաղաքներու, ընակիչներու եւ երեւելի դէպքերու պատկերներ ալ դրած ենք ) աս բանը [Թէպէտ մեզի տպագրութեան աւելի ծախքի պատճառ եղած է, բայց կը յուսանք [Թէ տղոց զուարճալի ըլլալով, անոնց փափաքն ու փոյթը աս ուսմունքը սորվելու պիտի աւելցընէ :

Քաղաքներու անուններուն առջեւ փակագիծներու մէջ նշանակուած [Թիւերը՝ ան քաղաքներուն ընակիչներուն [Թիւը կը ցուցընէ :


(Աշխարհագրութիւննիս կատարեալ ընելու համար, ինչպէս սովորութիւն է, քաղաքական մասին վրայ երկարօրէն խօսելէ ետքը, ընական եւ ուսումնական մասերն ալ կարելի եղածին չափ պարզ ու համառօտ կերպով աւելցուցած ենք :)

Կը յուսանք [Թէ մեր աս աշխատութիւնը մեր սիրելի Ազգին օգտակար եւ հաճելի պիտի ըլլայ :



ԱՌ՝ ՁԵՌՆ

ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ



Գ՝ ԱՆՈՒԽՆ

ՀԱՏՈՒԱԾ՝ Ա

Ընդհանուր գեղեցիկ

ԱՅԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆԸ երկրագունտիս ու անոր բնակիչներուն ստորագրութիւնն է :

Աշխարհագրութիւնը իրեք մաս կը բաժնուի . քաղաքական՝ Աստամական եւ Բնական :

Հողին իրեք խիստ մեծ բնական բաժանումները Յաճախ կ'ըսուին . որուն առաջինն է Ասիա՝ Եւրոպա ու Ափրիկէ . երկրորդը՝ Ամերիգա՝ ու երրորդը՝ Նոր Հողանտա կամ Աւստրալիա :

Ասոնցմէ պզտիկ որ եւ իցէ Հող՝ որուն չորս դին բոլորովին ջուրով պատած է, Կլշէ կ'ըսուի :

Երբոր ծովու մը մէջ շատ կղզիներ կան իրարու մօտ, բոլորը մէկէն Արշիպելագոս կամ Խոսի Կղզոց կ'ըսուի . ինչպէս Յունաստանի արշիպելագոսը, Անգլիեան արշիպելագոսը եւ այլն :

Թերակղզի կ'ըսուի Հողին ան բաժանումը, որուն բոլորաիքը ջուրը պատած ըլլալով՝ միայն մէկ կողմէն ցամաքի հետ փակած է . ինչպէս են Կորա՝ Յունաստանի մէջ, Խրիմ՝ Ռուսաստանի մէջ :

Պարանոց կ'ըսուի թերակղզի մը Հողին ան կտորը՝ որով ցամաքին հետ փակած է . ինչպէս Կորնթոսի պարանոցը՝ Յունաստանի մէջ, Բանամայի պարանոցը՝ Ամերիգայի մէջ եւ այլն :

Հողին գէպի ծովը մտած կտորը՝ Գլխի կ'ըսուի . ու երբոր բարձր կամ լեռնային է՝ Հրանոց կ'ըսուի :

Երկրիս վրայի շատ բարձր տեղուանքը Կր կ'ըսուին . ու թէ որ մէկ քանի լեռներ իրարու փակած ըլլան՝ լեռներու Գօրի կ'ը-

տուին . ինչպէս Ամերիգայի մէջ Քորտիլեան լեռները , Ասիայի մէջ Ուրալ ու Հիմալայա լեռները , Եւրոպայի մէջ Ալպեան ու Քէօլէն լեռները :



Լեռ

Հողին ան կտորը որ բարձրութիւն ունի՝ բայց լեռան մը չափ բարձր չէ , Բլաւր կ'ըսուի :

Հրաբուխ կ'ըսուին մուխ հանող ու երբեմն երբեմն ալ կրակ դուրս տուող լեռները :

Ծովային հրաբուխ կ'ըսուի ան հրաբուխին՝ որ ծովուն տակէն կը բռնկի , որով նոր նոր կղզիներ դուրս կ'ըլլեն . ինչպէս է Սանթուսերին կղզին քովի պղտի կղզին , որ 1707ին հրաբուխէն ելեր է :

Գլուր կ'ըսուին երկրիս շիտակ ու տափարակ տեղումքը . ինչպէս է Վարնոյ դաշտը եւ այլն :

Ան դաշտերն որ անբեր կամ աւաղուտ են՝ Անպոյ կ'ըսուին . ասոնց մէջ ամենէն մեծն է Սահարա անապատը՝ Աֆրիկէի մէջ :

Մեծամեծ անապատներուն մէջ տեղ տեղ ջրալից ու բարերեր երկիրներ կը գտնուին՝ որոնք Ուստի կ'ըսուին , ու երբեմն ալ Անպոյի կղզիներ :

Այլ կ'ըսուին երկրիս խորունկը կամ լեռներուն տակը եղած մեծամեծ ծակերը :

Ծով կամ Ուլթանո կ'ըսուի աշխարհիս մեծ մասը պատող աղի ջուրը : Սովորաբար Ուլթանո կ'ըսուին մեծամեծ ցամաքներուն դրսի կողմը եղած ընդարձակ ջուրերը , իսկ Ծով կ'ըսուին ներս մտած մեծամեծ կտորները :

Երբեմն ջուրի երկու ընթացք գիմացե գիմաց դալով՝ մեծ պտոյտ կ'ընեն . սա պտոյտը կ'ըսուի Յորնոն . ինչպէս Մալթրեմ Յորձանքը՝ Երկրեկիայի ծովեզերքին մտա :

Ծոց կ'ըսուի ծովուն ան կտորը՝ որ ցամաքին մէջը մտած է . ստոր խիտ մեծերը ծովալ կ'ըսուին . ինչպէս Արարիայի ծոցը՝ որ Կորֆոր ծով կ'ըսուի , Անեաիկի ծոցը՝ որ Արբիտոն ծով ալ կ'ըսուի :

Նառահանգիտ կ'ըսուի՝ երբոր պլատիկ է ու չորս կողմը երկիրով պատած , բայց մէկ կողմէն ջրանցքով մը կապակցուած իւն ունի ծովին կամ Ովկիանոսին հետ , ու խարիսխ ձգելու տեղ մըն է :

Նեղոց կ'ըսուի ծովուն ան նեղ կտորը՝ որով երկու ծով իրարու հետ կը միանան . ինչպէս Ճիպիլիէրայի նեղուցը , եւ Կոստանդնուպոլոյ նեղուցը :

Գեղ կ'ըսուի երկրէն վազող ջուրի մը հոսանքը , որուն սկիզբը լեռներէն կը սկսի ու ծովը կը թափուի :

Լէճ կ'ըսուի ջուրին ան տարածութիւնը՝ որուն չորս կողմը ցամաքով պատած է , եւ իր ջուրը գետէ մը կամ թէ ուղղակի հողէն կ'առնէ :

Աշխարհիս չորս կողմերը ասոնք են . Արեւելք , Արեւմուտք , Հիւսիս , Հարա :

Արեւելք կ'ըսուի արեւուն ելած կողմը . Արեւմուտք՝ արեւուն մտնելու կողմը . Հիւսիս կ'ըսուի երկրիս ան կողմը՝ որ երբոր երեսդ արեւելքին դին դարձնեն՝ ձախ ձեռքդ ան կողմը կ'իյնայ . ան ատեն աջ ձեռքդ ալ գէպ'ի Հարա կը նայի :

Աշխարհացոյցերուն վրայ՝ վերի կողմը հիւսիս , վարի կողմը հարա , աջ կողմը արեւելք ու ձախ կողմը արեւմուտք կ'ըլլայ :

Աշխարհացոյցերուն վրայ երկու տեսակ գիծ կայ . մէկը հիւսիսէն գէպ'ի հարա քաշուած՝ որ Միջբրտոն կամ Երկրային գիծեր կ'ըսուին , ու մէկալը արեւմուտքէն գէպ'ի արեւելք՝ որ Լայնագիծեր կ'ըսուին :

Հասարակած գիծը երկրագունտը երկու հաւասար կտորի կը բաժնէ :

Ամբողջ երկրին աշխարհացոյցին վրայ հինգ գօտի կայ . մէկը կ'ըսուի Արեւոյն գօտի , երկուքը Բարեխառն գօտիներ , ու երկուքն ալ Յրոտի գօտիներ :


Արեւոյն գօտին հասարակածէն երկու կողմը տարածուած է մինչեւ 23 ½ Լայնութեան աստիճան :

Բարեխառն ֆոթիները 23 1/2 աստիճանէն սկսելով՝ մինչեւ 43 աստիճան, ու մէկ կողմը դէպ'ի հիւսիս եւ միւս կողմը դէպ'ի հարաւ կը տարածուին:

Յրոպէն ֆոթիները 43 աստիճանէն սկսելով՝ մինչեւ երկրին բեւեռները կը հասնին որ 23 1/2 աստիճան է:

Հասարակածէն սկսելով մինչեւ բեւեռը 90 լայնութեան աստիճաններ կը համրուին:

Երկրագունտին բոլոր գիծերուն վրայով աւելի ընդարձակութեամբ պիտի խօսուի ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ մասին մէջը:



Հ Ա Տ Ո Ւ Ա Ց Ի

Աշխարհիս ու անոր բնակիչներուն ընդհանուր բախանութիւնը:

ՌՈՒՈՐ երկրագունտիս երեսէն ընդարձակութիւնը երկու հարիւր միլիոն քառակուսի մղոն կը սեպուի, որուն միայն մէկ քաւորդը հող է, ու մնացած իրէք քաւորդը ջուր:

Աշխարհիս բոլոր բնակիչներուն թիւը 1,010,000,000 կը համրուի:

Ասոնք հինգ ընդհանուր ցեղի կը բաժնուին. այսինքն՝

Վովկասեան կամ Եւրոպացի . . . . .	430,000,000
Մոնկոլեան կամ Ասիացի . . . . .	460,000,000
Ափրիկեցի կամ Սեւ մարդ . . . . .	70,000,000
Վայրենի Ամերիգացիք . . . . .	10,000,000
Մալայեան . . . . .	40,000,000
	<hr/>
	1,010,000,000

Վովկասեան ցեղը կը պարունակէ գրեթէ բոլոր Եւրոպացիները եւ անոնցմէ ելած բոլոր Ամերիգացիները. ինչպէս նաեւ Հայերը, Պարսիկները եւ այլն եւ այլն:

Մոնկոլեան ցեղը կը պարունակէ բոլոր Չինները, Ճափոնները, Թաիլանդները, Ռենկարացիները եւ այլն եւ այլն:

Ափրիկեցի ցեղը բոլոր Ափրիկէի բնիկները կը պարունակէ. Հապէշ ու Սահարա ըսուած անապատին հարաւային կողմէն՝ մինչեւ Բարի յուսոյ գլուխը. ու նաեւ Աւստրալիայի՝ Նոր Կուինլէյի ու Նոր Քալէտոնիայի բնակիչները:

Ամերիգացի ցեղը բոլոր Ամերիգայի բնիկները կը պարունակէ, Էսքիմոյ ըսուած ցեղէն 'ի զատ' որ Մոնկոլեան է :

Մալայեան ցեղը կը գտնուի Ովկիանիայի կղզիներուն մէջ :

Կովկասեան ցեղին գոյնը ճերմակ է , Մոնկոլեանինը դեղին , Ամերիգացիինը պղնձագոյն , Ափրիկեցիինը սեւ , ու Մալայեանինը թուխ՝ այսինքն մնւթ գոյն :

Մեր երկրագունտին բնակիչներուն կրօնքը չորսի կը բաժնուի . այսինքն՝

Քրիստոնեայ . . . . .	250,000,000
Մահմէտական . . . . .	100,000,000
Կուսպաշտ . . . . .	646,000,000
Հրէայ . . . . .	14,000,000
	<hr/>
	1,010,000,000

Եւ Քրիստոնեաները այսպէս կը բաժնուին ,

Հռոմէադասան . . . . .	110,000,000
Բողոքական . . . . .	84,000,000
Յոյն . . . . .	50,000,000
Հայ . . . . .	4,000,000
Ասորի եւ այլն եւ այլն . . . . .	2,000,000
	<hr/>
	250,000,000

Յայտնի է թէ վերի գրուած բոլոր աշխարհիս բնակիչներուն՝ ցեղերուն ու կրօնքներուն վերաբերեալ թիւերը չեն կրնար ճիշդ սեպուիլ . որովհետեւ շատ աղգեր՝ լուսաւորեալ աղգերուն ըրածին պէս , իրենց՝ մարդիկը համբելու սովորութիւն չունին :

Բոլոր աշխարհիս մէջը 860 տարբեր լեզուներ կան . բայց ասոնցմէ ելած ճիւղեր մինչեւ 5000 տեսակ լեզու կը համրուին :

Արմատ լեզուներէն կան

Ասիայի մէջ . . . . .	153
Եւրոպայի մէջ . . . . .	53
Ափրիկէի մէջ . . . . .	114
Ամերիգայի մէջ . . . . .	423
Ովկիանիայի մէջ . . . . .	117
	<hr/>

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

## Գ Լ Ո Ւ Խ Ի

## Ա Ս Ի Ա

### Սահման և մշտություն

ԱՍԻԱՅԻ սահմանը հիւսիսէն՝ Սառուցեալ ծովն է, արեւելքէն՝ Խաղաղական ովկիանոսը, հարաւէն՝ Հնդկաց ծովը, արեւմուտքէն՝ Ռւրալ լեռները, Կասպից ծովը, Կովկասու լեռները, Միջերկրական ծովը եւ Կարմիր ծովը:

Մեծութիւնը 15,552,000 քառակուսի մղոն է, ու 600,000,000 բնակիչ ունի: Աշխարհիս մէկալ մասերուն մէջ ամենէն մեծն է, ու հին ատենէ 'ի վեր ամենէն ալ անուանի. մարդկային ազգը աս մասին մէջ ստեղծուած ու ամէն կողմ՝ տարածուած է:

Ասիայի երկայնութիւնը՝ Պէհրինկայ նեղուցէն մինչեւ Պապիւլ մանտէպ, 6700 մղոնի չափ է, ու լայնութիւնը՝ Չինաստանի ծովեզերքէն մինչեւ Ռւրալ լեռները, 3800 մղոն:

Ասիան տասներկու գլխաւոր տէրութիւններ կը բաժնուի, մէկ քանի պղտիկ ու երկրորդական տէրութիւններէ զատ:

Գլխաւոր տէրութիւնները ասոնք են,

Հիւսիսայինը՝ Ասիոյ Ռուսաստանը:

Մէջտեղուանքը՝ Չին, Ճափոն, Թաթարստան, եւ Ասիոյ Տաճկաստան:

Հարաւայինները ասոնք են. Արարիա, Պարսկաստան, Աֆկանիստան, Պելուճիստան, Հնդկաստան, Պիրմա, Սիամ ու Անամ:

Ասիայի գլխաւոր ծովերը ասոնք են,

Սառուցեալ ովկիանոս, Սեւ ծով, Մարմարա ծով, Կասպից ծով, Քարայի ծով, Օխոթսից ծով, Ճափոնի ծով, Գեղին ծով, Չինու ծով, Կարմիր ծով, Միջերկրական ծով, Հնդկաց ծով եւ Խաղաղական ովկիանոս:



Միջերկրական ծովը Եւրոպայի ու Ափրիկէի մէջտեղն է, ու Սեւ ծովը Ասիայի ու Եւրոպայի մէջտեղը. ամենէն մեծ ծովը՝ որ ամբողջ Ասիայի մէջն է, Կասպից ծովն է, որուն երկայնութիւնը 750 մղոն է՝ ու լայնութիւնը 230 մղոն:

Ասիան ութը գլխաւոր նեղուց ունի.  
 Չանագ գայէսիի եւ Կոստանդնուպօլսոյ նեղուցը.  
 Պապիւլմանտէպ՝ Արաբիոյ ու Ափրիկէի մէջտեղը.  
 Հիւրմիւղի նեղուցը՝ Արաբիոյ ու Պարսկաստանի մէջտեղը.  
 Սինկափուրի նեղուցը՝ Հնդկաստանի հարաւային դին.  
 Մալաքքայի նեղուցը՝ Չինու հարաւային դին.  
 Քորէայի նեղուցը՝ Չինու ու Ճափոնի մէջտեղը.  
 Պէհլիսկայ նեղուցը՝ Ասիայի ու Ամերիգայի մէջտեղը:

Ասիայի մէջ եօթը մեծամեծ ծոցեր կան.  
 Պարսկային ծոցը.  
 Էօմէնի ու Պէնկալայի ծոցը.  
 Սիամի ու Թոնքինի ծոցը.  
 Օպի ծոցը, Լենայի ծոցը՝ Սառուցեալ ովկիանոսին մէջ.  
 Քամչաթքայի ծոցը, Անատիլի ծոցը՝ Պէհլիսկայ ծովուն մէջ:

Ասիայի գլխաւոր կղզիները ասոնք են,  
 Արշիպելագոսի կղզիները՝ Յունաստանի մօտ. ասոնցմէ զատ Հոս-  
 գոս եւ Կիպրոս՝ Միջերկրական ծովուն մէջ.  
 Պահլէյն կղզիները՝ Պարսկային ծոցին մէջ.  
 Մալաիկեան կղզիները, Լաքէտիլեան կղզիները, Սէյլան եւ Անտա-  
 ման կղզիները՝ Հնդկաց ծովուն մէջ.  
 Հայնան եւ Մաքաոյ՝ Չինաց ծովուն մէջ.  
 Ֆորմոզա կղզին, Ճափոնի կղզիները՝ Խաղաղական ովկիանոսին մէջ:

Ասիայի գլխաւոր հրուանդանները ասոնք են,  
 Պապա պուրնու՝ Տաճկաստանի արեւմտեան կողմը.  
 Պապիւլմանտէպ ու Ռատէլիաթ՝ Արաբիոյ հարաւային դին.  
 Քոմորին՝ Հնդկաստանի հարաւային դին.  
 Ռումանիա՝ Մալաքքայի հարաւային դին.  
 Քամպուտիա՝ Սիամի հարաւային դին.  
 Գլուխ Լոփաթքա՝ Քամչաթքայի հարաւային ծայրը.  
 Գլուխ արեւելեան՝ Սիպերիայի արեւելեան ծայրը.

Գլուխ հիւսիսային կամ Սեփերովոթոնայ՝ Սիպերիայի հիւսիսային ծայրը :

Ասիայի գլխաւոր լեռները ասոնք են ,  
 Փոքր Ալթայ՝ Սիպերիայի ու Չինաստանի տերութեան մէջտեղը .  
 Յունկլինկ՝ Թաթարստանի ու Չինաստանի մէջտեղը .  
 Հիմալայա եւ Պոլուր՝ Հնդկաստանի հիւսիսային կողմը .  
 Տորոս եւ Լիբանան՝ Տաճկաստանի մէջ .  
 Մասիս եւ Կորդուաց լեռները՝ Հայաստանի մէջ .  
 Էլվէնտ՝ Պարսկաստանի ու Տաճկաստանի մէջտեղը .  
 Էլբրէտ՝ Արարիոյ մէջ :



ՀՐԱՅՈՒԴԵՍ

Ասիայի հրաբուլդներուն շատը հիմա մարած են . իսկ վառ հրաբուլդներուն մեծ մասը քամալթարային՝ Գուրիլեան կղզիներուն ու Ճափոնի կղզիներուն մէջն են :

Պարսկաստանի մէջ Տէմալէնտ ըսուած լեռը՝ որ Կասպից ծովէն 70 մղոնի չափ հեռու է , վառ հրաբուլդն է : Հայաստանի մէջ Մասիս լեռն ալ 1840ին մոռնա ու կրակ դուրս տուաւ :

Ասիայի գլխաւոր լիճերը ասոնք են ,  
 Վանայ լիճը՝ որ ծով ալ կ'ըսուի , Ուրմիայի լիճը , Սեւանայ լիճը՝ Հայաստանի մէջ .

Չանի եւ Պայքալ՝ Սիպերիայի մէջ .

Սոդոմի լիճը՝ որ Մեռեալ ծով կ'ըսուի , Հրէաստանի մէջ .

Արալ լիճը՝ Թաթարստանի մէջ .

Պալքաշի , Սայսան , Խուխունուր , Փալթէ՝ Չինու մէջ :

Ասիայի գլխաւոր գետերն են՝

Օպ , Ենիսէյ , Լէնա , որ Սառուցեալ ծովը կը թափին .

Քուրալ՝ Կասպից ծովը .

Ամուր՝ Օխոթաբայ ծովը .

Հոանկոյ կամ Գեղին գետ , Եանկցէքիանկ՝ Չինու ծովը .

Գանգէս՝ Պէնկալայի ծոցը .

Ինդոս կամ Սինտ՝ Էոմէնի ծոցը .

Տիրարիս ու Եփրատ՝ Պարսկային ծոցը :

Ասիայի օդը ընդհանրապէս հիւսիսային կողմերը խիստ ցուրտ , մէջտեղուանքը բարեխառն ու առողջ , հարաւային կողմերն ալ տաք է :

Թէպէտեւ աս երկրին լեւներու գօտիները շատ ընդարձակ ու երբեմն խիստ բարձր են , բայց շատ ընդարձակ դաշտեր ալ կան . ու բոլոր ցամաքին միջին բարձրութիւնը Ովկիանոսին երեսէն չափելով՝ 1,150 ոտնաչափ միայն կը համրուի . ու Կասպից ծովուն հիւսիսային արեւելեան դին տեղ կայ՝ ուր որ ծովին երեսէն շատ ցած է :

Գլխաւոր բերքերն են ոսկի , արծաթ , երկաթ , փլաթին , պղ-ղինձ , անագ , եւ հանքային ներկ . մանաւանդ ադամանդ , եւ ուրիշ աղնիւ քարեր . բայց աս հանքերուն շատը երեսէ ձրգուած են :

Քոյսերը խիստ առատ ու պտղաբեր են . ասոնց մէջ երեւելիներն են խահուէ , չայ , շաքարի եղէգ , արմաւ , պանան , քոքոյ , կինամոն , պղպեղ , զանազան խէժ ու խնկեղէններ , բամպակ , մետաքս , ցորեն եւ ամէն տեսակ աղնիւ պտուղներ :

Վայրի կենդանիներուն մէջ գլխաւորներն են ճերմակ արջ , աղուէս , սամոյր եւ ուրիշ տեսակ տեսակ աղնիւ մորթ ունեցող կենդանիներ . այծեամն ( Գէյրան ), բէշկ մշկոյ ( Խոանդու ), փիղ , ունգեղջիւր ( Կէրկոան ), առիւծ , վաղբ ( Գէլէն ), ընձառիւծ , կապիկ , կսկորգիլոս , ուղտ եւ այլն :

Բնակիչներուն գլխաւոր ազգերն են Տաճիկ , Հայ , Ասորի , Պարսիկ , Հրէայ , Արաբացի , Հնդիկ , Չին ու Թաթար :

Չորս գլխաւոր կրօնք կայ Ասիոյ մէջ . Քրիստոնէութիւն , Մահ-մէտականութիւն , Հրէութիւն , Կռապաշտութիւն :

Քաղաքականութիւնը հին ատենը աւելի ծաղկած էր քան թէ հիմա . ուսմունքը եւ գիտութիւնները թէպէտ Ասիայէն ելած են՝ բայց հիմա գրեթէ բոլորովին դադրած են . արհեստներուն ալ շատը մոռցուած կամ իրենց անկատարութեանը մէջ մնացած . բայց վաճառականութիւնը շատ բանուկ է :

Ասիայի մէջ եղած տէրութիւններուն գրեթէ ամէնն ալ Միապետական կառավարութիւն ունին :



## ԱՍԻՈՅ ՌՈՒՍԱՍՏԱՆ

### Ընդհանուր գիտելիք

**ԱՍԻՈՅ** Ռուսաստանը գլխաւոր երկու մաս կը բաժնուի . Սիպերիա եւ Կովկասու երկիրներ : Սիպերիայի բնակիչները հին ատենը շատ անգամ Եւրոպան ու Ասիան կոխեր էին , բայց իրենց երկիրը ինչուան 1580 թուականը անծանօթ էր Եւրոպացւոց . ան ատենները Ռուսերը սկսան տիրել աս երկրիս , եւ իրենց տէրութեանը յանցաւոր սեպուածներէն շատը հոն քշելով՝ ան տեղուանքը շէնցուցին :

Կովկասու երկիրներուն մէկ մասը ատենով Պարսից ձեռքն էր , մէկալը Օսմանցւոց , մէկքանի տեղուանք ալ ինքնագլուխ էին . մօտ տարիներս՝ այսինքն տասնութներորդ դարին մէջ , Ռուսերը ասոնց ամենուն ալ տիրեցին :

Ասիոյ Ռուսաստանին սահմանը հիւսիսէն՝ Սառուցեալ ծովն է , արեւելքէն՝ Պէհրինկայ նեղուցը , հարաւէն՝ Տաճկաստան , Պարսկաստան , Թուրքաստան , եւ Չինաստան , արեւմուտքէն՝ Ուրալ լեռները :

Տարածութիւնն է 4,828,800 քառակուսի մղոն :

### 1 . ՍԻՊԵՐԻԱ

Սիպերիան ամբողջ Եւրոպայէն մեծ է , բայց բնակիչը խիստ քիչ՝ ու միայն 2,937,000 հոգի կը համրուի . օդը ցուրտ . երկրին մեծ մասը անապատ ու քիչ մշակած . ընթքը արծաթ , երկաթ , մագնիս , պղինձ , եւ ազնիւ քարեր , եւ մանաւանդ ազնիւ մերթեր :

Աս մեծ երկիրը 3,600 մղոնի չափ երկայնութիւն ունի , ու լայնութիւնը 1,800 մղոն է :

Մեծ ընդարձակ գաշտ մըն է, ու շատ գետեր ունի՝ որոնց շատը Սառուցեալ ծովը կը թափին :

Հողը բարեբեր է, ու շատ սաստիկ ցուրտ կայ : Մետաղներէն զատ ուրիշ բերք չկայ, ու գլխաւոր մետաղները արծաթ ու ոսկի են : Բնակիչներուն մեծ մասը Մոնկոլեան ու Թաթար են. բայց շատ ալ Եւրոպացի կան Ռուսի տէրութենէն հոն աքսորուած :



ՄՈՆԿՈԼԵԱՆ



ԹԱԹԱՐ

Գլխաւոր գետերը ասոնք են ,

Օպ՝ որ աշխարհիս մեծ գետերէն մէկն է, ու 2,400 մղոն երկայնութիւն ունի :

Ենիսէյ՝ 2,500 մղոն երկայնութեամբ :

Լենա՝ որ գրեթէ նոյն երկայնութիւնը ունի, եւ Օլէքմա՝ Ալտան ու Քոլիմա . բոլոր ասոնք Սառուցեալ ծովը կը թափին : Ասոնցմէ զատ կան Անատիր՝ որ Պէհրինկայ ծովը կը թափի, ու Ամուր գետը՝ որ Խաղաղական ովկիանոս կը թափի : Աս վերջինը Սիպերիայի ու Չինաստանի սահմանն է :

Գլխաւոր լիճերն են Պայքալ ու Պալքաշ :

Գլխաւոր քաղաքները ասոնք են ,

ԻՐԲՈՒԹՍԻ (27,000) Պայքալ լիճին քովը վաճառաշահ քաղաք է :

ԹՈՊՈՒՄՔ (20,000) ամուր քաղաք է, վաճառականութիւնն ալ ծաղկած:

ԵՆԻՍԷՅՍՔ (6,000) անուանի տօնավաճառ ունի:

ԵՆՔՈՒԹՍՔ (3,000) սամուրի վաճառք ունի:

ՆԵՐՉԻՆՍՔ. արծաթի ու կապարի հանք ունի:

ՔԱՀԹԱ. երկու քաղաք է դիմացէ դիմաց, մէկը Ռուսաց ձեռքը՝ մէկըլը Չինաց:

Անուանի են նաեւ Թոմք, Պառնաուլ, Օխոթսք, Քրասնոյեարսք, եւ Փեթրոփաւրովք՝ որ Գամշաթքայի գլխաւոր քաղաքն է:

## 2. ԿՈՎԿԱՍՈՒ ԵՐԿԻՐՆԵՐ

Աս երկիրը կովկասու լեռներուն հարաւային կողմն է, որն որ լեռնային ու խիտ բարեբեր է. օդը առողջ, բերքն ամէն տեսակ պտուղ ու արմուիք:

Բնակիչքը 2,648,000 հոգի, որոնք են Ռուս, Հայ, Վերք (Կիւրճի), Մնկրէլ, Ապաղա, Չէրքէզ, Լեզգի, Թաթար եւ այլն:

Կրօնքը Քրիստոնէութիւն, Մահմէտականութիւն եւ Կապաղատութիւն:



ԿՈՒՌՔ

Բոլոր երկրին տարածութիւնը 66,364 քառակուսի մղոն է:

Կը պարունակէ Վրաստան, Հայաստանին մէկ կողորը, Տաղստան եւ այլն. բոլորը մէկ կառավարիչի մը տակ է, որ կը նստի Տփլիս քաղաքը:

Գլխաւոր գետերն են,

Կուր՝ 520 մղոն երկայնութեամբ, ու Երասխ՝ 500 մղոն երկայնութեամբ, որոնք կը միանան ու Կասպից ծովը կը թափին:

Ռիոն՝ որ Սեւ ծովը կը թափի :

Սեւանայ լիճը՝ 47 մղոն երկայնութեամբ , Երեւանէն 7 կամ 8 ժամ հեռու է :

Կովկասու լեռներուն գօտին Սեւ ծովէն մինչեւ Կասպից ծովը կը տարածի՝ ասոնք շատ բարձր լեռներ են , որոնց ամենէն բարձր գագաթը Էլպրուս կ'ըսուի , ու 18,000 ոտնաչափ բարձրութիւն ունի :

Գլխաւոր քաղաքները ասոնք են ,

ՏՓԽԻՍ կամ ԹԻՖԼԻՉ (50,000) Վրաստանի վերջի մայրաքաղաքն էր . նոր շինուած մասը խիստ գեղեցիկ է . շատ հանքային ջուրեր ունի . վաճառականութիւնն ալ խիստ ծաղկած է :

ՄՅԻԷԹԱ (12,000) Վրաստանի հին մայրաքաղաքն է , մեծ մասը աւերակ . ասոր քովերը պաղլեղի ու երկաթի հանքեր կան :

ՇԱՄԱԽԻ (18,500) հին ու անուանի քաղաք է :

ՊԱՔՈՒ (8,000) Կասպից ծովուն բանուկ նաւահանգիստն է . ասոր քովերը նաւթի ջրհորներ ու տղմային հրաբուլխներ կան . կրակատուն մըն ալ կայ հին ատենէն մնացած , ուր ինչուան հիմա կրակապաշտներ կան :

ԳԱՆՁԱԿ կամ ԵԼԻՍԱՎԷԹՓՈԼ (12,000) հին ատենը Աղուանից թագաւորութեան մայրաքաղաքն էր , հիմա ինկած է . քովերը շատ աւերակներ կան :

ԱԽՅԻԱ (20,000) ամուր քաղաք . անուանի է Սուլդան Ահմէտի մզկիթը՝ Պօլոյ Այասֆիային ձեւովը շինուած :

ԽՈՒԹԱՅԻՍ (3,900) ատենով Իմերէթի թագաւորներուն մայրաքաղաքն էր , հիմա մեծ մասն աւերակ է :

ԿԻՒՐԻ կամ ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒՊՈԼԻՍ (12,000) Արփաչային վերայ նոր ու ամուր քաղաք է :

ԲԵՏՈՒԹԳԱԼԷ , ՍՈՒՈՒՄԳԱԼԷ , ԱՆԱՓԱ . Սեւ ծովուն վրայ բանուկ նաւահանգիստներ են :

Տաղտանին ուրիշ երեւելի տեղուանքն ասոնք են , Գարբանդ կամ Գուռն ճորայ , Մոզտոք , Ղլար , Թարբու , եւ Սթաւրոփոլ :

## Բ. ԱՍԻԱՅ ՏԱՃԿԱՍՏԱՆ

## Ընդհանուր գիտելիք

ԱՍԻԱՅ Տաճկաստանին մէջ առեւտրով պլուսպլու մեծ ազդեր կը տիրեն . ինչպէս Բարեւաքիք, Ասորեստանցիք, Հայերն ու Հռոմայեցիները : Եօթներորդ դարուն մէջ Արաբացիք զօրացան . 1,300ին ալ Օսմանցիք սկսան մեծնալ, ու կամաց կամաց Ասիայի բաւական մասին տիրեցին :

Ասիոյ Տաճկաստանին սահմանը հիւսիսէն՝ Սեւ ծովն ու Կովկասու երկիրներն են, արեւելքէն՝ Ասիոյ Ռուսաստանը՝ Պարսկաստանն ու Պարսից ծոցը, հարաւէն՝ Արաբիան, արեւմուտքէն՝ Միջերկրական ծովը՝ Արշիպեղազոսը՝ Մարմարա ծովն ու Առսիորի նեղուցը :

Տարածութիւնն է 437,000 քառակուսի մղոն :

Ասիոյ Տաճկաստանը եօթը գլխաւոր մաս կը բաժնուի . Փոքր Ասիա կամ Անատոլու, Հայաստանին մէկ կտորը, Քիւրտիստան, Միջագետք, Ասորիք, Իրագ Արապի եւ Կղզիները :

Օդը բարեխառն ու շատ առողջ է, անանկ որ ամէն տեսակ արմտիք ու պտուղ կը հասցունէ . բայց հոգը քիչ մշակուած է :

Երկրին բերքն է տեսակ տեսակ հանք, ազնիւ պտուղներ, մետաքս ու բամպակ, այծի մաղ, ներկելու նիւթեր, ափսոսն ու դորգեր :

Աղէկ շինուած ճամբաներ չկան, ու շատ տեղուանք ճամբորդները միշտ աւազակներէն կը վախնան :

Բնակիչը 16,500,000, Տաճիկ, Հռոմ, Հայ, Հրեայ, Ասորի, Քաղդէացի (Քիւրտէ) :

## 1. ՓՈՔՐ ԱՍԻԱ

Փոքր Ասիան լեռնային է, թէպէտեւ ընդարձակ ու շատ պլուզաբեր դաշտեր ալ ունի :

Իր սահմանը հիւսիսէն՝ Սեւ ծովն է, արեւելքէն՝ Հայաստանը եւ Քիւրտիստանը, հարաւէն՝ Միջերկրական ծովը, ու արեւմուտքէն՝ Յունաց արշիպեղազոսը ու Մարմարա ծովը :

Գլխաւոր գետերն են՝

Գրգըլ ըրմազ, Եէշիլ ըրմազ ու Սաքարիա՝ որ Սեւ ծովը կը թափին . եւ Պագրը չայ, Քուտուս չայ եւ Պէոյիւք չայ՝ որ Յունաց արշիպեղազոսը կը թափին :



Շատ պղտիկ լիճեր ունի, որոնցմէ Ինաւի՝ Հոյրանի ու Նիկիայի լիճերը անուանի են :

Տօրոս լեռներուն գօտին Եփրատ գետէն սկսելով մինչեւ Միջերկրական ծովը կը տարածի . ամենէն բարձր գագաթ ունեցող լեռներն են Արգէոս (Էրճիւս) լեռը՝ Կեօսարիայի մօտ 13,000 ոտնաչափ, Ազչայ լեռը Եփրատ գետին մօտ 10,000 ոտնաչափ, ու Ողիմպոս (Քէււէւ) լեռը՝ Պրուսայի մօտ 8,800 ոտնաչափ բարձրութեամբ :

Գլխաւոր քաղաքները ասոնք են .

ԿՈՒՏԻՆԱ կամ ՔԷՕԹԱՀԵԱ (50,000) գիրքը խիստ աղուոր է . քովերն ալ հանքային ջուրեր ունի :

ԳԱՐԱՀԻՍԱՐ (30,000) ասոր քովերէն շատ փիոն կ'ելլէ :

ՊՐՈՒՍԱ (100,000) Ողիմպոս լեռան տակը, ինչուան 1360ը Օսմանցւոց առաջին մայրաքաղաքն էր . շատ ջերմուկներ ունի, եւ մէկ քանի մեծագործ մզկիթներ . 1855ին երեւելի երկրաշարժէ մը քաղաքը մեծապէս վնասուեցաւ, ու շատ երեւելի հին շէնքեր հիմնալատակ եղան :

ՆԻԿՈՄԻԳԻԱ կամ ԻԶՄԻՏ (30,000) ատենով շատ անուանի քաղաք մըն էր, ու ատեն մը Հռոմայի կայսրը հոն կը նստէր :

ԶՄԻՒՌՆԻԱ կամ ԻԶՄԻՐ (130,000) Տաճկաստանի ամենէն վաճառաշահ քաղաքն է . Եւրոպացիք հոս շատ աղատութիւններ ունին : ՄԱԳՆԵՍԻԱ կամ ՄԱՆԻՍԱ (25,000) ասոր Բիւրճան ու սելսը շատ աղնիւ է :

ԱՅԱՍՈՒԼՈՒԳ . հին Եփեսոսի աւերակներուն քովը պղտի գեղ մըն է :

ԿԻՒԶԷԼ ՀԻՍԱՐ (30,000) բամպակն անուանի է :

ԻԿՈՆՍՏԱՆ կամ ԳՈՆԵԱ (30,000) ատենով Սելճուգեանց մայրաքաղաքն էր . հիմա ալ վաճառաշահ քաղաք է :

Իկոնիոսի քովերն անուանի են Տարէնտէ, Աղշէհիր, եւ Թուզլա՝ որ աղի լիճ ունի :

ԵՒԴՈԿԻԱ կամ ԹՈԳԱԹ (35,000) գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք է, պղնձեղէնն անուանի . ունի նաեւ բամպակէ ու մետաքսէ բանուածք եւ աղէկ կապերտ :

ՍԵԲԱՍՏԻԱ կամ ՍԵՂԱԶ (25,000) հին ու անուանի քաղաք է . քովերը պղինձի հանք կայ :

ԱՄԱՍԻԱ (25,000) վաճառաշահ քաղաք է . հոս ծնած է Ստրաբոն Յոյն աշխարհագիրը :

ԿԵՍԱՐԻԱ կամ ԳՆՅԱՆՐԻ (25,000) մեծ ու վաճառաշահ քաղաք է . քովերը հին շէնքերու աւերակներ կան :

ՏՐԱՊԻՉՈՒՆ (40,000) Սեւ ծովուն վրայ վաճառաշահ ու անուանի քաղաք է . 200 տարիի չափ Յունաց կայսրերուն մէկ ճիւղը հոս կը ազաւորէր՝ ինչուան Կոստանդնուպօլսոյ Օսմանցւոց ձեռքն իյնալը :

ԿԻՒՄԻՒՇԽԱՆԷ, կապարի, պղնձի ու արծաթի հանք ունի :

ՆՍԿԻՒՐԻԱ կամ ԷՆԿԻՒՐԻ (35,000) անուանի է ասոր լաւն ու «ֆլե եւ այծերուն բուրդը՝ որ երկայն ու մետաքսի պէս բարակ է . նոյնպէս երկայն մաղերով են աս տեղի կատուներն ու ճագարները :

ՏԱՐՍՈՒՆ կամ ԹԱՐՍՈՒՍ (10,000) Կիլիկիոյ ամենէն մեծ քաղաքն էր, եւ ատենով արհեստը, ուսմունքը եւ վաճառականութիւնը շատ ծաղկած :

ՍԻՍ . մեր Ռուբինեանց թագաւորութեան մայրաքաղաքն էր :

Փոքր Ասիոյ մէկալ երեւելի տեղերն են Իւսկիւտար, Սինապ, Պօլս, Մարսուան, Գասթէմունի, Փունար պաշը՝ որ հին Տրոյիոյ տեղը կը կարծուէ, Ատանա, Սաթալիա, Սելէւկիա կամ Սելէֆքէ, Փայաս, Մարաշ, Նիկոէ, եւ այլն :

## 2. ՔԻՒՐՏԻՍՏԱՆ

Քիւրտիստան ընդարձակ երկիր մըն է Տաճկաստանի ու Պարսկաստանի սահմանին վրայ . շատ լեռնային է, ու բնակիչներուն մեծ մասը քուրդ են, որոնք կրօնքով Մահմետական են ու մինչեւ 2,000,000 հոգի կը համրուին : Շատ ալ քրիստոնէաց կայ, Հայ, Ասորի եւ Նեստորական :

Քիւրտիստանին գլխաւոր տեղուանքն են Բաղէշ կամ Պիթլիզ, Ճէզիրէ, Ամատիա, Ճուլամերկ, եւ Գարաճոլան . ասոնց ամենուն մէջ մէյմէկ քուրդ իշխաններ կը աիբեն, որ գրեթէ ինքնագլուխ են : Աս երկրին մեծ մասը Հայաստանի մէջ էր :

## 3 ՄԻՋԱԳԵՏՏՔ կամ ԷԼՃԷՉԻԲԷ

Աս երկիրը Միջագետք կ'ըսուի, որովհետեւ Եփրատ ու Տիգրիս գետերուն մէջտեղն է :

Երեւելի քաղաքները ասոնք են .

ԵԳԵՍԻԱ կամ ՌԻՐՆԱ (30,000) Արգար թագաւորին նստած քաղաքն է, հիմա ալ ճարտար ու վաճառաշահ :

ՄԷՐՏԻՆ (20,000) լեռան վրայ շինուած մեծ ու ամուր քաղաք է :  
ՀՌՈՄՎԻԼՅԵ կամ ԲՈՒՄՂԱԼԸ . Ներսէս Շնորհալիին գերեզ-  
մանը հոս է :

ՄԾԲԻՆ կամ ՆԻՄԳԻՆ . հին քաղաք մըն է որ երեւելի հին  
շէնքեր ունի :

ՄՈՒՍՈՒԼ (40,000) Տիգրիս գետին վրայ վաճառաչա՛հ քաղաք  
է . անուանի են ասոր բամպակէ լաթերը : Հին Նինուէ քաղաքին  
տեղը ասոր մտ է :

ԱԼԲՈՂ . անուանի լեռ մըն է՝ քովերը շատ գեղերով . մտերն  
են Եզիտի բուած մարդիկը՝ որ կ'ըսուի թէ Սասանան կը պաշտեն :

ՄԱՏԷՆ . Օսմանցւոց տէրութեան ամենէն առատ պղինձի  
հանքն է :

4. ԱՍՈՐԻՔ

Աս երկիրը Տորոս լեռներու գոտիին հարաւային կողմը կ'իյնայ  
ու մինչեւ Արարիա կը տարածուի :

Ասոր սահմանը հիւսիսէն՝ Տորոս լեռներն է , արեւելքէն՝ մեծ ա-  
նպատը , հարաւէն՝ Արարիան , ու արեւմուտքէն՝ Մեջերկրական ծովը :

Գետերն են Եփրատ , Յորդանան , եւ Որոնթէս (Էւֆրատ) , ու  
լիճերը Տիբրեիոյի ծովն ու Մեաւայ ծովը :

375 ) 13066-18  
3739



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ԵՐԵՎԱՆ  
ՀՍՈՒ-ԱՐՄ.ՍՍՐ  
Մ. Ա. ՄՅԱՇՈՒԿՅԱՆ

Գլխաւոր քաղաքներն են՝

ԲԵՐԻՆ կամ ՀԱԼԷՊ (80,000) մեծ՝ բազմամարդ ու հարուստ քաղաքներէն մէկն է : Ութը բլուրներու վրայ շինուած է, ու հին պարիսպ ունի 40 ոտնաչափ բարձրութեամբ :

ՀԱՄԱ (44,000) վաճառաշահ ու բարերեր քաղաք է :

ԱՆՏԻՈՔ կամ ԱՆԹԱՔԻԱ (10,000) ատենով Սելեւկիացւոց մայրաքաղաքն էր, հիմն անուանի են ջերմուկները :

ՏՐԱՊՈՒՍ կամ ԴԱՐԱՊԱՌՈՍ (15,000) Ասորոց երկրին մէջ գեղեցիկ ու բանուկ քաղաք է :

ԱՔԵԱ (20,000) վաճառաշահ ու անուանի քաղաք է. մեծագործ է հասարակաց բաղնիքը : Ասոր մօտ է Կարմեղոս լեռը :

ԴԱՄԱՍԿՈՍ կամ ՇԱՄ (112,000) աշխարհիս ամենէն հին քաղաքներէն մէկն է, շատ գեղեցիկ՝ բարերեր՝ բաւական ճարտար ու վաճառաշահ :

ԵՄԵՍԱ կամ ՀԷՄԱ 20,000 ճարտար ու բարերեր՝ քաղաք է : Ասոր քովերն են Պարթրա քաղաքին աւերակները :

ՊԵՏՐՈՒԹ (25,000) շատ գեղեցիկ քաղաք մըն է ծովուն վրայ, ու Ասորեստանի զլխաւոր վաճառաշահ նաւահանդիստն է :

ԱՆԹԱՊ (35,000) Բերիայէն 22 ժամի չափ հեռու է :

Երեւելի են նաեւ Իգբէնտէրուն, Պապլոք՝ որ հին Հեղիսուպոլիս քաղաքին տեղն է. Լաւոդիկէ կամ Լաթաքեա, Սուր ու Սէյտա՝ որ Տիրոս ու Սիդոն քաղաքներուն տեղը պզտի գեղեր են :



ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՏՈՒՆ ԵՒ ԲՆԱՎԻԶ

Պաղէստինու կամ հին Հրէաստանին մէջ ալ զլխաւոր տեղուանքն ասոնք են .

ԵՐՈՒՍԱՂԷՄ (20,000) աշխարհիս ամենէն հռչակաւոր քաղաքը եւ ամէն քրիստոնէից խիստ սիրելի տեղն է. հիմն ընդունուին ինկած է առջի մեծութենէն:

Երուսաղէմի քովերն են բոլոր Քրիստոսի տնօրինական տեղերը, որ հին ատենը մշակի քաղաք կամ գեղ էին. բայց հիմա կամ գեղ դարձեր են, կամ անուանին միայն մնացեր է: Ինչպէս Բեթլէհէմ, Նապուսա կամ Սիւքէմ, Երիբով, Յոպպէ կամ Եաֆա, Գալիլ, Գազա, Կեսարիա Վաղեստինոյ, Սերաստիա՝ հին Սամարիային տեղը, Սաֆէտ, Նազարէթ, Կանա, Տիբերիա, Կափառնաոււմ, Բեթանիա, Թարոր լեռը, Չիթենեաց լեռը, եւ այլն:

### 5. ԻՐԱԳ ԱՐԱՊԻ

Ասիայ Միջագետին հարաւային ծայրը պղտիկ երկիր մըն է:



ԱՐՐԻՆՆԻ ԱՅՏԱՐԱԿԸ

Ասոր քաղաքներն են՝

ՊԱՂՏԱՏ (65,000) Տիգրիս գետին վրայ ամուր ու վաճառաշահ քաղաք է: Ասոր քովերն են հին ատենի հռչակաւոր քաղաքներուն աւերակները, ինչպէս Բաբելոն, Սելեւկիա, Տիզբոն:

ՊԱՍՐԱ (60,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է: Գովերն անուանի են նաեւ Հիլլէ, եւ Մէշէտ Հիւսէյին:

## 6. ԿՂՁԻՆԵՐ

ԿՐԵՏԷ կամ ԿԻՐԻՏ (158,000) Միջերկրական ծովին մէջ ամենէն մեծ կղզին է, ու 150 մղոն երկայնութիւն ու 35 մղոն լայնութիւն ունի: Գլխաւոր քաղաքն է Կրեւտէ, ու 12,000 բնակիչ ունի: Բերքը ձէթ, օժառ ու տեսակ տեսակ պտուղ է:

Բարձր լեռներու գօտի մը կայ, սրոնց ամենէն բարձր զաղաթ ունեցողը Իտա կըսուի, ու 7,674 տոնաչափ բարձրութիւն ունի:

ԿԻՊՐՈՍ կամ ԳԸՂՐԸՁ (100,000) Միջերկրական ծովին մեծ կղզիներէն մէկն է 148 մղոն երկայնութեամբ ու 40 մղոն լայնութեամբ. անուանի է գինին, բամպակը, եւ ուրիշ բերքերը: Մէջի գլխաւոր քաղաքն է Նիկոսիա կամ Լէֆքոշեա 18,000 բնակիչով:

ՀՈՌԿՈՍ կամ ՌԱՏՈՍ. Հին առենք շատ անուանի էր, բայց հիմա աւերակ ու անապատ է, 46 մղոն երկայնութիւն ունի ու 18 մղոն լայնութիւն:

ՄԱՐՄԱՐԱ. Մարմարայի ծովուն մէջ. ասոր մարմարիտն առատ է:

ԼԵՍՖՈՍ կամ ՄԻՏԻՎԼԻ. գլխաւոր քաղաքն է Մետիլինէ:

ՔԻՈՍ կամ ՍԱԿՐԸՁ. շատ գեղեցիկ ու պողաբեր տեղ մըն է:

ՍԱՐՈՍ կամ ՍՈՒՍԱՄ ԱՏԱՍԸ. շատ բարեբեր է:

## Գ. ՀԱՅԱՍՏԱՆ

Ընդհանուր գեոքեւէի+

ՀԱՅԱՍՏԱՆԻ վրայ պատշաճ է որ քիչ մը ընդարձակութեամբ խօսինք: Հայաստանի առաջին տիրողը Հայկ Նահապեան եղաւ, ու իր անունովը մեր ազգն ալ ՀԱՅ ըսուեցաւ, եւ իր ցեղին թագաւորութիւնը՝ որ Հայկապատնիս կըսուէր, 1779 տարի քչեց: Քրիստոսէ 149 տարի առաջ Արշակունիս ցեղին թագաւորութիւնը սկսաւ, որ 580 տարի քչեց. 885ին Բագրատունիս թագաւորութիւնը ելաւ, որ 1079ին վերջուեցաւ: Անկէց ետքը Հայաստանի մեծ մասը օտար տէրութեանց ձեռքն ինկաւ. միայն Կիլիկիոյ կողմը Ռոմէիական թագաւորութիւնը մնացեր էր, բայց 1375ին ան ալ վերջաւ, ու ազգը օտար ազգաց բռնութիւններէն ցիր ու ցան եւ

ղաւ : Իսկ Հիմա Հայաստանի մէկ մասը Օսմանցւոց ձեռքն է , մէկը Ռուսաց , մէկա՛ն ալ Պարսից :

Հայոց ազգը իր ցրուած վիճակին մէջ ալ միշտ անուանի եղած է վաճառականութեանը համար . անանկ որ շատ օտար երկիրներու մէջ իր վաճառականները կը գտնուին :

Ուսման կողմանէ ալ յառաջագիմութեան մէջ է մեր ազգը , որուն ստոյգ վկայ կրնայ սեպուիլ Հիմակուան վարժարաններու ու տպարաններու հետցհետէ շատնալը :

Հայաստանի սահմանը՝ հիւսիսէն՝ Չիլտրը ըսուած լեռներուն գօտին ու Վրաստանն է . արեւելքէն՝ Կասպից ծովն ու Պարսկաստանը . հարաւէն՝ Միջագետք . արեւմուտքէն՝ փոքր Ասիան :

Տարածութիւնն է՝ 430 միլոնի չափ երկայնութեամբ ու 300 լայնութեամբ , 150,000 քառակուսի միլոն :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ ու բարեբեր է :



ԳԻԻԳ.

Գլխաւոր գետերը ասոնք են .

Եփրատ ու Մուրաա՝ որոնց՝ գլուխը Հայաստանի մէջ է , ու ետքը կը միանան ու Միջագետքն անցնելով Պարսից ծոցը կը թափին . երկայնութիւնը 1780 միլոնի չափ է :

Երասխ ու Կուր՝ որ Կասպից ծովը կը թափին :  
Ճորոխ , Ալիս Եէշիլ ըրմագ՝ Սեւ ծովը :

Գլխաւոր լեռներն են՝ Մասիս կամ Արարատ՝ որուն բարձրու-  
թիւնը 16,000 ոտնաչափէն աւելի է : Բիւրակն կամ Պինկէօլ, Տօ-  
րոս , Կորգուաց լեռներն ու Գրգուռ լեռները :

Գլխաւոր լիճերն են՝ Վանայ լիճը կամ ծովը , որուն ջուրը ա-  
ղի է , 70 մղոն երկայնութեամբ , Սեւանայ լիճը , ու Չիլարը լիճը :

Բերքն է ամէն տեսակ հանք՝ որ երեսէ ձգուած են , եւ տեսակ  
տեսակ աղնիւ պտուղներ՝ ու արմտիք . անուանի են ձին ու գաղ-  
պէն՝ որ կ'ըսուի թէ մանանայի պէս ծառերուն վրայ կ'իջնայ :

Օդը բարեխառն ու առողջարար է :

Բնակիչը գրեթէ 5,000,000 , եւ ըստ ոմանց՝ շատ աւելի . որոնց  
մէկ մասն ալ Քուրդ , Թիւրքմէն ու Տաճիկ են :

Հիմա Հայաստանի մէջ միայն ապրուստի հարկաւոր արհեստնե-  
րը մնացած են . երկրագործութիւնը բաւական ծաղկած է :

Հին ատենը 15 նահանգ կը բաժնուէր . իսկ հիմա իրէք տիրող  
տէրութիւնները իրենց ուզածին պէս այլեւայլ գաւառներ բաժ-  
նած են :

## ԳԼԽԵՒՈՐ ՔԵՂԱՔՆԵՐԸ

### 1. ՕՍՄԱՆՅԻՈՅ ՄԱՍԻՆ ՄԷՋ

ԿԱՐԻՆ կամ ԷՐՋՐՈՒՄ (45,000) Ասիայի վաճառաշահ քա-  
ղաքներէն մէկն է . շատ հնութիւններ ալ ունի : Քաղաքը 1859ին  
երկրաշարժէ մը շատ փնասուեցաւ . ու կ'ըսուի թէ երրորդ մասը  
կործանեցաւ : Ասոր մտ է Բիւրակն կամ Պինկէօլ լեռը , ուսկից  
կը բղխի Եփրատ գետը . եւ ան տեղուանքին հողը ծաղկաւէտ ու  
բարեբեր է :

ՀԱՍՍԵՆ ՂԱԼԱ . ամուր քաղաք է Էրզրումէն 6 ժամ հեռու Ե-  
րասխ գետին ճիւղերուն մէկուն վրայ : Մօտերն է Չօղոն Բեօբե-  
լուած կամուրջը Երասխ գետին վրայ եօթը կամարով , եւ հին Վա-  
ղարշաւան քաղաքին աւերակները :

ԵՐՋՆԿԱ (20,000) Եփրատ գետին վրայ Էրզրումէն 25 ժամ  
հեռու անուանի քաղաք է :



ԽԱՐԲԵՐԻ (20,000) լեռան վրայ շինուած գեղեցիկ տեսարանով ամուր քաղաք է: Ասկէց օրուան մը ճամբով հեռու պղինձի ու արծաթի հանք կայ քէպան Մատէն ու Պագըր Մատէն անունով:

ՍԱՍՈՒՆ գաւառը լեռներու մէջ ինքնազուլու երկիր մըն է:

ԲԱՂԷՇ կամ ՊԻԹՂԻՁ (30,000) ոսկիի ու արծաթի հանք ունի: Ասոր քովն է Գրգուռ լեռը՝ որ Նիֆրոլիոյ վրա ալ կ'ըսուի, Ներքովիին հոն թաղուած ըլլալուն համար:

ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ կամ ՏԻՆՐՊԷՔԻՐ (45,000) լայն ու ամուր պարիսպ ունի 72 աշտարակով, եւ շատ հնութիւններ: Հոս բամպակէ ու մետաքսէ կտաւ կը շինուի:

ԱՐՃԷՇ (7,000) վանայ ծովուն մօտ:

ՄՈՒՇ (25,000) վաճառաշահ ու ամուր բերդով մեծ քաղաք է, Էրզրուէն 28 ժամ հեռու: Հոս հաստը կտաւ կը շինուի:

Մուշի քովերն է Ծակքար ըսուած տեղը, որ քարաժայռին մէջ ծակուած՝ կէս ժամուան ճամբայ է:

ՎԱՆ կամ ՇԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ (60,000) ասոր քովն է Շամիրամին շինած բերդը՝ որուն վրայ խիստ հին գրուածքներ կան: Աս քաղաքը՝ որ վանայ ծովուն արեւելեան կողմն է, մեծ եկեղեցիներ ու մզկիթներ ունի, ու առուտուրը բաւական ծաղկած է: Տեսակ մը կտաւ կը շինուի հոն բամպակէ որ Պարսկաստանէն կու գայ: Վանայ ծովուն մէջ չորս կղզի կայ, Աղթամար, Աւտէր, Կտուց Լիմ: Աղթամարայ մէջն է Գագիկ թագաւորին շինած փռաւոր եկեղեցին, ուր նաեւ Վաթողիկոս մը կը նստի:

ՄԱՏԵՆ. պղինձի հանք ունի:

ՊԱՅԱՋԻՏ (15,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է:

## 2. ՌՈՒՍԱՅ ՄԱՍԻՆ ՄԻՋ

ԵՐԵՒԱՆ (12,000) ամուր բերդ ունի, եւ շատ հնութիւններ: Երեւանի մօտ է Էջմիածնայ վանքը, ուր կը նստի Էջմիածնայ Կաթողիկոսը:

ՆԱԽՋՈՒԱՆ (30,000) պարսպապատ քաղաք է, մեծ մասն աւերակ, ու շատ հին քաղաք մըն է. ոմանք կ'ըսեն թէ Նոյէն շինուեցաւ:

ԱԽԱՆՏԻՒԷ (10,000) անուանի քաղաք է, թիֆլիսէն 34 ժամի չափ հեռու՝ արեւմտեան կողմը: Մետաքսի ու մեղրի առուտուրը շատ է:

**ՏԻՆՏԻՆ**, պղտի քաղաք մըն է, որուն քովն է Ծաղկեայ լեռը՝ ուր որ կրային ջուր մը կը բղխի որ ետքը կը քարանայ:

**ԹՈՓՐԱԳԳԱԼԷ**, հին վաղարշապատին աւերակներուն քովը ամուր բերդով քաղաք մըն է:

### 3. ՊԱՐՍԻՑ ՄԱՍԻՆ ՄԷՁ

**ԴԱՎԲԷԺ** կամ **ԹԵՊՐԻՁ** (60,000) Ասիայի ամենէն խաղկած ու վաճառաշահ քաղաքներէն մէկն է, Պարսկաստանի հիւսիսային կողմը գետի մը վրայ շինուած՝ որ Ուրմիայի լիճը կը թափի. անուանի է մետաքսը եւ կտաւը:

**ՈՒՐՄԱ** (25,000) Ջրադաշտին ծնած տեղն է, ու շատ պըղզաբեր ու գեղեցիկ դաշտի մը մէջ է, Ուրմիայի լիճէն 12 մղոն հեռու՝ արեւմտեան կողմը: Բնակիչները՝ Վահմէտական, Նեստորական, Հայ եւ Հրեայ են:

**ԱՐՏԱԻԼ**, հոս է Շահաէֆի ու Շահարաս Պարսից թագաւորներուն գերեզմանները: Եւրոպացոց կերպովը շինուած ամուր պարիսպ ունի:

**ԽՈՅ** (30,000) ամուր ու վաճառաշահ քաղաք ու գեղեցիկ տեղ մըն է:

**ՍԱԼՐԱՍ** (20,000) Ուրմիայի լիճէն 5 ժամ հեռու մեծ քաղաք է. մտերը հանքային ջուրեր կան:

**ՄԱՐԱՂԱ** (15,000) ասոր քովերը գետնափոր տեղուանք կան ժայռի մէջ փորուած, ու երկու հատ քարէ շինուած կամուրջներ տասնումէկերորդ դարէն մնացած:



## Ք. ԱՐԱՐԻԱ

## Ընդհանուր գիտելիք

ԱՐԱՐԻԱՅ մէջ հին ատենը այլևայլ բնակիչներ կային վրանարնակ . եօթներորդ դարուն մէջ Մէհէմէտ ասոնց մեծ մասը միացուց, անանկ որ զօրաւոր տէրութիւն մը ձեւացան ու քիչ ատենի մէջ իրենց երկրէն մինչև Սպանիոյ ծայրը տարածուեցան . բայց Օսմանցիք ասոնց տէրութիւնը բոլորովին վերցուցին : Հիմա Արարիոյ բնակիչներէն ոմանք Ֆելա՛հ կ'ըսուին՝ որ երկրագործութիւն կ'ընեն . ոմանք ալ Պերէլէ՛ որ վրանարնակ ու հոգիւ են :



ԱՐԱՐԻԱՅԻ ԿՅՈՒՄ

Արարիոյ սահմանը՝ հիւսիսէն Ատրիք է . արեւելքէն՝ Պարսից ծոցը . հարաւէն՝ Հնդկաց սիկիանոսը . արեւմուտքէն՝ Վարմիր՝ ծովը : Երկայնութիւնը 1,300 մղոն է, ու միջին լայնութիւնը 600 մղոն . ու 834,000 քառակուսի մղոն ունի :


Երկիրն ընդհանրապէս դաշտային ու աւազուտ է :

Օդը չոր ու խիստ տաք է, մանաւանդ հիւսիսային կողմը՝ ուր շատ խորշակ ալ կ'ըլլայ, ու անձրեւ խիստ քիչ կուգայ :

Հողն անբեր է . բայց Եէմէն գաւառը սաստիկ պտղաբեր ըլլալուն՝ Երէնի Աբսիւ կ'ըսուի :

Գլխաւոր բերքն է խնկեղէն, ձէթ, շաքարի եղեգ, բամբակ, ազնիւ խահուէ, արմաւ, թուզ, բալասան : Անդանիններէն ալ շատ

անուանի է ձին . ունի նաև ուղտ , ջայլամ , կապիկ : Կարմիր ծովուն մէջէն աղէկ բուստ (Բերճան) կ'ելէ , Պարսից ծոցէն ալ մարգարիտ :



ԱՐԱՐԻԱՅԻ ՈՒՂՏ

Ունի 12,000,000 բնակիչ՝ որոնք երկուքի կը բաժնուին , այսինքն վրանաբնկո ու քաղաքաբնակ :



ԱՐԱՐԱՅԻ

Կրօնքը Մահմէտական է :

Երկրին մեծ մասը Օսմանցւոց ձեռքն է . մէկալ տեղուանքը այլեւայլ Շէյխերու եւ Իմամներու ձեռքով կը կառավարուին :

Աս ընդարձակ երկիրը գրեթէ գետ չունի . կ'ըսեն թէ Օման գաւառին արեւելեան կողմը մէկ երկու փոքր գետեր կան . ուրիշ տեղ միայն ձմեռուան առուններ կան՝ որոնք ամառը չոր են :

Արարիայի լեռներ ըսուած լեռներու գօտի մը կայ՝ որ Կարմիր ծովուն արեւելեան եզերքին մօտ Պապիւլմանտէպէն մինչև Աքապա ծոցը կը տարածի , ու 5000էն մինչև 8000 ոսնաչափ բարձրութեամբ զագաթներ ունի : Սինա ու Քորեր լեռները՝ որ Սուրբ Կրօց մէջ անուանի են , Կարմիր ծովուն հիւսիսային կողմն են :



ՍԻՆԱ ՈՒ ՔՈՐԵՐ

Վլխաւոր քաղաքներն ասոնք են .

ՄԷՔԲԷ 25,000 Բէ՛հէմմէտին ծնած քաղաքն է . Տաճկաց ուխտաւորները հոս կու գան Քեապէն տեսնելու :

ՄԷՏԻԷՆ 18,000 . հոս մեռած է Բէ՛հէմմէտ , որ Բէքբէէն հոս քաջուեր էր 622ին , անոր համար հի՛մբէր ըսուած Տաճկաց թուականը ան տարիէն կը սկսի :

ՄԱՇԿԱԹ 60,000 Էօմէնի ծոցին վրայ Արարիոյ ամենէն վաճառաշահ քաղաքն է . ասոր քովերը կապարի հանք կայ :

ՄՈՔԱ 7,000 Կարմիր ծովուն վրայ բանուկ նաւահանդիսա է , ու Ե՛էմէնի խահուէն ասոր անունովը Մորայի խահուէ ալ կ'ըսուի :

ԱՏԷՆ 20,000 Հարաւային ծովեզերքը , որ 1839էն 'ի վեր

Անգղիացւոց ձեռքն է ու բաւական վաճառաւորս քաղաք մը եղաւ :  
ՍԱԼԵՆԱ (40,000) հարաւային կողմը երեւելի քաղաք է՝ որ շատ  
առուտաւոր ունի :

ՄԱՔԼԼԼԸ 5,000 հարաւային արեւելեան կողմը, որ շատ  
հաստատ շէնքեր ունի :

ԷԼ ԱՂԱ, ԷԼ ԽՈԹԻՓ, ՓՈԼՓ, ԵՆ ՔՈԼԵՅԻԹ ալ անուանի քա-  
ղաքներ են :

Արաբիոյ ներսի կողմը 60,000 Հրեայ կայ վրանարնակ՝ ՌԻԿԷՆՆՆԻ  
+ ԻԲԵՆ ԲՆՈՒՍԻ :



ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ԱՐԱՐՈՅԻՆԵՐ

## Ե. ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ընդհանուր գիտելիք

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ ատենով աշխարհին ամենէն մեծ թագաւորու-  
թիւններէն մէկն էր. եօթներորդ դարուն մէջ Արաբացիք առին  
ու իրենց հաւատարմ Պարսից սարկեցուցին : Քիչ ատենէն Պարսիկ-  
ները զօրանալով՝ իրենց երկրին մէկ մասը նորէն ձեռք ձգեցին :  
Իսկ 1747ին բոլոր երկիրը երկու տերութիւն բախուեցաւ, այսինքն

Իրան կամ բուն Պարսկաստան եւ Աֆղանիստան , որուն մէջն է Խորասան ու Պելուճիստան :

Պարսկաստանի սահմանը հիւսիսէն՝ Ասիոյ Ռուսաստանը, Կասպից ծովն ու Թուրքաստանն է . արեւելքէն՝ Աֆղանիստան, Խորասան ու Պելուճիստան . հարաւէն՝ Իսմէն ու Պարսից ծոցը . արեւմուտքէն՝ Ասիոյ Տաճկաստան :

Տարածութիւնն է 450,000 քառակուսի մղոն :

Երկիրը լեռնոտ ու բարեբեր է :

Օդը հիւսիսային կողմը բարեխառն է, հարաւային կողմը տաք : Գլխաւոր բերքերն են երկաթ, պղինձ, կապար, մարմարինն նաւթ, ցորեն, բրինձ, գինի, ազնիւ պտուղներ, կանեփ, մետաքս, բամպակ, բուրդ, ծխախոտ եւ մարգարիտ :

Բնակիչն է 9,000,000, մեծ մասը Պարսիկ , մնացածը Տաճիկ , Գուրդ, Թուրքմէն, Հրեայ, Հայ :

Կրօնքն է Մահմետականութիւն՝ Ալիին ազանդը :

Տէրութեան կառավարութիւնն է ազատ միապետական :



ՊԱՐՍԻԿ

Գլխաւոր գետերն են՝

Երասխ (տես՝ Կովկասու Երկիրներ երես 12), Սեֆիւ-ու-ուա, Գուրբան ու Եթրէք՝ որ Կասպից ծովը կը թափին . Քերաս՝ որ Եփրատ գետին երեւելի մէկ ճիւղն է, ու Բարուն՝ որ Պարսից ծոցը կը թափի :

Գլխաւոր լիճերն են՝

Ուրմիայի լիճը՝ հիւսիսային արեւմտեան կողմը, որ 70 մղոն երկայնութիւն ունի ու 32 մղոն լայնութիւն: Պախթէկեան լիճը՝ Պարսից ծոցին կողմերը, որ 60 մղոն երկայնութիւն ունի: Շատ մը սւրիշ պզտիկ լիճեր ալ կան ու ընդհանրապէս աղի են:

Գլխաւոր լեռներն ասոնք են .

Հիւսիսային կողմը երկայն լեռներու գօտի մը կայ որ Աֆղանիստանէն կու գայ ու մինչեւ Կասպից ծովը ու անկէց մինչեւ Մասիս լեռը կը հասնի: Աս գօտիին ամէն մէկ կտորը մէյմէկ անուն ունի, ինչպէս Խորասանի լեռներ, Էլպրուզ լեռ, Տէմալէնտ լեռ, Մասսուլա լեռներ եւ այլն եւ այլն: Տէմալէնտ լեռը 21,500 ոտնաչափ բարձր է:

Կան նաեւ Լարիսթանի լեռներու գօտին ու Ֆարսիսթանի գօտին արեւմտեան ու հարաւային կողմերը:



ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ

Գլխաւոր քաղաքներն են՝

ԳԻՀՐԱՆ (60,000) Պարսից շահը 1794էն 'ի վեր հոս կը նստի ամառուան օրը փրասակար է:

ԻՍՊՀԱՆ (150,000) Պարսից առաջին մայրաքաղաքը, արեւելքի



մեծ ու ազուօր քաղաքներէն մէկն է : Քոփս է 'Նօր Զուղան' որ հին Զուղայէն քուած Հայերուն ընակած տեղն է :

ՇԻՐԱԶ (40,000) ասոր գինին ու վարդի եղը նաեւ Քեփսիէն շատ ազնիւ է : Աս քաղաքիս մտա են Ստահր կամ Պերսեպոլիս քաղաքին աւերակները , որ հին առեկը Պարսկաստանի մայրաքաղաքն էր :

ՀԱՄԱՏԱՆ (35,000) Հին Եկրատան քաղաքին տեղը շինուած է . մերթի գործարաններ ունի :

Գ.Ա.ԶՊՆ (40,000) Պարսկաստանի մեծ քաղաքներուն մէկն է , արհեստները շատ ծաղկած են . ազնիւ գինի , պիստակ (ჭიჭიჭი), մս-տաքս ու կապերտ ունի :

ԵՁՏ 35,000 վաճառաշահ քաղաք է . հոս կրակապաշտ Պարսիկ-ներ կան :

ՊԵՏԵՆԻՐԱՊԱՍ 20,000 Պարսկային ճոցին վրայ բանուկ նաւա-հանգիստ է :



## Զ. ԱՓՂԱՆԻՍՏԱՆ

### Ընդհանուր գիտելիք

ԱՓՂԱՆՆԵՐԸ հին Ազուանք ազգն են , որ Թաթարները Հայաստանէն հոս քշեր ու Տաճիլը ցուցեր են : Ասոնք ատենով Պարսից տակն էին , բայց 1747ին ինքնազուխ տերութիւն ունեցան :

Աֆղանիստանի սահմանը հիւսիսէն՝ Թաթարիստանն է . արեւել-քէն՝ Հնդկաստանը . հարաւէն՝ Պելուճիստանը . արեւմուտքէն՝ Պարս-կաստանը :

Տարածութիւնն է 225,000 քառակուսի մղոն :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է , բայց արեւելեան կողմն ա-ւազուտ :

Հողը շատ բարեբեր է , ու օդն առողջ :

Բերքն է ամէն տեսակ ցորեն՝ պտուղ ու կենդանի . ունի նաեւ առիւծ , վագր , ընձուառիւծ , բորենի , գայլ ու արջ : Ոսկի . արծաթ , սնդիկ , երկաթ , կապար պղինձ եւ ուրիշ մետաղի հան-քեր կը գտնուին :

Բնակիչն է 500,000, Աֆղան, Պարսիկ, Հնդիկ :



ԱՓՂԱՆ

Կրօնքը Մահմեդական է :

Լեռներն են Հիւսիսային կողմը՝ Հինտուքուշ քառած գօտին որ Հիմալայայի գօտիին շարունակութիւնն է, ու անոր ամենէն բարձր գագաթները մինչեւ 20,000 ոտնաչափ բարձրութիւն ունին : Պարս-պամիսս լեռներ՝ արեւմտեան կողմը, ու Ամրան լեռներ՝ հարաւային կողմը :

Գլխաւոր զեւեբն են՝ քապուլ՝ որ Ինդոս գետը կը թափի, ու Հիլմէնա գետը՝ որ Չիււահ լիճը կը թափի :

Մէկ լիճ՝ մը կայ միայն Չիււահ լիճը՝ հարաւային կողմը, Սիս-թան գաւառին մէջ :

Գլխաւոր քաղաքներն են՝

ՔԵԼՊԻԼ կամ ՔԵՊՈՒԼ (60,000) գլխաւոր վաճառքն է աղէկ ձի, ցորեն ու պառուշ :

ԳՆՏՏԱՀԱԲ 60,000 ամուր բերդով՝ բազոր երկրին հին մայրաքաղաքն ու առոււտուրի տեղ է :

ՀԵՐԱԹ (40,000) Խորասանի ամենէն մեծ քաղաքն է՝ ու շատ ամուր բերդ ունի :

ԳԻՋՆԻ (10,000) անուանի բերդով քաղաք մըն է :

ՓԵՇԱՍԻԲ 40,000 շատ ինկամ է պատերազմի պատճառով՝ բայց անզը աղուոր է :

Է. ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆ

Ընդհանուր գիտելիք


ՊԵԼՈՒՃԻՍՏԱՆԸ հարէւր տարի առաջ Պարսկաստանի Թագաւորին հնազանդեցաւ, բայց ետքը ինքնազուխ եղաւ: 1839ին մայրաքաղաքը պատերազմով Անդղիացուոց ձեռքն անցաւ, որոնք բնիկ կառավարիչ մը նստեցուցին ու ետ քաշուեցան:

Ասոր սահմանը հիւսիսէն՝ Աֆղանիստանն է, արեւելքէն՝ Հընդկաստանը, հարաւէն՝ Պարսից ծոցը, ու արեւմուտքէն՝ Պարսկաստանը:

Տարածութիւնը 182,910 քառակուսի մղոն:

Երկիրը լեռնոտ է, բայց ընդարձակ աւազուտ անապատներ ալ ունի:

Հողը սոյնչափ բարեբեր չէ, բայց աշխատանքով տեսակ տեսակ ցորեններ կ'եղեն:



ՅՈՐԵՆ

Վայրենի կենդանիները շատ են, ինչպէս վագր, ընձառիւծ, բորենի, գայլ եւ այլն եւ այլն:

Բնակիչները 2,000,000 են, կրօնքնին Մահմետական:

Պլիսաւոր լեռները Պուշքուրա ու Առւսհուլթի լեռներն են հարաւային կողմը, ու Սարաուսանի լեռները հիւսիսային կողմը:

Երեւելի գետեր չունի . ամենէն մեծը Լեւան գետն է՝ որ Պար-  
սից ծոցը կը թափի :

Գլխաւոր քաղաքները .

ՔԵԼԱԹ (12,000) մայրաքաղաքն է ու ամուր բերդով տեղ մըն է :  
ԿՈՒՆՏԱՒԱ (17,000) կառավարիչը ձմեռը հոս կը նստի :  
Կան նաեւ՝ ՍԱՐԱԻԱՆ , ԲԷՃ , ՊԷԼԱ , եւ այլն :

## Բ. ԹՈՒՐ-ՔԱՍՏԱՆ

(Նորհանրութիւնք)

ԹՈՒՐ-ՔԱՍՏԱՆԻՆ մէջ ատենով պլընայլ ազատ ցեղեր կը  
տիրէին . ատոնցմէ ելան ատեն ատեն Օսմանցիք , Հոնք , Թաթար-  
ները եւ Լէնկթիմուրը՝ որ մէկգիշերէն ինչուան Չինու պարիսպը , մէ-  
կալ դիէն ինչուան Միջերկրական ծովը տիրեց : Հիմակուան բնա-  
կիչներն են Իւզպէք , Պուխարացի , Թիւրքմէն եւ Խըրղըզ :

Թուրքաստանի սահմանը հիւսիսէն՝ Ասիոյ Ռուսաստանն է . ա-  
րեւելքէն՝ Չինու երկիրը . հարաւէն՝ Պարսկաստանը ու Աֆղանիս-  
տանը . արեւմուտքէն՝ Կասպից ծովը :

Տարածութիւնն է 792,000 քառակուսի մղոն :

Թուրքաստան չորս գլխաւոր մաս կը բաժնուի . Խըրղըզ , Խիվա ,  
Պուխարա , Խոքանա . ու կառավարութիւնը չորս գլխաւոր ազատ  
Խաներու ձեռքն է :

Երկիրը Արեւելեան կողմը լեւնտա ու խիստ բարեբեր է , բայց  
քիչ մշակած . միւս կողմերը ընդհանրապէս դաշտային ու առազուա են ,  
շատ ալ աղի լիճեր ունի :

Օդը ամառուան ժամանակը շատ տաք է , ու ձմեռը խիստ  
ցուրտ :

Ասիայի ամենէն մեծ լիճը հոս է՝ ու Արալու լիճ կ'ըսուի . 300  
մղոնէն աւելի երկայնութիւն , ու 20,000 քառակուսի մղոն տարա-  
ծութիւն ունի : Ջուրերը քիչ մը աղի են եւ քիչ խորութիւն ունին :

Գլխաւոր գետերը՝ Օբսոս եւ Եաքսարթէս գետերն են , որ Արա  
լու լիճը կը թափին :

Գլխավոր քաղաքներն ասոնք են .

ՊՈՒԽԱՐԱ (130,000) Հին ու վաճառաշահ, Թուրքաստանին տաննէն ծաղկած քաղաքն է, շատ դպրոցներ ունի Մահմեդականներուն համար :

ՍՄԸՐՂԱՆՏ (25,000) վաճառաշահ քաղաք է ու ամուր բերդ ունի : Լէնկթիմուրը իր աթոռը հոս դրեր էր, եւ ինչուան հիմա հոս անոր գերեզմանը կայ յասպիս քարէ :

ՔԱՐԱՔՈՒԼ (30,000) Պուխարայէն 19 ժամ հեռու :

ՔՈՒՐՇԻ (10,000) մեծ պարտէզներ ունի :

ԽՈՎԱ (10,000) ասիկայ գերիներու վաճառք ունի :

ԽՈՔԱՆՏ (50,000) վաճառաշահ ու արհեստները ծաղկած քաղաք է :

ԲԱՀԼ կամ ՊԱԼԽ . Հին ատենը Բակտրիոյ թագաւորութեան մայրաքաղաքն էր, ուստի Ասիայի ամենէն հին քաղաքներէն մէկն է . հիմա գիւղաքաղաք մըն է ու միայն 2000 բնակիչ ունի :

## Թ. ՀՆԴԿԱՍՏԱՆ

### Ընդհանուր գիտելիք

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ մէջ հին ատենը այլեւայլ ինքնագլուխ տէրութիւններ կային : 1100ին ատենները Աֆղանները տիրեցին հիւսիսային կողմերուն, ետքը Լէնկթիմուրը . ասոր թոռներէն մէկը 1526ին Մողոլի տէրութիւնը հաստատեց հոն . բայց 1739ին Պարսից Նատրը շահը գնաց մէկ մասին տիրեց : Անկէջ ետքը երբոր Մողոլներն ու Մահմեդները իրարու դէմ կռուութիւն հետ էին, Եւրոպացիք սկսան տեղ տեղ ոտքերնին հաստատել : Իսկ 18երորդ դարուն վերջերը Անգղիացի վաճառականները սկսան Հնդկաստանին կայկաթա ու Մատրաս քաղաքներուն տիրել . 1803ին Մողոլի տէրութիւնը ջնջեցին, Մահմեդները նուաճեցին . 1812ին ալ գրեթէ բոլոր արեւելեան Հնդկաստանի տիրեցին . ու Հնդկաստանի ընկերութիւնն աւանով ընկերութիւն մը կազմելով Անգղիոյ թագաւորին տակը մինչեւ 1857ը կը կառավարէին, որ ասեն Հնդկաստանցիք ապստամբելով ոտք ելան ու բոլոր Եւրոպացիները ջարդեցին : Անգղիայի տէրութիւնը աս բանին ձեռք դնելով ահագին պատերազմներէ ե-

տեւ ասոնք նուաճեց՝ ու իր ասին առաւ, ու հիմա գրեթէ բոլոր երկիրը Անգղիացւոց ձեռքն է :

Հնդկաստանի սահմանը հիւսիսէն՝ Հիմալայայի լեռներն է. արեւելքէն՝ Պիրմա ու Պենկալայի ծոցը. հարաւէն՝ Հնդկաց օվկիանոսը. արեւմուտքէն՝ նոյն Ովկիանոսը, Պելուճիստանն ու Աֆղանիստանը : Տարածութիւնն է գրեթէ 1,280,000 քառակուսի մղոն :

Հնդկաստան չորս գլխաւոր մաս կը բաժնուի. Անգղիական Հնդկաստան, Անգղիացւոց հարկատու երկիրները, ինքնազուլու տէրութիւնները, ու Եւրոպայի այլեւայլ ազգաց տեղումնք :

Հոյն ընդհանրապէս խիստ բարեբեր է :

Օգը չոր ու սաք. ձիւն գրեթէ ոչ երբեք կու գայ, անձրեւներն ալ կանոնաւոր ժամանակ ունին, որ ամիսներով կու գան :

Գլխաւոր բերքերն են առատ ոսկի ու ազամանդ՝ կոլքոնտ գաւառին մէջն ու ուրիշ տեղերը : Սէյլան կղզիին քովերէն ազնիւ մարգարիտ կ'ելլէ. Մալաիզիան կղզիներուն քովերէն ալ տեսակ մը ոսորէ կ'ելլէ որ Հնդկաստանցիք ստակի տեղ կը բանեցունեն : Բոյսերուն մէջ գլխաւորներն են բրինձ, պանան, շաքար, ինկեղէն, ափսն, ազնիւ բամպակ ու մետաքս, արմաւ, պամպու բուռած եղէգը, թուղ եւ ազնիւ փայտ : Կենդանիներէն ալ՝ շաա կը գրանուին ուղտ, վայրի այծ, փիղ, սընդեղ ջիւր, վազր, առիւծ, պօսօձ, կապիկ, սիրամարդ եւ դրախտահաւ :

Բնակիչն է 160,000,000, մեծ մասը Հնդիկ, մնացածը՝ Պարսիկ, Հրեայ, Հայ ու Եւրոպացի ազգեր :



Յիսուսնէն աւելի լեզուներ կան Հնդկաստանի մէջ, բայց գլխաւորը Հնդկերէն է, որուն զբաւառը Սանսքրիթ կ'ըսուի :

Արհեստներն ու ձեռագործները շատ ծաղկած են :

Կրօնքը կուսապաշտութիւն է՝ Պրահմայի աղանդը . հոգեփոխութեան կը հաւատան, անոր համար կենդանեաց պատիւ կ'ընեն, ու անոնց միսը չեն ուտեր . մասնաւոր կերպով կով կը պաշտեն իրենց



ԿՈՎ ՈՒ ԱՐԵՆ ԳԱՅՏՈՂՆԵՐ

Փախոք ըսուած կուսապաշտներուն մէջ, Կ'ընդունին թէ Պրահմա՝ Վիշնու եւ Սիվա գլխաւոր շատուածներն են . բայց ասոնցմէ զատ խիստ շատ ուրիշ երկրորդական շատուածներ ալ կը պաշտեն, ուրոնց թիւը Պրահմայեանները մինչեւ 333,000,000 կը համրեն : Շատ Մահմէտականներ ալ կը գտնուին :

Անգղիայէն 1793ին աս երկիրը Աւետարանի քարոզիչներ եւրկուեցան, ու ան ժամանակէն 'ի վեր Անգղիայի ու Ամերիգայի ընկերութիւնները շատ աշխատեցան Հնդիկները լուսաւորելու . շատ դպրոցներ բացուեցան, ու եկեղեցիներ հաստատուեցան .



ՀՆԴԿԱՍՏԱՆԵՑԻՈՅ ՈՐՈՇԱԿԱՐԻ ԿՆԿ ԵՐԵԼԸ

ու գործը մեծ յաջողութեան մէջ է : Հիմա հոն 400 հաս աւելատարանական քարոզիչ կայ :

Գլխաւոր լեռներն են Հիմալայա ըսուած բարձր գօտիները , որոնց վրայ Տալալակիբի լեռը աշխարհիս ամենէն բարձր լեռն է , ու մինչեւ 28,000 ոտնաչափ բարձրութիւն ունի : Կաթ լեռները՝ որ ինչուան Քամորին կ'երթան , եւ Մոկ լեռները՝ որ ինչուան Մալաքքայի ծայրը կը հասնին :

Գլխաւոր գետերն են Ինգոս՝ 1650 մղոն , Գանգէս՝ 1960 մղոն երկայնութեամբ , եւ Պրահմափութրա : Առաջինը՝ Հնդկաց ովկիանոսը , ու միւս երկուքը՝ Պենկալայի ճոցը կը թափին :

Լիճերը քիչ ու պզտիկ են . ամենէն մեծը Ջիլքա եւ Քօլայր լիճերն են , արեւելեան ծովեզերքին մօտ :

### 1. ԱՆԳՂԻԱԿԱՆ ՀՆԴԿԱՍՏԱՆ

ԿԱԼԿԱԹԱ (500,000) Հնդկաստանի ամենէն ծաղկած քաղաքն է՝ թէ գիտութեան եւ թէ արհեստից կողմանէ : Անգղիական Հնդկաստանի ընդհանուր կառավարիչը հոս կը նստի : Հայոց ազգէն ալ չափաւոր բազմութիւն կայ ու եկեղեցի մը ունին :

ՏԷԼՀԻ (250,000) Մոնկոլի թագաւորութեան մայրաքաղաքն էր : Ճիւմնա գետին եզերքը վաճառաշահ քաղաք մըն է , թէպէտեւ իր առջի մեծութենէն շատ ինկած է :

ԱԿՐԱ (100,000) ատենոյ վարդարուն քաղաք էր , բայց հիմա երեսէ ձգուած է : Հին շէնք մը ունի որ թագուհիներուն մէկուն գերեզմանատունն է , եւ բոլոր աշխարհիս մէջ անանկ գեղեցիկ շէնք մը չկայ կ'ըսեն :

ՊԷՆԱՐԻՍ (600,000) Գանգէս գետին եզերքը շինուած՝ Հընդկաստանցւոց ուսումնարանն ու մեծ ուխտատեղին է : Ադամանդներու վաճառականութիւնը շատ է :

ՏԱՔԲԱ (200,000) Գանգէսին եզերքը ծաղկած քաղաք է :

ՔԱԹՐԱՔ (40,000) աս քաղաքի մօտ է Ճակըռնաթ կուսքին մեծ կուտունը :

ՔԱԼԻՔՈԹ (24,000) Եւրոպացիք Հնդկաստանի մէջ առաջ աս քաղաքս ունեցան :

ՄԱՏՐԱՍ (720,000) Պենկալայի ճոցին վրայ շատ վաճառաշահ քաղաք է . բամբակի ու ապակիի գործարաններ ունի : Մեր ազգէն ալ հոս երեւելի վաճառականներ ու ժողովուրդ կայ , ինչպէս նաեւ Հնդկաստանի ուրիշ քաղաքները :



ՍԷՐԻՆԿԱՓԱԹԱՆ (10,000) ատենով Հնդկաստանցւոց մեծ ցեղի մը մայրաքաղաքն էր :


ՊՈՄՊԱՅ (500,000) Անգղիացւոց վաճառականութեանը գլխաւոր քաղաքն է պղտիկ կղզիի մը մէջ . հոս կրակապաշտ Պարսիկներ կան՝ որ մեծ կրակատուն ալ ունին :

ԱՃՄԻՐ . ամուր քաղաք է . բնակիչները երկրագործութենէ զատ ուրիշ արհեստ չեն դիտեր :

ԿԱՄՊԱՅԱ (10,000) վաճառաշահ քաղաք է , բայց նաւահանգիստը շատ վտանգաւոր :

ԱՀՄԷՏԱՊԱՅ (100,000) ատենով ծաղկած էր , հիմա կէսը աւերակ է :

ՍՈՒՐԱԹ (160,000) ամուր քաղաք է , եւ բանուկ նաւահանգիստ ունի . հոս ալ կրակապաշտ Պարսիկներ կան :



ՀՆԴԿԱՍՏԱՆՅԻ ՄԸ ԿՈՒՌՔԻ ԱՌՔԵՒ ԽՈՒՆԿ ԺԽԵԼԸ

ՓՈՒՆԱ (150,000) Հնդկաստանցւոց թագաւորութեան ետքի մայրաքաղաքն էր :

ԹՐԱՆՔԷՊԱՐ (15,000 Տանիմարբացւոց ձեռքն էր , բայց 1846ին ստակով Անգղիացւոց ձեռքը անցաւ : Բամպակի դործարաններ ունի :

ԼԱՀՈՐ (110,000) ատենով շատ անուանի էր . ասոր ոչխարներուն բուրդը բարակ ու ազնիւ է . 1849ին Անգղիացւոց ձեռքը անցաւ :

ԱՄՐԵՑԻՐ (115,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է :

ՄՈՒԼԹԱՆ (80,000) արհեստից կողմանէ ծաղկած է . անուանի է Մահմետական ուսումնարանը :

ԼՈՒՔՆՈՎ (300,000) Ուտէ ըսուած գաւառին գլխաւոր քաղաքն է Կումիթի դեաին եզերքը : Անգղիայի կառավարութեանը դէմ մօտ ժամանակներս ելած ազատամբութեան կեդրոնը հոս էր :

ՍԻՅԱՆ կղզին ալ Անգղիացւոց ձեռքն է . երկայնութիւնը 270 մղոնի չափ է՝ ու լայնութիւնը 660 մղոնի չափ . ու տարածութիւնը 24,664 քառակուսի մղոն է : Գլխաւոր քաղաքներն են՝ Քոլումպոյ , Թրինքոմալի , Քանաի , Ճաֆնա եւ այլն . ու բոլոր կղզիին մէջը 1,507,000 բնակիչ կայ :

## 2. ԱՆԳՂԻԱՅԻՈՑ ՀԱՐԿԱՏՈՒ ԵՐԿԻՐՆԵՐ

ՀԱՏՏԷՐԱՊԱՏ (200,000) մեծ ու անուանի քաղաք է : Հոս բնիկ իշխանին տակը կնիկմարդիկ ալ զինուոր կը գրուին :

ԱՐԻԷՆԿԱՊԱՏ (60,000) մեծ քաղաք է , բայց կէս աւերակ :

ՆԱՂՓՈՒՐ (115,000) Կասոնք ալ մէյմէկ թագաւորութիւններու մայրաքաղաքներ են :

ՊԱՐՈՏԱ (100,000)

## 3. ԱԶԱՏ ՀՆԴԿԱՅ ԵՐԿԻՐՆԵՐ

ՔԱԹՄԱՆՏՈՒ (20,000) Նեփալի թագաւորութեան մայրաքաղաքն է . մէջը շատ կռատուններ կան :



ԿՈՒՊԱՑՑԻՆ ԻՐ ԶԱՆԱԿԸ ԿՈՒՎՈՐԳԻԼՈՍԻՆ ՏԱԼԸ

ՔԱՇՄԻՐ (40,000) Փռնճապ գաւառին մէջը , խիտ անուանի է ազնիւ շաւրուն համար :

ՄԱՆՏԻՎԵԱՆ կղզիները, որ հազարաւոր մանր ժայռերէ ձեւա-  
ցած են, եւ ասոնց մէջ 40 կամ 50 մը կայ որ աւելի մեծ են, բա-  
րեքեր ու բազմամարդ. մէկ թագաւոր մը ունին որ Մալէ կըղ-  
զին կը նստի: Կ'ըսուի թէ բոլոր կղզիներուն մէջը 150,000 կամ  
200,000 բնակիչ կայ:

4. ԵՒՐՈՊԱՅԻ ԱՅԼԵՒԱՅԼ ԱԶԳԵՐՈՒՆ ՏԵՂՈՒԱՆՔԸ

ՓՈՆԹԻՇԻՐԻ (40,000) } Գաղղիացւոց ձեռքը՝ երկուքն ալ  
ՉԱՆՏԻՐՆԱԿՈՐ (36,000) } վաճառաշահ քաղաքներ են:  
ԿՕԱ (4,000) Փորթուգէզներուն ձեռքը ամուր քաղաք է, եւ  
սպահանջ ու բանուկ նաւահանգիստ ունի:

ԳԱՆԳԻՍԷՆ ԱՆԳԻՆ

Գանգէսէն անդին եղած երկիրը հինգ մաս կը բաժնուի. Պիր-  
ման, Սիամ, Մալաքքա, Աննամ եւ Կղզիները: Աս թագաւորու-  
թիւնները գրեթէ ամէնն ալ ազատ միապետական են ու կու-  
սալա: Թէպէտ վերջին ատեններս Ամերիկացի քարոզիչներուն  
աշխատանքովը Քրիստոնէութիւնը բաւական մտած է՝ մանաւանդ  
Պիրմանի մէջ:

1. ՊԻՐՄԱՆ

Պիրմանի տէրութիւնը Փէկուիցիներէն յաղթուեցաւ անցած  
դարին մէջը, ու հիմակուան թագաւորը ասոնց ցեղէն է: Բնակիչ-



ՀՆԳՎԱՄՏԱՆԻ ՓԻՂ

ները շատ պատիւ կ'ընեն ճերմակ փիղի մը, որ թագաւորին պալա-

տին քովը մեծ պարտա մը ունի . կ'ըսեն թէ իրենց թագաւորին հազին ան փիղին փորը պիտի մտնէ : Մէկ քանի տարի առաջ պատերազմ ունէին Անգղիացւոց հետ , ու իրենց ծովեզերքին բոլորը մէկ քանի երեւելի քաղաքներով Անգղիացւոց ձեռքը անցաւ ու անանկ մնաց :

Պիրմանի սահմանը հիւսիսէն՝ Թիպէթն է , արեւելքէն՝ Չինաստան ու Սիամ՝ , հարաւէն ու արեւմուտքէն՝ Անգղիացւոց երկիրները :

Գլխաւոր գետը Իրաւատտի կ'ըսուի , ու Հիմալայա լեռներէն ելլելով Մարթապանի ծոցը կը թափի : Սիթանկ ու Սալուէն գետերն ալ անուանի են :

Նանտօքանտօ եւ Կնանկուու երեւելի լիճեր են :

Ամուփէթումու լեռները , հիւսիսային արեւմտեան կողմը՝ Հիմալայային գօտիին մէկ մասն են , ու 12,400 սանաչափ բարձրութիւն ունին :

Գլխաւոր քաղաքները

ՄՕՔՍՕՊՕ (14,000) հիմակուան մայրաքաղաքն է , ու Նանտօքանտօ լիճին արեւմտեան եզերքն է :

ԱԻԱ . Իրաւատտի գետին եզերքը հին մայրաքաղաքն էր , բայց 1839ին գետնաշարժով կործանեցաւ ու հիմա աւերակ է :

ԱՄԱՐԱԲՈՒՐԱ (30,000) Աւայի մօտ . 1800ին 175,000 բնակիչ ունէր , բայց հիմա շատ ինկած է իր առջի վիճակէն :

ՊՀԱՄՕ (20,000) Չինաստանի սահմանէն 35 մղոնի չափ հեռու վաճառաշահ քաղաք մըն է :

ՄՕԿԱՆԿ՝ որ Պհամօյէն 70 մղոն հեռու է , անուանի է իր հանքերուն համար :

Հեաեւեալ երեւելի քաղաքները Անգղիացւոց ձեռքն են .

ՓԷԿՈՒ՝ որ անգամ մը 150,000 բնակիչ ունէր , բայց հիմա քիչցած են : Բրգաձեւ կուստուն մը կայ որ ութը կողմ ունի , եւ ամէն մէկ կողմը 162 սանաչափ է , ու բոլորը 300 սանաչափ բարձր է :

ՄԱՈՒՂՄԷՅԱ (15,000) վաճառաշահ քաղաք մըն է :

ԱՄՀԵՐՍՍՓ՝ որ մեծ ու աղուոր նաւահանգիստ ունի :

ՌԱՆԿՈՒՆ (20,000) մեծ առուտուր ունի , եւ շատ նաւեր կ'երթան հոն :

Անուանի քաղաքներ են նաեւ Թափոյի , Մեռկուի , Մարթապան , եւ Փոսմ՝ :

2. ՍԻԱՄ

Ասիկայ առաջին անգամ 1502ին Եւրոպացիներուն ճանչցուեցաւ, ու հիմա ընդարձակ ու յաջող Տէրութիւն մը եղաւ :


Ասիկայ ունի սահման հիւսիսէն՝ Չինաստան, արեւելքէն՝ Աննամ, հարաւէն ու արեւմուտքէն՝ Հնդկաց ծովը :

Լեռնային երկիր մըն է, ու Մենամ գետին վրայ ընդարձակ ու շատ պաղարեր դաշտ մը կայ :

Միայն իրեր մեծ գետ կայ. Սալուէն, Մենամ ու Մէքօն :

Ունի 5,000,000 բնակիչ, որոնց ամենն ալ կռապաշտ են :

Հիմակուան Թագաւորը իր երկրին յառաջադիմութեանը համար փափաք կը ցրցունէ :



ՍԻԱՄԻ ԹԱԳԱՌՈՐԻՆ ՆԱԿԱՐԸ

Գլխաւոր քաղաքները

ԳԱՆ-ԲՕ-Բ (300,000) մայրաքաղաքն է, ու բնակիչներուն մեկ երրորդը Չինացի են : Մենամ գետին եղերքը շինուած է, ու Ասիայի ամենէն վաճառաշահ քաղաքներէն մէկն է :

ԵՒԻԹԱՅԻ, ՓՈՒԱԳԱԹ, ՉԱՆԹԻՊՊՈՒՆ ու ՓԻՆՕՄԲԻԿԿ . առնուանի քաղաքներ են :

3. ՄԱԼԱ-Բ-ԲԱ

Թերակղզի է, ու հիւսիսէն ունի՝ Սիամ, եւ միւս կողմերէն



ՄԱԼԱԲԻԱՅԻ

Հնդկաց ծովը: Փոքր երկիր մըն է, ու միայն 375,000 բնակիչ ունի, որ վայրենի ու թափառական մարդիկ են, ու շատը ծովու աւազակ:

Աս երկրին մէջտեղը լեռներու գօտի մը կայ:

Գլխաւոր քաղաքներն են Սալանկոր, Փէյհանկ եւ Ճոհօր:

#### 4. ԱՆՆԱՄ

Աննամին բնակիչները Ձինաց լեզուն եւ աղանդն ունին, եւ շատը գետերու վրայ կը բնակին նաւակներով, 12,000,000 կամ 15,000,000 բնակիչ կան:

Աննամին սահմանը հիւսիսէն՝ Ձինաստանն է, արեւելքէն ու հարաւէն՝ Հնդկաց ծովը, ու արեւմուտքէն՝ Սիամ:

Լայնութիւնն է 965 մղոն, ու ունի 220,000 քառակուսի մղոն:

Շատ մը աղւոր ծոցեր ու նաւահանգիստներ ունի:

Ար պարունակէ իրեք զատ երկիրներ, ու չորրորդի մըն ալ մէկ կտորը, այսինքն Թանքուին, Քօչինչին, Չամբա, ու Քամագօտիայի մէկ կտորը:

Գլխաւոր քաղաքները

ՔիՉՈՅ (100,000) Թանքուինին մայրաքաղաքն է:

ՀՈՒԻ 60,000) Քօչինչինին մայրաքաղաքն է, ու շատ ամուր ու վաճառաշահ տեղ մըն է:

ՍՆՅՎՈՒՆԿ (180,000) ամենէն մեծ է, ու Չամբայի մայրաքաղաքն է:

### ԿՂՁԻՆԵԲԸ

ՍԻՆԿԱՓՈՒՐ կղզին Մալաքքայի թերակղզիին հարաւային կողմն է, ու Անգղիացւոց ձեռքն է. 25 մղոն երկայնութիւն ունի՝ ու 11 մղոն լայնութիւն: Շատ պտղաբեր ու վաճառաշահ տեղ մըն է: Բոլոր կղզին 52,891 բնակիչ ունի, որոնց կէսը Մահմետական են՝ ու կէսը կուսապաշտ:

Երեւելի քաղաք մը կայ՝ որ Սինկափուր կ'ըսուի, որուն նաւահանգիստը Անգղիայի՝ Ամերիկայի ու Վաղղիայի նաւերով լեցուն է: ԱՆՏԱՄԱՆ ու ՆԻՔՈՊԱՐ կղզիները Մալաքքայի արեւմտեան կողմն են, որոնք անտառներով լեցուն են:

Առջիններն ինքնագլուխ են, ու վերջինները Տանիմարքայի ձեռքը:

## Փ. ՉԻՆ

### Ընդհանուր գիտելիք

ՂՇԽԱՐՀԻՍ առաջին ծաղկած տէրութիւններուն մէկն է Չինը: Չինները շատ հին ժամանակէ ուրիշ ազգերէն զատուած մնացեր են, այսու ամենայնիւ արհեստներուն մէջ բաւական առաջգացած են: Թաթարներուն յարձակմունքէն ազատ մնալու համար՝ իրենց երկրին հիւսիսային կողմը 1550 մղոն երկայնութեամբ պատ մը քաշած են. բայց եօթնեւտասներորդ դարուն մէջ Մանչու թաթարները տիրեցին Չիններուն, եւ հիմակուան Չինու թագաւորը անոնց ցեղէն է: Աս տարիներս ապստամբութիւն մը ծագեցաւ կայսերական կառավարութեան դէմ, որոնք երկրին մէկ քանի տեղերը իրենց ձեռքն անցուցին:

Չինու սահմանը հիւսիսէն՝ Ասիոյ Ռուսաստանն է, արեւելքէն՝ Մեծ ովկիանոս, հարաւէն՝ Չինի ծովն ու Հնդկաստան, արեւմուտքէն՝ Թուրքաստան:

Տարածութիւնն է 5,000,000 քառակուսի մղոն:

Տէրութիւնը իրեք գլխաւոր մաս կը բաժնուի. բուն Չին, Ման-

չուրիա ու Հարկատու երկիրները, որոնք են Քօրէա, Մոնկոլ, Թի. պէթ ու Իլի :

Երկիրն ընդհանրապէս դաշտային ու աղէկ մշակած է, բայց արեւմտեան ու հիւսիսային կողմերը լեռնոտ են :

Օդը բարեխառն, տեղ տեղ ալ շատ տաք է :

Հողը խիստ բարեբեր է :

Գլխաւոր բերքն է լոյս, քափուր, մետաքս, բամպակ, վերնէն, յախճապակ, մուշկ, այծու բուրդ եւ թանաք : Շերամի որդը եւ սոկեգոյն կարմրախայտ ձուկը Ձինէն Եւրոպա եկած են :

Եւրոպացիք մինչեւ 1842ը քանթոնէն ներս չէին կրնար երթալ վաճառականութեան համար, բայց ան տարին Անգղիացիք ու Ամբրիկացիք Ձինու տէրութեան հետ դաշնագրութիւն ընելով հրաման առին որ աս հինգ քաղաքներուս մէջ կարենան վաճառականութիւն ընել, քանթոն, Փուչէու, Ամոյ, Նինկփօ եւ Շանկհայ :

Բնակիչն է 363,000,000 . ու ոմանք կ'ըսեն թէ 400,000,000էն աւելի կայ՝ որով աշխարհիս մէջ ամենէն բազմամարդ տէրութիւնն է :



ՄՈՒԿ ՓԱՆՈՂ, ՁԻՆ

Կրօնքը կառապաշտութիւն . շատը Պուտայական են . կարգացողներն ու մեծերը Կոնփուկիոսի աղանդին կը հետեւին, հասարակ ժողովուրդը Փոյի աղանդին : Քանի մը հազար Հրեայ կայ տէրութեան մէջ՝ հին ատենէ մտած . քանի մը հազար ալ Հռոմէական քրիստոնէայ . ու վերջին տարիներս Ամերիկայէն ու Անգղիայէն



դացող քարոզիչներուն աշխատանքովը Աւետարանական Քրիստոնէ-  
ութիւնը բաւական տարածուեցաւ. 1850ին հրաման ելաւ կայսրէն  
որ կրօնքի ազատութիւն ըլլայ :

Կառավարութիւնն է ազատ Միապետութիւն. իշխանները Ման-  
րսէն կ'ըսուին :

Գլխաւոր լեռներն են

Եունլին գօտին՝ բուն Չինաստանի մէջ,

Եապլօնոյ ու Խինզան գօտիներ՝ Մանչուրիայի մէջ,

Ալիտայ գօտին՝ Մանկուլի մէջ,

Թիէնչան լեռները՝ Սօնկարիայի մէջ,

Հիմալայա գօտին՝ Թիպէթի մէջ : Թիպէթ երկիրը աշխարհիս  
մէջ ամենէն բարձր երկիրն է. ու իր դաշտերը 10,000 կամ 12,000  
սանաչափ միջին բարձրութիւն ունին :

Լիճերն են Թիւնկիթիւնկ, Բոյեանկ, Հիւրիւն, Փիր, Քիւքա,  
Քօքօնօր, Թենկրինօր եւ այլն :

Շատ երկայն ու մեծ գետեր ունի՝ որոնց գլխաւորներն են Եանկ-  
ցէքեանկ՝ 2900 մղոն, Հօանկհոյ՝ 2000 մղոն, Ամուր՝ 2200 մղոն երկայ-  
նութեամբ, Սէլէնկա եւ այլն :

Գլխաւոր քաղաքները

Փե-Քեւն (2,000,000) մայրաքաղաքն է, Փէյճօ գետին մօտ ու 100  
մղոնի չափ ծովէն հեռու. ամուր բերդով քաղաք մըն է, տարա-  
ծութիւնը 26 քառակուսի մղոն : Շատ հսկայածեւ կռատուն-  
ներ ունի, նաեւ Յունաց վանք մը ու եկեղեցի մը կայ, ու նաեւ  
Պապական եկեղեցի մը :

ՔԱՆԹՈՒՆ (1,000,000) Եւրոպացի ու Ամերիկացի վաճառականնե-  
րը շատ են. ու մեծ վաճառքը Նոյ է :



ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՅՏԱՐԱԿ ԵՎ ՆԱԽԿ

ՆԱՆՔԻՆ կամ ՔԵԱՆՆԻՆ (400,000) ինչուան 1368 ասիկայ էր

Չինու մայրաքաղաքը . անուանի է ասոր աշտարակը ինը յարկով ու 200 ոտք բարձրութեամբ , որ վերէն 'ի վար յախճապակով զարդարած է : Հիմա ապստամբներուն ձեռքն է :

ՄԱՔԱՈՅ (33,000) աս քաղաքիս մեծ մասը Փորթուգէզներուն ձեռքն է :

ԱՄՈՅ (250,000) ցամաքին մտ կղզիի վրայ շինուած ամուր ու վաճառաշահ քաղաք մըն է :

ՓՈՒՉԷՈՒ (500,000) Մին գետին վրայ . ամուր պարիսպներ ունի : Հոս կը շինուի բամպակէ կտաւ ու շատ յախճապակ (ֆալֆուրէ , լիֆի) հողէ ամաններ :

ՆԻՆԿՓՕ (300,000) իրեք զատ գետ հոս կը միանան ու Չինաց ծովը կը թափին Թացիէ անունով : Անուանի աշտարակ մը ունի որ կ'ըսուի թէ 1200 տարի առաջ շինուած է . վաճառաշահ քաղաք մըն է :

ՇԱՆԿՀԱՅ (200,000) Ուսընկ գետին վրայ է , մեծ բերդ ունի ու շատ առուտուրի տեղ է :


ՄՈՒՔՏԷՆ . Մանչուրիայի մէջ , որուն հին մայրաքաղաքն էր . ունի պարիսպ ու հին պալատ մը :

ՔԻՆԿՔԱՅՐԱՈՅ . Քորէայի գլխաւոր քաղաքը , բայց Եւրոպացիներուն քիչ ճանչցուած է :

ԻՒԼԻԱՍՈՒԹԱՅ . Մոնկոլի ամենէն մեծ քաղաքն է :

ԼԱՍՍԱ կամ ՀԼԱՍՍԱ (60,000) Թիպէթի մայրաքաղաքն է , ու շատ աղուոր փողոցներ ու շէնքեր ունի : Անուանի է ՊՈՒՏ ըսուած շատուածին մեծ տաճարը որ ոսկիէ զարդերով լեցուն է : Մեծ Լաման' որ կռապաշտներուն քահանայապետն է , հոս կը նստի :

ԻԼԻ (75,000) ամուր քաղաք մըն է Իլի գաւառին մէջը :



ՉԻՆԱՍՏԱՆԻ ՄԷԿ ԿՈՂՄԸ

## ՓՆ . Ճ Ա Փ Ո Ն

Ընդհանուր գիտելիք

**Ճ Ա Փ Ո Ն** Ի երկիրը թէպէտ երեքտասաներորդ դարուն մէջ սկսաւ ծանօթ ըլլալ Եւրոպացւոց, բայց վրան աւելի տեղեկութիւն առնողներն եղան Փորթուգէզները 1542ին : Ճափոնները Չիներուն մէկ ցեղը կը սեպուին, բայց հիմա թէ արհեստի եւ թէ պատերազմի մէջ անոնցմէ աւելի ծաղկած են : Ֆրանչիսկոս Քաւերեան Հռոմէա-գաւան միսիօնարը հոն գնաց 1549ին, ու սկսեց Քրիստոնէութիւնը քարոզել ու մեծ յաջողութիւն գտաւ : Բայց 1585ին տէրութիւնը բոլոր միսիօնարները վռնտեց, ու տեղացի քրիստոնեաներուն ա-նանկ հալածանք հանեց որ քիչ ժամանակի մէջ բնաջինջ եղան : Ան ժամանակէն 'ի վեր մինչեւ 1854ը Հոլանտացիներէն 'ի զատ օտա-րականներուն արգելուած էր Ճափոնի մէջ մտնելը : Բայց ան տա-րին Միացեալ Նահանգները դաշնադրութիւն ըրին Ճափոնի հետ, ու ետքն ալ Անգղիա ու ռւրիշ տէրութիւններ. ու հիմա մէկ քանի տեղ ազատ առուտուր կ'ընեն : Ամերիկայէն Աւետարանական քա-րոզիչ ալ կայ հոն հիմա, ու անցած տարի (1860) մեծ հանդէսով ու ծախքով Ճափոնէն Միացեալ Նահանգները դեսպաններ դացին. ա-սիկայ առաջին անգամն է որ ասանկ բան մը ըրին : Կը յուսացուի թէ ասիէ ետեւ ուրիշ ազգերուն հետ բարեկամութիւն պիտի ու-նենան :

Ճափոնի տէրութիւնը աս չորս գլխաւոր կղզիներէն ձեւացած է. Նիֆոն, Սիքոքֆ, Քիւսիւ եւ Եսոյ. ուրիշ շատ պզտիկ կղզ-զիներ ալ ունի : Ասոնց չորս դին պատած է Արեւելեան ովկիա-նոսը՝ որ մեծ Թաթարստանին արեւելեան կողմն է :

Յարածութիւնն է 163,717 քառակուսի մղոն :

Հողը բարեբեր ու աղէկ մշակած է :

Գլխաւոր բերքերն են ոսկի, արծաթ, պղինձ, երկաթ, ազնիւ քարեր, քափուր, լոյ, բամպակ, մետաքս, եւ յախճապակ :

Բնակիչը 40,000,000, ամէնքը կուսպաշտ ։



ՃԱՓՈՐՆԻ ԿԱՌՔՈՎ

Կառավարութիւնը երկու հոգւոյ ձեռք է . մէկը Տոյեբէ կըսուի , որ հաւատոյ բաներուն կը խառնուի . մէկայլը Բո-պոյ , որ տէրութիւնը կը կառավարէ :

Երկիրը լեռնոտ է , եւ շատ հրաբուլիւններ ունի . անոր համար գետնաշարժ ալ շատ կ'ըլլայ հոն :

Նիֆոնի մէջ բարձր լեռներու գօտի կայ , ամենէն բարձր գագաթը Փուսիեամա կ'ըսուի , ու 11,000 կամ 12,000 ստնաչափ բարձրութիւն ունի : Ասիկայ մարած հրաբուլիս է :

Գլխաւոր գետը Ետօհաուա կ'ըսուի՝ որ Նիֆոն կղզիին մէջն է : Գլխաւոր լիճը Նոյն կղզիին մէջ Օից լիճ կ'ըսուի , ու 70 մղոն երկայն է :

Գլխաւոր քաղաքները

ԵՏՈՅ (1,200,000) Ասիոյ մեծ քաղաքներէն մէկն է . հոս կը նստի իրենց Բո-պոյ կամ Սեփ-սեփ թագաւորը . բայց փայտաշէն է ու ազուր տեղ մը չսեպուի . արքունական պալատը մեծ է ու ամուր պարիսպներ ունի :

ՄԻԱԲՈՅ (600,000) ուսման կողմանէ ճափաչէն ամենէն ծաղ-

կած քաղաքն է. Տայիրին հաս կը նստի : Փողոցները նեղ են ու տուները փայտէ կամ հողէ շինուած :

ՕՍԱՔԱ . Նաւահանգիստ ունի ու տէրութեան մէջ ամենէն երեւելի առուտուրի տեղն է :


ՆԱՆԿԱՍԱՔԻ 50,000 տուները ցած են , բայց մէկ քանի մեծ պալատներ ունի : Արծաթէ ու սոկիէ բաներ հաս շատ կը շինուին :

ՄԱՅՄԱՅ 30,000 Եսոյ կղզին ծայրը վաճառաշահ քաղաք է : ԼԻԻՈՒՔԻԻՈՒ կղզիներն ալ Ճափոնի մաս կը սեպուին , բայց առանձին թագաւոր մը ունին Չինու եւ Ճափոնի հարկատու :

ՍԱԿԱ , ՔՕՔՈՒՐԱ , ՀԱՔՕՏԱՏ , ՆԱՓԱ անուանի քաղաքներ են :



ԿՈՒՊԱՆՅԱՆ ԿՈՒՌՔԵՐ



ԿՈՒՏՈՒՆ

# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ Լ Ո Ւ Խ Գ

Ե Ի Ր Ո Պ Ա Շ

Սահման և Տեքստիան

ԵՒՐՈՊԱՅԻՆ սահմանը հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոսն է . արեւելքէն՝ Ուրալ լեռները՝ Կասպից ծովն ու Սեւ ծովը . հարաւէն՝ Կովկաս լեռները՝ Սեւ ծովն ու Միջերկրական ծովը . արեւմուտքէն՝ Ատլանտեան ովկիանոսը :

Եւրոպայի երկայնութիւնը 3,372 մղոն է , լայնութիւնը 2,400 մղոն , ու մեծութիւնը 3,800,000 քառակուսի մղոն է : Թէպէտ աշխարհիս մէկալ մասերէն պզտիկ է , բայց ամենէն ալ աւելի բազմամարդ եւ քաղաքավարեալ է : Հոն բոլոր արհեստները ու գիտութիւնները մեծ կատարելութեան մը հասեր են , ու Եւրոպայի տէրութիւնները խիստ մեծ աղքեցութիւն ունին աշխարհիս բոլոր ծայրերը :

Բոլոր Եւրոպայի բնակիչներուն թիւը 264,209,000 է :

Եւրոպային մէջ յիսունումէկ զատ տէրութիւններ կան . չորսը հիւսիսային կողմը , քառասունուերկուքը մէջտեղուանքը , հինգը հարաւային կողմը :

Հիւսիսայիններն են՝ Բրիտանիա , Տանիմարգա , Շուէտ , եւ Ռուսաստան :

Եւրոպային մէջտեղուանքն ասոնք են . Գաղղիա , Պելճիզա , Հունտա , Զուիցերի , Աւստրիա , Բրուսիա եւ 36 զատ տէրութիւններ Գերմանական դաշնակցութեանը մէջ :

Հարաւային կողմիներն ասոնք են . Փարթուգալ , Սպանիա , Իտալիա , Եւրոպայի Տաճկաստան եւ Յունաստան :

Եւրոպայի գլխաւոր ծովերը ասոնք են .

Սառուցեալ ովկիանոս , Սպիտակ ծով , Պալթիկ ծով , Հիւսիսային կամ Գերմանիայի ծով , Իրլանտայի ծով , Միջերկրական ծով ,

Յանիական ծով, Մարմարա, Սեւ ծով, Ազախու ծով:

Ամենէն մեծ ծովը՝ որ ամբողջ Եւրոպայի մէջ է, Պալթիկ ծովն է, որուն երկայնութիւնը 900 մղոն է, ու լայնութիւնը 180 մղոն:

Եւրոպայի գլխաւոր նեղուցներն ասոնք են .

Ալպկացի նեղուցը՝ Ռուսաստանի հիւսիսային դին, Ալպկացի կղզիին ու Ռուսաստանի ցամաքին մէջտեղը:

Քարսքի նեղուց՝ նոյն ծովուն մէջ, վերոյիշեալ կղզիին ու Նոր Զեմլեա բուռած կղզիին մէջտեղը:

Սքալէրրաք, Քաթեկաթ, Սունտ, Պէլթ՝ որոնք ամէնը Պալթիկ ծովը հիւսիսային ծովուն հետ կը միացունեն:

Քալէի նեղուցը՝ Գաղղիոյ ու Անգղիոյ մէջտեղը.

Ճիպիլթէրրայի նեղուցը՝ Սպանիոյ ու Ափրիկէի մէջտեղը.

Պանիֆաչիո նեղուցը՝ Մարտնիայի ու Քորսիքայի մէջտեղը.

Կենինայի նեղուցը՝ Իտալիոյ հարաւային ծայրը.

Զանազգալէսիի նեղուցը՝ Արշիպեղազոսին ու Մարմարայի մէջտեղը.

Վոսփորոս կամ Կոստանդնուպօլսոյ նեղուցը՝ Սեւ ծովուն ու Մարմարայի մէջտեղը.

Եէնիզալէի նեղուցը՝ Ազախու ծովուն ու Սեւ ծովուն մէջտեղը:

Եւրոպայի երեւելի ծոցերն ասոնք են .

Պոնտեան ծոց, Ֆինլանտեան ծոց, Իրիկայի ծոց՝ Պալթիկ ծովուն մէջ.

Զուխտէրզէ՝ Զոլանտայի մէջ.

Կապոնեան ծոց՝ կամ Պիսքայի ծոց՝ Ատլանտեան ովկիանոսին մէջ, որուն մէկ կողմը Գաղղիա է ու միւս կողմը Սպանիա.

Լիոնի՝ Ճենովայի՝ Վենետիոյ ծոց, Միջերկրական ծովուն մէջ.

Սէլանիկի ծոց՝ եւ Զմուռնիայի ծոց՝ Արշիպեղազոսին մէջ:

Եւրոպային գլխաւոր կղզիներն են ,

Սառուցեալ ծովուն մէջ՝ Սփիցպէրկ, Նոր Զեմլեա, Քալիուլէյ ու Լոֆֆոտէն կղզիները, որոնք Ռուսի Տէրութեանը կը վերաբերին:

Պալթիկ ծովուն մէջ՝ Ալանտ, Տակոյ, Էոզէլ՝ նոյն տէրութեանը տակ:

Կոթլանտ, Օլանտ, Շուէտի տակ: Պորնհոլմ, Իուկէն, Գալլոթէր, Լալանտ, Զէլանտ եւ Ֆիննիա՝ Տանիմարգայի կղզիներ:

Իռլանտայի ծովուն մէջ՝ Մէն եւ Էնկլլըսի, Անգղիայի աւերութեանը տակ :

Ալալանդեան ովկիանոսին մէջ՝ Իալանտա, Ֆէրրէօր կղզիները՝ որ Տանիմարգայի կը վերաբերին . Իռլանտա, Անգղիա, Շէթլընա կղզիները, Որկադեան ու Հերրիդեան կղզիները՝ որ ամէնը Անգղիայի տակ են :

Միջերկրա՛ան ծովուն մէջ՝ Բորսիբա՛ որ Գաղղիայի կը վերաբերի . Մայորբա, Մինորբա, Իվիցա՛ որ Սպանիայինն են . Սարաենիա, Սիկիլիա, Էլպա եւ Լիպարեան կղզիները՝ որ Իտալիայի կը վերաբերին . Մալթա՛ որ Անգղիացւոց տակն է :

Յոնիական ծովուն մէջ՝ Բորֆու, Փաքչա, Սանթա Մաւրա, Թէպրի, Չանթա, Քեֆալոնիա ու Ձէրիկոյ : Աս կղզիները ազատ հասարակապետութիւն են Անգղիացւոց պաշտպանութեան տակը :

Արշիպէղագոսին մէջ՝ Լեմնոս, Էյրիպօղ, Նաքչա, Շիրա եւ ուրիշ մանր կղզիներ՝ Յունաստանի տակ :

Եւրոպային մէջ վեց գլխաւոր թերակղզի կայ .

Շուէտ, Սպանիա, Իտալիա՛ որ խիստ մեծերն են .

Եութլանտ՝ Տանիմարգայի մէջ .

Մորա՛ Յունաստանի մէջ .

Խրիմ՝ Ռուսաստանի մէջ :

Եւրոպային գլխաւոր հրուանդաններն են՝

Նորտ—Քին՝ Շուէտի հիւսիսային ծայրը .

Քլիբ՝ Իռլանտայի հարաւային կողմը .

Լէնտսէնտ՝ Բրիտանիոյ հարաւային արեւմտեան դին .

Լա Հակ՝ Գաղղիայի հիւսիսային կողմը .

Ֆինիաթէրրա՛ Սպանիոյ արեւմտեան դին .

Սուրբ Վինչենցիոս՝ Փորթուգալի արեւմտեան կողմը .

Սֆարթիվէնթոյ՝ Իտալիոյ հարաւային դին .

Փասսարոյ՝ Սիկիլիայի հարաւային կողմը .

Մալթափան՝ Մորայի հարաւային ծայրը :


Եւրոպային բոլոր հիւսիսային կողմը գրեթէ դաշտային է . բայց հարաւային կողմերը լեռնոտ է : Ռուսաստանի, Լեհաստանի, Բրուսիայի, Գերմանիայի, Հոլանտայի, Պելճիգայի ու Գաղղիայի հիւսիսային կողմի մեծ մասը բնդարձակ դաշտ մըն է, որուն մէջը միայն մէկ քանի բլուրներ կան, բայց բարձր լեռ չկայ . եւ շատ յայտ-



նի նշաններով կը սառուզուի թէ Հին Ժամանակները բոլոր աս երկիրները Ովկիանոսին տակն եղած են, ետքը ջուրերը քաշուեր են, ու Հիմա միայն Սպիտակ ծովն ու Պալթիկ ծովը կը մնան, ու խել մըն ալ լիճեր:

Շուէտի ու Կորվէկիոյ մէջտեղը լեռներու գօտի մը կայ որ քեօլէն լեռ կ'ըսուի:

Եւրոպայի ու Ասիայի մէջտեղը բարձր լեռներ կան՝ որ Ուրալ կ'ըսուի:



ՔԱՐՉՐ ԼԵՈՆՆԵՐՈՒ ԳՕՑԻ

Եւրոպայի մէջ ուրիշ գլխաւոր լեռները ասոնք են.

Կովկաս՝ Կասպից ու Սեւ ծովուն միջոցը.

Պարզան՝ Եւրոպայի Տաճկաստանին մէջ.

Կարպատ՝ Մաճառաստանին մէջ.

Ալպեան լեռները՝ որ Իտալիան Գաղղիայէն ու Ջուրիցերիէն կը բաժնեն.

Ապենինեան լեռները՝ Իտալիոյ մէջ.

Պիրենեան լեռները՝ Գաղղիոյ ու Սպանիոյ մէջտեղը.

Իբերեան լեռները՝ Սպանիոյ մէջ:

Եւրոպային մէջ իրեք մեծ հրաբուլգի կայ.

Հէբլա՝ Իսլանտայի մէջ.

Վեսուվ՝ Կափոլի քաղքին քովը.

Ետնա՝ Սիկիլիոյ մէջ. պղտիկ հրաբուլգի մըն ալ կայ Սթրուպայի անունով՝ որ Իտալիայի մօտ կղզի մըն է:

Եւրոպային գլխաւոր լիճերը ասոնք են .

Վէնէր, Վէթեր, Մէլար՝ Շուէաի մէջ .

Սայմա, Լատոկա, Օնեկա, Իլմեն, Պէլլոյ, Փէյփոս՝ Ռուսաստանի մէջ .

Նէօշաթէլի՝ Ճինեւրայի՝ Լուչերնայի՝ Տուրիքի լիճերը՝ Ձուիցերիի մէջ .

Մաճօրէ լիճը, եւ Բոմոյի՝ Կարտայի՝ Փերուճիայի՝ Պոլսենայի լիճերը՝ Իտալիոյ մէջ .

Նայզիտէլ, Պալաթոն՝ Աստրիոյ մէջ :

Եւրոպային երեւելի դեռերը ասոնք են .

Տվինա՝ որ Սպիտակ ծովը կը թափի .

Թորնէա, Նեա, Տունա, Նեմեր, Վիսթուլա, Օտեր՝ Պալմիի ծովը .

Էլպա, Վէգեր, Հաենոս, Թամիզ, Սենա, Լուառ . Շէնըն, Սիփըրն . Կարոն, Մինհոյ, Տուրոյ, Թակոյ, Կուաաիանա, Կուաաուլքիվիբ՝ Ատլանդեան ովկիանսը .

Էպրոյ, Հադանոս, Արնոյ, Տիբերիս՝ Միջերկրական ծովը .

Փոյ, Ատիճէ՝ Ագրիական ծոցը .

Գանուր, Էրեո, Տնեթեր՝ Սեւ ծովը .

Տան՝ Ազախու ծովը .

Վոլկա, Աւրալ՝ Կասպից ծովը :

Եւրոպային օդը, հիւսիսային կողմերը սաստիկ ցուրտ է, բայց միւս կողմերը բարեխառն է :

Հողը ընդհանրապէս խիստ բարեբեր է . վասն զի մշակութիւնն ալ շատ ծաղկած է :



Գլխաւոր բերքն է՝ երկաթ, կապար, պղինձ, անագ, հանքա-  
յին ածուխ, ազ, անդիկ: Բոյսերուն մէջ՝ ցորեն, բրինձ, եգիպ-  
տացորեն, գետնի խնձոր, կանեփ, ձէթ, լեմնն եւ ամէն տեսակ  
պտուղներ: Կենդանիներէն՝ օգտակարներուն ամէն տեսակը շա-  
քած են Եւրոպա, ու փասակարները պակասծ:

Եւրոպայի բնակիչներուն գլխաւոր ցեղերը տասը կամ տասներ-  
կու հաս են. այսինքն՝ Լատին, Յոյն, Տաճիկ, Սլաւ, Կելտք,  
Վոլաաներ, Տելաոնեանք, Քինք, Մաճար, Հրեայ եւայլն:

Իրեք կրօնք կայ Եւրոպային մէջ. Քրիստոնէութիւն, Մահմետա-  
կանութիւն, Հրէութիւն: Գլխաւոր կրօնքը Քրիստոնէութիւնն  
է, եւ իրեքի կը բաժնուի, Հռոմէադաւան, Բրօթէսթանգ եւ  
Յոյն:

Հռոմէադաւան տէրութիւնները ասոնք են. Գաղղիա, Իտալիա,  
Սպանիա, Փորթուկալ, Աւստրիա, Պալարիա, Պելճիզա ու Զու-  
իցերիի մէկ կտորը:

Բրօթէսթանգ տէրութիւններն են՝ Անգղիա, Բրուսիա, Շուէտ,  
Տանիմարգա, Հանովէր, Սաքսոնիա, Վիւրթէմպերկ. եւայլն:

Յունադաւան տէրութիւններն են՝ Ռուսաստան ու Յունաս-  
տան:

Տաճիկ տէրութիւնը Մահմետական է, բայց իր հպատակներուն  
մէջը շատ քրիստոնեաներ կան:

Եւրոպայի բոլոր ազգերը իրենց սկզբնաւորութիւնը ութը կամ  
տասը գլխաւոր ցեղերէն առած են. այսինքն՝ Կելտա, Հիպիերիցի,  
Պիտգայցի, Տելաոն, Սքանտինաւեան, Սլաւ, Յոյն, Լատին եւայլն:

Եւրոպայի մէջ հիմակուան գործածական յեղուներն ասոնք են  
Գաղղիարէն, Իտալերէն, Սպանեօլերէն, Գերմաներէն, Անգղիարէն  
Ռուսերէն, Տաճիերէն, Յունարէն:

Կելտները իրեք գլխաւոր արմատ ունին, որ են Տելաոներէն  
Սլաւերէն ու Լատիներէն, որոնց ամէն մէկը գրեթէ 60,000,000  
մարդ ունի որ կը խօսի:

Քաղաք կանութեան ու արհեստի կողմանէ Եւրոպան այնչափ  
ծաղկած է որ հարկաւորէն զատ՝ զարդի ու վեղիութեան բանե-  
րուն ալ չափը չկայ: Վաճառականութիւնը բոլոր աշխարհք տա-

ըածուած է . իսկ գիտութիւնները այնչափ պայծառացած են՝ որ աշխարհիս մէջ ատեն մը կամ տեղ մը ասոր նմանը չէ եղած :

Եւրոպայի մէջ ընդհանրապէս իրեք տեսակ կառավարութիւն կայ . ազատ միապետութիւն , չափաւորած միապետութիւն ու հասարակապետութիւն :

Ազատ միապետութիւն կ'ըսուի՝ ան կառավարութիւնը՝ որուն թագաւորը ինչ օրէնք ուզէ՝ կը դնէ :

Չափաւորած միապետութիւն կ'ըսուի՝ երբոր թագաւորը առանց ժողովուրդէն ընտրուած երեսփոխաններու ժողովին հաւանութեանը՝ չկրնար օրէնք մը դնել , կամ պատերազմ բանալ :

Հասարակապետութիւն կ'ըսուի՝ երբոր կառավարութիւնը կամ ազգին գլխաւորներուն կամ բոլոր ազգին ձեռքն է :

## Ա. Մ Ե Թ Բ Ր Ի Տ Ա Ն Ի Ա

Ընդհանուր գեղեւէտ

ՄԵԹ ԲՐԻՏԱՆԻԱ կամ ընդհանուր անուամբ Անգլիական Վարդապետութիւնը ըսուած երկրին Հռովմայեցիք Քրիստոսէն յիսուն տարի առաջ սկսեցին տիրել , բայց 448ին թողուցին : Բրիտանացիք Սկոթլանդի տիրացու ձեռքէն նեղութիւն քաշելով՝ Գերմանացիներէն օգնութիւն ուզեցին . անոնք ալ եկան բոլոր երկրին տիրեցին , ու ազգը անոնցմէ Անկլո—Սաքսոն անուանեցաւ . ու երկիրը՝ Ինկլէնտ , որ հայերէն Ան Իլիւ կ'ըսենք : Անկէց ետքը Տանիմարգայի թագաւորը տիրեց 1014էն մինչեւ 1041ը՝ որ ատեն վաճառեցան : Ետքէն 1066ին Նորմանտիոյ Գուլիէլմոս դուքսը տիրեց Բրիտանիոյ , եւ հոն Նորմանտիայէն բնակիչներ խառնեց . անկէց ետքը Անգլիան քանի զընաց մեծցաւ . Սկոթլանդ՝ Իռլանտան եւ ուրիշ շատ կղզիներ ալ իր հետք միացընելով՝ ըսուեցաւ Բրիտանական Միացեալ Մարտիրոսական Վարդապետութիւն :

Բրիտանիան՝ որ երկու գլխաւոր կղզիներ կը պարունակէ եւ ուրիշ շատ պզտիկ կղզիներ , Եւրոպայի արեւմտեան կողմը կ'իջնայ , եւ չորս դին պատած է Ատլանտիկան օվկիանոսը :

Բրիտանիան հինգ գլխաւոր մաս կը բաժնուի . Անգլիա , Ուելս ու

Սխալութեամբ որ մէկ կողմի մըն է, ու Իսլամիստի որ զատ կողմի մըն է, եւ ստոնց քովի Մահմեդի հրահրելը:

Տարածութիւնն է 120,416 քառակուսի մղոն:

Երկիրը ընդհանրապէս լեռնոտ է, մասնաւանդ Սկովտիան: Շատ պաղարեք է հողը եւ խիստ կատարեալ կերպով մշակուած:

Շատ տեսակ հանք ունի. զլիաւորներն են՝ երկաթ, կապար, անագ, պղինձ ու հանքային ածուխ՝ որ անհատնում է: Կենդանիներուն մէջ անուանի են ձիերը ու կովերը. ոչխարներուն բուրդն ալ խիստ ազնիւ է:

Օդը ցուրտ ու թաց ըլլալուն համար՝ երկիրը խաղող չհասցընէր: Քնակիչն է 27,332.145. ստոնց լեզուն Անգղիարէն է, բայց Ռուսիայի Իսլանայի ու Սկովտիայի մէջ ուրիշ լեզու մըն ալ կը խօսուի՝ որ հին Կելտերէնէն է:



ԱՆՊՂԻԱՅԻ

Արհեստներն ու վաճառականութիւնը խիստ ծաղկած են. ձեռագործները վերջի կատարելութեան հասած. շէնքն ազուր, պարտէզները դեղեցիկ, ուսումնական տեղումները խիստ անուանի, եւ բոլոր աշխարհիս քաղաքականութեանը առաջին կեդրոններէն մէկն է:

Ովկիանոսին ամէն կողմը առուտուրով պարտող 18,000 էն աւելի վաճառականի նաւ ունի, որոնք գրեթէ ամէն տէրութիւններու հետ առուտուր կ'ընեն:

Զօրքն է 144.000:

Շուսատորմիդը 420 կաոր նաւ, մեծ ու պզտիկ. որոնց 114 ըր-

գինով կը քալեն, եւ ամէնը 15,026 թնդանօթ ունին :

Տէրութեան կառավարութիւնն է չափաւորած միապետութիւն :  
Կրօնքը Աւետարանական ֆրիստոնէկութիւն է, բայց Իսլանտայի մէջ շատը Հռոմէադաւան են :

Բրիտանիայի անչափ հարստութիւնը ասկէջ յայտնի կ'ըլլայ, որ Տէրութիւնը ստացուածքներէն ու ամնականներէն ամէն մէկ լիբալի միայն եօթը Փէն (չորս ու կէս զուրուշ) տուրք առնելովը 6,000,000 լիբա կը ժողովէ :

Գլխաւոր լեռներն են՝

Կրամբեան դօտին՝ հիւսիսային կողմերը Սկոթլանդի մէջ, որոնց ամենէն բարձր գագաթներն են Պէն—Սիվիս 4,373 սանաչափ, ու Պէն—Մաքտուի 4,389 սանաչափ :

Օքսիլ եւ Չէվերթ—Հիլ՝ նմանապէս Սկոթլանդի մէջ հարաւային կողմը :

Քէմպրիան դօտին՝ Անգլիայի մէջ, 3,571 սանաչափ բարձրութիւն ունի :

Իսլանտայի մէջը ամենէն բարձր լեռն է՝ Քառն—Թուալ ընուած լեռը, 3,404 սանաչափ բարձր :

Գլխաւոր դեռերը ասոնք են .

Թամիզ (Թէյմզ), որուն քովը շինուած է Լոնտրա քաղաքը .  
Մէրսի, որուն բերնին մօտ է Լիվըրքուլ քաղաքը .

Քլայա, Թէյն, Փօրթ, Թուիտ, Սիվըրն, Շէնըն, Ուզ ու Թրէնթ եւայլն եւայլն :

Գլխաւոր լիճերը ասոնք են .

Լօխլոմմանտ՝ ամենէն մեծը, Սկոթլանդի մէջ՝ որ 45 մղոն երկայնութիւն ու 7՝ մղոն լայնութիւն ունի :

Լօխաու, 30 մղոն երկայնութեամբ . Լօխլէվան, Լօխէռն՝ Իսլանտայի մէջ, եւայլն եւայլն :



# Գ Լ Խ Ա Ի Ո Ր Գ Ա Ղ Ա Գ Ն Ե Ր Ը

## 1. ԱՆԳՂԻԱ

ԼՈՒՏՐԸ կամ ԼՈՒՏՈՒՆ (2,500,000) տեղումբեան մայրաքաղաքը, Եւրոպային մէջ ամենէն բազմամարդ եւ բոլոր աշխարհիս մէջ ամենէն վաճառաշահ քաղաքն է, Թամիզ գետին վրայ . իր նաւահանգիստին մէջ միշտ մէկ քանի հազար նաւ կը գտնուին : Մէջի գլխաւոր շէնքերն են՝ Սուրբ Պօղոս , որ բոլոր աշխարհիս վրայ Աւետարանականներուն ամենէն մեծ եկեղեցին է . Վէսթմինսթրի եկեղեցին , որուն մէջ Թագաւորներու եւ մեծ մարդկանց գերեզմաններ կան . Թագաւորական պալատները , կամուրջները , գետափունքը , եւ մանաւանդ Թամիզ գետին տակի մեծագործ ճամբան , որ 1300 ոտք երկայնութիւն ու 200 ոտք լայնութիւն ունի : Աս քաղաքիս մէջ ծնան՝ Պաքոն , Միլտոն , Փոփ . Նեւտոնն ալ Վէսթմինսթրի եկեղեցին Թաղուած է :



ԼՈՒՏՈՒՆ

ՄԻՆՉԸՆՍԹԵՐ (401,321) վաճառականութիւնը խիստ ծաղկած , բամպակեղէն ու մետաքսեղէն գործուածքներն , անուանի . 400էն

աւելի մեծ ու պզտիկ գործարաններ ունի :

ՊԸՐՄԻՆԿԷՄ (232,841) երկաթեղէնի կողմանէ բոլոր աշխարհիս առաջին գործարանն է . ուստի վաճառականութիւնն ալ խիստ մեծ : Մօտերը երկաթի ու ածուխի շատ ընդարձակ ու հարուստ հանքեր կան :

ԼՎՂՐՓՈՒԼ (375,955) Լոնտրայէն ետեւ Անգղիայի երկրորդ վաճառաշահ քաղաքն է :

ՊՐԻՍԹԸԼ (137,338)

ՓԼԻՄԸԹ (78,000)

ՓՈՐԹՍՄԸԹ (51,000)

ՏՈՒՎՂ (9,000)

} ասոնք խիստ բանուկ նաւահանգիստներ են :

ԼԻՏՍ (172,270) շատ գործարաններ ունի . մանաւանդ բուրդէ գործուածքներու :

ՇԷՖԻԼՏ (135,310) շատ անտաղի գործարաններ ունի, եւ աշխարհիս մէջի ամենէն անուանի կտրոցները անկէ կ'ելլեն :

ՈՒԸԼՎԷՐՆԷՄԹԸՆ (119,748) ասոր մօտերը՝ շատ երկաթի ու ածուխի հանքեր կան :

ՆԻՒՔԱՍԼ (54,000) ասոր քովն է Բրիտանիոյ ամենէն մեծ ածխահանքը :

ՊԱԹ (54,240) անուանի է հանքային ջուրերուն համար . որոնց պատճառովը երբեմն քաղաքին մէջը 14,000 հիւր կը գտնուի :

ԿՐԻՆԻՉ (105,782) աստղաբաշխութեան երեւելի դիտարան ունի :

ՕՔՍՓԸՐՏ (27,843)

ՔԷՄՊՐԻՉ (27,815)

} ասոնց համալրարանները խիստ անուանի են :

ՍԹՐԷԹՔԸՐՏ (3,372) հոս ծնաւ Շէքսպիր անուանի բանաստեղծը :

Մէկալ երեւելի քաղաքներն ասոնք են . Էլիֆէքս, Պրէտֆրտ Պոլթըն, Նորիչ, Ռոշտալ, Կլաբլթըր, Ֆելմլթ, Նըթլինկեմ, Ուինսդըր, Վուրսըթըր, Լէնքասթըր :

## 2. ՈՒԷՅԼՍ

ՄԷՐԹԻՐ—ԹԻՏՈՒԼ (63,080) մեծ երկաթահանք ունի :

ՍՈՒԵՆՍԻ (31,000)

ՔԸՐՏԻՓ (18,000)

ՌԷՔՍԸՄ (15,520)

ՊԱՆԿՈՐ (9,564)

} գեղեցիկ քաղաքներ են :



3. ՍԿՈՎՏԻԱ

ԻՏԻՄՊՈՒՐԿ (158,000) անուանի համալսարան ու խիստ բանուկ նաւահանգիստ ունի, ու շատ գեղեցիկ քաղաք մըն է :

ԿԼԷՍԿՈՅ (347,000) համալսարանն անուանի է . վաճառականութիւնն ալ խիստ բանուկ . բուրդեղէն գործաւածքի ու շոգեշարժ մեքենաներու կողմանէ երեւելի . հոս շատ ալ երկաթէ շոգենաւ կը շինուի :

ՏԸՆՏԻ (78,829) վաճառականութեանն ու կտաւեղէն գործուածքին համար անուանի :

ԱԳԼԻՏԻՆ (41,470) համալսարան ունի ու գեղեցիկ քաղաք մըն է :

4. ԻՌԼԱՆՏԱ՝

ՏԸՊԻՆ (254,850) Իռլանտայի մայրաքաղաքն է . համալսարան մը ունի՝ որուն մէջ 2,000էն աւելի ուսանող կայ :

ԲՈՐԲ (84,485) վաճառաշահ քաղաք է, նաւահանգիստը շատ գեղեցիկ :


ՊԷԼՖԷՍԹ (130,000)

ԼԻՄԷՐԻԲ (55,208)

ՈՒՈԹԸՐՖԸՐՏ (29,000)

ԿԱԼՈՒԷՅ (23,695)

ասոնք բանուկ նաւահանգիստներ են :



ԻՌԼԱՆՏԱՅԻ ՄԷՅ ՏԵՂԸ

## 5. ՄԱՆՐ ԿԴՁԻՆԵՐ

Ատլանդեան ովկիանոսին մէջ՝ Շէթլընս , եւ Որկադեան ու Հեր-  
րիդեան կղզիները :

Գաղղիայի ու Անգղիայի մէջաեղը՝ Կէռնդի ու Ճէռզի կղզիները :  
Իռլանտայի ծովուն մէջ՝ Մէն եւ Էնկլլսի :

Միջերկրական ծովուն մէջ՝ Մալթա :

Յոնիական ծովուն մէջ՝ Բորֆու , Փաքշա , Սանթա Մաւրա ,  
Թէպքի , Զէֆալոնիա , Չանթա :

Արշիպեղագոսին մէջ՝ Չէրիկոյ :

## ԱՆԳՂԻԱՑԻՈՑ ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ասիոյ մէջ՝ Հնդկաստանի մեծ մասը , Սէյլան կղզին , Մալազա ,  
Պիրմայի մէկ կտորը , Ասամ , Լապունան , Սինկափուր կղզին ու  
Արաբիայի մէջ Ատէն , Չինաստանի մէջ Հոնկքոնկ :

Ափրիկէի մէջ՝ Սիէրրալէօն , Կամպիային մէկ մասը , Բարեյուսոյ  
գլուխը , Սուրբ Հեղինէ , Վերափոխման կղզիները , Նաթալ , Մօրի-  
թիլս , Սէյշէլ , Ամիրանթէս :

Ամերիկայի մէջ՝ արեւելեան եւ արեւմտեան Քանատա , Նոր Պը-  
րընսուիք , Նոր Սկոտիա , Նոր Բրիտանիա , Կույանայի մէկ կտո-  
րը , Սուրբ Լաւրենտիոսի ծոցին մէջ եղած կղզիները , Փրինս Էս-  
ուարտս , Նիւֆաւնտլանտ , Հրտսընի ծոցի երկիրը , Վէնքովուս կղզ-  
զին , Պէհէյմաս կղզիները , Թուրքս կղզին , Հոնտուրաս , Ֆալքլանտ  
կղզիները , Պերմուտեան կղզիները , Եամայիքա կղզին , Փոքր Ան-  
դիլեան կղզիներուն մեծ մասը :

Ովկիանիայի մէջ՝ Նոր Հոլանտա կամ Աւստրալիա , եւ Վան Տե-  
մէն , Նոր Հարաւային Ուելլս , Նոր Զելանտա , Նորֆոլք , Արքլանտ :

Անգղիացոց ձեռքն է նաեւ Ճիպիթէրրա քաղաքը՝ Սպանիոյ  
արեւմտեան ծայրը :

Բոլոր աս երկիրներուն ու կղզիներուն ընակիչներուն թիւը 164  
միլիօն կը համարուի :

# Բ. Տ Ա Ն Ի Մ Ա Ր Գ Ա

## Ը ն դ հ ա ն ու ր գ ի ր ե ւ լ է ք

ՏԱՆԻՄԱՐԳԱՆ չին ատենը Աքանտինաւիա կ'ըսուէր՝ ու Կիմբարացւոց հայրենիքն էր, որ Քրիստոսէ 100 տարի առաջ բոլոր Եւրոպան կոխեցին ու աւրըշակեցին. անոր համար Կիմբրեան Քերսունիսոն ալ կ'ըսուէր: Տանիմարգացիք կամ Գանիք 832ին Անգղիոյ վրայ վազեցին, ու երկու հարիւր տարիէն ետքը Քանութ թագաւորը բոլոր Անգղիայի վրայ տիրեց: Հիմա Տանիմարգան ինքնազուլիս միապետութիւն է:

Տանիմարգայի սահմանը Հիւսիսէն՝ Քատեկաթի ծոցն է. արեւելքէն՝ Պալթիկ ծովը. հարաւէն՝ Գերմանական դաշնակցութիւնը. արեւմուտքէն՝ Հիւսիսային ծովը:

Հինգ գլխաւոր մաս կը բաժնուի. Բոն Տանիմարգո կամ Արլե-դելաֆոս Գանեաց՝ Պալթիկ ծովուն մէջը. Եսթլանդ, Շեֆելդի Գրէսթոն-Ինլը, Հուլլիսթի ու Լաֆնպորթի Գրէսթոն-Ինլը, ու Ատլանդեան ովկիանոսի մէջ՝ Փարօ Կուլինլը, Իսլանդոս ու Կրօնլանդոս: Աստէրութեան ձեռքն է նաեւ Սանթա Քրուզ, Սան Թովմաս եւ Սան Ճուան կղզիները՝ Ամերիկայի մօտ:

Տարածութիւնն է 62,870 քառակուսի մղոն:

Երկիրը դաշտային ու անբեր է, մանաւանդ Հիւսիսային կողմերը:

Գլխաւոր զետերն են՝ Էլպա, որ հարաւային սահմանն է, Էյ-տէր, Թրաւէ, Կուտէն:

Օդը ցուրտ, խոնաւ ու փոփոխական է:

Խալանտայի մէջ շատ հրաբուլդիներ ու հանքային տաք ջուրեր կան. օդը շատ ցուրտ է:

Բերքերուն մէջ անուանի է Ռինկա ձուկը, որ Մարա ամսուն մէջ խիտ շատ կ'ելլէ. հոչակաւոր է նաեւ ձին, մանաւանդ ծովային թռչուններուն փետուրները՝ որ թէ Տանիմարգայի եւ թէ Խալանտայի մեծ վաճառքներէն մէկն է:

Բնակիչները 2,412,926 . լեզուներն Գերմաներէնին մէկ տեսակն է :



ՏԱՆԻՄԱՐԳԱՅԻ

Կրօնքն է Աւետարանական :

Տէրութեան կառավարութիւնը՝ ազատ միապետական :  
 Զօրքը 25,000 բայց պատերազմի ժամանակ 75,169 են :  
 Նաւատորմիդը 30 կտոր նաւ :

Երեւելի լեռ. մը չկայ , բայց շատ լիճեր ունի , թէպէտեւ ամէնն  
 ալ պզտիկ են :

### ԳԼԽԱԻՈՐ ԲԱՂԱՔՆԵՐԸ

ԲՈՓԷՆՀԱԿ կամ ԲԵՕՊԷՆՀԱԻՆ (133,140) Զելանտա ու Ամա-  
 կէր կղզիներուն մէջ մայրաքաղաքն է , որ փառաւոր նաւահանգիստ  
 ունի Սաւնա նեղուցին վրայ : Վաճառականութիւնը խիստ բանուկ  
 է . արհեստի , ճարտարութեան ու գիտութեանց կողմանէ Եւրոպա-  
 յի երեւելի քաղաքներէն մէկն է , ու խիստ ամուր պարիսպներ ունի :

ԱԼԹՈՍԱ (37,000) Էլլա գետին բերանը աղուոր նաւահանգիստ  
 ունի : Քոփէնհակէն ետքը աս է ծաղկած քաղաքը :

ՀԷԼՍԻՆԿՈՐ կամ ԷԼՍԻՆՕՐ (8,107) Սոււա նեղուցին բերանը  
 ամուր ու վաճառաշահ քաղաք է : Բոլոր Պալթիկ ծովը մտնող կամ

անկէ ելող նաւերը հոս տուրք կու տային, բայց հիմա ան սովորութիւնը չկայ :

Իսկ Աալպորկ, Ֆիլէնսպորկ, Բիլ, Շէսպիկ, Բէնտսպուրկ Եւթլանա Թերակղզիին վրայ նաւահանգիստներ են :

ԻՍԼԱՆՏԱ

Ասիկայ մեծ կղզի մըն է Ատլանդեան օվկիանոսին մէջը ու Տանիմարգայի կը վերաբերի : Տարածութիւնը 38,000 քառակուսի մղոն է, ու բնակիչը 58,000 : Լեռնային է եւ ջուրտ : Շատ ձիեր ու կովեր ունի : Լեզուն Սքատինաւերէն է, ու կրօնքը Աւետարանական : Երեւելի հրաբուլիս լեռ մը ունի որ Հեքլա կ'ըսուի, որուն



ԻՍԼԱՆՏԱՅԻ ՏԱՔ ԱՂՔԻԻՐՆԵՐԸ

բարձրութիւնը 6,000 ոտնաչափ է : Ասոր մօտերը կը բղխին բնական ապք ջրհորները :

Գ. ՉՈՒԷՏ ՈՒ ՆՈՐՎԵԿԻԱ

Րէդիանոսի գիրքէք

ՀՈՒԷՏԻ երկրին հին, ատենը ֆինք կամ ֆինլանտայիք տիրեր էին, ետքը Գոթացիք առին : Իսկ Նորվեկիան ատենով Տանիմար-

գայի կտորն էր, 1814ին Շուէտի տէրութեանը հետ միացաւ :

Շուէտին սահմանը հիւսիսէն՝ Սառուցեալ ծովն է . արեւելքէն՝ Ռուսաստանը . հարաւէն՝ Պալթիկ ծովը . արեւմուտքէն՝ Ատլանդեան օվկիանոսը :

Շուէտի տէրութիւնը երկու գլխաւոր մաս կը բաժնուի, բուն Շուէտ ու Նորվեկիա : Բուն Շուէտն ալ կրկին իրեք գլխաւոր մասեր ունի, այսինքն Կոթլանտ, Սվիլանտ ու Նորլանտ :

Տարածութիւնն է՝ Շուէտինը 170,101 քառակուսի մղոն, ու Նորվեկիայինը 123,233 քառակուսի մղոն, որոնց գումարը կ'ընէ 293,334 քառակուսի մղոն :

Շուէտի երկիրը դաշտային է, շատ լիճեր ունի . բնակիչը քիչ : Նորվեկիան լեռնոտ ու քարոտ է :

Օդը ձմեռը սաստիկ ցուրտ ու երկայն է, ամառը բարեխառն :

Հողը բարերեր չէ, բայց երկաթի, պղինձի, արծաթի հանք ունի . փայտը խիտ շատ է . կենդանիներէն ալ անուանի է հիւսիսային եղնիկը, եւ ուրիշ բուրդոտ վայրի կենդանիներ :

Բնակիչն է երկու տէրութիւններունը՝ զրեթէ 4,645,000 . լեզուին Գերմաներէնին մէկ տեսակն է :



ՆՈՐՎԵԿԻԱՅԻՆ



ՇՈՒԷՏ

Կրօնքը Աւետարանական :

Կառավարութիւնը չափաւորած միապետութիւն :

Զօրքը Շուէտի ու Նորվեկիայի 167,484 :

Նաւատորմիդը 461 կտոր նաւ . բայց շատը պղտիկ՝ են :

Գլխաւոր գետերն են՝ Թորնէա , Լուէա , Ումէա , Փիթէա , Կլոմէն , Թանա :

Գլխաւոր լեռներն են՝ Սիւլթէլմա լեռ 6,243 ոտնաչափ բարձր , ու Սիլֆճէլման 6,552 ոտնաչափ բարձր :

Լիճերը շատ ու մեծ են . ասոնցմէ շատ ձուկ կ'ելլէ , որոնք ճամբորդութեան համար շատ պիտանի են : Լիճերուն գլխաւորները ասոնք են . Ուիներ լիճ 55 մղոն երկայնութեամբ ու 20 մղոն լայնութեամբ . Ուէթթէր լիճ 80 մղոն երկայնութեամբ ու 10 մղոն լայնութեամբ . Կէլաուն լիճ 60 մղոն՝ երկայնութեամբ՝ որուն եզերքը շինուած է մայրաքաղաքը :

## Գ Լ Թ Ա Ի Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

### 1. ՀՈՒԷՏ

ՍԹՈՒՔՈԼՄ (95,000) Մէլաուն լիճին մէջ քանի մը մանր ու խոշոր կզզիներու ու երկու թերակզզիի վրայ գեղեցիկ կերպով շինած՝ տէրութեան մայրաքաղաքն է . աղէկ ձեռազորճներ եւ ուսումնական տեղեր ու բանուկ վաճառականութիւն ունի :

ԿՈԹԷՆՊՈՒՐԿ կամ ԿՈԹԷՊՈՐԿ (28,758) քաթեկաթին վրայ բանուկ նաւահանգիստ ունի . արհեստի ու վաճառականութեան կողմանէ Սթորոլմէն ետքը երեւելի քաղաքը աս է :

ՔԱՐԼՍՔՐՈՆԱ (13,000) տէրութեան բանուկ նաւահանգիստներէն մէկն է . շատ ամուր բերդ ունի :

ՈՒՓՍԵԼԱ (5,000) ասոր համալսարանը խիստ անուանի է . Լիննէոս բնախօսը հոս վարպետութիւն աստիճան առած է . աս քաղաքիս քովը մեծ ու անուանի երկաթահանք կայ :

Ասոնցմէ 'ի զատ կան նաեւ Տանեմօուա , Քաուլթատ , Հէլսինկպէրկ , Քրիսթիանսթատ եւայլն :

## 2. ՆՈՐՎԵԿԻԱ

ՔՐԻՍՏԻԱՆՆԵՆ (26,141) Նորվեգիայի մայրաքաղաքն է, մեծ վաճառականութիւն ունի տախտակի ու երկաթի :

ՊԷՐԿԵՆ (20,000) վաճառաշահ քաղաք է . աէրութեան նաւարանը հոս է, եւ հոս շատ ալ վաճառականի նաւեր կը շինուին :


ՔՐԻՍՏԻԱՆՍԱՆՏ (8,548) ամուր տեղ է, եւ աղուոր նաւահանգիստ ունի, ու շատ նաւեր կը շինուին :

ԹՈՒՕՆՏՅԻՄ (13,818) խիստ մաքուր քաղաք է . հին ատենները թագաւորը հոս կը նստէր . շատ ձեռագործներ ունի, ու հոս շինուած գարեջուրը շատ անուանի է :

Կան նաեւ Լաւրվիք, Արենտալ, Համներֆէտթ եւ Թուոսոյ :

## 3. ԿՂՁՆԵՐԸ

Պալթիկ ծովուն մէջ՝ Կոթլանտ ու Օլանտ, ու Ատլանդեան ովկիանոսին մէջ՝ Լոֆֆոտէն կղզիները : Ասոնց քովեքն է Մալթրէմ ըսուած սոսկալի յորձանքը, որ շատ անգամ նաւեր քլնկղմէ :



ՄԱԼՏՐԵՄԻ ՏՈՐՁԱՆՔԸ

Շուէտը Եւրոպայէն դուրս ունի միայն Սուրբ Բարթոլոմէոս կղզին, որ Ամերիկայի մէջ փոքր Անգլիեան կղզիներուն մէկն է :



# Պ. ՌՈՒՍՍՍՆ

## 'Րնդհանուր գիտելիք

ՌՈՒՍՍՅ թագաւորութիւնը սկսած է 900ին ատենները . բայց մէջերնին քաղաքականութիւն ծաղկեցնողն եղաւ մեծն Պետրոս (1689) որ տէրութիւնն ալ ընդարձակեց : Ետքը Լէհաստանի մէկ կտորը եւ ուրիշ երկիրներ ալ առնելով՝ առ տէրութիւնը շատ մեծցաւ : Հին ատենը Ռուսաստանի ընակիչներն էին Սկիւթացիք , Սլաւեանք , Սարմատացիք ու Ֆինլանտացիք : Հիւսիսային կողմերը կը գտնուին Լափոն ու Սամոյա ըտուած կարճահասակ ազգերը . հարաւային կողմերն ալ շատ ժողովուրդներ՝ գրեթէ ամէն ազգէ :


Ռուսաստանին սահմանը հիւսիսէն՝ Սառուցեալ ծովն է . արեւելքէն՝ Ասիայի Ռուսաստանը . հարաւէն՝ Սեւ ծովն ու Աւստրիան . արեւմուտքէն՝ Բրուսիան , Պալթիկ ծովն ու Շուէտը :

Ասիկայ ինը գլխաւոր մաս կը բաժնուի , ու բոլոր կայսերութիւնն ալ ըստ քաղաքական կառավարութեան 64 կոստայաւորութիւն կը բաժնուի :

Տարածութիւնն է 2,740,738 քառակուսի մղոն :

Բնակիչները 61,929,000 են , որոնց լեզուն Ռուսերէն է , որ Սլաւեան լեզուին մէկ ճիւղն է :

Կրօնքը Յունադաւան է :



ՌՈՒՍՒՍՆԻ ՏՂՈՅ ԲԱՆՍԻՐ ԳՐՈՒԼ

Երկիրն ընդհանրապէս դաշտային է. միայն] երկու լեռներու գօտի ունի, մէկն Ուրալ, մէկայլը Կովկաս:

Օդը հիւսիսային կողմերը շատ ցուրտ ու առողջ է, ուր որ ձմեռը երկայն ու խիստ սաստիկ ցուրտ կ'ըլլայ:

Հիւսիսային կողմերուն հօդն անբեր ու քիչ մշակած է. իսկ միջին ու հարաւային կողմերը խիստ պտղաբեր:

Գլխաւոր բերքն է երկաթ, պղինձ, ոսկի, ամիանդ՝ որ Ուրալ լեռներէն ու Սիպերիայէն կ'ելեն: Շատ անտառներ ունի. ցորենը առատ ու ազնիւ է. մերթը, կաշին եւ մուշտակները խիստ ընտիր:

Կենդանիներուն մէջ նշանաւոր է ճերմակ արջը, որ հիւսիսային ծովեզերքը կը գտնուի:

Տէրութեան կառավարութիւնն է ազատ միապետական:

Զօրքը ամէն տեսակէն 1,123,200,

Նաւատորմիդը 260 կտոր նաւ:

Գլխաւոր գետերն ասոնք են.

Փէչօռա՝ որ Սառուցեալ ովկիանոսը կը թափի:

Տվինա՝ Միզա եւ Օնեկա՝ որ Սպիտակ ծովը կը թափին:

Նեւա ու Նեմէն՝ Պալթիկ ծովը:

Դանուբ, Տներեր, Տնեսթեր, Տոն, Կուպան՝ Սեւ ծովը:

Վոլկա, Ուրալ, Քումա, Թերէք՝ Կասպից ծովը:

Գլխաւոր լիճերը ասոնք են.

Լատոկա լիճ՝ որ բոլոր Եւրոպայի մէջ մեծն է. Օնիկա, Փիփրա եւ Իլմէն, ու նաեւ Ելթըն ու Պառքըթչաշք. աս ետքի երկուքին ջուրը աղի է:

Գլխաւոր լեռներն են՝

Ուրալ գօտին՝ որ արեւելեան սահմանն է, ու թաւրիտա գօտին՝ որ Սեւ ծովուն հիւսիսային եզերքին մօտ է: Ամենէն բարձր գագաթը՝ առջիններունը 7,000 ոտնաչափ է, ու վերջիններունը 4,000 ոտնաչափ:

## Գ Լ Խ Ա Ի ՈՐ Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

Փետրոգոտի (533,241) մեծն Պետրոս շինեց աս մայրաքաղաքը 1,703ին Նեւա գետին բերանը, ուր որ իրեն պղինձէ ձիււոր արձանն

ալ կայ՝ կրանիթ քարէ ժայռի մը վրայ տնկած : Փողոցներուն լայնութեանը եւ շիտակութեանը, հրապարակներուն ընդարձակութեանը, գեղեցիկ կրանիթէ գետեգերքներուն, եւ պալատներուն ու հասարակաց եւ մասնաւորաց շէնքերուն աղուորութեանը պատճառաւ, Եւրոպայի մայրաքաղաքներուն մէջ ամենէն աւելի ասոր տեղը փառաւոր է : Ուսումնական եւ արուեստական յառաջադիմութեան կողմանէ ալ ըստը աշխարհիս առաջին կարգի քաղաքներէն մէկն է : Լազարեան իշխանները հոս Հայոց համար գեղեցիկ եկեղեցի մը շինած են. ատենով ալ աս քաղաքիս մէջ մեր լեզուովը շատ մը գիրքեր տպուած են :



ՓԵՂՐԳՊՈՒՐԿ

ՐԻԿԱ (71,000) Փեղրպուրկէն ետքը առաջին վաճառաշահ եւ խիստ ամուր քաղաքն է : Ամէն տարի հոս 2,000ի չափ վաճառակաւնի նաւեր կու գան :

ՔՐՈՒՆՇԹԱՏ (40,000) Նեւա գետին բերանը՝ Ռոսսայ ծովային զօրքին զլխաւոր նաւահանգիստն է. նաւարանը աշխարհիս խիստ աղուոր նաւարաններէն մէկն է՞. բնակիչները ձմեռը կը քիչնան :

ՆՈՎՎՈՐՈՏ (15,000) Իւրեն լիճին վրայ՝ ատենով շատ ծաղկած

քաղաք էր, հիմա շատ ինկած է. ատեն մը 400,000 բնակիչ ունէր: Մեծ եկեղեցի ունի որ Այասօֆիա կ'ըսուի, ու Պօլոյ Այասօֆիայի ձեւովը շինուած է: Բիւրիք հոս սկսաւ Ռուսաց Թագաւորութիւնը 862ին:

ԱՐՔԱՆԿԻԼ (24,500) Տղինա գետին քով մերթի ու մուշտակի մեծ վաճառականութիւն ունի. նաւարանը անուանի ու նաւահանգիստը խիստ բանուկ:

ՄՈՍՔՈՒՆ կամ ՄՈՍԿՈՎ (350,000) Հին ատենը Ռուսաց աթոռանիստ քաղաքն էր, հիմա ալ երկրորդ մայրաքաղաքն է, եւ իրենց Թագաւորները հոս Թագ կը դնեն. 1812ին գրեթէ բոլորովին այրեցաւ, բայց ետքէն աւելի փառաւոր շինեցին: Շէնքերուն մէջ երեւելի է Քրեմլին՝ Թագաւորական պալատը, եւ մայր եկեղեցին: Համալսարանն ու ընդհանրապէս գրականութիւնը եւ արուեստները շատ ծաղկած են աս քաղաքիս մէջ: Անուանի է Լազարեան իշխաններուն հոս հիմնած Հայկազեան վարժարանը:

ՔԱԶԱՆ (41,000) Վոլկային մօտ՝ Թաթարներուն մայրաքաղաքն էր. ունի համալսարան եւ աստղաբաշխութեան դիտարան. արուեստներն ու վաճառականութիւնը շատ բանուկ են, եւ Սիպերիոյ բերքերուն գլխաւոր վաճառանոցն է. 1842ին գրեթէ կէսը այրեցաւ:

ՕՐԷՆՊՈՒՐԿ (15,000) Պուխարացիներուն Եւրոպացւոց հետ բրած վաճառականութեանը գլխաւոր տեղն է: Թաթարները հոս մղկիթ ու նաեւ դպրոց մը ունին:

ՔԻԷՎ (47,424) Մոսքուայէն առաջ Ռուսաց մայրաքաղաքն էր. հիմա ալ անուանի է նոր համալսարանը, մայր եկեղեցին, եւ ամուր բերդը:


ԱԹՏԵՐԽԱՆ (46,000) Վոլկա գետին բերանը կղզիի մը վրայ շինած՝ հին Թաթարներուն մէկ ցեղին մայրաքաղաքն էր. հիմա ալ բնակիչներուն շատը Հայ են: Կասպից ծովուն վրայ ամենէն բանուկ նաւահանգիստն է, ու բոլոր տէրութեան գլխաւոր վաճառաւահ քաղաքներէն մէկն է. ձուկի, խոտորի ու մերթի վաճառքը անուանի է:

ՕՏԵՍՍԱ (71,392) Սեւ ծովուն եզերքը Կոստանդնուպօլիսէն 390 մղոն հեռու՝ բոլոր Ռուսաստանի խիստ գեղեցիկ ու ծաղկած քաղաքներէն մէկն է. եւ Թէպէտ նոր շինուած է, բայց աստ նաւահանգիստ ունենալովը խիստ շուտ առաջ դնաց վաճառականու-

Թեամբ եւ հարստութեամբ: Անուանի է Ռիշլիէօ Լիկէոն ըսուած ուսումնարանը որ համալրարանի տասիճան ունի:

ԹԱՅԿԱՆ կամ ԹԱԿԱՆՐՈՔ (16,000) Ազախու ծովուն վրայ ամուր ու բանուկ նաւահանգիստ է. հոս մեռաւ Ռուսաց կայսրը Աղէքսանդր Ա 1825ին:

ՍԵՒԱՍԹՈՓՈԼ կամ ԱԳԵԱՌ. Սեւ ծովուն վրայ շատ գեղեցիկ նաւահանգիստ է, ամուր բերդերով պատած: Նաւարանը խիստ բանուկ էր ու Ռուսաց Սեւ ծովուն վրայի նաւատորմիցը հոս կը կենար. բայց անցեալ պատերազմին ատենը նաւարանը քակուեցաւ ու թալոք նաւատորմիցը ընկղմեցաւ, ու դաշնագրութեանը մէջ գրուեցաւ որ ալ պիտի չշինուի:



ՆԱԻԱՏՈՐՄԻՉ

ԱԳՄԵՂԻՑ կամ ՍԵՄՓԵՐՈՓՈԼ (8,000) Խրիմի կառավարիչը հոս կը նստի:

ՊԱՂՁԻՍԱՐԱՅ (12,700) Խրիմի Թաթար Խաներուն մայրաքաղաքն էր:

ՔԵՓԵ կամ ԹԻՈՂՈՍՒԱ (8,000) Սեւ ծովուն վրայ նաւահանգիստ է, ատենով անուանի՝ բայց հիմա ինկած:

ԿԵՐՉ (10,000) Եէնիգալէի նեղուցին բերանը ազատ ու բանուկ նաւահանգիստ է:

ԿԵՕՁԼԷՎԷ . Խրիմի գլխաւոր նուազանդիսաներէն մէկն է ,  
ԽԱՐԱՍՈՒ . Խրիմի ծաղկած քաղաքներէն մէկն է . բնակիչնե-  
րուն մեծ մասը թաթար ու Հայ են :

ՆՈՐ ՆԱԽԻՉԵՒԱՆ (11,000) ԷԼ ԳՐԻԳՈՐՈՒՅՕԼԻՍ : Հայոց քա-  
ղաքներ են , որ շատ ազատութիւններ ալ ունին :

ՓՈԼՔԱՒԱ (15,000) մեծն Պեթրոս Հոս անուանի յաղթութիւն  
ըրաւ Շուէաի Գարոյոս Եր Թագաւորին դէմ :

ՎԱՐՍԱԽԻԱ կամ ՎԱՐՇԱԻ (164,115) Վիթուլա գետին քովը՝  
ատենով Լեհաստանի մայրաքաղաքն էր , հարուստ ու փառաւոր .  
1830ին եղած պատերազմին ատենը շատ աւրուեցաւ , բայց հիմա  
ալ բարձր տէրութեան քաղաքներուն մէջ երրորդն է , ամուր՝ գեղե-  
ցիկ ու ամէն կողմանէ ծաղկած :

### ԿՂՁԻՆԵՐԸ

Սառուցեալ ծովուն մէջ՝ Սփիցպէրկ կղզիներու խումբը , Նոր  
Ձեմլեա երկու խիտ մեծ կղզիներ , Վայկայ , Քայկույէլ :

Պալթիկ ծովուն մէջ՝ Ալանա , Տակայ , Իօդէլ :

ՌՌՒՍԱՑ ԵՒՐՈՊԱՑԻՆ ԴՌԻՐՍ ՌԻՆԵՑԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ասիոյ մէջ՝ Վրաստան , Շիրուան , Իմերէթ , Ապազա , Հայաս-  
տանին մէկ մասը , ԷԼ Սիպերիա :



ՍԻՊԵՐԻԱՅԻ ՅՈՒՆԵՐՈՒՆ ԲԱԼԽԻՐ ԳԱՅԵԼԸ

Ամերիկայի մէջ՝ Ռուսի Ամերիկան՝ որ Հիւոթային ծայրն է :

# Ե ՓԱՂՂԻԱ

## Ընդհանուր գիտելիք

ՓԱՂՂԻԱՆ ատենով Հռոմեացեցւոց տակն էր . 400ին ատեն ներք Գերմանիայէն Փռանք ըսուած աղբն լեկաւ հոն տիրեց , ու իրենց անուսովք երկրին անուսն : ըսուեցաւ Փրանս կամ Փրանսա : Մէջերնին առաջին թագաւորը եղաւ Փարամնա . ակրու թիւնը ծաղկեցընսզն եղաւ մեծն կարողս . 1792ին մեծ խռովութիւն մը հանելով թագաւորութիւննին փոխեցին՝ հասարակապետութիւն ըրին . 1804ին Պոնափաթէ Նափոլէօնը կայսր եղաւ . բայց 1815ին երբոր ինքը քշուեցաւ , Գաղղիացիք առջինին տէր նորէն թագաւորութիւն ունեցան : Իսկ 1830ին նոր խռովութենէ մը ետքը՝ սահմանադրական թագաւորութիւն հաստատեցին : Բայց 1848ին նորէն փոխուեցաւ կառավարութիւնն ու հասարակապետութիւն եղաւ , որն որ երկու տարիէն ետքը ան ալ վերցաւ ու հիմակուան կայսրութիւնը հաստատուեցաւ :

Գաղղիոյ սահմանն է հիւսիսէն՝ Պելճիդա , Հսլանսա ու Բրուսիա , արեւելքէն՝ Գերմանական դաշնակցութիւնը , Զուէցերի ու Սարտենիա . հարաւէն՝ Միջերկրական ծովն ու Սպանիա . արեւմուտքէն՝ Ատլանդեան ովկիանսը :

Տարածութիւնն է 205,671 քառակուսի մղոն :

Երկրին արեւելեան ու հարաւային կողմերը լեանոտ են , իսկ հիւսիսային ու արեւմտեան կողմերը դաշտային :

Օդը բարեխառն ու անսոց չէ . բայց հիւսիսային կողմը ցուրտ :

Բերքն է երկաթ , տղինձ ու հանքային ածուխ : Հողը խիստ ազէկ բանեցուցած է . ձէթը ազնիւ , գինին խիստ անուանի , մանաւանդ Պուրկոյն՝ Շամփանիա ու Պորտոյ դաւառներուն գինինները . կենդանիներն ալ ընախր են , մանուանդ եղներն ու սլիարները :

Բնակիչն է 35,781,628 . լեզուներն Գաղղիաբէն , որ Եւրոպայի ամէն լեզուներէն աւելի տարածուած է :



ԳԱՂՂԻԱՅԻ

Մշակութիւնը՝ արհեստներն ու ձեռագործները մեծ կատարելութեան մէջ են, թէպէտեւ Անդրիոյ չեն հասած. ուսմունքն ու գիտութիւնն ալ շատ ծաղկած են :

Գաղղիան ատենով 33 նահանգ կամ դաւառ կը բաժնուէր. հիմա 86 քաղաք կը համրուի. ան բաժիններն ալ 366 քաղաք, եւայլն: Կրօնքն է Հռոմէադաւան, թէպէտ  $1\frac{1}{2}$  միլիօն ալ Աւետարանական կայ :

Տէրութեան կառավարութիւնը՝ կայսրութիւն է :

Չօրքը 400,000. բայց պատերազմի ատեն ասկէ խիստ շատ աւելի կրնայ ըլլալ :

Նաւատորմիցը 320 կտոր նաւ :

Գլխաւոր գետերն ասոնք են .

Հռոդանոս կամ Ռոն՝ որ Միջերկրական ծովը կը թափի .

Լուառ, Կարոն, Շարանթ՝ Ատլանդեան սփիւսնոսը .

Սէն կամ Սէնա, Օռն, Վիր, Սոմ՝ որ Մանիքայի ծոցը կը վազեն :

Գաղղիայի մէջ երեւելի լինճ չկայ :

Գլխաւոր լեռները ասոնք են .

Ալպեան դօտիին մէկ մասը, որուն ամենէն բարձր դագաթը Գաղ-



գիայի մէջ Օլան լեռ կ'ըսուի, ու 13,819 ոտնաչափ բարձրութիւն ունի :

Պիրենեան գոտիին ալ մէկ մասը, որուն Նէթու գագաթը 11,165 ոտնաչափ բարձր է :

Ասոնցմէ զառ ալ կան որ բոլորովին Գաղղիայի մէջ են, ինչպէս Սէվանո գօտին եւ Վօսկէ գօտին :

## ԳԼԽԱԻՌՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՓԵՐՌՁ (1,530,262) մայրաքաղաքը՝ Սէն գետին վրայ . խիստ մեծ ու գեղեցիկ քաղաքն է, ու թէ քաղաքականութեան, թէ արհեստից եւ թէ գիտութեանց կողմանէ շատ երեւելի է : Հասարակաց շէնքերը, ճեմելիքները, սպարաէզները, սուսուսնական թանգարանները, ամէնն ալ շատ փառաւոր ու անուանի են : Համալսարանը աշխարհիս մէջ մէկ հատիկ, թագաւորական դրատունն ալ ամենէն հարուստն է : Հիմակուան կայսրը Լուի Նափօլէօն Փարիզ քաղաքը շատ գեղեցկացուցեր է նոր եւ լայն փողոցներ բանալով, նոր շէնքեր շինել տալով եւ շատ մը ծառեր անկելով : Շատ երեւելի շէնք է նաեւ մեծ պարիսպը որ նոր շինուեցաւ՝ 14 բերդով : Աս քաղաքը մեռաւ Ռուսիներանց վերջի թագաւորը Լեւոն Ձ 1391ին :



ԳԱՂՂԱՍԻ ԳՐԱՄԱՏՈՒՆԸ

ԼԻՌՆ (155,000) Ռան եւ Ստան գետերուն մէջտեղը Փարիզէն եա-  
քը ամենէն ծաղկած քաղաքը աս է ամէն կողմանէ, շատ հին՝ ամուր  
ու գեգեցիկ, գիպակէ (Խոսաշ) գործուածքներուն համար մէկ հատիկ:

ՄԱՐՍԻԼԻԱ (192,527) Միջերկրական ծովուն վրայ մեծ ու գե-  
գեցիկ քաղաք, վաճառականութեան գործունէութիւնը զարմանալի,  
եւ նաւահանգիստը խիստ բանուկ: Աս քաղաքը քրիստոսէ 600 տա-  
րի առաջ շինուած է:

ՊՈՐՏՈՅ (130,927) բանուկ նաւահանգիստ, եւ գինիի ու քա-  
ցախի մեծ վաճառականութիւն ունի:

ՌՈՒԱՆ (100,265) բամպակեղէն գործուածքներու կողմանէ աէ-  
րութեան առաջին անուանի քաղաքն է:

ՆԱՆԹ (96,362) աղուոր նաւահանգիստ ունի Լըւառ գետին  
վրայ. թագաւորական նաւերը հոս կը շինուին. վաճառականութիւնն  
ալ շատ բանուկ է:

ԹՈՒԼՈՒՉ 93,379) Եւրոպայի խիստ վաճառաշահ քաղաքներէն  
մէկն է, ամուր՝ եւ արուեստները ծաղկած:

ՍԹՐԱՍՊՈՒՐԿ (64,875) Յովհաննէս Կուլթիւնպէրի հոս գտաւ  
տպագրութեան արհեստը 1436ին. խիստ ամուր ու ծաղկած քա-  
ղաք է, եւ մայր եկեղեցին շատ հոյակապ ու անուանի:

ՕՌԼԷԱՆ (47,393) վաճառաշահ ու ճարտարտուեսա քաղաք է:  
Անգղիացիները 1428ին աս քաղաքը պաշարեցին, ու Ճօան տ'Արը  
ըտուած աղջկանը քաջութեամբ յաղթուեցան: Եկեղեցական հին  
ժողովքներէն 11 հաւը հոս եղած են:

ԱԻՆՆՈՒՆ (35,890 Հռոմայ պապերը քիչ մը ատեն հոս նստան:

ՊԼԱՆՍՍՈՆ (30,700 ասոր քովերը անուանի է Օսէլ պըրը,  
որ խիստ մեծ է, ու մէջը շատ քարացած նիւթեր կան:

ՔԱԼԷ (100,000) Գաղղիայէն Անգղիա անցնելու սովորական ու  
կարճ ճամբան աս ըլլալով՝ նաւահանգիստը խիստ բանուկ ու շատ  
ամուր տեղ մըն է:

ԹՈՒԼՈՆ (69,474) Գաղղիացւոց պատերազմական նաւերը հոս կը  
կենան. նաւարանն ու նաւահանգիստը բոլոր Միջերկրագետին վը-  
րայ մեծութեան կողմանէ մէկ հատիկ են:

ԿՐԸՆՈՊԼ (31,340) ասոր ձեռագործներն ու ամրութիւնը ան-  
սուանի են:

ՄՈՆՓԷԼԻԷ (40,000) Եւրոպայի մէջ շատ անուանի է ասոր բջ-  
ժչկական պարտեզը:

ՏԻԺՈՒՆ (32,252) գինիի ու քացախի վաճառ. նս. հոս ծնած է մեծն Պոսիւէ :

ՌԷՆՍ (45,754) Գաղղիացի թագաւորները մինչև 1830ը կեղեցւոյն մէջ կ'օծուէին :

ՆԱՆԹ (96,362) գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք է. ասիկայ անուանի է Բրօթէսթանդ պատմութեանը մէջ, ինչու որ 1598ին Գաղղիայի Բրօթէսթանդներուն ազատութեան արքունական հրովարտակը հոս տրուեցաւ, որն որ ետքը Լուզոզիկոս ԺԴ եռաւաւ, ու հազարաւոր Բրօթէսթանդ քրիստոնեաներ ջարդուեցան :

ՄԻԻԼՀՈՋԷՆ (29,578) ասոր ամէն աեսակ գործարանները շատ անուանի են :

ԱՄԻԷՆ (52,149) հին ու ամուր քաղաք է, մայր եկեղեցին շատ փառաւոր :

ՊՈՒԼՈՒԵԼ (30,783) բանուկ նաւահանգիստ օւնի :

ԼԻԼ (75,795) Եւրոպային ամուր ու վաճառաշահ քաղաքներէն մէկն է. անուանի է փողերանոցը :

ՎԱԼԵՆՍ (16,122) Պիսս Զ պապը հոս մեռաւ :

ՍԷՆ—ՏԸՆԻ (15,702) Գաղղիացւոց թագաւորները ասոր եկեղեցւոյն մէջ կը թաղուին :

Անուանի են նաեւ աս քաղաքներս. 'նիմ' (53,619), Թրուա, Քամպրէ, Քան, Վէրսայլ, Փուլթիէ, Անկուէմ, Քոլմար, Մես, Սէն Քանթէն, Տոնքէքք, Տուէ, Վալանսիէն, Լը Հաւր, Ռէն, Պրէսթ, Լիմուփ, Մոնթոպան, Բլէրմոն :

Քորսիքա կղզին ալ Գաղղիացւոց ձեռքն է, եւ ասոր մէջ անուանի է Այաչիո քաղաքը, ուր ծնաւ Պոնափառթէ Նափոլէոնը : Բնակիչն է 11,000 :

ԳԱՂՂԻԱՑԻՈՑ ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ասիայի մէջ Հնդկաստանի մէկ կտորը, որուն գլխաւոր քաղաքն է Փանթիշէրի :

'Նաեւ Հնդկաստանի ովկիանոսին մէջ Պուրպոն կղզին, ու Սան Մարի' Մատակասկարի մօտ :

Ափրիկէի մէջ Ճեզայիր կամ Ալճէրի, Սենեկալին մէկ կտորը, Կորէա եւ Պուրպոն կղզիները :

Ամերիկայի մէջ՝ Սուրբ Պետրոս, եւ Միքէլըն կղզիները՝ Սուրբ Լաւրենտիոսի ծոցին մէջ. Կուստալուփփա եւ Կուլանա գաղղիական:

Խաղաղական Ովկիանոսին մէջ՝ Մարքիզա՝ Թաշիթի կղզիները, ու Աքարաօ նաւահանգիստը Նոր Զելանտա կղզիին մէջ, ու նաեւ Նոր Քալետոնիա կղզին:

## Չ ՊԵԼՃԻԳԱ

### ԸՆԴՀԱՆՈՐ ԳԻՐԵԼԷՒ

ՊԵԼՃԻԳԱՆ Երկար ատեն Գերմանիոյ կայսերաց ձեռքն էր, ետքը Գաղղիացիք առին. 1815ին նոր Թագաւորութիւն եղաւ, որ Հոլանտային հետ մէկտեղ Սորբէն նահանգաց Գերմանիան կ'ըսուէր: Բայց 1830ին Պելճիգան Հոլանտայէն բաժնուեցաւ, ու զատ Թագաւորութիւն եղաւ:

Պելճիգային սահմանը հիւսիսէն՝ Հոլանտան է. արեւելքէն՝ Գերմանիան. հարաւէն՝ Գաղղիան. եւ արեւմուտքէն՝ Հիւսիսային ծովը: Տարածութիւնն է 11,382 քառակուսի մղոն:

Բերքն է երկաթ, հանքային ածուխ, փայտ, արմախք ու աղէկ ձեռագործներ:

Բնակիչն է 4,359,000. լեզուներն Գաղղիարէն եւ Գերմաներէնին մէկ տեսակն է:

Կրօնքը Հռոմէադաւան է, բայց Թագաւորը Աւետարանական է, ու շատ աւետարանական եկեղեցիներ ալ կան:

Տէրութեան կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն: Զօրքը 100,000:

Դաշտային երկիր մըն է ու բարձր լեռ չկայ:

Գլխաւոր գետերն են՝ Միւս ու Շէլտ, որ Գերմանական ծովը կը թափին:

## Գ Լ Խ Ա Ի Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ՊՐՈՒՍԷԼ (142,259) մայրաքաղաքն է, ձեռագործը եւ վաճառականութիւնը խիստ ծաղկած: Ատոր մօտ է Վաթէրլոյ դաշտը, ուր

յաղթուեցաւ Նափոլէոն 1815ին :

ԱՆՎԵՐՍԱ կամ ԱՆՏՈՒԵՐՊԻԱ (95,501) ամուր ու վաճառաշահ քաղաք է . անուանի է մայր եկեղեցին :

ԿԱՆՏ կամ ԿԷՆՔ (97,000) հոս Յնաւ Կարոլոս Ե Գերմանիայի կայսրը . անուանի են կտաւի ու բամպակի գործարանները եւ սուսուսական տեղուանքը :

ՊՐՈՒԺ (49,764) վաճառաշահ քաղաք է . շատ գեղեցիկ ջրանցքներ ունի :

ԼԻԷԺ կամ ԼԻԻՔՅԻՔ (81,789) մեծ գործարաններ ու վաճառականութիւն ունի : Ասոր քովերէն շատ հանքային ածուխ կ'եղէ : Երկաթի գործարանները այնչափ շատ են որ քաղաքը երբեմն Պելճիգայի Պիրմինկհամը կ'ըսուի :

ԼՈՒՎԷՆ կամ ԼՈՒՎԱՆՒՈՆ (24,624) հին ու անուանի համալսարան ունի :

ՆԱՄՈՒՐ կամ ՆԱՄԷՆ (22,218) հոս 1815ին մեծ յաղթութիւն ըրաւ Նափոլէոն Բրուսիացիներուն դէմ :

Երևելի են աս քաղաքներս ալ . Օսթէնտա , Մոնս կամ Պէրկէն , Մալին , Թուրնէ , Վէրվիէ , Գուլթրէ :

## Է ՀՈԼԱՆՏԱ կամ ՓԻԼԷՄԷՆԿ

Ընդհանուր գիտելիք

ՀՈԼԱՆՏԱՅԻՔ ատենով Սպանիացւոց տակն էին . 1579ին անոնցմէ դուրի քաշելով զատ հասարակապետութիւն եղան ճարտար ու հարուստ : Ետքը 1815ին Հոլանտան ու Պելճիգան մէկտեղ զատ Թագաւորութիւն մը ձեւացաւ՝ Ստրէն Կոնգրէսոյ դերուինն ըսուած , բայց 1830ին իրարմէ ալ զատուեցան :

Հօլանտային սահմանը հիւսիսէն ու արեւմուտքէն՝ Հիւսիսային ծոցն է . հարաւէն՝ Պելճիգան . արեւելքէն՝ Գերմանիան :

Տարածութիւնն է 12,620 քառակուսի մղոն :

Երկիրը ծովուն ջուրէն ընդհանրապէս ցած ըլլալուն՝ ծովուն ջուրը բռնելու համար մեծամեծ թումբեր շիներ են :

Օգը խոնաւ, փոփոխական եւ անառողջ է :

Հողը ցած ու ջուրոտ բլլալուն՝ խիստ պողաբեր չէ :

Բերքն է հանքային ածուխ, կաւ, կաշի, կարմիր ներկ ու վարպետ ձեռագործներ : Խիստ ազնիւ են կովերն ու ոչխարները, եւ անոնց պանիրը :

Բնակիչը 3,168,000 . լեզուներն հին Գերմաներէնին մէկ տեսակն է :



ՀՈՒԱՆՏԱՅԻ կամ Ֆիլիքսից

Հատ ջրանցքներ ունենալուն համար վաճառականութիւնը շատ ծաղկած է :

Կրօնքը Աւետարանական է, բայց շատ Հռոմէական աւ կայ : Տէրութեան կառավարութիւնը՝ սահմանադրական միապետութիւն :

Զօրքը 30,000 :

Նաւատորմիցը 100 կտոր նաւ :

Լեռ կամ ժայռ չկայ :

Գլխաւոր գետերը ասոնք են .

Հռենոս, Միւս, Շէլա, Եիսսէլ, Վէխթ եւ Հունս, որոնց բոլորը Գերմանական ծովը կը թափին :

Ամէն տեղ շատ ջրանցքներ ունի՝ որ ճամբորդութեանն ու վաճառականութեանը համար շատ կը գործածուին :

## ԳԼԹԱԻՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԱՄՍԴԵՐՏԱԾ (224,235) Հոլանտայի հին մայրաքաղաքը, Եւրոպայի ծաղկած ու հարուստ քաղաքներէն մէկն է, եւ մեծ ու բանուկ նաւահանգիստ ունի: Ատենով ասոր մէջը անուանի էր Հայոց տպարանը:

ՀԱՅԻԱ կամ ՀԱԱԿ (72,467) հիմնական մայրաքաղաքն է: ՌՈԹԵՐՏԱԾ (88,812) Ամսդերտամէն հոգը վաճառաշահ քաղաքն է:

ՈՒԹՐԵՔԹ (46,812) մետաքսեղէնի գործարաններ ունի:

ԼԻՅՏԱ (36,000) մեծ համալսարան ունի, ուր Պոէրհաւ անուանի բժիշկը դասատու էր:

ՄԱՍԹՐԻՔԹ (25,241) բոլոր Եւրոպայի խիստ ամուր քաղաքներէն մէկն է:

Անուանի են նաեւ Հարլէմ, Կրոնինկէն, Նիմէկ, Սարամ, Լուքսենպուրկ:



ՀՈՒԱՆՏԱ

## ՀՈՒԱՆՏԱՑԻՈՑ ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ափրիկէի մէջ Սուրբ Գէորգ՝ Կուկնէայի մէջ:

Ամբրիկացի մէջ՝ Կուլանային մէկ կտորը, եւ Սուրբ Եւստաքէոս:

Քուրասոայ, Պօնէյք, Առուպա, Սապա, Սուրբ Մարտինոս (մէկ մասը) կղզիները, որ փոքր Անգիլեան կղզիներուն քովերն են :

Ովկիանիայի մէջ՝ Սուամադրա ու Ճավա կղզիներուն մէյմէկ կըտորը. Պանքա ու Պիլիթօն կղզիները՝ Սուամադրային քովը. փոքր Մոլուքեան կղզիները. Ամպոյնա կղզին եւ ուրիշ շատ պզտիկ տեղեր :



## Ը. ԶՈՒՅՅԵՐԻ

Ընդհանուր ֆիդելէտ :

ՉՈՒՅՅԵՐԻՆ ատենով Հելլենտիա կըսուէր, ու Հռոմայեցւոց ձեռքն էր. ետքը Գաղղիացւոց անցաւ, քանկէց ետքն ալ Գերմանիոյ հետ միացաւ : Զուիցերացիք 1308ին Գերմանացւոցմէ դուրս քաշեցին ու զատ հասարակապետութիւն եղան : Աս հասարակապետութեան վրայ Նափոլէանն ալ մէկ քանի նահանգներ աւելցուց. հիմա 1815էն 'ի վեր ըստրը 22 նահանգ է՝ իրարու դաշնակէց. բայց առանձին ազատ կառավարութեամբ :

Զուիցերիին սահմանը հիւսիսէն՝ Գերմանիան է. արեւելքէն՝ Աւստրիան. հարաւէն՝ Իտալիան. արեւմուտքէն՝ Գաղղիան :

Տարածութիւնն է 15,284 քառակուսի մղոն :

Երկիրը Եւրոպայի խիստ լեռնոտ ու բարձր երկիրներէն մէկն է. մնծամեծ ժայռեր ու սյրեր ունի, շատ ալ ծաղկած դաշտեր :

Օգը ընդհանրապէս ցուրտ է, բայց առողջ :

Հողը շատ բարեբեր ու աղէկ մշակած է : Շատ հանքային ջուրեր ունի. գետեր ալ կան որ աւաղնին ոսկիով խառն է :

Բերքն է կտաւ, արմտիք, մնմ. բայց ամենէն ընտիրը՝ կով ու սէնար :

Բնակիչը 2,890,116. որոնց լեզուն՝ տեղ տեղ Գերմաներէն է, տեղ տեղ ալ Գաղղիարէն :





ՁՈՒԻՑԵՐ

Կրօնքը Աւետարանական եւ Հռոմէադաւանն :

Կառավարութիւնն է հասարակապետութիւն 22 նահանգի՝ որ իրարու դաշնակից են, ու զատ զատ կառավարութիւն ունին : Ընդհանուր երեսփոխաններու ժողով կայ՝ որ ամէն տարի Պէոնա քաղաքին մէջ կը ժողվուին :

Գլխաւոր լեռներն են՝ Ալպեան դօտին, որուն ամենէն բարձր գագաթները հարաւային կողմերն են . ասոնց առաջինը Մուրը Կօթարտ է, որ մինչեւ 14,000 ոտնաչափ բարձրութիւն ունի : Ճուռա դօտին հիւսիսային արեւմտեան կողմն է :

Եւրոպայի գլխաւոր գետերուն ծայրերը Չուիցերիի լեռներէն կը սկսին . ինչպէս Դանուբ գետը, Հռենոս գետը, Փօ գետը եւ այլն :

Լիճերը շատ անուանի են . Ճինելըայի ու Քօնշտանսի լիճերը մեծ են, ու նաեւ Մաճիօրէ լիճը :

## ԳԼԽԱՎԱՐ ԳԱՂԱՔՆԵՐԸ

ՃԻՆԵՒԻՐԱ (29,108) Չուիցերիին ամենէն երեւելի քաղաքն է]. ձեռագործները՝ մանաւանդ ժամացոյցը եւ ուրիշ ոսկիէ ու արծաթէ բանուածքները շատ յարգի են :

ՊԱՋԻԼԻԱ կամ ՊԱԼ (27,313) Չուիցերիին ամենէն վաճառա-

շահ քաղաքն է . Թուղթ շինելու արհեստը հոս գտնուած է  
կ'ըսեն : Աստուածարանական դպրոց ունի որ օտար երկիրներու մէջ  
Աւետարան քարոզելու համար շատ քարոզիչներ կը պատրաստէ :

ՊԵՌՆԱ (27,758) Հալէյ աստեղաբաշխը հոս ծնած է :

ԼՈՒՉԵՌՆԱ կամ ԼԻՒՅԷՌՆ (10,068) աս քաղաքիս քովերը աս  
հագին առիւծ մը կայ լեռան մը կտորէ փորած հին ատենէ 'ի վեր :

ՅՈՒՐԻՔ (17,040) Կեսնէր բանաստեղծը հոս ծնած է . անուանի  
է բամպակեղէնի ու մետաքսեղէնի գործարաններուն համար :



ՅՈՒՐԻՔ

ԼՈՉԱՆՆԱ (19,542) Ճինեւրայի լիճին վրայ աղուոր քաղաք է :  
ՇԱՔՓՈՒՋ (7,710) Հռենոս գետին Լոֆէն ըսուած երեւելի  
ջրվէժը ասոր մօտ է :

ՆԻՕՇԱԹԷԼ կամ ՆԱՅԷՆՊՈՒՐԿ (7,727) Ժամայոյց շինելու  
գործարաններ ունի :

ԱԼԹՈՐՔ (2,112) Գուլիէլմոս Թէլ ըսուած կտրիճը աս քա-  
ղաքէն էր , որ իր հայրենիքը բռնաւորի մը ձեռքէ ազատեց :

ՍԻՌՆ կամ ԶԻԹԹԷՆ (3,516) լեռներու մէջ քաղաք մըն է :  
Հոս տեսակ մը մարդիկ կան՝ որ խուլ, մուռջ, անկար ու գրեթէ անըզ-  
դայ են , վիզերնուն տակն ալ կախուած խոշոր խոյլ ունին :

Ուրիշ գլխաւոր քաղաքներն են Շուից , Սանկալոյ , Ֆրիպուրկ ,  
Լուկանոյ եւ Հերիսալ :

# Թ . Ա Ի Ս Տ Ր Ի Ա

Ընդհանուր գիտելիք :

Մե՛ծն Կարոլոս երբոր աս երկրիս տիրեց, իր տերութեանը այսինքն Գերմանիոյ եւ Գաղղիոյ արեւելեան գին ըլլալուն համար անունը Աստրիա կամ Էսթրիայի դրաւ . որ Արեւելեան Թագաւորութիւն ըսել է : Ինչուան 1806ը Աւստրիայի կայսերը բոլոր Գերմանիոյ կայսր կը սեպուէին . 1500ին ատենները իրենց տակը առին նաեւ Մաճառիստանի ու Պոհեմիոյ Թագաւորութիւնները . 1772ին Ահաւտանին մէկ կտորն ալ՝ այսինքն Կալիցիան՝ իրենց բաժին ինկաւ . 1814ին իրենց եղաւ Լոմպարտիոյ եւ Վենետիկի տերութիւնը, Լիւրիկէն, ու Տալմացիան . 1846ին ալ Քրաքովիոյ հասարակապետութեան երկիրը :

Աւստրիոյ սահմանը հիւսիսէն՝ Բրուսիան ու Ահաւտանն է . արեւելքէն՝ Ռուսաստանն ու Մոլտաւիան . հարաւէն՝ Պոնիան, Սերվիան, Ադրիական ծովն ու Հռոմի տերութիւնը . արեւմուտքէն՝ Սարտենիան, Չուիցերին ու Պաւիերան :

Աւստրիոյ կայսերութիւնը 20 կուսակալութիւն կամ դաւառ կը բաժնուի՝ իրարու անհաւասար մեծութեամբ . ասոնց ամենուն մէկէն գլխաւոր կատրները ութն են . այսինքն Աւստրիոյ արշիգըքտութիւն, Պոհեմիա, Մորաւիա եւ Սիլեզիա, Կալիցիա, Մաճառիստան, Լիւրիկէ, Տալմացիա, Լոմպարտիա եւ Վենետիկ :

Տարածութիւնն է 257,453 քառակուսի մղոն :

Երկրին մեծ մասը լեռնոտ ու բարեբեր է :

Օդը ընդհանրապէս բարեխառն ու առողջ :

Բերքն է երկաթ, պղինձ, կապար, աղ : Մաճառիստանի մէջ ոսկիի հանք ունի, որուն նմանը Եւրոպայի մէջ չկայ : Շատ արծաթ ու սնդիկ կ'ելլէ Իստրիայէն . անուանի է Թորայի դինին, Պոհեմիային ալ ապակին :

Բնակիչն է 36,614,466 . որոնց լեզուն տեղ տեղ Գերմաներէն, Իտալերէն, Սլաւերէն ու Մաճառերէն է :



ԱՒՍՏՐԻԱՅԻ

Քաղաքականութիւնը, ճարտարութիւնը եւ վաճառականութիւնը  
սա վերջի տարիներուս մէջ շատ առաջ գացած են :

Կրօնքն է Հռոմէական , Աւետարանական եւ Յունադաւան :

Տէրութեան կառավարութիւնն է բացարձակ միապետական  
բայց Մաճառիստանին մէջ չափաւորած :

Զօրքը 400,481 :

Նաւատորմիցը 104 կտոր նաւ :

Գլխաւոր լեռներու գօտիները իրեք հատ են . Ալպեանը՝ հարա-  
ւային արեւմտեան կողմը . Պոհեմիայի գօտին՝ հիւսիսային արեւմը-  
տեան . ու Կարպաթեան գօտին՝ արեւելեան :

Ամենէն բարձր տեղը Օրթլէրսպից լեռ կ'ըսուի , բւ 12,821 ստ-  
նաչափ բարձր է :

Գլխաւոր դետերը ասոնք են .

Օտէր , Վիւթուլա , սր Պալթիկ ծովը կը թափին .

Դանուբ՝ Սեւ ծովը .

Փոյ , Ատիճէ , Պրէնթա , Պաքքիլիոնէ՝ Ադրիական ծովը :

Գլխաւոր լիճերն են Փլաթթէն լիճ ու Նիւսիէտլ լիճ :

# Գ Լ Խ Ա Ի Ո Ր Գ Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

## 1. ԱՐՇԻԳՒՍՈՒԹԻՒՆ ԱՒՍՏՐԻՈՅ

ՎԵՆՆԱ (431,147) տէրութեան մայրաքաղաքը, թէ արհեստի եւ թէ գիտութեան ու ամէն տեսակ քաղաքականութեան կողմանէ Եւրոպային առաջին կարգի քաղաքներէն մէկը կը սեպուի: Անուանի է կայսերական դրատունը, զինարանները, թանգարանը, համալսարանը եւ ուրիշ ուսումնական տեղուանքը. շէնքերուն մէջ ալ կայսերական պալատն ու սրբոյն Ստեփաննոսի եկեղեցին: Հոս է Միխիթարեանց վանքն ու տպարանը:



ՎԵՆՆԱ

ԼԻՆՅ (26,676) ամուր ու վաճառաշահ. կաշիի վաճառականութիւն ունի:

ՍԱԼՅՊՈՒՐԿ (14,000) մեծ աղի հանք ունի:

ՏՐԻԴԵՆՏՈՆ կամ ԹՐԷՆԹ (13,195) հոս եղաւ 1545ին Հռոմէական վերջին մեծ ժողովը:

ԿՐԱՑ (50,000) Սթիրիա կամ Շթայերմարք գաւառին գլխաւոր քաղաքն է, եւ օրէ օր ծաղկելու վրայ է :

Անուանի են նաեւ Ինսպրուք, Շթայեր, Մարպուրկ :

## 2. ՊՈՀԵՄԻԱ

ՓՐԱԿԱ (118,405) անուանի է համալրարանը . շատ ալ երեւեւ էի գործարաններ ունի :

ՌԱՅԻԷՆՊԷՐԿ (12,800) բոլոր Եւրոպայի խիստ ճարտար քաղաքներէն մէկն է :

ՔՈՒԹԹԷՆՊԷՐԿ (10,000) արծաթի, պղինձի ու կապարի հանք ունի :

ՔԱՐԼՍՊԱՏ (3,300) տաք ջուրերուն համար անուանի է :

Անուանի են նաեւ Թեփլից, Պուսվէյս, Էկէր :

## 3. ՄՈՐԱՒԻԱ ԵՒ ՍԻԼԵԶԻԱ

ՊՐԻԻՆ (45,189) բուրդեղէնի եւ ընդհանրապէս վաճառականու թեան եւ արուեստից կողմանէ երեւելի քաղաք է :

ՕԼՄԻՒՑ (13,127) ամուր ու ծաղկած քաղաք է :

Անուանի են նաեւ Իկլա, Թրոփաւ, Փրոզնից :

## 4. ԼԻԻՐԻԿԷ

ԼՈՒՊԻԱՆԱ կամ ԼԱՑՊԱԽ (17,357) գեղեցիկ ու վաճառաշահ քաղաք է :

ԹՐԵՍ (70,846) Ադրիական ծոցին վրայ տէրութեան գլխաւոր նաւահանգիստն է . վաճառականութիւնը խիստ բանուկ :

Երեւելի են նաեւ Քափօտիսթրիա, Կորիցիա, Աքուիլէա՝ որ խիստ հին քաղաք է, Իստրիա՝ որ սնդիկի հանք ունի, եւ Քլակէնֆուրթ :

## 5. ԿԱԼԻՑԻԱ

ԻԼՂՈՂ կամ ԼԷՄՊԷՐԿ (75,292) մեծ ու գեղեցիկ քաղաք : Անուանի են հոս տեղի Հաւմէականաց, Հայոց ու Յունաց արք եւ պիսկոպոսարանները :

ՊՐՈՏԻ (19,000) վաճառականութիւնը խիստ բանուկ է :  
ՎԵԼԻՉԲԱ (6,500) անուանի է ասոր քովի աղահանքը :



ՎԵԼԻՉԲԱՆԻ ՄԵԾ ԱՂԱՀԱՆՔԸ

ՍԱՄՊՈՐ (6,718) վաճառականութիւնն ու արուեստները ծաղկած քաղաք :

Ուրիշ երեւելի քաղաքներն են Մնեաթին, Չեռնովից, Եարուսլաւ, Տրոհոպիժ, Թարնոփոլ, Սուչովա, Սթանիսլաւ, Բութի : Իսլոր աս քաղաքներուն մէջ շատ ալ Հայեր կան :

## 6. ՄԱՃԱՌԻՍՏԱՆ

ՓԻՇԹ (100,000) Հիմա Մաճառիստանին ամենէն մեծ ու դեղեցիկ քաղաքը աս է :

ՊՈՒՏԻՆ կամ ՊՈՒՏԱ կամ Օֆին (43,000) Մաճառիստանի Հին մայրաքաղաքն է, որ երկար ատեն Օսմանցոց ձեռքն ալ մնաց : Փէշթ ու Պուտա դիմացէ դիմաց են Դանուբի երկու լիզումը : ՓՐԵՍՊՈՒՐԿ (39,177) Պուտինէն առաջ Մաճառիստանին մայրաքաղաքը աս էր : Աւստրիոյ կայսրը Հոս Մաճառներուն թագաւոր կը ստակուի, եւ ազգային ժողովը Հոս կ'ըլլայ :

ՓԵԹՐՈՎԱՐԱՏԻՆ (4,033) ամուր ու անուանի բերդ ունի :

ՉԵՄՒԻՆ (10,400) վաճառաշահ քաղաք :

ՇԻՄՆԻՅ (8,400) Սոկիի, արծաթի ու կապարի հանքեր ու-

ՖՐԵՄԵՆՅ (4,800) Նին, որ Եւրոպայի մէջ ամենէն մեծերն են :

ՔԼԱՒՉԻՆՊՈՒՐԿ կամ ԲՈՂՈՇՎԱՅԻ կամ ԲԼՈՒԺ (25,000) Թը-

բանսիրականիոյ գլխաւոր քաղաքն է :

ՍԻՊԻՆ կամ ՀԷՐՄՄԱՆՇԹԱՏ (21,512) վաճառաշահ քաղաք :

ՔՐՈՆՇԹԱՏ կամ ՊՐԱՇՈՎ (36,000) Թրանսիրականիոյ ամենէն ծաղկած ու բաղմամբ քաղաքն է :

ԿԵՐԼԱ, ճՈՒՐՃՈՎՆ ու ԵՂԻՍԱԲԵԹՈՒՊՈԼԻՍ կամ ՊԱՇՎԱԼՈՎ . առ իրեքը Հայոց քաղաքներ են Թրանսիրականիոյ մէջ, ու ազատ կառավարութիւն ունին :

ԹԵՄԸՇՎԱՐ (16,000) խիստ ամուր ու անուանի քաղաք :

ԱԿՐԱՄ կամ ԶԱԿՐԱՊ (12,400) Խրուաթներուն երկրին գլխաւոր քաղաքն է :

Անուանի են նաեւ Պելիրատ, Տեպրեցին, Մորոշ—Վաշարհէյ, Նայսոց, Շիօւլլայսէնպուրկ կամ Պելիկրատ, Ֆիումէ :

## 7. ՏԱԼՄԱՑԻԱ

Տալմացիային գլխաւոր քաղաքներն են՝

ԾԱՐԱ կամ ԶԱՏՐԻԱ (6,982) չափաւորապէս վաճառաշահ :

ՍՓԱԼԱԹՈՅ (10,982) ասոր մօտ է Հին Սալոնա քաղաքին աւերակը :

ՐԱԿՈՒԶԱ (6,296) ատենով Հասարակապետութիւն էր . ՔԱԹԱՐՈՅ (2,127) եւ ՍԵՊԵՆՒՔՈՅ (6,422) :

## 8. ԼՈՄՊՈՒՐՏԻԱ ԵՒ ՎԵՆԵՏԻԿ

Աս գաւառին մէկ կտորը 1859ին Սարտենիայի Թագաւորին ձեռքը անցաւ :

ՄԱՆՌՈՒԱ (30,674) ամուր բերդ ունի . Վիրգիլիոս առ քաղաքին քովերը ծնած է .

Լոմպարտիոյ մէկալ երեւելի քաղաքներն են ՊՐԷՇԻԱ, (34,955) անուանի քաղաք : ՔՐԵՄՈՆԱ (28,318) մայր եկեղեցի ունի, որուն զանգակատունը Իտալիայի ամենէն բարձր ու գեղեցիկն է :

ՎԵՆԵՏԻԿ (126,768) Ագրիական ծոցին ծայրը 72 կղզիներու վրայ շինած մեծագործ քաղաք է, որուն շատ փողոցներուն մէջ նաւակներով կը ստալին : Փառաւոր է սուրբ Մարկոսի եկեղեցին, հրապարակն ու գրատունը : Վենետկոյ քով եղած մանր կղզի-



ներէն մէկն է Սուրբ Ղազար՝ Մխիթարեանց վանքն ու տպարանը :  
Վենետիկոյ մտերբը անուանի են Քիօճա, Թրէվիզ եւ Պասան :


ՎԵՐՈՆԱ (49,776) հին ու գեղեցիկ քաղաք . հոս ծնած են Պը-  
լինիոս երեց ընախօսը, եւ Վիտորովիոս ճարտարապետը :

ՓԱՏՈՒԱ կամ ՊԱՏԱԻՒՈՆ (54,275) խիստ հին քաղաք է . ան-  
ուանի է համալսարանը : Տիտոս Լիւիոս լատին պատմիչը հոս ծը-  
նած է :

ՎԻՉԵՆՅԱ (34,513) Պալատիոս երեւելի ճարտարապետը հոս  
ծնած է :

ՈՒՏԻՆԷ (26,710) կտաւի ու մետաքսի ձեռագործներ ունի :

ՊԵՂՂՈՒՆ (11,000) մեծ պղինձի հանք ունի :



## Ժ. ԲՐՈՒՍԻԱ կամ ՊՐՈՒՅ

Ընդհանուր գիրքէք :

ՏԵՒՏՈՆԵԱՆ ասպետները ժԳ դարուն սկիզբները աս երկ-  
րիս արեւելեան կողմին փրկեցին . բայց Բրուսիոյ մեծնալը 1700ին  
եղաւ, երբոր իրենց Փրիդերիկոս Թագաւորը Լեհաստանի մէկ կտո-  
րին ալ փրկեց :

Բրուսիոյ սահմանը հիւսիսէն՝ Պալմիի ծովն է . արեւելքէն՝ Լե-  
հաստան . հարաւէն՝ Աւստրիա . արեւմուտքէն՝ Գերմանիա : Բրու-  
սիա ութը մեծ գաւառ կը բաժնուի :

Տարածութիւնն է 107,960 քառակուսի մղոն :

Երկիրը ընդհանրապէս դաշտային ու ջրոտ է, եւ հիւսիսային  
կողմը շատ լիճեր կան :

Օդը խիստ ցուրտ է, անոր համար շատ պտուղ չկրնար հաս-  
ցընել :

Բերքն է ամէն տեսակ հանք, կտաւ, աղէկ ձեռագործեր, յախ-  
ճապակ, ազնիւ բուրդ, չուխայ եւ սխար :

Բնակիչը 16,285,000 . որոնց լեզուն մաքուր Գերմաներէն է :



ԲՐՈՒՍԻԱՅԻ

Քաղաքականութիւնն ու արհեստը խիստ ծաղկած են, վաճառականութիւնն ալ աղէկ կը բանի :

Կրօնքը Աւետարանական է, բայց շատ Հռոմէադաւան ու Հրեայ ալ կան :

Կառավարութիւնը միապետական :

Ձօրքը 350,000 :

Երեւելի լեռ մը չունի . թէպէտ Սիլեզիա գաւառին մէջը բաւական բարձր գօտի մը կայ . ու նաեւ հարաւային արեւմտեան կողմը Թիւրինիական ու Հարձ լեռները կան :

Գլխաւոր գետերն են՝ Էլբա, Վիսթուլա, Բասարաճ, Փոփկէլ, Միմէլ, Հռենոս եւ այլն :

Լիճերը շատ են . Սփիրտինկ լիճը ու Մուրից լիճը ամենէն մեծ են :

## Գ Լ Թ Ա Ռ Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

Պեռլիս (442,487) մայրաքաղաքը, Եւրոպայի աղբուր քաղաքներէն մէկն է . անուանի են համալսարանը, դիտարանը, թանգարանը . երկաթէ ու յախճապակէ բանուածքը խիստ աղնիլ :

Պրեսլա (112,194) թէ՛ արհեստի եւ թէ՛ վաճառականութեան կողմանէ շատ ծաղկած քաղաք է :

ՔԵՆԻՎՍՊԵՐԿ (75,234) Պալմիկ ծովուն վրայ Հին ու փառաւոր քաղաք է :

ՔՈՒՌՆԵԱ (90,246) շատ Հին քաղաք է Հռենոս գետին քով , ու մեծ առուաուր ունի :

ՏԱՆՅԻԿ կամ ԿՏԱՆՍՔ (66,827) տէրութեան խիստ ամուր քաղաքն է , վաճառաշահ . գլխաւոր վաճառքն է օղի :

ՄԱԿՏԻՊՈՒՐԿ (56,181) Հոս ծնած է Ութոն Կուէրիք , որ շրջելոյլ մերենան Հնարեց :

ԱՔՈՒՍԿՐԱՆԱ կամ ԷՔՍԼԱՇԸՓԷԼ (45,600) մեծն Կարոլոս եւ իր յաջորդները երկար ատեն Հոս նստան . շատ Հանքային ջուրեր ունի :

ՍԹԵԹԻՆ (47,202) վաճառականութիւնը խիստ ծաղկած է :

ՓՈՋԷԻՆ կամ ՓՈՋՆԱՆ (40,200) Հին ատենը Ղեհաստանի մայրաքաղաքն էր , Հիմա ալ ամրութեանը Համար անուանի է :

ՀԱԼԼԷ (29,800) երեւելի Համալսարան , ուսումնական տեղուանք եւ աղահանք ունի :

ՓՈՅՏԱՄ (37,549) տէրութեան երկրորդ մայրաքաղաքն է :

ՍԹՐԵԼՍՈՒՆՅՏ (16,500) բանուկ նաւահանդիստ ունի :

ՖՐԱՆՔՓՈՐԹ (26,692) Օտէր գետին վրայ՝ ամուր ու վաճառաշահ քաղաք է :

ԹՈՒԷՐ կամ ՏՐԵՒՐԻ (17,112) Գերմանիոյ ամենէն Հին քաղաքն է :

ՔՈՊԼԷՆՅՏ (21,000 ամուր քաղաք է :

ԹՈՌՆ . Կապերնիկոս ատղաբաշխը Հոս ծնած է :

Անուանի են նաեւ Միւնսթեր , Թիլիթ , Մէմլ , Բուսթրին , Լուցէն , Կրկաւ , Էրֆուրթ , Տիւսէլտորֆ :

Պրուշի ձեռքն է բուկէն կղզին՝ Պալմիկ ծովուն մէջ :



# ԹԱՒԵՐՄԱՆՆԱԿԱՆ ԳԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Ընդհանուր գիրքեր :

ԳԵՐՄԱՆՈՅ մէջ ատենով զանազան բարբարոս ազգեր տիրած էին, ինչուան որ իններորդ դարուն մէջ մեծն Կարոլոս նուաճեց զիրենք, եւ իր յաջորդները Գերմանիոյ կայսր ըսուեցան . 1806ին պէտք եղաւ որ Ֆրանչիսկոս Ա կայսրը հրաժարի Գերմանիոյ կայսր ըսուելէն . 1814ին Վեննայի ժողովին մէջ Եւրոպայի գլխաւոր Թագաւորները սրռչեցին որ Գերմանիան երեսունուութը տէրութիւններ բաժնուի՝ իրարու դաշնակից, եւ բոլորը մէկէն ըսուի Գերմանական դաշնակցութեան : Աւստրիան ու Բրուսիան մասով մը աս դաշնակցութեանը մէջն են, ու ամենէն մեծ ազդեցութիւն ունին . ասոնցմէ ետեւ դաշնակցութեան գլխաւոր տէրութիւնները աս չորսն են՝ որ Թագաւորութիւն կ'ըսուին . Պաւիերա, Սաքսոնիա, Աննոզէր ու Վիրթեմպերկ :

Գերմանական դաշնակցութեան սահմանը հիւսիսէն՝ Պալմիրիկ ծովն ու Տանիմարզան է . արեւելքէն՝ Բրուսիա ու Ղեհաստան . հարաւէն՝ Աւստրիա ու Չուիցերի . արեւմուտքէն՝ Գաղղիա՞ ու Հունտա :

Տարածութիւնն է 244,414 քառակուսի մղոն :

Հարաւային կողմի երկիրը լեռնոտ ու անտառներով լեցուն է . իսկ հիւսիսային կողմը՝ դաշտային ու ջուրսա՞ :

Օդը անկանոն է . հիւսիսային կողմը ձմեռը շատ ցուրտ, ամառը շատ տաք :

Բերքն է ամէն տեսակ մետաղ ու հանք, մանաւանդ արծաթ ու կապար, որ Սաքսոնիայէն կ'ելլեն : Բոյսերուն մէջ անուանի են ցորենը, պտուղները, ծխախոտը, կանեփը եւ դեանախըն . ձորք . կենդանիներուն մէջ ալ ձին :

Բնակիչը 45,091,663, որոնց լեզուն Գերմաներէն է :



ԳԵՐՄԱՆԱԾԻ

Կրօնքը՝ հիւսիսային կողմերը աւելի Հռոմէադաւան, հարաւային կողմերը Աւետարանական :

Գերմանիոյ դաշնակից տէրութիւնները իրարմէ անկախ կառավարութիւն ունին . բայց մեծամեծ գործողութիւններու համարձքքանքֆորթ քաղաքին մէջ ժողով կ'ընեն :

Հոս կը դնենք նախ ըրըր Գերմանական դաշնակցութեան տէրութիւնները, իրենց բնակիչներուն թիւը, ու ամէն մէկուն գըլխաւոր քաղաքը . ետքը ասոնց չորս գլխաւորներն ալ զատ կը յիշենք :

ՔԱՌ՝ ՄՂՈՆ    ՌՆԱԳԻՉ՝    ՄԱՅՐԱՔԱՂԱՔ    ՌՆԱԿԷ

1 Աւստրիայի մէկ մասը	70,293	11,893,192	Վեննա	431,147
2 Բրուսիայի մէկ մասը	66,421	11,775,198	Պեռլին	442,487
3 Պաւարիա	29,637	4,559,452	Միւնխի	106,776
4 Սաքսոնիա	5,917	1,987,832	Տրէզտէն	91,277
5 Աննովէր	14,811	1,819,253	Աննովէր	42,484
6 Վերթեմպերկ	7,554	1,815,686	Սթիւթկարտ	28,616
7 Հեսսէ—Տարմաստաթ	3,761	854,319	Տարմաստաթ	30,000
8 Հեսսէ—Քասսէլ	4,439	759,751	Քասսէլ	32,516
9 Հեսսէ—Համպուրկ	106	24,921	Համպուրկ	4,500
10 Մէքլենպերկ—Շուէրին	4,845	541,449	Շուէրին	17,336

	ՔԱՌ. ՄՂՈՇ	ԲՆԱԿԻՉ	ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԹՅՈՒՆՉ
11 Մեքլէնպերկ—Սթրեկից	767	99,628	Սթրեկից 6,484
12 Նասսաւ	1,751	429,341	Ռեխպատէն 12,269
13 Հոլսթէն ու Լանենպերկ	3,729	526,850	Կլուքսպերկ 6,219
14 Օլտէնպերկ ու Քնիրհալտէն	2,421	283,665	Օլտէնպերկ 7,829
15 Սաքսի—Ելթէնպերկ	510	132,850	Ելթէնպերկ 13,697
16 Սաքսի—Քօպերկ—Կօթթ	799	150,412	Քօպերկ 12,902
17 Սաքսի Մախնինկէն	971	166,364	Մախնինկէն 6,205
18 Սաքսի—Ռախմըր	1,418	262,524	Ռախմըր 11,144
19 Շուարցպերկ Ռուտտլտաթ	331	69,038	Ռուտտլտաթ 5,743
20 Շուացպերկ Սոնարսհարտէն	327	60,847	Սոնարսհարտէն 3,500
21 Ռալանք	461	59,697	Երոլտէն 2,000
22 Պատէն	5,904	1,356,943	Քարլոռուհի 23,217
23 Պրեմն	112	74,000	Պրեմն 58,478
24 Պրունսուիք	1,400	271,208	Պրունսուիք 43,291
25 Ֆրանքֆորթ	90	77,911	Ֆրանքֆորթ 57,552
26 Համպուրկ	151	200,690	Համպուրկ 148,754
27 Լուպէք	114	55,560	Լուպէք 26,098
28 Լուքսեմպերկ ու Լիմպերկ	2,182	400,000	Լուքսեմպերկ 11,143
29 Լիբրէ—Տէթմուլտ	438	106,615	Տէթմուլտ 4,716
30 Լիբրէ—Շարմպերկ	207	30,226	Պիւքենպերկ 3,250
31 Լիխտենսթաին	53	7,360	Վասուձ 1,700
32 Ռիւս հին	149	35,159	Կրիթլ 6,215
33 Ռիւս նոր	491	78,924	Շլաից 4,850
34 Ենհալթ—Պեռնպերկ	339	52,641	Պեռնպերկ 6,772
35 Ենհալթ—Տեսսալք	360	68,082	Տեսսալք 12,000
36 Ենհալթ—Քօթէն	318	43,677	Քօթէն 6,136
37 Հոհենզոլլէռն—Հէլինկէն	117	20,143	Հէլինկէն 3,389
38 Հոհենզոլլէռն Սիկմարինկէն	335	45,431	Սիկմարինկէն 1,804

Մօտ օրերս աս երկու վերջինները ստակով Բրուսիայի տէրութեան սաացուածքը եղան :

# ՎԵՍՏՈՐ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՈՒ ՔԱՂԱՔՆԵՐԸ

## ՊԱՒԻԵՐԱ

Պաւիերայի հիմնկուան թագաւորութիւնը հաստատուեցաւ 1606ին . կառավարութիւնը սահմանադրական միապետութիւն է . թագաւորը եւ բնակիչներուն երկու [երրորդը Հռոմէադաւան են , մնացածը Աւետարանական :

ՄՈՆԱՔՈՅ կամ ՄԻՒՆԻՔ (106,776) Գերմանիոյ աղուօր ու ծաղկած քաղաքներէն մէկն է . մեծաշէն է թագաւորական պալատը , համալսարանն ալ անուանի :

ՆՈՒՐԻՄՊԵՐԿ (45,381) հոս շատ ծաղկած են ձեռագործները , որով մեծ առուտուր կ'ըլլայ . ծոցի ժամացոյցը հոս գրտնուած է :

ԱՒԿՍՊՈՒՐԿ կամ ԱՒԿՈՒՍԹԱ (38,000) հիւանդանոցը խիստ մեծաշէն է . անուանի է առ քաղաքիս լրագիրը , որ 1798ին հաստատուեցաւ , ու Արկէմէյն Ձէյթընի կ'անուանուի :

ՌԱԹԻՍՊՈՒՆԱ կամ ՌԷԿԻՆՍՊՈՒՐԿ (23,000) Գերմանիոյ կայսրընտիրները առենով հոս ժողով կ'ընէին : Ասոր մօտ է վալահալլա անուանով նոր շինուած հռչակաւոր թանգարանը :

ՎԻՅՊՈՒՐԿ (27,000) անուանի է համալսարանը ու բերդը :

Անուանի են նաեւ Պամպերկ , Լանտաւ , Փասաւ , Պայրայթ , Բնափախ , Աշաֆէնպուրկ :

## ՍԱՔՍՈՆԻԱ

Սաքսոնիոյ թագաւորութիւնը 1806ին հաստատուեցաւ . թագաւորը Հռոմէադաւան է , բայց բնակիչներուն շատը Աւետարանական :

ՏՐԵՉՏԱ (91,277) Էլլպա գետին վրայ , Գերմանիոյ գեղեցիկ ու ճարտար քաղաքներէն մէկն է . երեւելի է գետին վրայի կամուրջը ,

եւ մայր եկեղեցին, ուսման կողմանէ ալ Գերմանիոյ Աթէնքը բա-  
ուած է :



ԵԿԵՂԵՑԻ

ԼԻՓՍԱ կամ ԼԱՅՓՅԻԿ (65,370) անուանի է՝ ասոր համայնա-  
րանը, եւ մեծ տոնախմբաւոր, եւ դիրքի առուտուրը : Հոս յաղ-  
թուեցան Գաղղիացիք 1813ին . Լայպնիցի փոխտփան ալ հոս ծը-  
կած է :

ՔԵՍՆԷՅ (22,000) առ քաղաքս ձեռագործներու կողմանէ խիստ  
ճաշկած է :

ՓՈՒՍՊԻՐԿ (14,151) անուանի են ասոր արձաթի հանքը եւ  
արձաթի բանուածքները :

## ԱՆՆՈՎԷՐ

Աննովերի Թաղաւորութիւնը 1814ին հաստատուեցաւ, եւ Թա-  
ղաւորը Անգղիոյի Թաղաւորն էր . բայց հիմա զատ Թաղաւոր մը  
ուենին : Հիմակուանը Գէորգ (Ճիորճ) ԵՄ կ'ըսուի ու բոլորովին  
կըր է : Բնակիչներուն շատը Աւետարանական են :

ԱՆՆՈՎԷՐ կամ ՀԱՆՆՈՎԸՐ (42,184) Հերչէլ աստղաբաշխը  
հոս ծնած է :

ԿՈՐԹԻՂԵ (11,000) անուանի համայնարան ունի :



ՔԼԱՒՍՔԱԼ (9,799) արծաթի ու կապարի հանք ունի :

Երևելի են հասն. Օսնապրուք, Հիլտեսչայ Բ, Լունեդուրկ, Էմբեն :

ՎԻՐԹԵՄՊԵՐԿ

Ջիրթեմպերկի Թագաւորութիւնը հաստատուեցաւ 1806ին . բընակիչներուն շատը Աւետարանական են :

ՇԹՈՒԹԿԱՐՏ (28,616, առ է առաջին Թագաւորանիստ քաղաքը . ուսմունքն ու արուեստները շատ ծաղկած :


ՈՒԼԲ (13,468) Գանուր գետին վրայ Գերմանիոյ ամուր ու անուանի բերդաքաղաքներէն մէկն է :

ԼՈՒՏՎԻԿՍՊՈՒՐԿ 7,000 երկրորդ Թագաւորանիստ քաղաքը առ է :

ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄԱՆԵ ՏԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Գ Լ Խ Ս Ե Ի Ո Ր Ք Ս Ղ Ս Ք Ն Ն Ե Ր Ը

ՀԱՄՊՈՒՐԿ (148,754) աղտա քաղաք , Գերմանիոյ առաջին վաճառաչ քաղաքն է . անուանի են շաքարի գործարանները . 1842ին մէկ մեծ մասը այրեցաւ , բայց նորէն շինուեցաւ :



ՇԱՔԱՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

ՓՐԱՆՔՖՈՐԹ (57,552) Մայն գետին վրայ աղտա քաղաք , Գերմանական դաշնակցութեան ժողովի անդն է . մեծադործ է շէն :

ւանդանոցը, ուր առեւտով Գերմանիոյ կայսերաց ընտրութիւնը կ'ըլլար, եւ սուրբ Բարթոլոմէոսի եկեղեցւոյն մէջ կայսր կ'օծուէին :

ՊՐԻՄԱ (53,478) ազատ քաղաք, Վէզեր գետին վրայ, վաճառականութիւնը խիստ բանուկ է :

ՄԱԿՈՆՑԱ կամ ՄԱՅՆՑ եւ կամ ՔՈԳՈՒՆՏԻԱ (31,345) Գերմանիոյ խիստ ամուր քաղաքն է. հոս ծնած է Յովհաննէս Կութթէնպերկ. զատ տիպերով գիրք տպելու արհեստը հնարողը :

ՊՐՈՒՆՍՎԷԻ կամ ՊՐԱՒՆՇՎԱՅԿ (43,291) մեծ ու փառաւոր քաղաք է :

ԼՈՒՊԷԻ (27,000) ազատ ու վաճառաշահ քաղաք, շտքարի գործարաններ ունի :

ԵՆԱ (6,267) համալսարանը անուանի է :

ՌՈՍՔՈՒՔ (20,266) բանուկ նաւահանգիստ ունի :

ԿՈՍՏԱՆԳԻՆԱ կամ ՔՈՍՔԱՆՑԱ (5,000) հոս եղաւ Կոստանդէան ժողովը 1414ին :

Գաշնակից տէրութիւններուն շատը մաքսի վերաբերեալ միաբանութիւն մը ունին, սնանկ որ երբոր մաքսը մէկ անգամ մը տրուի, ապրանքը կրնայ ձրի տարուիլ բոլոր ան տէրութիւններուն մէջը, եւ աս միաբանութիւնը կ'ըսուի Չորվէրին մաքսի միաբանութիւն :

## Ժ Բ. Փ Ո Ր Թ Ո Ւ Գ Ա Լ

Ընդհանուր գիտելիք :

ՓՈՐԹՈՒՆԻՔԱԼԻ երկիրը հին առեւտրային Լուսիտանիա կ'ըսուէր, ութերորդ դարուն մէջ Արաբացիք տիրեցին անոր, բայց շուտով քշուեցան. հարիւր տարիի չափ ալ Սպանիացիք տիրեցին, ինչուան որ 1640ին Փորթուգէզները գլուխ քաշեցին անոնցմէ, ու իրենց թագաւոր դրին Յովհաննէս Գը :

Փորթուգալին սահմանը հիւսիսէն ու արեւելքէն՝ Սպանիան է, հարաւէն ու արեւմուտքէն՝ Ատլանտեան օվկիանոսը :

Ունի 345 միլիոն երկայնութիւն ու 140 միլիոն լայնութիւն, ու տարածութիւնն է 35,265 քառակուսի միլիոն :

Երկիրը լեռնոտ, ջուրատ, բարեբեր, բայց քիչ բանեցուցած է :

Օգը բարեխառն ու առողջ :

Բերքն է ամէն տեսակ համբ ու մեքաղ, մանուանդ ոսկի, արծաթ, երկաթ, պղինձ, կապար, աղ, մարմարիտն, պտուղներէն՝ լեմն, նարինջ, խաղող. մետաքսն ալ աղնիւ է :

Բնակիչք 3, 471, 203, որոնց լեզուն Սպանիացոց լեզունն մէկ տեսակն է :

Կրօնքը Հռոմէացաւան է :

Կառավարութիւնը միապետական չափաւորած :

Զօրքը 30,000 :

Նաւատորմիդը 59 կտոր նաւ :

Գլխաւոր լեռներն են Սիէրրա տ'Եսթուէլլա՝ որ 7,524 սանաչափ բարձրութիւն ունի, Սիէրրա տի Ալքոպա, Սիէրրա Մոռատալ ու Սիէրրա Մօնչէք :

Գլխաւոր գետերն են Մինչօ՝ որ Փորթուգալի ու Սպանիայի սահմանն է. Տուրօ, Թահլա, Աուկա, Մօնտեկօ ու Սասօ, որոնց ամէնն ալ Ովկիանոս կը թափին :

Երեւելի լիճ՝ չկայ, բայց շատ պղտիկ լիճեր կան :

## ԳԼԽԱԻՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԼԻՍՊՈՆԱ (280,000) մայրաքաղաքը, Եւրոպայի մեծ ու աղուոր նաւահանգիստներէն մէկն է. շէնքերուն մէջ երեւելի է Ալքանթարայի ջրանցքը, որ 35 կամարի վրայ շինած է ճերմակ մարմարիտէ : Յիշուելու արժանի է 1755ին հոս պատահած երկրա-



ԼԻՍՊՈՆԱՅԻ ԵՐԿՐԱՅՈՒՐԺԸ

արժը, որ ատեն 70,000 հոգի կորսուեցան :

Չ ՕՓՈՐԹՈՑ (80,000) Լիսպոնայէն ետքը ամենէն հարուստ ու վաճառաշահ քաղաքն է, ու գինին խիստ անուանի : Երկրին անուանք առ քաղաքիս անունովը Փորթուգալ ըսուեր է :

ՔՈՅԻՄՊՐԱ (16,000) տէրութեան մէջ միայն առ քաղաքս համարարան ունի :

ՊՐԱԿԱ (18,000) ամուր քաղաք է, ու զէնքի գործարաններ ունի :

ՍԷԹՈՒՊԱԼ (15,000) աղի մեծ առուտուր ունի :

ԷՎՈՐԱ (15,000) ասոր մայր եկեղեցին խիստ աղուոր է, եւ հին պարխսպ ունի :

ՊՐԱԿԱՆՅԱ (5,800) մետաքսեղէնը անուանի է :

### ՓՈՐԹՈՒԿԱԼԻՆ ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Աօիոյ մէջ Հնգկաստանի Պարաէզ, Սալէթ, Տամաս, Տիու եւ Կոս քաղաքները, Չինու մէջ՝ Մաքաոյ կղզին, ու Տիմը, Սոլը, Միտորա կղզիները :

Ափրիկէի մէջ Ատրեան կղզիները, Մատերա եւ Սուրը թովմաս կղզիները, Դարարի գլխոյ կղզիները. Սենեկամպիային արեւմտեան կողմը՝ Կէպա քաղաքը. Քոնկոյի մէջ Անկոլա ու Պէնկալա, Մոզամպիք. եւ Մոնոմութափային մէջ Չանկէպարին ծովեզերքը այլեւայլ տեղուանք :

Աս հպատակ երկիրներուն ընակչաց թիւը 1,722,140 է :

### Ժ Գ . Ս Պ Ա Ն Ի Ա

Ընդհանուր գէորեւէի :

ՍՊԱՆԻԱՆ հին աստերը Հռովմայեցւոց ձեռքն էր, ու թերոք դարուն մէջ Արաբացիք տիրեցին, ինչուան որ 1492ին Ֆերաինանաս թագաւորը անոնք հալածեց : Քիչ աստենէն ետքը Ամերիկան ալ գտնուելով, Սպանիացիք խիստ մեծցան ու հարուստ թագաւորութիւն մը եղան :

Սպանիոյ սահմանը հիւսիսէն՝ Գաղղիան է, արեւելքէն ու հարաւէն՝ Միջերկրական ծովը, արեւմուտքէն՝ Փորթուգալը :

Ունի 540 միլիոն լայնութիւն ու 620 միլիոն երկայնութիւն, ու տարածութիւնն է 182,288 քառակուսի միլիոն :

Երկիրը լեռնոտ, ջուրոտ ու բարեբեր է :

Ծովեզերքին օդը տաք է, մշտեղունքը բարեխառն : Հողը քիչ մշակած է :

Բերքերուն գլխաւորներն ասոնք են . երկաթ, սնդիկ, կապար, պղինձ . ոսկեհանքը ատենով առատ էր, բայց հիմա երեսէ ձգած է . արծաթի հանք ալ քիչ ունի : Գինին խիստ արնիւ է . ունի նաեւ լեմոն, նարինջ, ձէթ, շաքար, բամպակ, մեղր, մետաքս : Կենդանիներուն մէջ անուանի է Անտալուսիա զաւառին ձին, եւ Մերկուս ըսուած սլիարը՝ որ խիստ բարակ բուրդ ունի :

Բնակիչն է 14,000,000 . լեզունին Սպանեօլերէն, որ Վատին լեզունն մէկ ճիւղն է :



ՍՊԱՆԻԱՅԻ

Արհեստներն ու գիտութիւնները քիչ առաջ գացած են :

Կրօնքը Հռոմէադաւանն է :

Պաւալարութիւնը սահմանադրական է :

Զօրքը 132,993 :

Նուտաւորփոյր 179 կար նու :

Գլխաւոր գեներն ասոնք են .

Մինհոյ, Տուէրոյ, Կուաաիանա, Կուաաալքիլիր, որ Ատլանդեան ովկիանոսը կը թափին :

Էպրոյ, որ կը վաղէ Միջերկրական ծովը :

Աս երկրին ներսի կողմը բարձր ու բնդարձակ դաշտ մըն է, որուն բոլորտիքը շատ լեռներ կան :

Հինգ գլխաւոր լեռներու գօտիներ կան .

1. Պիրենեան՝ որ 10,500 ոտնաչափ բարձր գագաթ ունի, ու Միջերկրական ծովէն մինչեւ Ովկիանոսը կը տարածի, ու Գաղղիայի եւ Սպանիայի սահմանն է : 2. Կուաաարամոյ, Կրեոսս, ու Կաթայի գօտին՝ որ նոյն բարձրութեամբ գագաթ ունի : 3. Քօլէտոյի գօտին : 4. Մուսէնայ ու 5. Նէվատա՝ որ 11,678 ոտնաչափ բարձր գագաթ մը ունի :

## ՊԼԹԱԻՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՄԱՏՐԻՏՅ՝ (260,000) մայրաքաղաքը, Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է. փառաւոր է թագաւորական նոր պալատը, եւ անուանի է Համալսարանը :

ՊԱՐԶԵԼՈՆԱ (120,000) Սպանիոյ ամենէն ամուր քաղաքն է, Միջերկրական ծովուն եզերքը. նաւահանգիստը խիստ աղււոր :

ՎԱԼԷՆՅԱ (76,000) տէրութեան մեծ արքեպիսկոպոսարանը հոս է :

ՍԻԻԼԻԱ (85,000) Մաառիտէն ետքը տէրութեան աղււոր քաղաքն է :

ՔԱՏԻՉԻ (62,000) ամուր բերդաքաղաք է. նաւահանգիստը խիստ բանուկ, եւ շատ առուտուր ունի :

ԿՐԵՆԵՏԱ (72,000) Մալթիտանացոց ետքի մայրաքաղաքն էր. հաշակաւոր է Անտոնոս պալատը որ անոնցմէ մնացած հոյակապ շէնք է :

ՍԵՐԱԿՈՍԱ (45,000) ատենով Արադոնայի թագաւորութեան մայրաքաղաքն էր, 1809ին Գաղղիացոց պաշարմանը գէմ աղէկ դիմացաւ :

ՄԱԼԿԱ (66,000) վանառաշահ քաղաք է. գինին խիստ անուանի : Միջերկրական ծովն է ու աղււոր նաւահանգիստ ունի :

ՍԱՆՔԻԱԿՈՅ ԿՈՏՊՈՐՏԵԼԱ (28,000) ուխտատեղի է, բայց շատ ինկած է :

ՔՈՐՏՈՎԱ կամ ԿՈՐԴՈՒԲԱ (42,000) Մաւրիտանացւոց առջին մայրաքաղաքն էր . հիմա ինկած է . մայր եկեղեցին շատ բնդարձակ ու մեծադարձ է :

ԹՈԼԷՏՈՅ (15,000) Մատրիտէն առաջ աս էր Սպանիային մայրաքաղաքը . շատ աղուար սուրեր կը շինեն հաս :

ԿԱՐԹԱԳԻՒՆԷ կամ ՔԱՐԹԱՂԷՆԱ (27,727) Հին Կարթեղոնացւոց շինած քաղաքն է . բանուկ նաւահանգիստ ունի Միջերկրական ծովուն վրայ :

ՎԷԼԷՁ ՄԱԼԵԿԱ (16,000) Խիստ անուանի է ասոր խաղաղը : Շատ ինկած է :

ՍԱԼԱՄԱՆՔԱ (14,000) ասոր համալսարանը անուանի է :

ԹԱՐՐԱԿՈՆԱ (12,000) ատենով անուանի քաղաք էր , բայց հիմա ինկած է :

ՔՈՐՈՆԵԱ (25,000) ամուր ու վաճառաշահ քաղաք է :

ԱԼՄԱՏԷՆ (8,645) սնդիկի հանք ունի :

### ՍՊԱՆԻԱՑԻՈՅ ԵՒՐՈՊԱՅԷՆ ԴՈՒՐՍ ՈՒՆԵՑԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

Ափրիկէի մէջ՝ Սիաթա , Քանարեան կղզիները . եւ Կուինէայի ծոցին մէջ մէկ քանի մանր կղզիներ :

Ամերիկայի մէջ՝ Քուպա եւ Փորթուք կղզիները :

Ովկիանիայի մէջ՝ Փիլիպպեան կղզիները :

Սպանիոյ եւ Գաղղիոյ սահմանակից է ԱՆՏՈՐԻ ԶԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ . ասոր մայրաքաղաքն է Անտոր , որ 2,000 բնակիչ ունի :

### Ժ Գ . Ի Տ Ա Լ Ի Ա

Ընդհանուր գիտելիք :

ՎՐԻՍՏՈՍԷ 750 տարի առաջ Հռոմայեցիք մեծնալով բոլոր Իտալիոյ տիրեցին . բայց հինգերորդ դարուն ատենները իրենց իշխանութիւնը տկարացած ըլլալուն համար՝ Իտալիան Գոթացւոց ու Լոմպարտացւոց ձեռքն ինկաւ , ինչուան որ մեծն Կարոլոս յաղթեց անոնց ու ինքը տիրեց : Անոր մեռնելէն ետքը Իտալիան զանազան տէրութիւններ բաժնուեցաւ . շատ անգամ ալ մեծ մասը Գերմա-

նայողոց՝ Գաղղիացւոց ու Սպանիացւոց ձեռքն անցաւ :

Նափովէոնին ի յնալէն ետքը Վեննայի ժողովին մէջ որոշուեցաւ որ Սափոյայի դքսու-թիւնը Սարաենիոյ թագաւորութիւն ըսուի՝ ճե-նոփայի հասարակապետութիւնն ալ հետը միացընելով . Լոմպարաի-ան ու Վենետիկը Աւստրիոյ ըլլայ . Թոսքանան Աւստրիոյ արշիդուք-սերէն մէկուն տրուի . Փարման ու Փիաչենցան Նափովէոնին այրի կնոջը՝ քանի որ ողջ է , ու մեռնելէն ետքը իր երկիրը անցնի Լուք-քայի դուքսին . Լուքքան ալ միանայ Թոսքանայի երկրին հետ . մե-կալ տէրութիւններն ալ իրենց առջի վիճակն ունենան : Բայց 1859ին Սարաենիան ու Գաղղիան մէկտեղ պատերազմեցան Աւստրիայի դէմ ու Լոմպարաիայի մեծ կտորը առին , ու նոր դաշինքով Սարաենի-այի տրուեցաւ . եւ նոյն ատենը Թոսքանա , Փարմա եւ Մոսենա Սարաենիայի յարեցան ու նոյն թագաւորութեան մէկ կտորը եղան : 1860ին ալ Կարիպալտի զօրապետին ձեռքովը Սիկիլիայի ու Նափու-լիի ժողովուրդը իրենց թագաւորէն ազատեցան , նմանապէս ալ պա-պին ժողովուրդին մէկ մեծ մասը , ու Սարաենիայի թագաւորին յա-րեցան . անկէց ետքը փոխուեցաւ թագաւորութեան անունը ու հիմա ԻՏԱԼԻԱՅԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ կ'ըսուի : Սափոյա ալ Գաղ-ղիայի տրուեցաւ :

Բայց որովհետեւ պատերազմը տակաւին կը շարունակուի , ու հաստատ կարգադրութիւն մը չկայ Նափովի ու Հռոմի մէջ , մենք աս գիրքիս մէջ ամէն մէկ կտորը զատ պիտի գրենք :

Իտալիոյ սահմանը հիւսիսէն՝ Ալպեան լեռներն են . արեւելքէն՝ Վենետիկ ու Լոմպարաիայի մէկ կտորը , որ տակաւին Աւստրիացւոց ձեռքն է . հարաւէն ու արեւմուտքէն՝ Միջերկրական ծովն ու Գաղ-ղիան :

Տարածութիւնը՝ Աւստրիայի վերաբերեալ մասերը դուրս ձգելով , 106,724 քառակուսի մղոն է :

Իտալիան եօթը գլխաւոր մասերու կը բաժնուի , որ ասոնք են . Սարաենիա , Լոմպարաիա , Թոսքանա , Հռոմ , Նափովի , Փարմա ու Մոսենա :

Իտալիան Եւրոպայի հարաւային կողմն ըլլալուն համար՝ օղբ տաք ու ընդհանրապէս առողջ է :

Բերքերուն գլխաւորներն են՝ ազնիւ քար , երկաթ , պղինձ , բոմ-պակ , շաքար , մեղր , ձէթ , նարինջ , լեմոն , բրինձ . ձեռագործներուն մէջ անուանի է մետաքսէ ընտելածքը , ապակին , յախճապակին



Բնակիչն է 21,000,000 . Լեզունին Իտալերէն . աղէկը կը խօսուի Թոսքանայի Սենա գաւառին մէջ :



ԻՏԱԼԱՅԻ

Պաճառականութիւնն ու արհեստները ընդհանրապէս ետ մնացած են . միայն արձանագործութիւնը , պատկերհանութիւնը , ճարտարապետութիւնը եւ երաժշտութիւնը միշտ անուանի են :

Կրօնքը Հռոմէադաւան :

Գլխաւոր լեռներն ասոնք են .

Մոնթէ Ռոզա , եւ Մոնթէ Պիանքոյ կամ՝ Սպիտակ լեռ , որ Ալպեան լեռանց բարձր ծայրերն են :

Վեսուվ՝ Նափոլիի քով , Եանա՝ Սիկիլիոյ մէջ , Սթրամպոլի՝ Լիպարեան կղզիներուն մէջ , որոնք հրաբուռի լեռներ են :



ՀԻՐՐՈՒՆԵՐ



ԼԵՌՆԵՐ

Գլխաւոր գետերն ասոնք են .

Առնոյ, Տիրերիս կամ Թէվէրէ, Աղթուրնոյ, Մինչիոյ, Թիչինոյ, որոնք Միջերկրական ծովը կը թափին :

Փոյ, Առիճէ, Օֆանթոյ, որ Ադրիական ծոցը կը վազեն :

Գլխաւոր լիճերը ասոնք են . Կարտա, Մաճիօրէ, Լուկանօ, Քօմոյ, Իսսիոյ :

## Գ Լ Խ Ա Ի Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

### 1. ՍԱՐՏԵՆԻԱ

Սարտենիոյ առջի թագաւորութիւնը Փիէմոնթի նահանգին մէջ կ'իյնայ, 28,229 քառակուսի մղոն տեղ, Սարտենիա կղզիին հետ : Բնակիչը 5,900,245 . զօրքը 140,000 . նաւատորմիդը 60 :

ԹՈՒՐԻՆ (143,157) Փոյ գետին վրայ աղուոր քաղաք է . անուանի են բաղմաթիւ տպարանները, համալսարանը, ճեմարանը, մանաւանդ Եզիպտոսի հնութեանց պահարանը :

ՃԵՆՈՎԱ (125,339) ամուր քաղաք է, նաւահանգիստը մեծ ու բանուկ . ատենով Ճենովացոց հռչակաւոր հասարակապետութեան մայրաքաղաքն էր : Աս քաղաքին մօտերը ծնած է Քրիստափոր Բոլմպոս Ամերիկայի ցամաքը առաջին գտնողը :

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՒԱ (39,000) Իտալիոյ ամուր քաղաքներէն մէկն է : Ասոր քովը Մարենկոյ գեղին մնա 'Նաֆոլէոն Ա մեծ պատերազմով յաղթեց Աւստրիացոց :

ՆԻՅՅԱ (25,000) աղատ ու բանուկ նաւահանգիստ ունի . օդն առողջարար ու մեղմ ըլլալուն՝ շատ օտարականներ ձմեռը հոս կ'անցունեն : Ասիկայ 1860ին Գաղղիայի արուեցաւ :

Սարտենիա կղզին ալ աս տէրութեան տակն է, եւ 152 մղոն երկայն է ու 66 մղոն լայն, ու 9,235 քաղաքիուսի մղոն տարածութիւն ունի :

Գլխաւոր քաղաքներն են Քալիարի (30,000), որ համալսարան ունի եւ շատ առուտօր : ՍԱՍՍԱՐԻ (22,000) անուանի է . նաեւ ԹԵՄՓԻՈՅ, ՕՋԻԻՐԱ, եւ ՕՐԻՍԹԱՆՈՅ :

Սարտենիոյ թագաւորութեան երկրին մէջ՝ Նիցցա քաղաքին մօտ է ՄՈՆԱՔՈՅ քաղաքը, որ ինքնազուխ իշխանի ձեռք է, 6,800 բնակիչ ունի, եւ Սարտենիոյ թագաւորն ասոր պաշտպանն է :

2. ԹՈՍՔԱՆԱ


Թողքանայի բնակիչն է 1,778,021 . զորքը 14,715 :

ՓԻՈՐԵՆՅԱ (102,000) Իտալիոյ ծագեալ թաղաքներէն մէկն է . մեծագործ է մայր եկեղեցին՝ ուր եղաւ Փլորենտեան ժողովը, ուր Լաւրենտիոսի եկեղեցին, Մեախչի բուսած հռչակաւոր ցեղին մատուր եւ գուքսին պալատը . անուանի է նաեւ հնութեանց եւ բնական պատմութեան պահարանը : Հոս ծնած են Տանթէ բանասեղծը եւ Ամերիկոս վեափուչչի :

ԼԻՎՈՐՆՈՅ կամ ԱԼԻԿՈՒՐՆԱ (78,000) նաւահանդիսան ու վաճառականութիւնը շատ բանուկ է : Հոս Հայոց եկեղեցի մը կայ :

ՍԵՆԱ (22,021) ասոր համալսարանն ու մայր եկեղեցին անուանի են :

ՓԻՉԱ (22,000) ատենով հասարակապետութիւն էր . ասոր մայր եկեղեցւոյն դանդակատունը 15 ոտք քովքնաի ծռած է . դերեզմաննոցը շատ երեւելի է, ու հողը Հրէաստանէն բերած են քաղաքացիք 50 նաւով : Հոս ծնած է Գալիլէոս փիլիսոփան :



ԳՅՐԵՉՄԸՆՆՈՅ

Թողքանայի մեծ գուքսին անցաւ 1847ին նաեւ Լուքքայի դըբսութիւնը, որ անկէ առաջ ինքնագլուխ էր : Աս երկրիս բնակիչն է 260,745 :

Գլխաւոր քաղաքն է ԼՈՒՔՔԱ (22,659) ասոր զբառուենը, դիւանը, մայր եկեղեցին, ու մծա եղած ջերմակները շատ անուանի են :

### 3. ԼՈՄՊԱՐՏԻԱՅԻ ՄԷԿ ԿՏՈՐԸ

Երկիրը 5,879 քառակուսի մղոն տարածութիւն ու 1,827,876 բնակիչ ունի :

ՄԻԱԿՆ (165,000) Իտալիոյ աղուոր քաղաքներէն մէկն է, որ բրինձի ու մետաքսի մեծ առուտուոր ունի : Ասոր մէջուորը Ամբրոսիոսի եկեղեցին ու Սքալա ըսուած Թատրոնը խիստ մեծագործ են :

ՓԱՒԻԱ (28,169) երեւելի համալսարան ունի :

ՄՈՒՅԱ (18,134) մտերը շատ գործարաններ կան :

ԲՈՄԲԵ (18,600) խիստ գեղեցիկ քաղաք է քոմոյ լիճին վրայ :

ՊԵՐԿԱՄԲԵ (32,614) շատ աղուոր դիրք ունի եւ շատ առուտուոր :

ԼՈՏԻ (15,709) Նափոլէոն Ա հոս Աւստրիացւոց վրայ մեծ յաղթութիւն ըրաւ :

### 4. ՀՌՌՄ

Հոռոմոյ երկրին մեծ մասը 750ին ատենները պտղերուն տուաւ Պեպինոս՝ մեծին Կարոլոսի հայրը, մնացածն ալ ետքի պապերը կէս մը դնեցին՝ կէս մըն ալ կտակով Ժառանգեցին : Բոլոր երկրին տարածութիւնն է 17,210 քառակուսի մղոն. բնակիչք 3,000,000. զօրքը 18,500 :

ՀՌՌՄ (175,836) հնութեանց ու գեղարուեստից կողմանէ աշխարհիս առաջին քաղաքն է. եղական շէնքեր են սուրբ Պետրոսի տաճարը եւ Վատիկանի պալատն ու զբառուենը, եւ պապին աթոռը հոն ըլլալով շատ երեւելի քաղաք կը սեպուի :



ՀՌՌՄԱՅ ՊԱՊԸ

ՊՈԼՈՒՆԻԱ (75,000) Հռոմէն ետքը Իտալիոյ դեղեցիկ ու հարուստ քաղաքներէն մէկն է . անուանի է համալսարանը, դիտութեանց ճեմարանը եւ դերեզմաննոցը : Հոս ծնած է Կալվանի ընադէտը :

ԱՆՔՈՆԱ (36,000) Ադրիական ծովուն լրայ վաճառարացի քաղաք է : ՓԵՐՈՒՃԻԱ (18,300) ասոր քոֆն է Տրասիմեն լիճը, որուն մօտ Աննիբալ Հռոմայեցւոց յաղթեց :

ՓԱՏԷՆՅԱ (19,752) ասոր յախճապակը աղնիւ է :

ԲԻՄԻՆԻ կամ՝ ԱՐԻՄԻՆԻ (17,500) երեւելի է հոս Օդոստոս կայսրին յաղթական կամարը :

ՀՌԵԼԵՆՆՆԱ (12,000) Ոնորիոս կայսրը երկան ատեն հոս նստաւ :

ՖԷՐՐԱՐԱ (30,948) հոս է Արիոսիոյ բանաստեղծին դերեզմանը :

ՉԻՎԻԹԱ ՎԷՔԲԻԱ (7,000) աղատ ու բանուկ նաւահանգիստ ունի :

ԹԻՎՈԼԻ (6,200) դէրքը խիստ աղուոր է . Ովրատիոս բանաստեղծը հոս ընակեր է :

ՈՒՐՊԻՆՈՅ (7,000) հոս ծնած է Ռաֆայէլ անուանի պատկերհանրը :

ԼԱՒԻՆՏՈՆ (8,000) հռչակաւոր ուխտաաւելի է կոյս Մարիամին ըսուած տանը համար, եւ մասունքի մեծ առուտուր ունի :

ՍԻՆԻԿԱԼԻԱ (21,930) մեծ տօնավաճառ ունի :

Անուանի են նաեւ Ֆորլի, Չէզէնա, Ռեթի, Փոլինետո, Պէնէվէնթ :

Հռոմայ տերութեան պաշտպանութեանը տակն է՝ ՍԱՆ ՄԱՐԻՆՈՅ քաղաքին աղատ հասարակապետութիւնը, որ Եւրոպայի ամենէն հին հասարակապետութիւնը կը սեպուի : Բնակիչն է 7,600 :

## 5. ՆԱՓՈԼԻ

Նափոլիի երկրին երկար ատեն Լոմպարտացիք ու Յոյնք տիրեցին . անոնցմէ ետքը Արաբացիք, ետքն ալ Նորմանտացիք . ասոնք երբեմն միայն Նափոլիին կը տիրէին, երբեմն Սիկիլիային ալ . ասոր համար Նափոլիի թագաւորութիւնը երկուսը Սիկիլիայի թագաւորութիւն ալ կ'ըսուի :

Տարածութիւնն է 32,571 քառակուսի մղան :


Բնակիչը 6,610,800 . լեզուին իտալերէն :

Զօրքը 106,000 :

Նաւատորմիդը 40 կտոր նաւ :

ՆԱՓՈԼԻ կամ՝ ՆԷԱՊՈԼԻՍ (416,475) Իտալիոյ ամենէն մեծ քաղաքն է . աղուոր նաւահանգիստ ու փառաւոր շէնքեր ունի . հնուութեանց պահարանը անուանի է . դիպակը աղնիւ : [դիրքը՝ բարե-

բերութիւնը՝ օգը շատ զուարճալի : Ասոր քովերն են Պոսպէա ու  
Հերբուլանոնն հին քաղաքները, որ Բրիտանոսէ 79 տարի ետքը վե-  
սուվ լեռան մնիւիրովը ծածկուեր էին, ու 100 տարիէն 'ի վեր ին-  
չուան հիմա կը փորեն ու կը բանան :



ԵՐԿՐԱՅԱՐԺ

ՔԱՍԹԻՒԼԱՐԱՐԻ (16,000) ասոր քովերն է հին Սթապէա քա-  
ղաքին աւերակը :

ՏԱՐԵՆՏՈՆ (15,000)

ԿԱՊՈՒԱ (8,000)

ՍԱԼԻՐՆՈՅ (18,892) ասոր բժշկութեան դպրոցն անուանի է :  
ԿԵՅԵԹԱ (3,000) խիտ ամուր տեղ է :

Երեւելի են նաև Աքուիլա, Քեթի, Փոճիա, Պարի, Լէչչէ,  
Թրախանի :

Սիկիլիա կղզւոյն մէջ՝ որ աս տէրութեան տակն էր, գլխաւոր  
քաղաքներն ասոնք են .

ՓԱԼԵՐՄՈՅ (167,222) Եւրոպայի գեղեցիկ քաղաքներէն մէկն է,  
ու պտուղի մեծ առուտուր ունի : Անուանի է աստղաբաշխական  
դիտարանը :

ՄԵՍՍԻՆԱ (97,000) մեծ ու ազուր նաւահանգիստ ունի եւ շատ  
առուտուր :

ՍԻՐԱԿՈՒՍԱ (11,000) հին ու անուանի քաղաք է . քայք կէսէն  
շատն աւերակ . հոս ծնած է Արքիմեդէս երկրաշափը :

ՔԱԹՐԵՆԻԱ (54,167) ազուր քաղաք է Եմա լեռան տակը՝ որ  
Եւրոպայի ամենէն մեծ ու հռչակաւոր հրաբուլիսն է :

ՃԻՐՃԻՆԹԻ (18,569) հին Ակրականդ քաղաքին քովն է . ան-  
ուանի է ասոր քովի ծծումրի հանքը :

## 6. ՓԱՐՄԱ

Փարմայի ընակիչն է 507,881. ու տարածութիւնը 1,656 քա-  
ւակուսի մղոն :

Զօրքը 4,000 :

ՓԱՐՄԱ (40,927) ասոր թատրոնը Եւրոպայի թատրոններուն  
ամենէն ընդարձակն է. անուանի է նաեւ Պոտոնեան ըսուած ար-  
պարանը :

Մէկալ գլխաւոր քաղաքներն են ՓԻԱՉԷՆՅԱ (29,000), ԿՈՒԱՍ-  
ԹԱԼԱ :

## 7. ՄՈՏԵՆԱ

Մոտենայի ընակիչն է 586,458. ու տարածութիւնը 2,073 քա-  
ւակուսի մղոն :

Զօրքը 3,500 :

ՄՈՏԵՆԱ (27,000) մեծաշէն է դուքսին պալատը :

Անուանի են նաեւ Ռէճճիոյ, Միբանտոլա եւ Քարբարա՝ ուս-  
կից իրօտ ազնիւ մարմարիտն քար կ'ելլէ :

## Ժ Ե . Տ Ա Ճ Կ Ա Ս Տ Ա Ն

Ը ն դ հ ան ու ր գ ի ր ե լ է ր :

ՏԱՃԿԻ կամ Օսմանցւոց տէրութիւնը 1300ին սկսաւ Սուլթան  
Օսմանէն Քէօթաշիայի կողմերը. ու քիչ ատենէն ետքը Պրուսան,  
Էտրիկէն ու Կոստանդնուպօլիսը առնելով տարածեցաւ ինչուան  
Մաճառիստան ու Գերմանիա : Անոր համար բոլորը երկու գլխա-  
ւոր մաս կը բաժնուի. Եւրոպայի Տաճկաստան՝ որ է Բուսթիլի, եւ  
Ասիայի Տաճկաստան՝ որ է Անատօլու : Ասիայի Տաճկաստանի վը-  
րայով արդէն խօսած ենք. տես երես 14 :

Եւրոպայի Տաճկաստանին սահմանը հիւսիսէն՝ Ռուսաստանն է.  
արեւելքէն՝ Սեւ ծովն ու Ասիա. հարաւէն՝ Արշիպեղազոսն ու Յու-  
նաստան. արեւմուտքէն՝ Ալտարիա ու Ալենեաիկի ծոցը :

Քանի մը տարի առաջ Օսմանցւոց ձեռքն էին նաեւ Ռւլահ ու

Պուղտան, որ հիմա միայն հարկատու են, ինչպէս նաեւ Սերփիան :  
Ունի 670 միոն երկայնութիւն ու 540 միոն լայնութիւն . ու  
տարածութիւնն է 203,628 քառակուսի միոն :

Երկիրը խիստ լեռնոտ է, մանաւանդ հարաւային կողմը . անոր  
համար ալ սաստիկ ցուրտ կ'ըլլայ :

Հողը բարեբեր է, բայց քիչ մշակած : շատ տեսակ հանք ու-  
նի, թէպէտեւ քիչ բանեցուցած :

Գլխաւոր բերքն է ցորեն, բրինձ, խաղող, նարինջ, ձէթ, բամ-  
պակ, մետաքս, քրքում (զաֆրան) եւ ծխախոտ :

Արհեստն ու ճարտարութիւնը հիմա առաջ երթալու վրայ է :  
Անուանի են մետաքսէ բանուածքները, դիպակը, լուր ու կաշին :

Բնակիչն է 15,500,000 . լեզուներն թուրքերէն, Յունարէն եւ  
Սլաւի արմատ լեզուէն մէկ քանի ճիւղ :



ՏԱՃԻԿ

Կրօնքը Մահմետական եւ Քրիստոնէայ է :

Կառավարութիւնը՝ ազատ միապետական :

Զօրքը բոլոր Տաճկաստանի 300,000 :

Նաւատորմիդը 72 կտոր նաւ :

Գլխաւոր լեռներն ատոնք են .

Պարզան, որուն գլխաւոր ճիւղերն են Տէսփոթ տաղը, Զար տա-  
ղը 10,000 սանաչափ բարձր, Տինարեան լեռները :



Ֆինդոս լեռը, Ողիմպոս կամ Լաբա, Պառնասոս եւ Քիմերեան լեռները՝

Գլխաւոր գետերն ստոնք են .

Դանուբ՝ որ Սեւ ծովը կը մտնէ .

Տրին՝ որ Ադրիական ծովը կը թափի .


Մէրիճ՝ որ Արշիպեղազոսը կը վազէ .

Մորաւա, Ալութա, Սէրէթ, որ Դանուբ գետը կը մտնեն :

Երկու լիճ միայն ունի որ անուանի են . Օքրիտա եւ Շքոտրայ լիճեր, որ Ալպանիայի մէջ են :

### Գ Լ Խ Ա Ի Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ն Ե Ր Ը

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ կամ ՍՏԱՄԳՈԼ (1,100,000) բոլոր Տաճկաստանի մայրաքաղաքն է՝ Մարմարային ու Աոսիոր նեղուցին վրայ . գիրքը եղական, նաւահանգիստը շատ փառաւոր ու ընդարձակ, որ 1,200 նաւէն աւելի կ'առնէ . վաճառականութիւնը խիստ բանուկ : Շէնքերուն մէջ երեւելի են մէկ քանի մզկիթները, մանաւանդ Այա-



ՍՈՒՂԱՆ ԱՎԵՏԻՆ ՄՁԿԻԹԸ

Սոֆիան . անուանի է նաև փողերանոցը , թագաւորին եւ մեծ իշխաններուն պալատները , նոր բացուած գործարանները եւ այլն : Մեծն Կոստանդիանոս շինեց աս քաղաքը 320ին . իսկ 1453ին Քէթիչ Սուլթան Մէհմէտը առաւ Յունաց ձեռքէն :



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՍԻԼԻՎՐԻ (5,000) Մարմարա ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ ունի :

ՌՈՏՈՍԹՈՅ կամ ԹԷՔԻՐՏԵՂ (10,000, նոյն ծովուն վրայ Ադրիանուպոլիս երթալու ճամբան է , ու բանուկ վաճառականութիւն ունի : ԻՆՃՒԿԻՉ . հանքային ջուրեր ունի , եւ շէնքերուն շատը ժայռի մէջ փորուած են :

ԱԴՐԻԱՆՈՒՊՈԼԻՍ կամ ԷՏԻՐՆԷ (120,000) տէրութեան երկրորդ մայրաքաղաքն է . շէնքերուն մէջ անուանի է Սուլթան Սէլիմին մկկիթը : Մետաքսի , բամպակի ու բուրդի գործարաններ ունի , եւ առուտուրը շատ է : Քովերն են Չիրմէն , Տիմեթոքա , Գըրգքիլիսէ քաղաքները :

ՔԻԼԻՊԷ (30,000) մեծ ու վաճառաշահ քաղաք է . մետաքսէն բանուածքն աղնիւ , շատ հնութիւններ ալ ունի : Շատ գործարաններ ունի եւ բաւական առուտուր կ'ըլլայ :

ԻՍԼԷՄԵԷ | ասոնք երկուքն ալ մեծ տոնավաճառ ու  
ՌԵՉՈՒՆՃՈՒՆ | նին :

ԿԵԼՊՈԼՈՒ (10,000) Տարտանեղ (Չանաֆ էալէի) ըսուած նեղուցին բերանն է . անուանի է սեկը :

Ուրիշ երեւելի տեղուանքն են Թաթար պաղարը, Վիզէ, Պուր-  
ղազ, Միտիա :

ԹԵՍԱՂՈՒՆԻԿԷ կամ ՍԷԼԱՆԻԿ (70,000) Հին ատենի Մակեդո-  
նիա գաւառին գլխաւոր քաղաքն է, մեծ ու բանուկ նաւահանգիստ  
ունի, շատ ալ ՀնուԹիւններ :

ՍԷՐԵՋ (30,000) վաճառաշահ քաղաք է, բայց ամառուան օ-  
դը մնաստակար . քովերը արծաթի եւ երկաթի հանք կայ :

ԻՒՍԿԻՊ (10,000) զէքքը գեղեցիկ . կաշիի գործարաններ ունի :

Անուանի են նաեւ Եէնիճէ Վարտար, Գարաֆէրիէ, Քիւսթէն-  
տիլ, Գասթորիա :

ԱՏՆՕՐՕՍ լեւը 6,778 մղոն բարձր է . ուր քանի մը տարի ա-  
ռաջ 22 Հոռովի վանք կար, եւ 500 մատուռ ու վանքերուն մէջը  
բնակող 4,000 ճգնաւոր :

ՏՐԱՄԱ, որուն քովերն են Հին Փիլիպպէ քաղաքին աւերակ-  
ները :

ԼԱՐԻՍՍԱ կամ ԵԷՆԻՇԷԷԻ (20,000) կարմիր ներկի անուանի  
գործարաններ ունի :

ԹՐՀԱԼԱ, ՋԱՂՈՐԱ, ՋԱԹԱԼՃԱ՝ որ Հին ատեն Փարսաղիա  
կըսուէր :

ԵԱՆԵԱ (36,000) Այգանիա կամ Աւնաուտլուզ գաւառին  
գլխաւոր քաղաքն է . ապէց էր Տէփէտէլէնիլի Ալի փաշան որ Թա-  
գաւորէն ապստամբած ըլլալով 1822ին հաս պաշարուած մեռաւ :

ՇՔՈՏՐԱ կամ ԻՍՔԷՆՏԵՐԻԷ (40,000) ամուր քաղաք է Շքոտ-  
րայ լիճին վրայ :

ԳԱՐԱՏԱՂ, որ գրեթէ ինքնազլուխ գաւառ մըն է :

Երեւելի են նաեւ Փրեվեղա, Փարկա, Աւլոնեա, Տիւրաճ, Իլ-  
պասան, Օխրի, Ագսերայ կամ Քոսյա :

ՊՈՄՆԱ կամ ՊՈՄՆԱ ՍԱՐԱՏ (60,000) ամուր ու վաճառաշահ  
քաղաք է, եւ զէնքեր շինելու գործարան ունի :

ՋՎՈՐՆԻՔ (14,000) կապարի հանք ունի :

ՊԵՆԵԱԼՈՒՔԱ (15,000) ամուր բերդ ու հանքային ջուրեր ունի :

Պոսնա գաւառին մէկալ գլխաւոր տեղուանքն են Թրաւնիք,  
Մոսաար, Թուղլա, Պիհաչ :


ՍՈՖԵԱ (50,000) Պուլղարիա գաւառին մեծ ու վաճառաշահ  
քաղաքն է :

ՇՈՒՄՆԻ կամ ՇՈՒՄԼԱ (30,000) տէրութեան ամուր քաղաքներէն մէկն է, որ 1774ին, 1810ին եւ 1828ին Ռուսերը պարսպ տեղը աշխատեցան ձեռք ձգելու :

ՌՈՒՍՃՈՒԳ (30,000) մեծ ու վաճառաշահ քաղաք է Գանուր գետին վրայ :

ՍԻԼԻՍՏՐԷ (20,000) ամուր ու վաճառականութիւնը ընտուկ քաղաք :

ՎԻՏԻՆ (25,000) ամուր բերդաքաղաք :



ՅԵՐԳ

Անուանի են նաեւ Սիսթով, Հըրշովա, Իսագճը, Նիկէպօլու :

## ՈՒԼԱՆՆԻ ԳՈՒՂՏԱՆ

Աս գաւառները՝ հարկատու են Բարձրագոյն Գրանը, բայց իրենց զատ կառավարութիւն ունին : Իրենց իշխանը՝ որ Հօֆֆօպօ կ'ըսուի, ժողովուրդին ընտրութիւնովը կը նստի, ու երեսփոխաններու ժողով մը ունին :

ԳՈՒՔՐԷՇ (60,780) Ուլահի մայրաքաղաքն է. վաճառաշահ ու մեծ՝ բայց գեղի նման :

ԵԱՇ (40,000) Գուղտանի մայրաքաղաքն է՝ Գուքրէշին նման : ԻԳՐԱՅԻԼ. ամուր ու անուանի բերդ է :

Մէկալ երեւելի տեղուանքն են Ֆոքշան, Պոթուշան, Թէրկո-  
վից, եւ Կալաց՝ որ բանուկ նաւահանգիստ ունի :

### ՍԵՐՎԻԱ

ՊԵԼԿՐԱՏ (30,000) Եւրոպայի ամուր քաղաքներէն մէկն է .  
Սերվիոյ իշխանը շատ անգամ հոս նստեր է, եւ բոլոր երկրին գըլ-  
խաւոր քաղաքն է :

ՍԵՄԵՆՏՐԷ (12,000) Սերվիոյ նախագահ արքեպիսկոպոսը հոս  
կը նստի :

ՔՐԱԿՈՒՅԵՎԱՅ (5,000) Սերվիոյ իշխանը հիմա հոս կը նստի :

ՔԼԱՏՈՎԱ . Տրայիանոս կայսեր շինած կամուրջը ասոր քովն է :

### ԵՒՐՈՊԱՅԻ ՏԱՃԿԱՍՏԱՆԻՆ ԿՂՉԻՆԵՐԸ

ԹԱՍՈՍ կամ ԹԱՇՈՉ . գեղեցիկ մարմարիոնն ու գինին ա-  
նուանի են :

ՍԱՄԹՐԱԿԷ կամ ՍԵՄԷՆՏՐԷՔ . հին ատենը խիստ անուա-  
նի էր :

ԼԵՄՆՈՍ կամ ԼԻՄՆԻ . ատենով անուանի էր ասոր լարիւ-  
րինթոսը, եւ հռոմկաւ (Լիւնի Դալիոս) ըսուած կաւը :

## Ժ Չ . ՅՈՒՆԱՍՏԱՆ

Ընդհանուր գիտելիք :

Հին ատենը Յունաստանի մէջ այլեւայլ հասարակապետու-  
թիւններ կային՝ իրարու հետ սովորաբար դաշնակից . արհեստներն  
ու գիտութիւնները ծաղկած էին Յունաց մէջ, պատերազմական քա-  
ջութեամբ ալ մեծ անուն ունէին : Հռովմայեցւոց հասարակապե-  
տութեան մեծցած ատենը՝ անոնց տակն ինկան . բայց երբոր կոս-  
տանդիանոս իր աթոռը կոստանդնուպոլիս փոխադրեց, կամաց կա-  
մաց Հռովմայեցւոց կայսրութիւնը Յունաց ձեռքն անցաւ, ու ըս-

կրօնն Հոսոս ըսուիլ : Անկէց ետքը վննտիկցւոց ու Օսմանցւոց ձեռքն անցաւ տէրութիւննին . ինչուան որ 1830ին Եւրոպայի թագաւորներուն պաշտպանութեամբը նոր թագաւորութիւն ունեցան միապետական , որ 1842ին սահմանադրական միապետութեան փոխեցին : Հիմակուան թագաւորը Աթոն անունով Պաւիերայի թագաւորին որդին է :

Յունաստանի սահմանը Հիւսիսէն՝ Եւրոպայի Տաճկաստանն է . արեւելքէն՝ Արշիպեղադոսը . հարաւէն՝ Միջերկրական ծովը . արեւմուտքէն՝ Յոնիական ծովը :

Տարածութիւնն է 18,500 քառակուսի մղոն :

Երկիրը ընդհանրապէս լեռնոտ :

Օդը բարեխառն ու առողջ :

Հողը բարեբեր է , եւ ամէն տեսակ հանք ու մետաղ ունի , բայց գրեթէ ինչուան հիմն երեսէ ձգած է :

Բնակիչն է 900,000 . լեզուներն Յունարէն , որ հին Յունարէնին ռամկականն է :



ՀՈՌՄԻ ՏԻՐԱՅՈՒ

Քաղաքականութիւնն ու արհեստները գեւ. եւ Տնացած են :

Վրո՞նքը Յունադաւանն :

Կառավարութիւնը սահմանադրական միապետական :

Զօրքը 12,000 :

Նաւատորմիդը 20 կտոր նաւ :

Գլխաւոր լեռները ասոնք են .

Փինտար դօտին՝ որ Ալպեանին հետ կապուած է . աս դօտինն գա-  
դաթները մինչև 7,000 կամ 8,000 ոտնաչափ բարձրութեան կը հասնին :  
Իթայի դօտին՝ որ 8,240 ոտնաչափ բարձր մէկ գագաթ մը ունի :  
Բարնասըս դօտին՝ 8,000 ոտնաչափ բարձր :  
Սիթէոսն դօտին , հարաւային կողմը :

Գլխաւոր զեաերն ասոնք են .

Օֆիէ կամ Բուֆիա՝ որ Արկադիոյ ծոցը կը թափի :  
Իրին կամ Եւրոտաս՝ որ Մանեայի ծոցը կը վազէ :  
Պամիսսս՝ որ Մեթոնի քովը կը թափի :

### Գ Լ Թ Ա Ռ Ր Զ Ա Ղ Ա Ջ Ն Ե Ր Ը

ԱԹԷՆՔԻ կամ ԱԹԷՆԱ (30,000) Յունաստանի մայրաքաղաքը .  
հին ատենը խիստ ծաղկած էր՝ ամէն արհեստից ու գիտութեանց  
կողմանէ . հիմա ալ սկսած է զարգարուիլ նոր նոր շէնքերով՝ ու-  
սումնական տեղերով՝ ապարաններով ու հին շէնքերը նորոգուելով :  
Աս քաղաքը ծնած են Սոզոն , Միլաիադէս , Թեմիստոկլէս , Արիստի-  
դէս , Պերիկլէս եւ ուրիշ շատ երեւելի մարդիկ : Պոզոս Առաքեալը  
հաս Արիստագասին մէջը մեծ քաջութեամբ քրիստոսը քարոզէց :



**ՆԱՒՓԼԻԱ** . ամուր բերդաքաղաք է :

**ԹԻՒԱ** . Հին թերէ քաղաքին տեղը շինած պղտի քաղաք մըն է :

**ՄԻՍԻԹԻՐԱ** . ասոր քովերն է Սպարտային աւերակները :

**ՄԻՍՈԼՈՒՆԿԻ** . ասոր բերդին մէջ [Յոյները շատ դիմացան Օսմանցւոց դէմ 1826ին : Լորտ Պայրըն երեւելի Անգղիացի բանաստեղծը հոս մեռաւ 1824ին :

**ԿՈՐՆԹՈՍ** (2,000) անուանի քաղաք է՝ Մոռայի պարանոցին վերայ , դիրքն ալ աղուոր : Հին ատենները խիստ մեծ ու երեւելի տեղ մըն էր . Պոզոս Առաքեալ հոս ալ Աւետարանը քարոզէց :

**ԹՐԻՓՈԼԻՑԱ** . Օսմանցւոց ատենը Մոռային գլխաւոր քաղաքն էր :

**ՆԱՒԱՐԻՆ** . անուանի է 1827ին ասոր նաւահանգիստին մէջ եղած նաւական պատերազմը :

**ՓԱԹՐԱՍ** . վաճառաշահ քաղաք է :

Ուրիշ շատ տեղուանք ալ կան՝ որ թէպէտ հին ատենը անուանի քաղաքներ էին , բայց հիմա որը գեղ է՝ որը աւերակ :

### ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԿՂՁԻՆԵՐԸ

Յունաստանի գլխաւոր կղզիներն ասոնք են .

**ՆԷԿՐՈՓՈՆԹԷ** կամ **ԷՅՐԻՊՈԶ** . ամենէն մեծ կղզին է , 115 մըլոն երկայն ու 33 մըլոն լայն ու բանուկ նաւահանգիստ ունի :

**ՇԻՐԱ** կամ **ՍԻՐԱ** (30,000) Յոյներուն ետքի ապտամբութենէն 'ի վեր խիստ բանուկ ու վաճառաշահ է : Շատ առուտուր ունի օտար երկիրներու հետ ու շատ ալ վաճառականի նա :

**ՆԱՔՇԱ** կամ **ՆԱՔՍՈՍ** . Կիւկղաղայք կամ Բոլոր կղզիք բնուած կղզիներուն մէջ ամենէն մեծն է :

**ԻՏՐԱ** կամ **ՉԱՄԼԸԱ** . ասոր քաղաքը շէն ու բանուկ է :

Անուանի են նաեւ աս կղզիներս . Ծիա կամ Մուրթատ ատասը , Անորա , Թինէ կամ Իսթինաիլ , Դեղոս կամ Ստիլի , Մեղոս կամ Պիւլիւք Տէյիլմէնլիք , եւ Պարոս՝ որուն մարմարիոնը խիստ անուանի է :





# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՅԹԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Գ Լ Ո Ւ Դ

Ա Փ Ր Ի Կ Է

Սահման և Տեճոսիւն

ԱՓՐԻԿԷԻ երկիրը գրեթէ անծանօթ էր Հին ազգերուն, եւ մինչեւ Հիմա ալ շատ ընդարձակ տեղեր կան մէջը որ մեզի անծանօթ են, թէպէտեւ Եւրոպայի ու Ամերիկայի ճամբորդները տարիէ տարի անոր վրայ նոր տեղեկութիւններ կու տան :

Ափրիկէի սահմանը Հիւսիսէն՝ Միջերկրական ծովն է. արեւելքէն՝ Կարմիր ծովն ու Հնդկաց օվկիանոսը. հարաւէն՝ Հարաւային օվկիանոսը. արեւմուտքէն՝ Ալպանդեան օվկիանոսը :

Երկայնութիւնը 5,000 մղոն ու լայնութիւնը 4,800 մղոն է. ու տարածութիւնը 12,000,000 քառակուսի մղոն է :

Ափրիկէն տասնուութը աշխարհք կը բաժնուի. ասոնցմէ իրեքը Հիւսիսային կողմն են, եօթը մէջաեղունքը, ութը հարաւային կողմը :

Հիւսիսայիններն են՝ Եգիպտոս, Գերպերիտան, Սահրա :

Միջիններն են՝ Սենեկամպիա, Հիւսիսային Կուինէա, Նիկրիտիա, Նուպիա, Եթովպիա, Ատէլ, Այան :

Հարաւայիններն են՝ Հարաւային Կուինէա, Օթենթացոց երկիրը, Գլուխ բարեյուսոյ, Քաֆրաստան, Մոնոմոթափա, Մոզամպիկը, Չանկէպար եւ Անծանօթ երկիր :

Ափրիկէի ծոցերը քիչ են, որոնց գլխաւորներն են՝ Կուինէայի ծոց՝ Ալպանդեան օվկիանոսին մէջ.

Արաբիոյ ծոց կամ Կարմիր ծով՝ Հնդկաց ծովուն մէջ.

Սիբթ եւ Քապէս՝ Միջերկրական ծովուն մէջ :

Ափրիկէի գլխաւոր կղզիներն ասոնք են .

Քանարեան կղզիները , Գալարի գլխոյ կղզիները , Իշլաններու կղզին , Աննօպոն կղզին , եւ Սուրբ Թովմաս՝ որ Կուինէա ծոցին մէջն են , Պիսաճոս կղզիները , Ֆիրնանտօ Փօ կղզին , Պաղարութա ու Քուէրէնիպա կղզիները , Սուրբ Մատթէոս , Սուրբ Համարձումն , Սուրբ Հեղինէ՝ Ատլանդեան ովկիանոսին մէջ :

Մատակասկար , Սոքոթորա , Չանդիպար , Քոմորեան կղզիները , եւ Մասքարենեան կղզիները՝ Հնդկաց ծովուն մէջ :

Ափրիկէի մէջ լեռներու հէնդ գլխաւոր դօտի կայ .

Աալաս՝ Պերպերիստանին մէջ .

Քոնկ՝ Նիկիտիոյ ու Կուինէայի մէջ .

Լուանի լեռները՝ Եթովպիոյ հարաւային կողմը .

Լուփաթա լեռները՝ Ափրիկէի հարաւային կողմը .

Մատակասկար՝ համանուն կղզիին մէջ :

Ափրիկէի գլխաւոր գետերն ասոնք են .

Նեղոս՝ որ շատ հին ժամանակէ 'ի վեր անուանի ու աշխարհիս ամենէն մեծ գետերէն մէկն է . 3,000 մղոն երկայնէ , ու կը թափի Միջերկրական ծովը :

Սենեկալ , Կամպիա , Քասամանգա , Քաշէոյ , Ճիպա , Ռիօ կրանա , Նիւնէզ , Սիերա լեօնի գետ , Աօլթա , Նիկէր , Չայիբէ , Քօանգա եւ Կարիէփ՝ Ատլանդեան ովկիանոսը :

Չամպէզ եւ Ճուպա՝ Հնդկաց ծովը . աս երկուքը խիստ մեծ են :

Ամենէն մեծ լիճը Զատ լիճն է որ երկրին մէջտեղն է , եւ 220 մղոն երկայնութիւն ու 140 մղոն լայնութիւն ունի : Տէպօ , Տեմպէս եւ Ճասսի լիճերն ալ անուանի են :

Ափրիկէն այրեցած գօտիին տակն ըլլալուն համար սատոիկ տար է . մեծ մասը երկու եղանակ ունի , մէկը չոր՝ մէկալն անձրեւային վասն զի վեց ամիս դրեթէ միակերպ անձրեւ կու դայ :

Երկիրը դաշտային է , եւ շատ տեղ մեծամեծ աւաղուտ անապատներ կան : Հոյն ընդհանրապէս անբեր է . բայց գետերուն քովերը քիչ մը պտղաբեր են . աւաղի անապատներուն մէջ ալ տեղ տեղ կղզի պէս երկիրներ կան Ռիօֆօ ըսուած՝ որ շատ բարբեր են :

Գլխաւոր բերքերն են՝ արմաւ , թուղ , ժանտաթուղ , քոքոյ ,

կասիա, խէժ, խնկեղէն, սոսոքապ ծառը՝ որ աշխարհիս մէջ ամենէն խաշոր ծառերէն մէկն է. եւ ուրիշ աղնիւ փայտեր. տեղ տեղ ալ կը գտնուի բրինձ, շաքար, պղպեղ, բամպակ, կտաւ, լեղակ, օսկի, արծաթ, երկաթ ու քարեր: Բարեցուսոյ գլխոյն գինին խիստ աղնիւ է:

Կենդանիներուն մէջ գլխաւորներն են առիւծ, վագր, խնձ, ունգեղջիւր, գոմէշ, փիղ, ընձուղտ, վայրի էշ, կսկորգիլոս, ձիազետի, տեսակ տեսակ կաղիկներ, մեծամեծ օձեր, ջայլամ, թու-թակ եւ կռուսկ:

Ափրիկէի բնակիչն է 60,000,000, բայց սմանք կ'ըսեն թէ 100,000,000 մարդ կայ: Ամէն ալ կարծիք է բնաւ մէկը չգիտեր. վեց կամ ու-թը զատ ցեղ կամ սերունդ կայ, այսինքն Արապ, Խըպտի, Կաւկաս, Հիւսիսային կողմերը. Բաֆիր, Օթենթոթ՝ Հարաւային կողմը. ու Սեեի ՄԱԲՊ՝ կեդրոնական Ափրիկէն: Աս վերջիներէն շատը բըռ-նութեամբ ուրիշ երկիրներ կը տարուին գերի բլլալու, թէպէտեւ Հիմա սա տեսակ գէշ առուտուրը ովկիանոսին վրայ մեծ տէրու-թիւններէն արգիլուած է: Բնութեամբ ընդհանրապէս պակասամիտ, ազէտ ու վայրենի են:



ԱՓՐԻԿԷՅԻ

Կրօնքը՝ եգիպտոսին, Պերպերիտանին ու Նուպիայի մէջ Մահ-մէտական է. Եթովպիայինը՝ Քրիստոնեայ, մէկալ տեղերունը կը-դասպաշտ:

Քաղաքականութեան կողմանէ Ափրիկէի մեծ մասը բարբարոսութեան մէջ մնացած է . մինչեւ անդամ հարկաւոր արհեստներն ալ չեն գտնուիր հոն . իսկ ուսմունք ու գիտութիւն ամենեւին չկայ : Միայն Եգիպտոս ու Միջերկրականին ծովեզերքը քիչ մը քաղաքականութիւն սկսած է :

Կառավարութիւնները ազատ միապետական են Ափրիկէի մեծ մասին մէջ :

## Ա. Ե Գ Ի Պ Տ Ո Ս

Ընդհանուր գիտելիք :

Չի՛ն ատենը Եգիպտոս ամէն արհեստի ու գիտութեանց կողմանէ խիստ ծաղկած էր , մէջը շատ մեծաշէն քաղաքներ կային , եւ Թագաւորութիւնը զօրաւոր ու անուանի էր . բայց երկու հազար տարիէն աւելի է որ քանի գնաց տկարացաւ , առջի մեծութիւնը գրեթէ ամենեւին չմնաց : Եթե՛ներորդ դարուն մէջ Արաբացիք տիրեցին Եգիպտոսի , եւ Աղէքսանդրիոյ հռչակաւոր գրքատունը այրեցին . ետքը անցաւ Մեմփուք ըսուած Չէրքէզներուն , անոնցմէ ալ Օսմանցւոց ձեռքը . 1798ին Քաղղիացիք առին , բայց խիստ քիչ դիմացան . ուստի նորէն Օսմանցւոց ձեռքը անցաւ եւ մինչեւ հիմա անոնց ձեռքն է :

Եգիպտոսի սահմանը հիւսիսէն՝ Միջերկրական ծովն է . արեւելքէն՝ Սուէզի պարանոցն ու Կարմիր ծովը՝ . հարաւէն՝ Նուպիա . ու արեւմուտքէն՝ Պարբա ըսուած երկիրը ու Մեծ անապատը :

Ասիկայ նեղ երկիր մըն է . բայց երկայնութիւնը 600 մղոն կը հաշուի . ու տարածութիւնն է 140,000 քառակուսի մղոն :

Օդը խիստ տաք է . անոր համար եւ մանր աւազի փոշիներէն՝ որով օդը շատ անդամ լեցուած կ'ըլլայ՝ հոն տեղի բնակիչներուն շատին աչքը ցաւոտ է կ'ըսեն :

Երկիրն աւազուտ ըլլալուն եւ շատ անձրեւ չգալուն համար շատ պտղաբեր չէ . հարաւային կողմերը ամենեւին անձրեւ չգար . միայն Նեղոսի մօտ տեղուանքը խիստ պտղաբեր կ'ըլլան , որովհետեւ աս գե-

տը ամէն տարի կանոնաւոր կերպով կը բարձրանայ ու ամիսներով կը ծածկէ երկու կողմի դաշտերն ու արտերը :

Գլխաւոր բերքն է բրինձ, արմաւ, եգիպտացորեն ( ճուղ պտուղ-փայլ ), բամպակ, շաքար ու պատկառուկ խտոր, կենդանիներուն մէջ ալ անուանի է Հիլոս բուսած մնկը, որ կոկորդիլոսին թշնամի է, ու քաջահաւ թռչունը՝ որ օձերը կը սպաննէ :

Բնակիչն է կարծեօք 2,500,000, խփտի՝ որ հին եգիպտացիքն են, Տաճիկ, Արաբացի, Հայ եւ Հրեայ :



ԵԳԻՊՏՈՍ

Երեւելի լեռ չկայ : Կարմիր ծովուն ու Նեղոս գետին մէջտեղը դօտի մը կայ՝ որուն ամենաբարձր դագաթը 6,000 ոտանչափ է :

Նեղոս գետէն զատ ուրիշ գետ չունի :

Գլխաւոր լիճերը ասոնք են .

Պիլքէթ—Էլ—Քերուն, 34 մղոն երկայն : Պուրլոս, 30 մղոն երկայն . Մէնղալէ եւ Պարտուալ :

## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԳԱՀՒՐԷ կամ ՄԸՍԸՐ (300,000) մեծ ու վաճառաշահ քաղաք է . ասոր մօտ են իրեք անուանի բուրգերը, որոնց մեծին բարձ-



ԵԳԻՊՏՈՍԻ ՅՈՒՐԿԵՐԸ

ըութիւնն է 428 ստնաչափ, եւ մեծ զետնափոր զերեզմաննոցը՝ որուն մէջ 3,000 տարուան մեծփաներ կան : Երկաթուղի մը կայ որ Աղէքսանդրիայէն սկսելով առ քաղաքէն կ'անցնի ու Կարփը ծովը կ'երթայ, ու Հնդկաստան երթարու մեծ ճամբան է :



ԵԳԻՊՏԱՅԻՈՅ ՄՈՒՄԻԱ ՅՈՒՆԵԼԸ

ԱՂԻՔՍԱՆԴՐԻԱ կամ ԻՍՔԷՆՏԵՐԻՅԷ (66,000) ատենով Եգիպտոսի Թագաւորութեան մայրաքաղաքն էր, հիմա աշխարհիս վաճառաշահ քաղաքներէն մէկն է :

ԲԱՇԻՏ կամ ՌՕՉԻԹԹԱ (6,000) 'Ներսիին բերանը' Եգիպտոսի բանուկ նաւահանգիստներէն մէկն է :


ՏԱՄԻԱԹ (28,000) նաւահանգիստը բանուկ քաղաք է :

ՍԻՈՒԹ . Ափրիկէի ներսերը գացող կարաւանները ասկէ ճամբայ կ'ելլեն :


ՍԻՒՎԷՏԻՍ . Համանուն պարանոցին վրայ պղտի քաղաք է :

ՃԻԶԷ . ասոր քով են Մեմփիս քաղաքին աւերակները :

ԼՈՒՔՍՈՐ . Հին Թերէ քաղաքին աւերակներուն մէջ պղտի գեղ մըն է :



ՄՈՒՍԻԱ



## Բ . ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆ

Ընդհանուր հիփեւէէ :

ՊԵՐՊԵՐԻՍՏԱՆԸ՝ որ Բարբարոսաց աշխարհ ալ կ'ըսուի, հին ատենը կարբեղոնացւոց ձեռքն էր . ետքը Հռովմայեցւոց անցաւ, անկէջ ետքն ալ Արաբացւոց ձեռքը . հիմա մէկ մասը այլեւայլ իշխանութեանց տակն է, մէկ մեծ մասն ալ Գաղղիացւոց ձեռքն է :

Պերպերիստան կ'ըսուի Ափրիկէի հիւսիսային ծովեզերքը՝ Եգիպտոսէն ինչուան Ատլանդեան օվկիանոս :

Օղը ամառը խիստ տաք կ'ըլլայ, բայց ձմեռը բարեխառն ու երբեմն ցուրտ . երկիրը բարեբեր :

Պլխաւոր՝ բերքն է բրինձ, ցորեն, շաքար, ձի, ուղտ, աւիւծ :

Բնակիչն է 12,650,000 Պերպեր, Մարոք (Մալլե), Տաճիկ, Հրեայ, Գաղղիացի :



ՄԱՐՈՔ



ՊԵՐՊԵՐ

Կրօնքը մեծ մասին Մահմետական է :

Հինգ ընդհանուր բաժանում կայ . Գարապլուս, Թունուզ, Ճեղայիր, Մարոք, որ ծովեզերք են, ու Ֆեզզան՝ ներսի կողմը :

ԴԱՐԱՊԼՈՒՍ 1,500,000 բնակիչ ունի, ու տարածութիւնը 126,933 քառակուսի մղոն է :

ՊԱՐՔԱ՝ որ Գարապլուսին մէկ կտորն է, 1,000,000 բնակիչ ունի, եւ 120,000 քառակուսի մղոն :

ԹՈՒՆՈՒՁ 2,000,000 բնակիչ ունի, եւ 79,140 քառակուսի մղոն :

ՖԵԶԶԱՆ 150,000 բնակիչ ունի, եւ 128,000 քառակուսի մղոն .

մեծ մասը անապատ է :

Ասոնք ինքնազուխ տէրութիւններ են, քայց Օսմանցոց տուրք կու տան :

ՃԷԶԱՅԻՐԸ Գաղղիացոց ձեռքն է . 2,000,000 բնակիչ ունի, ու 142,825 քառակուսի մղոն :

ՄԱՐՈՔԸ բոլորովին զատ տէրութիւն մըն է . 6,000,000 բնակիչ ունի, ու 222,560 քառակուսի մղոն :



Գլխաւոր լեռները են՝

Ատլաս լեռ, որ Միջերկրական ծովէն թուռուղ դաւառէն կը սկսի ու մինչեւ Ատլանդեան ովկիանոս կը տարածի: Սեւ Լեւ, Սուարա եւ Կարեան լեռ՝ Գարապլուս գաւառին մէջ:

Գլխաւոր գետերն են՝

Մեճէրտէ՝ թուռուղի մէջ. Շելլիֆ եւ Ատուսի՝ Ճէզայիրի մէջ ու Մալուեա, Սիպու, Օմերբէպեա, Թէնսիֆ, Կուիր, Չիզ ու Տարա՝ Մարոքի մէջ:

### Գ Լ Խ Ա Ւ Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ԹՈՒՆՈՒՁ (130,000) հին Կարբեդոնի աւերակներուն մօտ՝ մեծ քաղաք է, վաճառականութիւնն ու արհեստները ծաղկած, ասոր պէյը կամ իշխանը Օսմանցւոց հարկատու եւ հպատակ է:

ԳՆՐԱՊՂՈՒՍ կամ ԹՐԻՓՈՒԼԻ (20,000) ասոր վաճառականութիւնը առաջ աւելի ծաղկած էր:

ՖԷՍ (90,000) աստեղով արհեստի ու դիտութեան կողմանէ ծաղկած քաղաք էր. հիմա ալ Մարոքի կամ Մէրաբէշի ինքնագլուխ թագաւորութեանը գլխաւոր քաղաքն է:

ՄԱՐՈՒՔ (100,000) Մարոքի մայրաքաղաքը՝ շատ վաճառաշահ կաշին խիտ աղնիւ է:

ՄԻՔԻՆԵՁ կամ ՄԱՐՆԱՍՍ (50,000) Մարոքի թագաւորը տարւոյն մէկ մասը հոս կը նստի:

ԹԱՆՃԻՐ (10,000) Ճիպիթէրայի նեղուցին վրայ՝ Ափրիկէի խիտ հին քաղաքներէն մէկն է, եւ Մարոքի կը վերաբերի. Եւրոպացւոց դեսպանները հոս կը կենան:

ՃԷՁԱՅԻՐ կամ ԱԼՃԻՐԻ (94,600) երկար ատեն Օսմանցւոց հարկատու էր աս քաղաքը քովի երկիրներովը. 1830էն ետքը Գաղղիացւոց ձեռքն անցաւ, ու ամէն կողմանէ սկսաւ հետզհետէ ծաղկիլ ու զարդարուիլ: Բնակիչներուն կէսը Եւրոպացի է:

ԿՈՍՏԱՆԴԻՆԱ (25,000) ամուր բերդ է, որ Գաղղիացիք առին 1837ին:



## Ք. ՍԱՀՐԱ

Աս երկիրը խիստ ընդարձակ անապատ մըն է, որ Պերպերիստանի հարաւային կողմը կ'իյնայ :

Ատլանդեանի ծովեզերքէն մինչեւ Նեղոս գետը կը առածուի ու 3,000 մղոնի չափ երկայն է ու 900 մղոն լայն, ու բոլոր տարածութիւնը 2,700,000 քառակուսի մղոն է, բայց բնակիչները քիչուոր են : Ընդհանրապէս վրանաբնակ ու վայրենի մարդիկ են :

Կրօնքնին Մահմէտական ու Կռապաշտ :



ԱՆՊԱՏԻ ՓՈԹՈՐԻԿ

Աս ահագին անապատին մէջ՝ տեղ կայ որ ջուր կը գտնուի, որուն Ուաօի կ'ըսուի, եւ հոն գիւղ կամ քաղաք մը կայ,

Գլխաւոր քաղաքներն են՝ Մապուք, Ակատեղ, Ղաթ, Հոտէն, Առնա, Ակապլի, բայց վրանին խիստ քիչ տեղեկութիւն կայ :

## Ք. ՍԵՆԵԿԱՄՊԻԱ

Ընդհանուր գիտելիք :


ՍԵՆԵԿԱՄՊԻԱՆ Սահրային հարաւային կողմը կ'իյնայ, անունը Սենեկալ ու Կամպիա գետերէն առած է :

Արեւելքէն ունի՝ Սուտան երկիրը, հարաւէն՝ Կուինէա ու արեւմտեան Ատլանդեան ովկիանոս :

Ասոր սահմանին 700 մղոնի չափը ծավեղերը է :

Օղբ խիստ տաք . Յուլիսէն ինչուան Հոկտեմբեր միակերպ անձրեւ կու գայ զարհուրելի փոթորիկներով :

Բերքն է առատ սոսկի, խնկեղէն, պղպեղ, ջայլամի փետուր, փղոսկր, եւ պատպապ ծառը՝ որ ինչուան 90 ստնաչափ հաստութիւն կ'ունենայ : Կենդանիներէն ալ տաք երկրի գաղաններուն ամէն տեսակէն ունի :



ՎԱՊԻ, ՌԵՅԵՂՏՈՒՐ, ԿՈՎՈՐՊՈՂՈՍ

Ներսի կողմերը լեռնային է, ու մէկ քանի գօտիներ կան որ 6,000 ստնաչափ բարձր գագաթ ունին :

Գլխաւոր գետերն են՝ Սենեկալ ու Կամպիա, որ Ովկիանոսը կը թափին : Ատոնք շատ մեծ ու երկայն գետեր են . կայ նաեւ Ռիօ Կրան գետ 300 մղոն երկայն որ Ովկիանոսը կը թափի :

## ՓԼԽԱՆՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՊԱՄՊՈՒՔ . մեծ սոկիի հանք ունի :

ԹԻՄՊՕ . բոլոր երկրին աւելի կրթուած մարդիկը ասոր բնակիչներն են :

ՊԱԹՔՐՍԹ . որ պղտի կղզի մըն ալ ունի հետը, ու Անգղիացւոյ ձեռքն է, որոնք 6,000 բնակիչ ունին :

ՍԻԵՐՐԱ—ԼԷՈՆ (45,000) Հարաւային սահմանին ու Ովկիանոսին վրայ, ու Անգղիացւոց ձեռքն է:

ՍՈՒՐԻ ԼՈՒԴՈՎԻԿՈՍ. Գաղղիացւոց ձեռքն է:

Գաղղիացիք Սենեկալ դետին բերանը եւ Կամպիա դետին վրայ ու ուրիշ մէկ քանի տեղեր ալ առուտուր ընելու տեղ ունին:

Արեւմտեան կողմը Լիպիւրիա կ'ըսուի ու Ամերիկայէն ազատուած գերիները հոս կը բերուին, եւ Ամերիկացւոց պաշտպանութեանը տակ իրենց համար ինքնազուխ տէրութիւն մը ունին, եւ տպարաններ ու դպրոցներ բացած են, եւ առուտուրի մէջ յաջողութիւն գտնելու սկսած են:

Լեռներու դօտի մը կայ Քօնկ անունով, ու երեւելի դետ մը կայ որ Նիկէր կամ Բուօրրա կ'ըսուի ու հոս Ովկիանոս կը թափուի:

## Ե. ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒՒՆԷԱ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՒՒՆԷԱՆ Սենեկամպիոյ Հարաւային կողմի ծովեզերքն է:

Աս երկրի մեծ մասին Եւրոպացիք տիրած են:

Օդը տաք, թաց ու ֆնատակար է:

Գլխաւոր բերքերն են բամբակ, շաքար, լեղակ եւ ոսկիի աւազ. կենդանիներէն ալ փիղ, վագր, առիւծ, ունգեղջիւր ու մեծամեծ օձեր:

Բնակիչն է կարծիքով 10,000,000 կուսապաշտ, որ մարդազոհ ալ կ'ընեն:



ԿՈՒՒՆԷԱՅԻ ՄԷՔ ՅՈՒՂԱՐԿԱՌՐՈՒԹՅՈՒՆ

Աս երկրին մէջը հիմա Ամերիկայէն ու Եւրոպայէն քարոզիչներ կը գտնուին :



ԿՈՒՆԷՆՏԻ ԱԶՆՈՒՄԿԱՆԻ ՏՆՂ ԵՐԹԱԼԸ

Գլխաւոր քաղաքներն են Քումասիա, Ապոմէյ, Գլուխ Քորս, Քրիսթիանոպուրկ :

## Ձ. ՆԻԿՐԻՏԻԱ Կամ ՍՈՒՏԱՆ

Ընդհանուր գէպեւէտ :

ՆԻԿՐԻՏԻԱՆ Սահրային հարաւային կողմն է :  
Երկրին մեծ մասը դաշտային է ու աւազուտ անապատ :  
Բերքն է ոսկի, արծաթ, արմաւ, բրինձ, բամպակ ու վայրի  
դազաններ :


Բնակիչն է 20,000,000, բոլորն ալ սեւ ու բարբարոս մարդիկ :  
Կրօնքնին կռապաշտ ու Մահմէտական :  
Հոս է ջատ լիճը ու Նահւ Ֆիթթրէ լիճը :

## Գ Լ Խ Ա Ի ՈՐ Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ԹՈՄՊՈՒՔԹՈՒ. (12,000) Ափրիկէին երեւելի քաղաքներէն մէկն է. ոսկիի, փղոսկրի ու խէժի մեծ առուտուր ունի :

ՔՈՒՔԱ . Հիմակուան մայրաքաղաքն է :

ԷՆԿՈՌՆՈՒ (30,000) երկրին գլխաւոր վաճառաշահ քաղաքն է :  
Անուանի են նաեւ Սեկոյ , Հին Պոռնու , Քոպպէ , Իւպէյիր :



## Է . ՆՈՒՊԻԱ

Ընդհանուր քիտելէ :

ՆՈՒՊԻԱՆ Եզիպտոսի հարաւային կողմը կ'իյնայ , ու հիմա  
Եզիպտոսի կուսակալին ձեռքն է :

Երկիրը 35,000 քառակուսի մղոն է , աւազուտ , քարոտ ու ան-  
բեր :

Բերքն է սոկի , վիղոսի , երենոս ու արմաւ . կենդանիներէն ալ  
ամէն տեսակ վայրի գազաններ :

Բնակիչը 400,000 Մահմէտական , Կռապաշտ ու Քրիստոնեայ :

## ՓԼԹԱԻՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՍԵՆԱԱՐ (4,000) Նեղոսին վրայ վաճառաշահ քաղաք է :

ՍՈՒԱՔԷՄ (8,000) Կարմիր ծովուն վրայ բանուկ նաւահանգիստ է :



## Ը . ԵԹՈՎՊԻԱ

Ընդհանուր քիտելէ :

ԵԹՈՎՊԱՅԻՔ՝ որ Հասպէշ կամ Խափշիկ ալ կ'ըսուին , հին  
ատենը Ափրիկէի ծաղկած ազգերէն մէկն եղած են , ու չորրորդ  
դարուն մէջ Քրիստոնէութիւնը մտեր է մէջերնին . բայց հիմա տե-  
րութիւննին շատ տկարացած է , ու գիտութիւնն ամենեւին չունին :

Եթովպիան Նուպիոյ հարաւային կողմը ընդարձակ երկիր է՝ այլ եւ այլ ինքնազուլի տերութիւններ բաժնուած :

Երկիրը լեռնոտ ու բարեբեր է :

Շատ բարձր լեռներ ունի, Ամպա—հայ լեռ 15,000 ստնաչափ՝ ու Պուահաթ լեռ 14,364 ստնաչափ բարձր :

Գետերը ասոնք են, Ապայ, Թաքացե ու Հավաշ :

Տեմպիա կամ Յանա լիճը 50 մղոն երկայնութիւն ունի :

Բերքն է ցորեն, բրինձ, շաքար, խահուէ, բամպակ. եզները խիտ խոշոր են, ու Ափրիկէին հասարակ գազանները հոն ալ կը գանուին :

Բնակիչը 4,000,000. Եւտիքական քրիստոնեայ :

Գլխաւոր քաղաքն է՝ Կէօնտեր (50,000) որ Ամհարայի Թագաւորութեան մայրաքաղաքն է :

Մէկալ տերութիւններուն գլխաւոր քաղաքներն են՝ Անքոպէր, Աքսում, Տոպարվա, Արբիքօ :

## Թ. ԱՏԻԼ

ԱՏԻԼԸ Եթովպիոյ արեւելեան կողմը պզտի տերութիւն մըն է :

Երկիրը Թաց, օզը փասակար :

Բերքն է սակի, կնգրուկ, խէժ, մում ու փղոսկր :

Բնակիչը 200,000 Մահմէտական :

Գլխաւոր քաղաքներն են՝

ՋէՅԱ. որ Պապիւլմանտէպի նեղուցին մէջ կզղէ է :

ՊԱՐՊՈՐԱ. որ Արաբիայի հետ առուտուր ունի :

ԱԻՍԱԿՈՒՐԻԼ. որ ատենով Ատէլի մայրաքաղաքն էր :

## Թ. ԱՅԱՆ

ԱՅԱՆԸ Ափրիկէի արեւելեան ծովեզերքն է. աս երկրիսներսի կողմը անքնակ անապատ է :

Երկիրն աւազուտ, բայց պտղաբեր է :  
 Բերքն է սոկի, դեղին սաթ, փղոսկր, խունկ, խեփ :  
 Բնակիչն է 150,000 Մահաբանիան ու Կապաշա :

## ԺԱ՝ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԿՈՒՒՆԷԱ

ՀԱՐԱՒԱՅԻՆ Կուինեան լեռնոտ ու բարեբեր երկիր է՝ Ափ-  
 րիկէի հարաւային արեւելեան կողմը :

Ասոր վայրի դազաններուն մէջ երեւելի է Պօա բուլած ահագին  
 օձը, եւ ուրիշ շատ փնասակար ճճիներ . տեսակ մը մթեղ կայ որ  
 խայթելուն պէս կը մեռցընէ կ'ըսեն . տեսակ մը խոշոր մըջիւն՝ Նն-  
 սոնտի բուլած, որ փիղին պատիճը կը մտնէ՝ կը կատղեցընէ ու կը  
 սպաննէ . տեսակ մըն ալ որդ, որ ինչ վաճառք կամ կարասիք ըլ-  
 լայ՝ կը կրծէ, փոշի կը դարձընէ :



ՊՕԱ ՕՁԻ ՄԸ ՄԱՐԴՈՒ ՓԱԹՏՈՒԻԼԸ

Բնակիչն է 5,000,000 կապաշա ու վայրենի :

Գլխաւոր տեղուանքն են Լոանկոյ, Քոնկոյ, Պենկելա :

Հարաւային կողմերը Փորթուգէզներուն ձեռքն է ու ասկէց շատ  
 դերի կը տարուին Պրազիլ՝ հարաւային Ամերիկայի մէջ :



## ԺԲ. ՕԹԵՆԹԱՅԻՈՑ ԵՐԿԻՐ

ՕԹԵՆԹԱՅԻՔ ընտելութեան քաղաք չունին, հապա գեղերու պէս տեղուանք խումբ խումբ բաժնուած կը բնակին :

Բնութեամբ վայրենի են, աւազակաբարոյ, աղէկ վաղղ, ու թունաւոր նեա կը բանեցընեն :

Շատերը քարոզիչներուն քարոզութիւնովը ֆրիստոնեայ եղան :



ՕԹԵՆԹՕԹ

Բուն Օթենթացիներէն քիչ մնացած են, բայց ուրիշ ցեղերէ շատ բնակիչներ կան, թէեւ չենք գիտեր որչափ :

## ԺԳ. ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՑ

ԲԱՐԵՅՈՒՍՈՑ ԳԼՈՒԽԸ Ափրիկէի հարաւային ծայրն է Անգղիացւոց ձեռքը :

Ունի 520 մղոն երկայնութիւն ու 430 մղոն լայնութիւն, եւ 110,256 քառակուսի մղոն :

Լեռնոտ է, ու գլխաւոր գօտիներն են Պօքէվէլտին, Ռօձէվէլտին, Չվարթէին եւայլն :

Մեծ գետ չկայ :


Օդը բարեխառն, երկիրը բարեբեր է :

Ափրիկէի բոյսերուն գրեթէ ամէնն ալ կը բուսցունէ . իսկ վայրի գազանները հիմա՝ քիչցած են, ոչխարները խոշոր դմակ ունին, ծովեզերքէն ալ շատ կէտ կամ պալենա կ'ելլէ :

Բնակիչն է 166,408 . կէսը ճերմակ կէսը սև :

Շատ Աւետարանական քարոզիչներ կան Անգղիայէն, Ամերիկայէն, Գաղղիայէն եւ ուրիշ երկիրներէն, ու բաւական յաջողութիւն կը գտնեն : Կուսպաշտներէն դարձած Քրիստոնեայ շատ կան հիմա :

Գլխաւոր քաղաքն է ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ կամ՝ ՔԱՓ, եւ կամ Քափօ—տի—պոնա—սփէռանցա (22,500) Եւրոպայէն Հնդկաստան գացող եկող նաւերը հոս կը՝ հանդէն . ուստի աշխարհիս խիստ երեւելի քաղաքներէն մէկն է : Մեծ գպրոցներ ունի ու թանգարան մը՝ որուն մէջը 30,000 հատոր գիրք կայ :



ԳԼՈՒԽ ԲԱՐԵՅՈՒՍՈՅ

## Փ Գ . ՔԱՓՐԱՍԱՆ

ՎԱՓՐԱՍԱՆԻՆ մեծ մասը լեռնոտ է, մնացածը աւազուտ, բայց բարեբեր :

Բնակիչն է 345,000, սև, կտրիճ, աղէկ վազող ու վարպետ սրտորդ :

Ունի 20,000 քառակուսի մղոն :

## Ժ Ե . Մ Ո Ն Ո Մ Ո Թ Ա Փ Ա

ՄՈՆՈՄՈԹԱՓԱՆ ատենով մեծ Թագաւորութիւն էր, հիմա մանր տէրութիւններ բաժնուած, ու ծովեզերքը Փորթուգէզներու ձեռքն է:

Օդը բարեխառն, հողը բարեբեր, ոսկին ու արծաթը շատ: Չամպէզի գետը աս երկրին մէջէն կը վազէ, ու խիստ մեծ է: Բնակիչները քաջ մարդիկ են, բայց ստոյգ Թիւր չենք գիտեր:

## Ժ Զ . Մ Ո Զ Ա Մ Պ Ի Գ

ՄՈԶԱՄՊԻՔԸ Ափրիկէին արեւելեան կողմը ծովեզերքի վրա Փորթուգէզներուն ձեռքն է, բայց բնակիչները ինքնագլուխ են:

Գլխաւոր բերքն է ոսկի, արծաթ, բրինձ, փղոսկր:

Բնակիչը 10,000:

Գլխաւոր քաղաքն է Մոզամպիբ որ 6,000 բնակիչ ունի:

## Ժ Է . Չ Ա Ն Կ Ի Պ Ա Ր

ՉԱՆԿԻՊԱՐԸ Լուսաթա լեռներուն արեւելեան կողմը ծովեզերեայ ցած երկիր մըն է, ուն ալ անառողջ:

Բերքն է խէժ, փղոսկր, ծարիր ու կապոյտ արջասպ:

Բնակիչներուն կէսը Արաբացի, կէսը տեղացի Կապաշա են:

Գլխաւոր տեղուանքն են Մահատոքոյ, Պրաւա, Քիլոա, Մոնկալոյ, Մամպալա, Մէլինտա:

## Ժ Ը . Ա Ն Ծ Ա Ն Ո Թ Ե Ր Կ Ի Ր

ՆԻԿՐԻՏԻՈՅ ու Օթենթացւոյ երկրին մէջտեղը ընդարձակ երկիր մը կայ, որ դեռ անծանօթ է: Մէջը շատ վայրենի ու բարձր:

բարոս ժողովուրդներ կան, որ ատեն ատեն արշաւանքներ ըրեր են  
երենց քովի երկիրներուն վրայ :


## Ժ Թ . ԱՓՐԻԿԷԻ ԿՂԶԻՆԵՐԸ

### 1 . ԱՆԳՂԻԱՑԻՈՅ ԶԵՌՔԸ

ՖԻՐՆԱՆՏՕ ՓՈՅ . Կուխնէայի մտա : Լեռ մը ունի 11,000  
ստնաչափ բարձր որ Քլարէնդ լեռ կ'ըսուի : Շատ զեղեցիկ կղզի  
մըն է ու ընդարձակ անտառներ կան :

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ . ապառաժ ու անընակ կղզի մըն է :

ՍՈՒՐԲ ՀԵՂԻՆԷ (5,000) հոս մեռաւ Նափոլէոն Պոնափառթէն  
1821ին :



ՍՈՒՐԲ ՀԵՂԻՆԷ

ՍԱՌԻՏԻՈՍ կամ ԳԱՂՂԻՈՅ ԿՂԶԻ . ասիկայ առաջ Գաղղի-  
այլոց ձեռքն էր :

ՍԷՏԶԻԼԵԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ (7,000) որ շատ վաճառաշահ են :

2. ԳԱՂՂԻԱՑԻՈՑ ԶԵՌ-ԲԸ

ՊՈՒՐՊՈՆԻ ԿՂՁԻ (180,000) հոս անդի խահուէն ու շարարը ազնիւ է :

3. ՓՈՐԹՈՒԳԷԶՆԵՐՈՒՆ ԶԵՌ-ԲԸ

ԱՍՈՐԵԱՆ ԿՂՁԻՆԵՐԸ (200,000 ատոնց մէջ գլխաւորներն են Թէր-չէրա, սուրը Միքայէլ, սուրը Մարիամ ու Փիքոյ կղզին :

ՄԱՏԻՐԱ (120,000) ասոր գինին շատ անուանի է . ատենով թողը կղզին անասաւ է եղեր, Փորթուգէզները 1431ին կրակ տուին այրեցին, անկէ ետքը երկիրը բարեբեր եղաւ :

ԳԱԼԱՐԻ ԳԼԽՈՑ ԿՂՁԻՆԵՐԸ (42,000) ատոնց գլխաւորներն են Սուրը Յակոբ, Սուրը Անտոն ու Աշի կղզին . շատին մէջն ալ հը-բարուղի կայ :

ՍՈՒՐԲ ՄԱՏԹԷՈՍ . Ատլանդեան օվկիանոսին մէջ անբնակ կղզի է :

ՍՈՒՐԲ ԹՈՎՄԱՍ . Կուինէյի ծոցին մէջ . ուսկից շատ շարար կ'ենէ :

4. ՍՊԱՆԻԱՑԻՈՑ ԶԵՌ-ԲԸ

ԲԱՆԱՐԵԱՆ ԿՂՁԻՆԵՐԸ (174,000) ատոնց գլխաւորներն են Գա-նարիա, Թէնէրիֆֆա, Փալմա, Երկաթի կղզին եւ Ֆորթալեն-



ԹԵՆԵՐԻՓՓԱ ԿՂՁԻՆ

Թուրա, որոնց գլխաւոր բերքն է ազնիւ գինի :

ԻՇԽԱՆԻ ԿՂԶԻՆ, Եւ ԱՆՆԱ ՊՈՆԱ՝ Կուինէայի ծոցին մէջ :


### 5 . ԵՒՐՈՊԱՑԻՈՑ ԶԵՌՔԸ ԶԵՂԱԾ ԿՂԶԻՆԵՐԸ

ՄԱՏԱԿԱՍԿԱՐ (4,000,000) Ափրիկէի կղզիներուն մեծն է . ասոր ծովեզերքը միայն ծանօթ է մեզի . օդը թաց ու վնասակար : Կըսեն թէ ներսերը աղէկ մշակած է :

ՍՈՔՈԹՈՐԱ (100,000) ասոր բնակիչները Արարացի են :

ՋԱՆԶԻՊԱՐ . Ջանկէպարին ծովեզերքն է . գլխաւոր զաճառքն է խէժ ու փղոսկր :

ՔՈՄՈՐԵԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ, որ Արարացւոց ձեռքն են :



ԱՓՐԻԿԷԻ ԳԻՒԳ

Գ Լ Ո Ւ Ն Ե  
ԱՄԵՐԻԿԱ

Ընդհանուր գիտելիք :

ԱՄԵՐԻԿԱՆ ատենով անծանօթ երկիր էր . 1492ին Գրիտափոր Քրիստֆոր Կոլումբոս ճենովացի նաւորդը ան կողմերը գնաց Սպանիոյ Թագաւորին կողմանէ , ու նախ Կուանահանի ըսուած կղզին դաւաւ , որ Լուքայեան կղզիներուն մէկն է : Ետքը Ամերիկոս Վեսփուչչի Իտալացին ան երկրին մէկ մասը պտղաւեցաւ , ու ստորագրութիւնը ընելուն համար երկիրն ալ իրեն անունովը Ամերիկա ըսուեցաւ :



ԱՄԵՐԻԿԱՅԻ ԳՏՆՈՒՄԸ

Ամերիկան Եւրոպայի արեւմտեան գին կ'իյնայ . հիւսիսային կողմէն պատած է Սառուցեալ ծովը . արեւելքէն՝ Ատլանդեան օվ-

կիանոսը. հարուէն՝ Հարաւային ովկիանոսը. ու արեւմուտքէն՝ խաղաղական ովկիանոսը:

Երկայնութիւնը 9,000 մղոնի չափ կը սեպուի, ու լայնաւթիւնը 3,000էն աւելի, ու մեծութիւնը 15,000,000 քառակուսի մղոն է:

Ամերիկան երկու մեծ կտոր կը բաժնուի. Հիւսիսային ու Հարաւային. ասոնք իրարու կպած են Բանամայի պարանոցովը, սրուն ամենէն նեղ տեղը միայն 28 մղոն լայնութիւն ունի:

Ամերիկայի մէջ 21 տէրութիւն կայ. ասոնցմէ վեցը Հիւսիսային կողմը կ'իյնայ, 15ը հարաւային:

Հիւսիսայինները ասոնք են. Ռուսի Ամերիկա, Կրոէնլանտա, Բըրիտանական Ամերիկա, Միացեալ Նահանգներ, Մեքսիկոյ, Կեղրոնական Ամերիկա:

Հարաւայինները ասոնք են. Նոր Կրանտա, Ալենկուէլա, Էզուատոր, Անգղիայի՝ Գաղղիայի ու Հոլանտայի Կուլանա, Պրագիլ, Փէրու, Պոլիվիա, Բիլի, Լա Փլաթա, Փարակույա, Եուրուկույա՝ Փաթակոնիա եւ Թէրրա—տէլ—Փուէկո:

Ամերիկայի մէջ են երկրիս ամենէն բարձր լեռները (Հիմալայա լեռներէն զատ), ամենէն մեծ գետերն ու լիճերը, ամենէն ընդարձակ անտառներն ու բարձր եւ խոշոր ծառերը, ու նաև ամենէն շատ հրաբուդիները:

Ամերիկայի դիւաւսը ծոցերը ասոնք են.

Պաֆֆինի ծոցը՝ Բրիտանական Ամերիկայի ու Կրոէնլանտայի մէջտեղը. Հուտտոնի ծոցը՝ անոր մօտ. Սուրը Լաւրենսիոսի ծոցը՝ Բրիտանական Ամերիկայի մէջ. Ֆունտի ծոցը, Մասսաչուսէդսի ծոցը, Տէլէուէյրի ու Չեսէփիլքի ծոցերը, ու Մեքսիկոյի ծոցը՝ Միացեալ Նահանգներուն մէջ:

Տարէնի ծոցը, Ալենկուէլայի ծոցը, Բարիայի ծոցը, ու Պազիտայի, սուրը Սալվատորի, Ռիօ Եանէյրոյի, Կուայպուիլի եւ Չոքոյի ծոցերը՝ Հարաւային Ամերիկայի մէջ:

Քալիֆորնիայի ծոցն ալ Միացեալ Նահանգներուն կը վերարեւրի, բայց արեւմտեան կողմն է, ու խաղաղական ովկիանոսին հետ կպած է:



Ամերիկայի գլխաւոր նեղուցներն ասոնք են .

48 Վէհինկայ նեղուցը՝ Ամերիկայի ու Ասիոյ մէջտեղը, որ միայն մշոնի չափ լայն է :

Լէնքասթըր, Տէվիս, Քրմիդըրլէնտ, Հուսսոն՝ Բրիտանական Ամերիկայի հիւսիսային կողմը :

Պահամայի ջրանցքը՝ Միացեալ Նահանգներուն հարաւային կողմը :

Մակելլանեան նեղուցը՝ Փաթականիոյ հարաւային շրին :

Ամերիկայի գլխաւոր հրուանդանները ասոնք են .

Քէյփ Ֆէրուէլ՝ Կրոէնլանտայի մէջ . Քէյփ Ռէյս՝ Բրիտանական Ամերիկայի մէջ . Քէյփ Սէյպըլլ, Քէյփ Քօս, Քէյփ Հաթերաս՝ Միացեալ Նահանգներուն մէջը :

Քէյփ Սան (սուրբ) Ռօք՝ Պրագիլի մէջ . Քէյփ Հօրն՝ Հարաւային Ամերիկայի ծայրը :

Քէյփ Սան (սուրբ) Լուքաս՝ Քալիֆօրնիայի մէջ :

Ամերիկայի գլխաւոր կղզիներն են՝

Սառուցեալ ծովուն մէջ՝ Կրոէնլանտա :

Ատլանտեան ովկիանոսին մէջ՝ Նիւ-Ֆարնտ-Լանտ, Լօնկ-Այլէնա, Պերմուտեան կղզիները, Լուքայեան կղզիները, Մեծ ու Փոքր Անգիլեան կղզիները :

Խաղաղական ովկիանոսին մէջ՝ Նոր Գէորգիա, Մալուինեան կղզիները, Մակելլանեան կղզիները կամ Երկիր Հրոյ, եւ Քիլտէ կամ Զիլտէ կղզին :

Ամերիկայի մէջ լեռներու գլխաւոր գօտիներն ասոնք են .

Բօքի Մարնթէյնս՝ արեւմտեան կողմը . Արալաքիան կամ Ալլէկանի՝ արեւելեան կողմը, Միացեալ Նահանգներուն մէջ :

Քորալիլեան լեռները՝ Մեքսիկոյի մէջ, որոնց ամենէն բարձրը Զիմպորաոյ կ'ըսուի :

Պրագիլի լեռները ու Անտէզ գօտին՝ որ աշխարհիս մէջ ամենէն զարմանալի գօտին է, 4,000 մշոնէն աւելի երկայն է, ու ամենէն բարձր գագաթը 24,000 ոտնաչափ բարձր է, Հարաւային Ամերիկայի մէջ են :



ԱՆՏԵՐ ԼԵՈՆՆԵՐԸ

190 Բոլոր աշխարհիս մէջ 270 հրաբուռիս կը համրուի, եւ ասոնց հազար Ամերիկայի մէջ են, մեծ մասը հարաւային կողմերը :

Գլխաւորները ասոնք են .


Սուբբ Եղիա՝ Ռուսաց Ամերիկային մէջ .

Փոփոքաթէփէթլ՝ Մեքսիկոյի մէջ .

Քսեթոփաքսի եւ Փիչինքա՝ Քարլմպիոյ մէջ .

Արեքիփա՝ Փէրուի մէջ :

Ամերիկայի գետերը ամենէն անուանի են աշխարհի մէջ . Գլխաւորները ասոնք են .



ՄԻՍԻՍԻՍԻ ԶԵՏԸ

Մաքէնզի՛ որ Սառուցեալ ովկիանոս կը թափի . Սաքաչեվան՝ Հուստոնի ծոցը . Սուրբ Լաւրենտիոս՝ Ատլանդեան ովկիանոսը . Միսիսիբի, Միսուրի՛ որ Միսիսիբիին հետ կը խառնուի ու անոր հետ կը միանայ, ու Ռիօ Կրան՝ Մէքսիկոյի ծոցը :

Քոլումպիա՛ Խաղաղական ովկիանոսը .

Օրենոք, Ամազոնաց գետը, Թորանթինն ու Փլաթա, որ Հարաւային Ամերիկա են ու Ատլանդեան ովկիանոսը կը վազեն :

Ամենէն երկայն գետը Միսուրի ու Միսիսիբիին է, որ 4,349 մղոն երկայնութիւն ունի . եւ անոր իրեք մեծ ճիւղերը՝ այսինքն Օհայօ, Արքանսաս ու Ռէտ Ռիվէր 1,000էն մինչեւ 2,500 մղոն երկայն են :

Ամերիկայի լիճերն ալ շատ են, ու խիստ մեծ եւ անուանի՛ Գլխաւորները ասոնք են .

Հինգ հատը աշխարհիս ամենէն մեծն են, այսինքն

Սիւփերիօր 32,000 քառակուսի մղոն .

Միջիկան 22,000 " "

Հիւրըն 20,400 " "

Իյրի 9,600 " "


Օնթէյրիօ 6,300 " "

Ասոնք մէկ տեղ կաած են, ու Սուրբ Լաւրենտիոսի գետովն ալ Ատլանդեան ովկիանոսին հետ կաած են :

Ասոնցմէ զատ հետեւեալ մեծ լիճերն ալ կան . Վիննիբէկ, Աթապսքա, Սլէյվ ու Կրէյթ Պէյր՝ հիւսիսային կողմերը . ու Նիքարակա, Զափալա՝ հարաւային կողմերը . եւ Կրէյթ—Սալթ—Լէյք՝ արեւմտեան կողմը . եւ ասոնցմէ պզտիկ ուրիշ հարիւրաւոր երեւելի լիճեր :

Աշխարհի մէջ ամենէն մեծ ու վարմանալի ջրվէժները Նիսկարա գետինն ու Իյրի եւ Օնթէյրիօ լիճերուն մէջինն են :

Նիսկարա գետը մեծ գետերէն մէկն է ու Վասիորի լայնութեանը չափ լայն է, ու բոլոր ան լայնութեամբը ջուրերը վերէն 165 ոտնաչափ ուղղակի վար կը թափին որտուով ձայնով մը :



ՆԻԱԿԱՐԱՅԻ ՋՐՎԷՓԸ

Ամերիկան հիւսիսային բեւեռէն ինչուան հարաւայինը տարածուած ըլլալուն՝ աշխարհիս մէկալ մասերուն ամէն կլիմաներն ունի: Միայն թէ Ամերիկայի մէջ աւելի քիչ է մի եւ նոյն լայնութեան աստիճանի տակ եղած տաքութիւնը՝ քան թէ Ափրիկէի ու Ասիոյ մէջ:

Հողը տեղ տեղ աւազուտ է, բայց ընդհանրապէս շատ բարեբեր, ու Եւրոպայէն հոն տարուած բոյսերուն ամէնն ալ աղէկ աւաջ եկած են:

Բերքերուն մէջ Ամերիկայի հանքը շատ առատ է. ոսկիի մեծ հանքերը՝ Քալիֆորնիայի, Նոր Մեքսիկոյի, Մեքսիկոյի, Քոլումպիոյ, Պրազիլի ու Փէրուի մէջ են. արծաթը՝ Քիլիի ու Փէրուի մէջ. յալինթը՝ Քալիֆորնիայի, Քոլումպիոյ մէջ, ադամանդը՝ Պրազիլի մէջ: Առատ են նաեւ ուրիշ մետաղներն ու հանքերը, ինչպէս՝ երկաթի, կապարի, պղինձի ու հանքային ածուխի:

Բոյսերուն մէջ՝ բուն Ամերիկայի բերքն է գեանախնձոր, եգիպտացորենն ու ծխախոտ. հիւսիսային կողմերը հասարակ ցորենները շատ առատ են. այրեցած դօտիին տակն ալ տաք երկրի ամէն բերքերը կը գտնուին:

Ամերիկան դասուած ատենը մեր կողմերուն ընտանի կենդանիները հոն չէին տեսնուեր. բայց հիմա խիտա շատցած են: Այլրի

կենդանիներէն հիւսիսային կողմը կը դանուի եղջերու, գայլ, արջ, ջրշուն . հարաւային կողմերն ալ վայրի խող, կապիկ, լամա եւայլն :

Ամերիկայի բնակիչն է 56,000,000, որոնց 40,000,000ը Հիւսիսային Ամերիկայի մէջ են . ու մնացած 16,000,000ը Հարաւային Ամերիկայի մէջ : Ըստնց մէկ մասը բուն Ամերիկացի են, եւ միւսները Եւրոպացի գաղթականներու սերունդ . ու Ափրիկեցի գերիներ են :

Կրօնքը՝ հարաւային կողմը գրեթէ ամէն տեղ Հռոմէադաւան է, Միսցեալ Նահանգներուն ու Անգղիացոց երկիրներուն մէջ Աւետարանական . իսկ տեղացի վայրենիները կռապաշա են . թէպէտեւ շատերը Աւետարանական քարոզիչներուն աշխատանքովը Քրիստոնէայ եղած են :

Կառավարութիւնը շատ տեղ հասարակապետութիւն է :

## Ս. ՌՈՒՍԻ ԱՄԵՐԻԿԱ

Ընդհանուր գիտելիք :

ՌՈՒՍԻ ԱՄԵՐԻԿԱՆ Ռուսաց կայսրը վաճառականներու ընկերութեան մը յանձնած է, բայց բնակչաց մեծ մասը դեռ ինքնազուխ են . ասոնց մէկ ցեղին պոկուկքը երկուք ճեղքուած՝ անառնաբարոյ մարդիկ են :

Ռուսի Ամերիկային երկաշնութիւնը 1,100 մղոն է, ու լայնութիւնը 600 մղոնի չափ, ու 334,000 քառակուսի մղոն ունի :

Գլխաւոր վաճառքն է տեսակ տեսակ մորթ ու պալնիա ձուկը : Բնակիչը գրեթէ 50,000 կռապաշա :

Գլխաւոր քաղաքն է Նոր Արքանկէլ (1000) Սիթքա կըղգիին մէջ :

## Բ. ԿՐՈՒՆԼԱՆՏԱ

ԿՐՈՒՆԼԱՆՏԱՆ Ամերիկայի հիւսիսային ծայրն է, բոլորովին սառնապատ, ու միայն ծովեզերքը ծանօթ :

Օդը ցուրտ . Տաքուան մէջ աստն կ'ըլլայ որ իրեք ամիս միակերպ դիշեր՝ իրեք ամիս ալ ցորեկ կ'ունենան :

Բերքն է ամիանդ , հանքային ածուխ , կրանիթ եւ ուրիշ քարեր :

Բնակիչները Եսքիմացիք կ'ըսուին՝ որ հասակով ողջտիկ մարդիկ են , ու որսորդութեամբ կ'ապրին . ձմեռը զետնափոր տեղուանք կը բնակին , իսկ ամառը ծովու շան կաշիէ շինած վրանի տակ :



ԿՐՈՒՆԷԼԱՆ ՏՆՅԻ

Աս երկիրը Տանիմարգացիք դասն 983ին , եւ մինչեւ հիմա անոնց ձեռքն է . 9,400 բնակիչ կան , որոնց միայն 250ը Եւրոպացի են :

Մորէյվեան ըսուած քարոզիչներուն քարոզութիւնովը շատը Բրիտանեայ եղան :



## Գ. ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Ընդհանուր գիտելէ :

ԸՌԱԶ աս երկրին մեծ մասը Գաղղիացւոց ձեռքն էր . 1760ին Անգղիացիք առին :

Ասոր սահմանը հիւսիսէն՝ Սառուցեալ ովկիանոսն է , արեւելքէն՝ Ատլանդեան ովկիանոս , հարաւէն՝ Միացեալ Նահանգները , ու արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս :

Մեծութիւնը 3,070,000 քառակուսի մղոն է , բնակիչը 2,690,000 , կրօնքը Աւետարանական ու Հռոմէագաւան :

Բրիտանական Ամերիկայի հողը թաց, օգը ջուրտ, միայն հա-  
րաւային կողմը բարեբեր է, մեծ մասը դաշտային. թէպէտ արեւ-  
մտեան կողմը Ռօքի Մաընթէյնս ըսուած գօտի մը կայ:

Մնուանի գետերը ասոնք են.

Սուրը Լաւրենտիօսի գետը՝ որ 750 մղոն երկայն է ու Ատլան-  
դեան ովկիանոսը կը թափի:

Սաքաչավան՝ (900 մղոն) Վիննիփէէկ լիճը կը թափի:

Մաքենզի՝ որ ամենէն մեծ գետերուն մէկն է ու Սառուցեալ  
ծովը կը թափի:

Գլխաւոր լիճերն են՝ Վիննիփէէկ լիճը 500 մղոն երկայն, ու  
Աթապասքա լիճը:

Բրիտանական Ամերիկան կը պարունակէ՝


ԱՐԵՒԵԼԵԱՆ ՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՔԱՆԱՏԱ, ՆՒՒ ԳՐԸՆՍՈՒՒՔ,  
ՆՈՐ ՍԿՈՎՏԻԱ, ՔԵՏՓ ՊՐԻԹԸՆ, ԲՐԻՆՍ ԷՏՈՒԱՐՏԻ ԿՂՋԻՆ, ՆՒՒ  
ՖԱԸՆՏԱԸՆՏ, ՀՐԻՍՏԱՅԻՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՐԿԻՐԸ, ու ՀՈՒՏՈՒՆ  
ԾՈՅԻՆ ԵՐԿԻՐԸ:

## ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

Արեւելեան քանադայի մէջ.

ՄՈՆՐԵԱԼ (58,000) կառավարիչին նստելու տեղն է. ու վաճա-  
ւաչա՛ ու գեղեցիկ քաղաք է:

ՔՈՒՒՊԷՔ (43,000 ամուր տեղ է Նիակարա գետին քովը:



ՔՈՒՒՊԷՔ

ԹՐԻ ՌԻՎԵՐՍ (49,000) ՍՈՒՐԲ ՀԱՅԱՍԻՆԹ (3,300) ՇԵՐ-  
ՊՐՈՒՔ (3,000) :

Արեւմտեան Բանառայի մէջ .

ԹՕՐՈՆԹՕ (31,000) գեղեցիկ տեղ ու վաճառաշահ , Օնթա-  
րիօ լիճին վրայ : Համալսարան ունի եւ շատ դպրոցներ :

ՀԱՄԻԼԹԸՆ (14,500) նոյն լիճին վրայ , շատ աղուսը շէնքեր  
ունի :

ՔԻՆԿՍԹԸՆ (11,585) Սուրբ Լաւրենտիոսի գետին քովը : Տե-  
րութեան նաւարանը հոս է , ու շատ ամուր պարիսպներ ունի :

ՊԵՅԹԼԻՆ (7,800) ԼՈՆՏՈՆ (7,000) ՊԵԼՎԻԼ (4,000) եւայլն  
եւայլն :

Նիւ Պրընտուիքի մէջ .

ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԵՒՍ (ՍԷՅՆԴ ՃՕՆ) (22,745) նոյն անունով  
գետի մը վրայ , առուտուրի քաղաք մըն է :

ՍՈՒՐԲ ԱՆԴՐԵԱՍ (ՍԷՅՆԴ ԱՆՏՐՈՒՁ) (8,000) Ովկիանոսին  
վրայ , վաճառաշահ տեղ է :

ՓԻԵՏԵՐԻՔԹԸՆ (4,458) Սէյնդ ճօն գետին վրայ :

Նոր Սկովտիայի մէջ .


ՀԱԼԻՓԱՔՍ (26,000) :

Բէյփ Պրիթլընի մէջ .

ՍԻՏԵԻ . նաւահանգիստ է , ու մօտերը ածուխի հանքեր ունի :

Նիւ Փալնալանտի մէջ .

ՍԷՅՆԴ ՃՕՆ (21,000) աղուսը նաւահանգիստ , ու ձուկի առ-  
ուտուրը շատ է :



ՆԻԿՓԱՐՆՏԻԱՆՏ



## Գ. ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Ընդհանուր գիտելիք :

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ատենով Անգղիացւոց ձեռքն էին . ետքը պատերազմ՝ ըրին անոնց հետ ու դատուեցան 13 տէրութիւն եղպն իրարու դաշնակից : Ասոնք մէյմէկ գլխաւոր կառավարիչ ունին՝ որ ամէն տարի, կամ երկու տարին անգամ մը կը փոխուի : Աս Միացեալ նահանգները ընդհանուր տէրութիւն մըն ալ ունին, որուն գլուխը ժողովուրդներուն քուէովը կ'ընտրուի՝ ու 'ՆԱԽԱԳԱՀ կ'ըսուի, որն սր ամէն չորս տարին մէյմը կը փոխուի : Նահանգներուն թիւը տարուէ տարի կը շատնայ, ու հիմա 33 հատ են : Կառավարութիւնը հասարակապետութիւն է :

Աս ընդարձակ երկիրը Ատլանդեան ովկիանոսէն ինչուան խաղաղական օվկիանոսը, Մեքսիկայի ծոցէն ալ ինչուան Սուրբ Լաւրենտիոս գետը կ'երթայ :

Երկայնութիւնը մէկ Ովկիանոսէն մինչեւ միւսը 2,700 մղոն է, ու լայնութիւնը 1,600, ու տարածութիւնը 2,936,166 քառակուսի մղոն :

Օդը հիւսիսային կողմը ցուրտ է, ու հարաւային կողմը տաք : Գլխաւոր բերքն է բամբակ, շաքար, ծխախոտ, քարայր, լեղակ, ամէն տեսակ ցորեն ու դրեթէ ամէն տեսակ պտուղ. նաեւ ամէն տեսակ մետաղներ . մանտանդ երկաթ, ոսկի, արծաթ, սնդիկ, պղինձ, կապար եւ այլն : Աշխարհիս մէջ ամենէն հարուստ ոսկիի հանքերը աս երկրին Քալիֆորնիա նահանգին մէջն են :

Աս երկրիս մէջ քաղաքականութիւնը, արհեստներն ու գիտութիւնները քիչ ատենի մէջ շատ առաջ դացած են :

Բնակիչները 32,000,000էն աւելի են, որոնց 3,000,000էն աւելին սեւ գերի են, մնացածը սերունդով Եւրոպացի են, մեծ մասը Անգղիացի :

Կրօնքը բոլորովին ազատ է, ու բնակիչները ընդհանրապէս Աւետարանական են, բայց կան նաեւ Հռոմէադաւան ու Հրեայ :

Տակաւին 400,000 ընիկ Ամերիկացի կան անտառներուն մէջ .

Թէպէս ասոնցմէ մէկ քանի ցեղեր ֆրիստոնէութիւնը ընդունած են :



ՀԻՍՏՈՐԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՅՐԵՆՆԵՐ

Գլխաւոր լեռներուն , գետերուն ու լեճերուն վրայ տես երես 150 եւայլն :

Հետեւեալ ցանկը կը ցուցնէ բոլոր նահանգներուն անուաներն ու մայրաքաղաքները եւ անոնց ընակիչները :

ՆԱՀԱՆՔ	ԳԼԽԱՎՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ	ՌԵԱԿԻՉ
ՄԷՏՆ	Փորթլանտ	28,000
ՆԻՒՀԱՄԲՇԻՐ	Մանչեսթրը	20,000
ՎԷՐՄՈՆԻ	Պըրլինկթըն	8,000
ՄԱՍՍԸԶՈՒՍԷԹՍ	Պոսդոն	185,000
ՌՈՏԱՅԼԷՆՏ	Փրովիտէնս	56,000
ՔՕՆՆԷՔԹԻՔԸԹ	Նիւ Հէյվըն	27,500
ՆՈՐ ԵՈՐԻ	Նոր Եորք	900,000
ՆՈՐ ՃԵՐՍԻ	Նիւարք	52,000
ԲԷՆՍԻԼՎԱՆԻԱ	Ֆիլատելֆիա	645,000
ՏԵԼԱՎԱՐԱ	Ուիլմինկթըն	19,000
ՄԷՐԻԼԱՆՏ	Պալթիմոր	250,000

ՆԱՀԱՆՔ	ՔԼԵԱՆՈՐ ԳՄԱՊՔՆԵՐԸ	ՔՆԱԿԻՉ
* ԳՈՒՂՄՊԻԱՅԻ ԳՆԻԱՌԸ ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ	Ունիվերսիթի	50,000
ՎԻՐՃԻՆԻԱ	Ռիչմոնդ	36,000
ՀԻՄՍԻՍ՝ ԳԱՐՈՂԻՆԱ	Ուիլմինգթոն	14,000
ՀԱՐԱՆ՝ ԳԱՐՈՂԻՆԱ	Չարլսթոն	63,000
ՃԻՕՐՃԻԱ	Սալաննա	21,500
ՖԼՕՐԻՏԱ	Քի Ուեսթ	3,500
ԱԼԱԳԱՄԱ	Մոնթգոմերի	28,500
ՄԻՍՍԻՍԻՒՐԻ	Նոքս	5,500
ԼՈՒԻՉԻԱՆԱ	Նոր Օրլեանս	175,000
ԹԻՔՍԱՍ	Կարլեյսթոն	10,000
ԱՐԳԱՆՍՍԱ	Լիթլ Րոք	4,000
ԹԷՆՆԵՍԻ	Նաշվիլ	20,000
ՔԷՆԹՈՆԻ	Լուիսվիլ	67,000
ՕՀԵՏՕ	Սինսինատի	250,000
ՄԻՉԻԳԱՆ	Տրիթրոյթ	65,000
ԻՆՏԻԱՆԱ	Նիւ Ալպանի	12,000
ԻԼԼԻՆՈՑԻ	Չիքահո	100,000
ՄԻՍՍՈՒՐԻ	Սեյնդ Լուիս	190,000
ԱՅՈՎԱ	Պրիլինկթոն	12,000
ՈՒՍՔՕՆՍԻՆ	Միլուաքի	35,000
ՔԱԼԻՓՈՐՆԻԱ	Սան Ֆրանչիսկո	100,000
ՕՐԻԿՕՆ	Փորթլանտ	10,000
ՄԻՆՆԵՍՈՒՐԱ	Սեյնդ Փոլ	10,000

Ասոնցմէ 'ի զատ Հինդ Հատ մեծ զաւառներ կան որ Թերեթորի կ'ըսուին . որոնք են՝ ԳԱՆՍԱՍ, ՆԵՊՐԱՍԿԱ, ՆՈՐ ՄԷՔՍԻՎՈՑ, ԵՆՈՒՐԱ, Եւ ՈՒՅՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԹԷՐԵԹՈՐԻ:

\*Պարիսի գաւառ զնն է որ Մեյնիւս Նահանգներուն ընդհանուր որբուսթեանը ին ժերմերի, աւ Նահանգ պեպուսթի: Նահապահին նոքաք բաղադր Ուսելիներն է:

Ասոնք՝ երբոր բնակիչներնին շատնան, նահանգ ալ պիտի ըլլան : Գիացեալ նահանգներուն մէջ ամէն տեսակ մեքենագործութիւն եւ արհեստ կան, եւ առուտուրը շատ ընդարձակ ու յաջող է : Վաճառական նաւերը շատ մեծ ու արագընթաց են ու ամէն ծովը կ'երթան : Անգղիայէն աւելի վաճառական նաւեր ունի :

Տէրութեան կանոնաւոր զօրքը պատերազմ՝ չեղած ատենը քիչ՝ միայն 18,165 է, բայց ազգային պահապան զօրքերուն թիւը 2,727,486 մարդ է, որ պատրաստ են թշնամիի մը յարձակում՝ ըրած ատենը անոր դէմը ելլելու :


Նաւատորմիցը միայն 94 կտոր նաւ մեծ ու պզտիկ :

Ամէն տեղ համալսարաններ, ուսումնարաններ ու հասարակ դպրոցներ կան. ու հազիւ թէ բուն Ամերիկացի մը կը դաճուի որ կարգալ գրել չգիտնայ :

Աս երկրին բնակիչներուն բարոյականը ու բարեպաշտութիւնը՝ ուրիշներուն նայելով շատ աղէկ է :

## ԳԼԽԱԻՌ ՔԱՂԱՔՆԵՐԸ


ՆՈՐ ԵՈՐՔ (900,000) Հուտան գետին վրայ է, ու մեծ եւ աղուոր նաւահանգիստ ունի : Եւրոպայի մէջ միայն Լոնտոն ու Փա-



ՆՈՐ ԵՈՐՔ

րիզ քաղաքները կան որ ասելէ մեծ են, ու աշխարհիս ամենէն շատ առուտուր ունեցող քաղաքներէն մէկն է : Խիստ երեւելի շէնքերն ու փողոցներն ունի, ու նաեւ շատ հարուստ մարդիկն ունի :

ՊՈՍԴՈՆ (185,000) նաւահանդիստ ունեցող քաղաք է ու շատ առուտուրի տեղ է : Գեղեցիկ տեղք մը ունի, ու անուանի է գիտութեանց եւ արհեստից կողմանէ :




ՊՈՍԴՈՆ

ՓԻԼԱՏԵԼՖՈՒՍ (645,000) փողոցները լայն են ու կանոնաւոր, շէնքերը շատ գեղեցիկ, եւ մարդոց բարոյականը շատ անուանի : Աշխարհիս ամենէն մաքուր քաղաքը կրնայ սեպուիլ : Շատ առուտուր ունի :

ՔԱԼԹԻՄՈՐ (250,000) մեծ առուտուրի տեղ է :

ՈՒՅՇԻՆԿՔԸՆ (50,000) բոլոր նահանգներուն մայրաքաղաքն է :



ՈՒՅՇԻՆԿՔԸՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՆ ՊԱԼԱՏԸ

բայց առուտուր չունի : Հոս կը նստի Նախագահը որ Փրէսիդէնթը կըսուի, եւ հոս տարին անգամ մը ազգային մեծ ժողովը (Կոնգրէս) կը ժողովուի :

ՆՈՐ ՕՐԼԷԱՆՍ (175,000) Միսիսիբի գետին բերնին մօտ է ու մեծ առուտուր ունի :

Շատ ալ ուրիշ անուանի քաղաքներ կան, բայց չենք կրնար բոլորը յիշել :

## Ե. ՄԵՔՍԻԿՈՅ

Բնութեան մասին փոփոխութիւնք

ՄԵՔՍԻԿՈՅԻ երկիրը 1517ին Եւրոպացիներուն ծանօթ եւ զաւ, ու 1521ին Սպանիացոց ձեռքն անցաւ. բայց 1820ին բոլոր բնակիչները գլուխ քաշեցին ու զատ տէրութիւն մը եղան : Հիմա հասարակապետութիւն է. բայց տակաւին հարտատ բան մը չկայ հոն, այլ ամէն տարի խռովութիւն ու փոփոխութիւն կըլլայ :

Տարածութիւնը 834,140 քառակուսի մղոն է :

Մեքսիկոյի երկիրը ընդհանրապէս լեռնոտ է ու շատ հրաբուխներ ունի :



ՄԵՔՍԻԿՈՅԻ ԱՔՆՈՒՈՎԱՆ

Գլխաւոր բերքն է արծաթ, ոսկի, բամպակ, շաքար, ծխախոտ, ցորեն, լեզակ, որդնուկ՝ որ ծիրանի ներկ կ'ըլլայ:

Օդը՝ ներսերը բարեխառն, իսկ ծովեզերքը տաք, թաց ու վառասակար:

Բնակիչը 8,000,000 Հռոմէադաւան:

Գլխաւոր լեռներն են՝

Փոփոքաթարէթլ (Հրաբուղխ) 17,700 ստնաչափ բարձր. Փիքոյ տի Օրիդամ (Հրաբուղխ) 17,390 ստնաչափ. Էքսթաչիհուաթլ (Հրաբուղխ) 15,700 ստնաչափ. Ջերոյ - տէ Այուսքոյ 15,800 ստնաչափ. Քոֆրի - տի Փէրսթէ (Հրաբուղխ) 13,500 ստնաչափ եւ այլն:

Գլխաւոր գետերը ասոնք են.

Ռիօ - Կրանտ - տէլ - Նորթ, Ռիօ - տի - Թամիկոյ, Սան Ճուան, Կիլա եւ այլն:

Հաս լիճեր կան, բայց պղտիկ են. ամենէն մեծը Ջափալա լիճն է:

### Գ Լ Խ Ա Ւ Ռ Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ՄԵՔՍԻԿՈՑ (170,000) Ամերիկայի ամենէն աղուոր քաղաքներէն մէկն է. մայր եկեղեցին մեծագործ ու հարուստ. փողերանոցը շատ երեւելի: Մէքսիկոյի մօտ եղած լիճերուն վրայ եղէգներով շինած շարժական պարտէզներ կան:

ՓՈՒԵՊԼԱ ՏԷ ԼՈՍ ԱՆԿԷԼԷՍ (75,000) վաճառաշահ քաղաք է: ԿՈՒԱՆԱ ԽՈՒԱԹՈՑ (49,000) Մէքսիկոյի հարուստ արծաթա-հանքը հոս է:

ՔԻԲԷԹԱՐՈՑ (29,700) շատ գործարաններ ունի չուխայի՝ կաշիի ու ծխախոտի:

ՉՈԼՈՒԼԱ (10,000) ատենով Մէքսիկացւոց կրօնքին գլխաւոր քաղաքն էր. հոս մեծ քառակուսի բուրդ մը կայ աւերակ:

ՎԷԻՄ ՔՐՈՒՋ (8,500) Եւրոպացւոց վաճառականութեան բանուկ տեղն է, եւ շատ ամուր:

ԿՈՒԱՏԵԼԱՃԱՐԱ (63,000) աղուոր քաղաք է ու շատ երեւելի շէնքեր ունի,

ՄԵՌԻՏԱ (40,000) Եուրոպացի թերակողիին գլխաւոր քաղաքը, մեծ ու գեղեցիկ:

ՍԱՆ ԼՈՒԻՍ (40,000) կանոնաւոր ձեւ ունի եւ բաւական առուտուր:

## Զ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ

Ընդհանուր գիտելիք :

ԱՍ երկիրը Քրիստափոր Գոլումպոսին ձեռքովը գտնուեցաւ 1502ին . 1525ին Սպանիացոց ձեռքը անցաւ ու 1823ին անոնցմէ աղատուեցաւ ու ինքնագլուխ հասարակապետութիւն մը եղաւ հինգ նահանգներէ բաղկացեալ, այսինքն՝ Կոլաթէմալա, Նիքարակա, Հոնտուրաս, Սարլատոր ու Գոսթա Ռիքա :

Աս հասարակապետութիւնը Յեքտիկոյէն ինչուան Բանամայի պարանոցը կ'երթայ :

Երկիրը լեռնոտ է, հողը բարեբեր, օգը բարեխառն՝ բայց փնտռակար :

Շատ հրաբուլիներ ունենալուն՝ համար՝ գետնաշարժը անպակաս է : Բերքն է եգիպտացորեն, բամբակ, շաքար, լեղակ ու ազնիւ փայտեր :

Բնակիչը 2,000,000 Հռոմէադաւան :

Տարածութիւնը 200,000 քառակուսի մղոն է :

Գլխաւոր լեռները ասոնք են .

Թայումալքոյ, Աթիթան, Փուրա, Ակուա եւայն : Ասոնք ամէնը հրաբուլի են, ու վերջինը (Ակուա) 12,600 սանաչափ բարձր է. ու չէ թէ միւսներուն պէս կրակ, այլ միայն ջուր եւ քար դուրս կը նետէ :



ԳԵՏՈ ՎՏԱՍԷ ԱՆԳՐԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԿԵՐՊ



Գլխաւոր դետերն են՝ Ուսումնասիրութա ու Սան Ճուան, որ երկուքն ալ Ատլանդեան ովկիանոսը կը թափին :

Գլխաւոր լիճերը ասոնք են .

Նիքարագայի, Մանակուայի լիճերը, ու Կոլֆոյ Տորէ լիճը :

## Գ Լ Խ Ա Ի Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ՆՈՐ ԿՈՒԱԹԻՄԱԼԱ (45,000) ասկէ 24 մղոն հեռու ուրիշ քաղաք մը կար նոյն անուամբ, որ 1777ին գեանաշարժով մը գեանին տակն անցաւ :

ՍԱՆ ՍԱԼՎԱՏՈՐ (18,000) հրաբուրդի մը մտտ շինուած է, ու 1854ին քաղաքին մեծ մասը գեանաշարժով կործանեցաւ :

ՔՈՄԱԵԱԿՈՒԱՅ (12,000) մայր եկեղեցի, համալսարան ու մեծ հիւանդանոց ունի :

ԼԷՈՍ (30,000) շատ երեւելի շէնքեր ու ձեռագործներ ունի :

ՍԱՆ ՃՈՁԷ (18,000) նոր շինուած քաղաք ու վաճառաշահ տեղ մըն է :

Աս երկիրը շատ անուանի եղաւ աս մէկ քանի տարիներուն մէջը, ինչու որ Միացեալ Նահանգներէն ու Եւրոպայէն քալիֆորնիա երթալ գալու ճամբան ասկէց կ'անցնի :

---

## Ի. ՆՈՐ ԿՐԱՆԱՏԱ

Ընդհանուր ցիտելիք :

ԸՍ երկրիս բնակիչները 1811ին Սպանիացիներէն զլուս քաշեցին, եւ հասարակապետութիւն եղաւ :

Նոր Կրանաւայի սահմանը հիւսիսէն՝ Բանամայի պարանոցը ու Մեքսիկայի ծոցն է, արեւելքէն՝ վենեզուէլա ու Պրագիլ, հարաւէն՝ Էգուատոր, ու արեւմուտքէն՝ Խաղալական ովկիանոս :

Երկրին մէկ մասը լեռնոտ ու մէկ մասն ալ դաշտային է, ու շատ հրաբուրդներ ունի, հասարակածը հարաւային կողմէն կ'անցնի :

Օգը բարեխառն, տեղ տեղ ալ ցուրտ. ծովեզերքի օդը փնասակար:

Բերքն է ոսկի, արծաթ, փլաթին, պղինձ, ազնիւ քարեր, քարայր, ծխախոտ ու քինա:

Տարածութիւնը 480,000 քառակուսի մղոն:

Բնակիչը 2,400,000:

Կրօնքը Հռոմէադաւան:


Անտեղ ըսուած դօտին աս երկրին մէջէն կ'անցնի ու քորտիլլերա կ'անուանի, եւ դէպ'ի Հարաւային Ամերիկայի ծայրը կ'երթայ: Ամենէն բարձր դագաթը 18,270 ոտնաչափ բարձր է, ու թողմն կ'ըսուի: Սիէրրա Նեվադա 19,000 ոտնաչափ բարձր է:

Գլխաւոր գետերն են՝ Մակտալինա ու Գաուքա, որ Ատլանտեան ովկիանոսը կը թափին:

Գլխաւոր լիճերը են՝ Բալիթարա ու Լազ Բարազ:

## Գ Լ Թ Ա Ի Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ՊՈԿՈԹԱ կամ ՍԱՆԹԱ-ՖԷ ՏԷ ՊՈԿՈԹԱ (45,000) ասոր դերը 8,000 ոտնաչափէն բարձր է, օդը բարեխառն. մտերը մեծ ջրվեժ մը կայ Թէքուէնտամա անունով, որ 900 ոտնաչափ բարձրութենէն վար կ'իջնայ:



Ք Մ Ղ Ն Ք

ԿԱՐԹԱԳԻՆԷ (33,700) ապահով ու բանուկ նաւահանդիստ ունի ԲԱՆԱՄԱ (6,000) Հարաւային ու Հիւսիսային Ամերիկայի մէջ:

տեղը շատ աղուոր գիրք ունի : Բանամայի պարանոցէն անցնող ու Ատլանդեան ու Խաղաղական ովկիանոսները մէկ տեղ միացունող երկաթուղին աս տեղէն կը սկսի , ու մինչեւ Ասբինուալ քաղաքը կ'երթայ :

ՓՈՓԱՅԱՆ (20,000) քառաքա գետին վրայ վաճառաշահ քաղաք է : Ասիկայ Եւրոպացիներու ձեռքովը աս կողմերը շինուած առաջին քաղաքն է :

## Բ . Վ Ե Ն Ե Ջ Ո Ւ Է Լ Ա

Ը ն դ ւ ան ու ր գ ի ր Ե Լ Է Է :

ԼՍԻԿԱՅ քաղաքային մէկ կտորն էր , քայց 1831ին զատուեցան , ու աս երկիրը ինքնազուլուխ հասարակապետութիւն մը եղաւ :

Ասոր սահմանը հիւսիսէն՝ Ովկիանոսն է , արեւելքէն՝ Կույանա՝ հարաւէն՝ Պրայիլ , ու արեւմուտքէն՝ Նոր Կրանառա :

Տարածութիւնը 400,000 քառակուսի մղոն է :

Բնակիչը 1,500,000 Հռոմէադաւան :

Օգը տաք է ու չորս եղանակները զրեթէ մթորինակ են :

Հողը պտղաբեր է ու շատ մեծ ծառեր կան :

Բերքն է քաքառոյ , խահուէ , բամպակ , շաքար , լեղակ եւ այլն :

Գլխաւոր լեռները են՝

Սիէրրա-տի-Օչանա , Սիէրրա-տի-Փէրիյա , Մոնթէս-տի-Օքա Նէվադադ-տէ-Մերիտոյ :

Գլխաւոր գետերը ասոնք են .

Օրինոքոյ գետը՝ որ շատ մեծ է , 1,600 մղոն երկայն , ու Ատլանդեան ովկիանոսը կը թափի : Քուեուսնի գետը , Կույանա գետը եւ այլն :

Լիճերը խիստ շատ են , քայց գլխաւորները երկու հատ են , Մարաքայպոյ եւ Թաքարիկուա :

## ԳԼԽԱՅԻՆ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ԳԱՐԱԳԱՍ (63,000) աղուոր քաղաք է ու բաւական առուատուր ունի : Դաստիարակութիւնը յառաջադէմ է :

ԱՐԱԿՈՒԱՅ (18,000) ՄԱՐԱԳԱՏՊՈՅ (14,000) նաւահանդիսա ունի եւ բաւական առուատուր : ՎԱԼԵՆՍԻԱ (17,000) վաճառաչա՛ քաղաք :

## Թ . Է Գ Ո Ւ Ն Տ Ո Ր

Ընդհանուր գիրքեր :

Աս երկիրը առաջ ԲՈՒԻԹՈՅ կ'ըսուէր, ու՛նոր Կրանատայի ու Վենեզուէլայի հետ մէկ տեղ դաշնակից եղած՝ իրէքը ԳՈԼՈՄՊԻԱՅԻ հասարակապետութիւնը կը կաղմէին : Բայց շատ խռովութիւն ըլլալէն ետքը 1831ին զատուեցան, ու ան ժամանակէն առ կտորը ինքնադրուխ տէրութիւն մը եղաւ, ու Էդուատոր անուանեցաւ, որ հասարակած ըսել է :

Ասոր սահմանը հիւսիսէն ու արեւելքէն՝ Նոր Կրանատա, հարաւէն՝ Փէրու, ու արեւմուտքէն՝ Խաղաղական ովկիանոս :

Երկայնութիւնը 800 մղոնի չափ է, ու տարածութիւնը 240,000 քառակուսի մղոն է :

Բնակիչը 665,000 Հռոմէադաւան :

Բերքը քոքոյ, պղպեղ, բրինձ, եգիպտացորեն, ցորեն եւ քինա (ինս ֆինս) ըտուած դեղը :

Օդը բարեխառն է, բայց ցած տեղերը խիստ տաք են :

Գլխաւոր լեռները Քորտիլլէրա կ'ըսուին, որ շատ բարձր գագաթներ ունին, ու շատը հրաբուլի են : Ամենէն բարձրը Չիմպորազօ կ'ըսուի, ու 22,424 ոտնաչափ բարձրութիւն ունի :

Գլխաւոր գետերն են՝ Նափօ, Իքա, Բաքէթա՝ որ 600 մղոնէն մինչեւ 1,000 մղոն երկայնութիւն ունի : Ամազոն հսկայական գետը առ երկրին մէջէն կ'աւնէ իր սկզբնաւորութիւնը, ու հոս Մառանոն կ'ըսուի :

Լիճ չկայ :



ԴԵՏԻ ՌԵՐԱՆ

Գ Լ Խ Ա Ի ՈՐ Գ Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը .

ՔՈՒԹՈՑ (70,000) աշխարհիս մէջ ամենէն բարձր դիրք ունեցող քաղաքն է, ծովուն երեսէն 9,543 սանաչափ բարձր, գեղեցիկ ձորի մը մէջ շինած . ու օդը թէպէտեւ հասարակածին տակը կ'էյնայ, բայց շատ բարեխառն ու ալեկ է :

ՌՒՕՊԱՄՊԱ (20,000) Չիմպորազօ հրաբուլխին տակը :

ԿՈՒՅԱԲԻԼ (28,000) համանուն գետի մը վրայ :

ԿԱԼԵՓԱԿՈՑ ԿԼՁԻՆԵՐԸ, որ 13 պլաիկ կղզիներ են, խաղաղական սվիխանոսին մէջ՝ աս տերութեանը տակն են :



ՃՈԳԱԹՈՑԻ ՎՐԱՅ ԴՆԱԿՈՂՆԵՐՈՒ ՏՈՒՆԵՐ

## Ժ. ԿՈՒՅԱՆԱ

Ընդհանուր գեղեւէր :

**ԿՈՒՅԱՆԱՆ Օրինոքոյ գետին ու Ամաղոնաց գետին մէջտեղը կ'իյնայ :**

Օգբ բարեխառն է . տարին ութը ամիս միակերպ անձրեւ գալէն ետքը, չորս ամիս անանկ չոր ու տաք կ'ըլլայ՝ որ կենդանիներուն շատը անօթի ծարաւ կը ջարդուին :

Բերքն է խաչուէ, շաքար, խէժ, քոքոյ, բամպակ ու պղզողեղ :

Երկրին մէկ կտորը Հոլանտացւոց ձեռքն է, մէկը Անգղիացւոց մէկն ալ Գաղղիացւոց :

Ամենէն արեւմտեանը՝ Անգղիայի Գույանա կ'ըսուի, ամենէն արեւելեանը՝ Գաղղիայի, ու մէջտեղինը Հոլանտայի :

Բոլոր երկրին տարածութիւնը 700,000 քառակուսի մղոն է . ու ընակիչներուն թիւը 210,695 է, որոնց 127,695ը Անգղիայի կը տորին կ'իյնայ :

Գլխաւոր լեռներուն գօտիները Սիէրրա Աքարայի, Սիէրրա Իմաթիքա ու Քօնդրուի գօտին են :

Գլխաւոր գետերը ասոնք են . Էսսէքիպոյ, Տէմբարա, Պէրպիս, Քորէնթին եւ Սուրինամ :

## Գ Լ Խ Ա Ի Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ՓԱՐԱՄԱՐԻՊՈՅ (20,000) Հոլանտացւոց գլխաւոր քաղաքն է :  
ՃԻՈՐՃԹԱԻՆ (25,500) Անգղիացւոց ձեռքը վաճառաշահ քաղաք է :

ՔԱՅԻՆՆԱ (3,000) Գաղղիացւոց ձեռքը՝ համանուն կղզիին մէջ առուտուրի քաղաք է :

Ժ Ա . Պ Ր Ա Զ Ի Լ

Ը ն դ հ ա ն ու ր գ ի ր ե լ է ր :

ՊՐԱԶԻԼԻ երկիրը ինչուան 1822ին Փորթուգեզներուն ձեռքն էր . անկէց ետքը Փորթուգալի թագաւորին տղան ինքնազլուխ կայսր եղաւ հոն . բայց 1835էն 'ի վեր միապետական կառավարու թիւնը շատ չափաւորուեցաւ :

Պրազիլը խիստ ընդարձակ երկիր մըն է ու գրեթէ բոլոր հաւաւային Ամերիկայի կէսն է . ու արեւմտեան կողմը կ'իյնայ :

Պրազիլի սահմանը հիւսիսէն՝ Վենեզուէլա , Կոլումա եւ Ովկիանոսն է , արեւելքէն՝ Ովկիանոսը , հարաւէն՝ Ովկիանոսը , ու արեւմուտքէն՝ Փարակուայ , Պոլիլիա , Փէրու , Էզուատոր ու Նոր Արանատա :

Այրեցած դօտիին տակն ըլլալուն համար խիստ աաք է , բայց ամիսներով ալ անձրեւ կու գայ :

Հողը շատ պտղաբեր :

Գլխաւոր բերքն է սակի , ադամանդ եւ ուրիշ ազնիւ քարեր ու փայտեր . մանաւանդ Պրազիլի փայտ ըսուածը՝ որ աղէկ կարմիր ներկ կ'ըլլայ . անկէց զատ բրինձ , բամպակ , ծխախոտ , շաքար : Կենդանիներէն ալ կապիկ , կոկորդիլոս , ջայլամ , օձ ու աղուոր թիթեանիկներ :



ՊՐԱԶԻԼԻ ՈՐՍՈՐԳ

Տարածութիւնը 3,000,000 քառակուսի մղոն է, ու բնակիչը 6,000,000. բոլորն ալ Հւտմէադաւան :

Երկրին մեծ մասը դաշտային է, ու բարձր լեռներ չկան. ամենէն բարձրերը են՝ Փիէատատէ (5,830 ոտն') ու Իթաքօլումփ (5,750 ոտն') :

Աշխարհիս մէջ ուրիշ երկիր մը չկայ որ ասոր չափ շատ ու մեծ գետեր ունենայ : Բոլոր աշխարհիս մէջի ամենէն մեծ գետը Հոս է որ Ամազոն կ'ըսուի : Աս հսկայական գետը Անտէղ լեռանը դօտիէն կ'ելլէ Փէրու ու Էգուատոր երկիրներուն մէջէն, ու անկէց դէպ'ի արեւմտեան կողմը կը վազէ ու Ատլանդեան օվկիանոսը կը թափի երկու մեծ բերաններով, որուն մէկը 96 մղոնի չափ լայն է : Գետին բոլոր երկայնութիւնը 4,000 մղոն է :

Միւս երեւելի գետերը ասոնք են .

Ռիօ Ֆրանսիսքայ, Ռիօ Նեկրոյ, Մատէյրա, Պրանքօ, Եուրուկուայ եւայլն եւայլն :

Միայն մէկ երեւելի լիճ մը կայ որ Լակոսայ—տօղ - Փլաթոզ կ'ըսուի :

## Գ Լ Խ Ա Ռ Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ՌԻՕ ԵԱՆԷՅԵՐՈ կամ ՌԻՌՅ ԽԱՆԷՅԵՐՈՅ կամ ՍՈՒՐԲ ՍԵՐԱՍԻԱՆՈՍ (266,000) աշխարհիս ամենէն ապահով ու մեծ նաւահանգիստներէն մէկն է :

ՊԱՀԻԱ կամ ՍԱՆ ՍԱԼՎԱՏՈՐ (118,000) ինչուան 1763ին Պըրագիլի մայրաքաղաքն էր. հիմա ալ բոլոր երկրին արքեպիսկոպոսը Հոս կը նստի :



ՊՐԱԶԱԼԻ ՄԷՑ ԱՆԳԱՄԱՆԳ ԺՈՂՎԵԼԸ



ՓԵՐՆԱՄՊՈՒՔ կամ ՌԵՑԻՖԷ (22,000 խիստ վաճառաշահ քա-  
ղաք է :

ՎԻԼԼԱՌՈՒՔԱ (10,000) արծաթահանքն առատ է :

ՍՈՒՐԲ ՊՕՂՈՍ (7,000) մեծ սսկեհանք ունի :

## Փ Ր • Փ Ե Ր Ո Ւ

Ընդհանուր գիտելիք :

ԿՐԱՆԻ որ Ամերիկան գտնուած չէր, Փէրուի թագաւորու-  
թիւնը շատ զօրաւոր ու հարուստ էր. 1821ին Փէրուի բնակիչները  
գլուխ քաշեցին Սպանիացիներէն, ու զատ հասարակապետութիւն  
կազմեցին :

Փէրուին սահմանը հիւսիսէն՝ Էգուատոր, արեւելքէն՝ Պրայել  
ու Պոլիվիա, հարաւէն՝ Պոլիվիա, ու արեւմուտքէն՝ Խաղաղական  
ովկիանոսն է :

Երկայնութիւնը 1,266 մղոն է, ու տարածութիւնը 600,000 քա-  
ռակուսի մղոն :

Երկիրը շատ տեղ աւազուտ, բայց մեծ մասը լեռնային է :

Ովկիանոսին ծովեզերքը ոչ անծրեւ կու գայ, ոչ որոտմունք  
կըլայ, բայց գեանաշարժերը խիստ շատ են :

Բերքն է սսկի, արծաթ, սնդիկ, զմրուխտ. ունի նաեւ գինի,  
օղի, շաքար, քինա, բուրդ : Վայրի կենդանիներուն մէջ անուանի  
է Լամա ըսուած ոչխարի նման կենդանին : Թաց տեղուանքը ահա-  
գին օձեր ու անթիւ ճճիներ կը գտնուին. տեսակ մը ճճի ալ կայ  
Սասիէլը ըսուած՝ որ թուղթի նման բոյն կը շինէ :

Բնակիչն է 2,279,000 Հռոմէագաւան, բայց կռապաշտ լեռն-  
ցիներ ալ կան :

Հիւսիսէն մինչեւ հարաւ Անտէզ կամ Քորաթիլէրա գօտին կը  
տարածուի, որուն միջին բարձրութիւնը 15,000 սանաչափէն մինչեւ  
17,000 սանաչափ է :

Կլիսաւոր գետերը Մարանոն, Հուալկա, Եուքայալէ են, որ ի-  
րերը իրարու կը խառնուին ու Ամազոն գետը կը թափին :

Կլիսաւոր լիճերն են Լաւրիքօքա, Զիքուաքօպա եւ Քիլուա-  
քօքա :

## Գ Լ Խ Ա Ի Ո Ր Գ Ն Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ԼԻՄԱ (100,000) աս քաղաքը Սպանիացիք շինեցին 1524ին . երեւելի շէնքեր ունի , բայց գետնաշարժերով շատ անգամ փնառուեցաւ :

ՔՈՒԶՔՈՅ (40,000) փերուի հին թագաւորութեան մայրաքաղաքն է :

ԱՐԷՔԻՓԱ (35,000) դիրքը գեղեցիկ , բայց միժ հրաբուլիտի մը մօտ ըլլալուն համար՝ շատ գետնաշարժ կ'ունենայ :

---

## Ժ Գ . Պ Ո Լ Ի Վ Ի Ա

ՊՈԼԻՎԻԱՆ 1825էն 'ի վեր ինքնագլուխ հասարակագետութիւն մըն է :

Ասոր սահմանը հիւսիսէն ու արեւելքէն՝ Պրագիլն է , հարաւէն՝ Լա Փլաթա , ու արեւմուտքէն՝ փերու ու Խաղաղական ովկիանոսը : Երկայնութիւնը 1,100 մղոն է , ու տարածութիւնը 374,400 քառակուսի մղոն :

Երկրին մէջտեղուանքը լեռնոտ , արեւելեան կողմը բարեբեր , արեւմուտքը անբնակ անապատ :

Բերքն է գինի , ձէթ ու ազնիւ փայտեր :

Բնակիչն է 1,300,000 Հռոմէադաւան :

Գլխաւոր լեռները արոնք են .

Թաքօրա 18,890 ոտնաչափ բարձր , Զիփիքանի 19,740 ոտնաչափ բարձր , Շահամա 22,350 ոտնաչափ՝ Փարինաքթա 22,000 ոտնաչափ՝ Փոմմարափի 21,700 ոտնաչափ՝ Կուլալթիւրի 22,000 ոտնաչափ բարձր , որ Անտէլ դօտիին գագաթներն են . ասոնց հաւասար ուրիշներ ալ կան :

Գլխաւոր գետերն են՝ Պէնի , Մարմնրէ , Ռիօ Կրանտ , Փիլքոմայօ ու Փարակուէյ :

Գլխաւոր լիճերը Թիթիքաքա ու Ըլլակուաս :

## Գ Լ Խ Ե Ի Ո Ր Գ Ե Ղ Ե Ք Ն Ե Ր Ը

ԳՈՋԱՊԵՄՊԱ (25,000) շատ բարձր տեղ է ու լայն փողոցներ ունի, եւ ընդարձակ բաց հրապարակներ կան քաղաքին մէջը:

ԼԱՓԱԶ (20,000) ասոր քովերը հարուստ արծաթահանք կայ:

ՓՈԹՈՍԻ (16,700) ասոր արծաթահանքը աշխարհիս ամենէն մեծ հանքերէն մէկն է:

---

### Փ Գ . Փ Ա Ր Ե Կ Ո Ւ Ա

Ը ն դ հ ա ն ո ս ր ք ի տ Ե Լ Է :

ՓԱՐԵԿՈՒԱՆ ատենով Սպանիացոց ձեռքն էր: Բնակիչներուն մէկ մասը Յիսուսեան կրօնաւորներուն ձեռքովը շատ կըրթուեցաւ 1767ին. հիմա ինքնազուլի հասարակապետութիւն է:

Ասոր սահմանը հիւսիսէն ու արեւելքէն՝ Պրազիլն է, հարաւէն ու արեւմուտքէն՝ Լա Փլաթա կամ Արճէնթին Ռիբըպլիք:

Երկիրը դաշտային ու խիստ բարեբեր:

Գլխաւոր բերքն է թէյ (չայ), ծխախոտ, բամպակ, շաքար:

Բնակիչը 1,000,000 Հռոմէագաւան:

Գլխաւոր քաղաքն է ՎԵՐԵՓՈՒՄՍ (12,000):

---

### Փ Ե . Ռ Ի Ո Յ Տ Է Լ Ա Փ Լ Ա Թ Ա

Կ Ա Մ

### Ա Ր Ճ Է Ն Թ Ի Ն Ռ Ի Ր Ը Պ Լ Ի Ք

Ը ն դ հ ա ն ո ս ր ք ի տ Ե Լ Է :

ՌԻՈՅ ՏԷԼԱ ՓԼԱԹԱՆ 1515ին Սպանիացիք գտան. 1810ին ընակիչները գլուխ քաշեցին անոնցմէ, ու ինքնազուլի հասարակա-

պետութիւն մը եղան . ու հիմա ընդհանրապէս ԱՐՃԵՆՔԻՆ ՌԻ-  
ԲԸՊԼԻՔ կ'ըսուի :

Ասոր սահմանը հիւսիսէն՝ Պոլիվիա , արեւելքէն՝ Պրազիլ ու  
Եուրոկուայ , հարաւէն՝ Ովկիանոս , ու արեւմուտքէն՝ Քիլի :

Տարածութիւնը 820,000 քառակուսի մղոն :

Բնակիչը 820,000 Հռոմէադաւան :

Եբէրին մեծ մասը թաց է , օդը տաք :

Բերքն է գինի , ձէթ , բամբակ , շաքար ու լամայի աղնիւ բուրդ :

Աշխարհիս ամենէն մեծ գետերէն մէկը աս երկրին մէջն է , որ  
կ'ըսուի Լա Փլաթա : Անտէղ գօտիէն շատ գետեր կը բղխեն , որ  
ասոր հետ կը խառնուին ու Ալյանդեան ովկիանոսը կը թափին :  
Աս գետին բերանը 170 մղոնի չափ լայն է , ու անկէ մինչեւ 50  
մղոն վերի լայնութիւնը 53 մղոն է :

Գլխաւոր քաղաքն է Պոնէնոս ԱՅՐԵՍ (90,000) , Լա Փլաթա գե-  
տին վրայ . օդը շատ աղէկ , վաճառաշահ քաղաք է :

## Ժ Գ . Ք Ի Լ Ի Կ ամ Զ Ի Լ Ի

ՔԻԼԻԻՆ բնակիչները 1818ին զատուեցան Սպանիացիներէն  
ու ազատ հատարակապետութիւն եղան :

Քիլին՝ Փէրուի հարաւային կողմը , քորաիլեան լեռներուն ու  
Խաղաղական ովկիանոսին մէջտեղը կ'իյնայ :

Տարածութիւնը 170,000 քառակուսի մղոն :

Երկիրը լեռնոտ ու Չուրոտ է . օդը բարեխառն ,

Բերքն է պղինձ , ոսկի , արծաթ ու աղնիւ քարեր :

Բնակիչը 1,134,000 Հռոմէադաւան :

## Գ Լ Խ Ա Ի Ո Ր Ք Ա Ղ Ա Ք Ն Ե Ր Ը

ՍԱՆԹ—ԻՍԿՈՑ (80,000) հին քաղաք մըն է , ու հարաւային Ա-  
մերիկայի ամենէն յաջող քաղաքներուն մէկն է :

ՎԱԼԼԱՐԵՑՁՈՑ (50,000) նաւահանգիստը մեծ ու ադահով է ,  
ու շատ գեղեցիկ առուտուրի քաղաք մըն է :

**ՓԻ. ԵՈՒՐՈՒԿՈՒՆՆ**

ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆ մին է, որուն սահմանը հիւսիսէն ու արեւելքէն՝ Պրազիլ, հարաւէն՝ Ովկիանոս, ու արեւմուտքէն՝ Արճէնթին Ռիբըպլը :


Բոլոր տարածութիւնը 75,000 քառակուսի մղոն է :

Բնակիչը 120,000 Հռոմէադաւան :

Օդը խոնաւ է բայց բարեխառն ու առողջ :

Երկիրը դաշտային է :

Գլխաւոր քաղաքն է ԿՐՈՆԹԻՎԻՏԷՈՅ (12,000) Լա Փլաթա գետին վրայ շինած, ու վաճառաշահ քաղաք :



**ՓԸ. ՓԱԹԱԿՈՆԻԱ**

ՓԱԹԱԿՈՆԻԱՆ Ամերիկայի հարաւային ծայրն է գրեթէ բոլորն ալ անծանօթ :

Երկայնութիւնը 1,015 մղոն ու բոլոր տարածութիւնը 350,000 քառակուսի մղոն է :

Արեւելեան ծովեզերքը տաք ու աւազուտ է, եւ անուշ ջուր չունի :

Բնակիչն է կարծիքով 200,000 բարձրահասակ ու հիւրասէր մարդիկ . ասոնք բնակութեան քաղաք չունին, հապա խումբ խումբ դաշտերու մէջ կը բնակին :

Երկիրը արեւմտեան կողմը լեռնային է, բայց արեւելեանը դաշտային :

ԹԻՐՐԱ ՏԷԼ ՓՈՒԻԿՈՅ] ԿՂՁԻՆԵՐԸ . մեծ Արշիպեղազոս է ՓԱԹԱԿՈՆԻԱՅԻ հարաւային ծայրէն քիչ մը հեռու : Ամենէն մեծը 385 մղոն երկայնութիւն ունի : Շատ ցուրտ տեղ մըն է ու փոթորիկները շատ ու սոսկալի են : Բնակիչները վայրենի են :



ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՍՐԵՆՆԵՐ

ՖԱԼՔԼԱՆՏ ԿԴՁԻՆԵՐԸ . Առլանդեան ովկիանոսին մէջը Թերրա  
տէլ Ֆուէկոյէն 250 մղսն հեռու են հիւսիսային արեւելեան կողմը :  
Միայն երկու հատը մեծ են , որոնք Անգղիացւոց աակն են : Սթանլի  
անունով պզտիկ գիւղ մը կայ՝ որուն ընակիչները Անգղիացի են :

## ԱՆԳԻԼԵԱՆ ԿԴՁԻՔ


Ընդհանուր գիտելիք :

ԱՆԳԻԼԵԱՆ կղզիները , որ Արեւմտեան Հնդկաստան ալ կ'ըս-  
ուին , դասաւ Բրիտանիոյ Գոլոմպոս 1492ին : Ետքը Սպանիացիք  
կամաց կամաց տիրեցին բոլոր աս կղզիներուն , ու տասը տարուան  
մէջ Մեծ Անգլիականներուն ընակիչները ջնջեցին , որ վախկոտ մար-  
դիկ էին :

Փոքր Անգլիեան կղզիներուն ընակիչները՝ որ Բուրայեղ կ'ըսուէ-  
ին , կարիճ ըլլալով՝ Սպանիացւոց շատ դէմ՝ գրին , ինչուան որ  
1600ին առենները Եւրոպայի ուրիշ ազգերը կամաց կամաց անոնք  
ալ ջնջեցին :

Անգլիեան կ'ըսուին ան կղզիներն որ հիւսիսային ու հարաւա-  
յին Ամերիկայի մէջտեղուանքը կ'իյնան :

Աս կղզիները իրեք գլխաւոր խումբ կը բաժնուին . Մեծ Ան-  
գլիեանք , Փոքր Անգլիեանք , եւ Լուրպայեան կամ՝ Պաճամա կըղ-  
զիները :



ՄԵԾ ԱՆԴՈՒԵԱՆ ԿՐՍՈՒԻՆ աս չորս կղզիները . Քուպա, Եամա-  
յիքա, Հայիթի կամ Սուրբ Գովինիկոս, ու Փոսթոյ Ռիքոյ :

ՓՈՔՐ ԱՆԴՈՒԵԱՆ կղզիներուն զխաւորներն ասոնք են . Սուրբ  
Խաչ, Սուրբ Բարթողիմէոս, Սուրբ Լուչիա, Սուրբ Ղինչնցիոս,  
Կրանատա, Գուատալուփիա, Մարթինիկէ, Սուրբ Եւտարէոս եւ  
Քուրասաոյ :

ԼՈՒՔԱՅԵԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ մանր կղզիներ են Անգղիացւոց ձեռքը .  
ասոնց մէջ անուանի է Կուանասանի կամ Սան Սալվատոր կղզին, որ  
Քոլումբոսի առ կողմերը առջի դասած տեղն է :

Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է, ու շատ հրաբուխներ ունի :  
Օղբ ապք ու թաց է. Հոկտեմբերէն ինչուան Ապրիլ չոր կ'ըլ-  
լայի մնացած ամիսները միակերպ անձրեւ կու գայ :

Ստաւրիկ մրրիկներ ալ շատ կ'ըլլան աս կղզիները, անանկ որ  
ինչուան շէնքերն ու առւները կը փլցունեն :

Հողը շատ պաղտեր է. զխաւոր բերքն է լեղակ, բամպակ,  
չաքար, ծխախոտ, խնկեղէն, եւ Ափրիկէի ու Ասիոյ ամէն բերքե-  
րը. միայն թէ Եւրոպոյի բոյսերն ու կենդանիները հասն որ երթան  
քիչ ասանի մէջ ցեղերնին կը փոխուի :

Բնակիչն է 3,359,000. ու տարածութիւնը 96,000 քառակու-  
սի մղոն :



ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀՆՆԿԱՅԱՆԻ ՍՅՆՏՐՈՒՆ ԽԱՂԱԼԸ

## ԳԼԹՄԻՈՐ ՔԱՂԱՔՆԵՐԸ

ՀԱԻԱՆԱ (134,215) Քուպա կղզին զխաւոր քաղաքն է, ա-  
մաւր ու շատ վտճառաշահ. նաւահանգիստը սցնբան մեծ է որ 1,000

Հատ պատերազմական նաւեր կրնայ առնել :

ՔԻՆԿՍԹԸՆ (35,000) Եամայիբային մէջ երեւելի վաճառաշահ քաղաք է :

ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ (20,500) Մարթինիկէ կղզիին մէջ՝ վաճառաշահ քաղաք է :

ՍՈՒՐԲ ԴՈՄԻՆԻԿՈՍ (12,000) Հայիթի կղզիին մէջ. աս քաղաքը Քոլումպոսի եղբայրը շինեց :



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՅՐԵՆԻՆԵՐՈՒՆ ԲՈՌՈՂՈՆ ԲԹԵՆԸ



ՃԱՌԻ ԿԵՂԵԿԻ ՆԱԽԿ



# ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ .

Գ Լ ՈՒ Խ Թ

## ՈՎԿԻԱՆԻԱ

Ընդհանուր գիտելիք :

ՈՎԿԻԱՆԻԱՆ Եւրոպացիք գրեթէ Ամերիկան գտած ատենն Նին գտան . աննոցմէ առաջ Արարացիք ասոր Հարաւային Արեւ ըստուած կողմը գացեր , ու իրենց հաւատքը տարածեր էին 1100ին կամ 1200ին ատենները , բայց Փորթուգէզները զիրենք հայածեցին :

Ովկիանիա կ'ըսուին Հարաւային ովկիանոսի մէջ ջրուած կղզիները , որ բոլորը մէկէն Եւրոպայէն շատ մեծ է :

Տարածութիւնը կը սեպուի 4,500,000 քառակուսի մղոն :

Օգն ընդհանրապէս տաք է , բայց ծովեզերքը բարեխառն : Երկրին մեծ մասը լեռնոտ է , ծովեզերքն ալ շատ տեղ ժայռերով լեցուն :

Գլխաւոր բերքն է հացի ծառ , քոքոյ , անուշ դեանախնձոր ու ամէն տեսակ խնկեղէն :

Բնակիչը 24,000,000 , շատը սեւ , վայրենի , անկիրթ ու պակասամիտ . ինչուան երկիրը գործելն ալ չեն գիտեր . հիւզերու մէջ կը բնակին , օրորդութեամբ կ'ապրին , ոմանք ալ մարդակեր են : Անցած քառսուն կամ յիսուն տարիներու մէջ Անգղիայէն ու Ամերիկայէն շատ Աւետարանի քարոզիչներ եկած են աս կղզիները Քրիստոսը քարոզելու , ու տեղ տեղ մեծ յաջողութիւն գտած են : Ամբողջ ցեղեր կան՝ որ Աւետարանը ընդունած են , եւ հիմա Քրիստոնեայ ու քաղաքապարեալ ազգեր են , ինչպէս Նոր Զելանտա , Սէնաուիչ կղզիները , Ընկերութեան կղզիները ու շատ ուրիշներ :

Բոլոր Ովկիանիան իրեք գլխաւոր մաս կը բաժնուի . Մալէզիա , Աւտրալասիա , եւ Փոլինէզիա կամ Արեւելեան Ովկիանիա :

# ԳԼԽԱԻՈՐ ԿՂՁԻՆԵՐԸ

## 1. ՄԱԼԷՉԻԱ

Մալէզիոյ բնակիչները Հնդկաստանէն եկած կ'երեւան, ու բուն Ովկիանիոյ բնակիչներուն պէս վայրենի ու տղեղ չեն :



ԱՄԵՐԻԿԱՍԻ ՆԵՐՈՒՆԵՐ

Գլխաւոր կղզիներն են Պորնէոյ, Շաւա, եւ Սումադրա . ասոնց թաղաւորները Հոլանտացւոց հարկատու են . կրօնքնին՝ ոմանցը Մահ-մետական, ոմանցն ալ կռապաշտ : Ճաւային գլխաւոր քաղաքն է՝ ՊԱԹԱԻԱ՝ Հոլանտացւոց ձեռքը . օդը ֆրասակար :

ՊԱՆՔԱ . Անադի հարստա հանք ունի :

ՄԱՆՈՒՔԵԱՆ ԿՂՁԻՆԵՐԸ . ասոնց մէկունիմէջ ծառ մը կայ՝ որուն խէփը սաստիկ թոյն է :

ԵՄՊՅԵԱ . միականի ծառ ունի :

ՊԱՆՏԱ . Հնդկաստանի ընկոյղ ունի :

ՓԻԼԻՊԳԵԱՆ ԿՂՁԻՆԵՐԸ . ասոնք աղեկ, բարեբեր են, բայց շատ զեանաշարժ ու փոթորիկ կ'ըլլայ հոն :

## 2. ԱՆՍՏՐԱԼԱՍԻԱ

Գլխաւոր կղզիներն են Ա.ստրալիա՝ որ աշխարհիս մէջ ամենէն մեծ կղզին է, ու Անգոլիացւոց ձեռքն է : Այն Տեմէն, որ երկրթի

առատ հանք ունի. Նոր Կուրնեա, Նոր Բրիտանիա, Նոր Իռլանդա, Սուրտինի կղզիները, Հոդոնյն սրբոյ կղզիները, Նոր Քալեդոնիա, եւ Նոր Զելանդա :

Աւստրալիայի մէջ Նոր ասեմս շատ սակիէ հանքեր դոնուեցան. անոր համար Եւրոպայի բնակիչները աս տարիներս խիստ շատցան հոն :

### 3. ՓՈԼԻՆԷԶԻԱ

Փոլինեզիոյ գլխաւոր կղզիները ասոնք են .

ՄԱՐԻԱՄ ԱՆՆԱ կամ ՄԱՐԻԱՆԵԱՆ ԿՂԶԻՔ, եւ կամ ԱՒԱ-ԶԱԿԱՏ ԿՂԶԻՆԵՐԸ . ասոնց հիւսիսային կողմը ահագին ժայռ մը կայ բրգածեւ, որ Ղարալի կըսուի :

ՔԱՐՈՒԿՆԵԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ :

ՍԷՆՏՈՒԻԶ ԿՂԶԻՆԵՐԸ . ասոնց մէկուն մէջ սպաննուեցաւ Քուք նաւապետը 1779ին, ըսոյց հիմա բոլորովին փոխուեցան ան տեղի մարգիկները ու քաղաքափարեալ Քրիստոնեայ ազգ մը եղան :



ՍԷՆՏՈՒԻԶԵԱՆ ԿՂԶԻՆԻՍՆԱԿԸ



ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՂԶԻՆԻՍՆԱԿԸ

ՆԱՒՈՐԿԱՏ ԿՂԶԻՆԵՐԸ . ԲԱՐԵԿԱՄԱՏ ԿՂԶԻՆԵՐԸ, ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ, եւ ՄԱՐԲԻԶԵԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ :

# ԲՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Համար 009 գլխերէի :

ԲՆԱԿԱՆ աշխարհագրութիւնը կը սորվեցընէ երկրիս վրայի բնական բաժանմունքները, երեւոյթներն ու անոնց ընդհանուր յատկութիւնները :

Երկրիս կամ հողագունար իրեք գլխաւոր մաս կը բաժնուի. Յամաք, Զուր եւ Օդ :

Բոլոր հողագունարի մակերեւութին իրեք մասը ջուր՝ ու մէկ մասը ցամաք երկիր է: Յամաքին բաժանմունքներուն ու երեւոյթներուն վրայով արդէն բաւական խօսած ենք (տես Գլուխ. Ա. ՀԱՏՈՒԱԾ Ա.) իւր հոս տեղը միայն ջուրի՝ եւ օդի վրայով համառօտաբար պիտի խօսինք :

Զորը վաղուկ ու թափանցիկ մարմին է, որ սաստիկ տաքութեամբ գորշը կը դառնայ, իսկ սաստիկ պաղութեամբ կը սառի կը պնդանայ :

Իրեք տեսակ ջուր կայ. Հասարակ, Հանքային ու Ծովային :

Հասարակ կամ Առաջ կ'ըսուի ան ջուրն որ ամենեւին աղի չէ կամ հանքային համ չունի. ասանկ են ընդհանրապէս Աղբիւրները, Գետերը, Լիճերը :

Գետ կ'ըսուին լեռներու վրայէն վազած ջուրերը, որ դարձար իջնալով ինչուան ծով կը թափին :

Գետեր կան որ վաղելու ատեննին գետնին տակը կ'անցնին, եւ ուրիշ տեղէ մը դուրս կ'ելլեն :

Գետեր կան որ ոսկիի հանքին մէջէն՝ անցնելով՝ իրենց բերած աւաղն ալ ոսկիի հետ խառն է. ինչպէս Զայիրէ ու Կամպիա գետերը, ու Քալիֆորնիայի գետերը :

Գետեր կան որ վաղելու ատեննին ժայռի մը հանդիպելով՝ վերէն յանկարծ վար կ'իջնան. աս վար ինկած ջուրը Զրկէ՛ կամ Սահաբ կ'ըսուի. ինչպէս Ամերիկայի մէջ Նիակարայի ջրվէժը, որ աշխարհիս ամենէն մեծն է :

Հանքային ջուրերը գետնին տակի հանքերուն մէջէն անցնելով՝

անոնց համը ու գոյնը կ'առնեն . անոր համար ոմանք երկաթի համ ունին , ոմանք պաղէղի , ոմանք ծծումբի՝ կամ ածուխի եւ ուրիշ հանքերու :

Շատ կերպով փորձուած է որ դեանին որչափ խորունկը երթաս՝ տաքութիւնն ալ աւելի է : Աս բանս յայտնի կ'իմացուինաւ եւ Զէրհոմէրէն , որ դեանէն բղխած բնական տաք ջուրեր են :

Տեսակ մը հանքային ջուրեր կան որ թէպէտ տաք չեն , բայց տեսակ մը կ'ԱԶ (օդ) ունին որ դիւրաւառ է , ու կրնաս բբռնկցնել ու ետքը ինքնիրեն կը վառի : Աս ջուրերէն շատ կը դրանուի նաեւ Պարսիկն քովերը , ան պատճառաւ ան տեղը կրակապաշտ Պարսիկներու ուխտատեղի է :

Ծով կամ Ուլիանոս կ'ըսուի աշխարհիս մեծ մասը պատող աղի ջուրը : Սովորաբար Ուլիանոս կ'ըսուին մեծամեծ ցամաքներուն դուրսի կողմը եղած բնդարձակ ջուրերը , իսկ Ծով կ'ըսուին ներս մը տած մեծամեծ կտորները :



ՍԱՌՆԱԳԱՏ ՈՂԿՐԱՆՈՍ

Օդ կամ Միւլտրո կ'ըսուի երկրիս չորս դին պատած թոյլ ու թափանցիկ մարմինը , որուն մէջ օդերեւոյթներ կ'ըլլան :

Մթնոլորտին բարձրութիւնը ընդհանրապէս 75 մղոնի չափ է :


Օդին խտութիւնը ամէն տեղ փոփոխուի չէ . մէյմը որ մթնոլորտին վարերը՝ այսինքն երկրիս մտա եղած տեղուանք աւելի թանձր է՝ քան թէ վերերը . վասն զի վրայի օդին ծանրութենէն տակի օդը կը ճնշուի . անոր համար բարձր տեղուանք մարդս դժուարաւ շունչ կ'առնէ : Երկրորդ՝ տեղ տեղ օդը ցրտէն կը խտանայ . տեղ տեղ

ալ տաքէն կ'ուռի կ'անգայտանայ . ասէ հովերուն գլխաւոր պատճառը :

Օրերի-այլ կ'ըսուին օդին մէջ տեսնուած երեւոյթները :

Աս երեւոյթները չորս տեսակ կ'ըլլան . Օդեղէն , Զրեղէն , Արեւ-  
սեղէն ու Հրեղէն :

Օրերի կ'ըսուին օդին այլեւայլ շարժմունքները . ինչպէս Հով,  
Մրրիկ , Թաթառ եւայլն :



ԹԱԹԱՌ

Օդին տեղէ տեղ փոխուելը Հով կ'ըսուի , որուն ընդհանուր  
պատճառն է տաքութիւնը՝ որ տեղ տեղ օդը կ'ուռեցունէ , լանանկ  
որ բնականէն թեթեւ կ'ըլլայ , եւ ան ատենը ցուրտ տեղուանք-  
ներէն՝ ուր որ օդը աւելի խիտ ու ծանր է , կը վազէ , մ'իջնորտին  
հաւասարութիւնը նսրէն հաստատելու համար :

Կողմնացոյցերուն զրայ նշանած երեսուներկու տեսակ հով  
կայ . ասոնց գլխաւորները ութը հատ են , որ աշխարհիս չորս կող-  
մէն ու անոնց մէջ տեղուանքէն կը փչեն :

Զրեղէն օրերի-այլիերը բոլորն ալ գետնէն ելած գոլորշիքներէն

կ'ըլլան, ու եօթը տեսակ են՝ Մէզ, Ամպ, Յօշ, Եղեամ', Անձրեւ, Ձիւն ու Կարկուտ :

Գետնէն ելած ջրային գոլորշիքը երբոր օդին պաղութենէն վեր չկարենան ելլել ու երկրիս երեսը մնան, վերի գոլորշիքներն ալ վար իջնան ինչուան գետին, Մեք կամ Մասաթաու կ'ըսուի :

Արեւուն տաքութենէն վեր ելած ջուրին գոլորշիքը օդին մէջ կը ցրուին, որ թափանցիկ են ու աչքի չեն երեւնար. երբոր օդին տաքութիւնը պաղ հովէն կը ցրտի՝ վեր ելած գոլորշիքն ալ կամայ կամայ վար իջնալով ու իրարու մտանալով կը թանձրանան՝ թափանցիկութիւննին կը կորսնցընեն ու օդին մէջ կը շարժին կամ կը կենան՝ Աճ կ'ըսուին :

Աս բանս յայտնի կ'երեւնայ անկէջ, որ ամառ ատեն շատ անգամ իրիկունները երկինքը ամպ չեղած ատենը կը տեսնենք որ բոլոր երկինքին երեսը յանկարճակի ամպով լեցուեր է :

Ամպերը երկրէս ինչուան 18,000 ոտք բարձր կրնան ելլել. անկէջ վեր մթնոլորտը շատ թեթեւ ըլլալուն՝ ալ չեն կրնար վեր ելլել : Յօշ գիշեր ատեն դաշտերու վրայ իջած անձրեւի պէս թացութիւնն է :

Գիշերուան ցրտութենէն երկրիս վրայի մարմինները կը պաղին. բայց ամէն ալ հաւատար չեն պաղիր, հապա ոմանք շատ՝ ոմանք քիչ, թէ իրենց կազմուածքին եւ թէ իրենց դիրքին համար : Բրնութեամբ շատ պնդող մարմիններուն վրայ շատ գոլորշիք կը նըստի՝ իսկ անոնք որ քիչ կը պաղին կամ՝ ամենեւին չեն պաղիր, վրանին ալ քիչ գոլորշիք կ'իջնայ՝ կամ ամենեւին չիջնար, ու չոր կը մնան :

Յօղը աւելի առաւօտուան դէմ կ'ըլլայ՝ քան թէ իրիկունը կամ կէս գիշերին. վասն զի ինչուան առաւօտ երկրիս վրայի մարմինները երթալով աւելի կը պաղին :

Յօղը միայն երկինքը պարզ եղած գիշերները կ'ըլլայ, ու ամպոս եղածին պէս ցօղ չիջնար. վասն զի ամպոս եղած գիշերը պարզ եղած գիշերէն շատ աւելի տաք կ'ըլլայ :

Եղեմը գարնան ու աշնան ատեն գետնի վրայ կ'իջնայ ձերմակ սառի պէս : Ասիկայ գիշերուան իջած ցօղն է, որ գարնան սկիզբները ու աշնան վերջերը սաստիկ ցրտութենէն կը սառի :

Արեւ կ'ըսուի՝ երբոր երկինքը ելած գոլորշիքները ցուրտեն կը միանան, ու ծանրանալով կաթիլ կաթիլ վար կը թափթրին :

Աշխարհիս ամէն կողմը միակերպ անձրեւ չըլլար. ընդհանրաւ

պէս հասարակածին կողմերը աւելի շատ անձրեւ կու գայ, [Թէպէտ եւ շատ անգամ ալ չորութիւն կ'ըլլայ. իսկ բեւեռներուն մօտ Թէպէտ անձրեւ կու գայ, բայց քիչ:]

Անձրեւը աւելի լեռներու վրայ կու գայ՝ քան [Թէ գաշտերու. վասն զի լեռներուն օդը միշտ պաղ է:]

Արեւադարձերուն մէջտեղը միշտ կանոնաւոր անձրեւներ կու գան. վասն զի անտեղուանքի հովերն ալ ամիսներով կանոնաւոր կերպով կը փչեն:

Կարօր անձրեւը կամ յեւել շատ անգամ Ալպեան լեռներուն վրայ տեղ տեղ ու քիչ քիչ կու գայ. ոմանք կ'ըսեն [Թէ աս կարմրութիւնը հոն տեղի մանր ճճիներէն ու բոյսերէն է. բայց ստոյգը չիմացուիր:]

Երբոր ջրային գոլորշիքները օդուն մէջ յանկարծ պաղելով վեցանկիւնի կամ ուրիշ բազմանկիւնի ձեւով մը կը սառին ու վար կ'իջան, Ձիւն կ'ըսուի:

Հով չեղած ատենը ձեան հատիկներն ալ [սոշոր կ'ըլլան. վասն զի ձիւնը վար իյնալու ատեն՝ մէկ] դիէն ուրիշ գոլորշիքներ ալ անոր կպչելով՝ կը սառին ու կը թոշորնան:

Կարխարը ձիւն կամ ձիւնով խառնուած անձրեւ է, որ օդուն մէջ երկու հակառակ ելքերով անութեամբ մէկդիէն մէկալ դին նետուելով՝ վար իյնալը կուշանայ, պաղէն կը սառի, ու քանի երթայ [սոշորնալով՝ ուժով վար կը [Թափ]Թրփի:] Ինչուան մէկ ու կէս լիպրէ ծանրութեամբ կարկուտ եկած է:

Տեսակ մը կուտ ու մանր ձիւն կայ՝ որ դաւառական բառով Սելևի կ'ըսուի, եւ տաճիկերէն Քիփի. ասիկայ ամառ ու ձմեռ կ'ըլլայ. ամառը կարկուտի հետ [սառն՝ ձմեռը ձեան հետ. կարկուտի կը նմանի, բայց անոր պէս կարծր ու [Թափանցիկ չէ:] Չիմացուիր [Թէ ասիկայ օդուն մէջ ինչպէս կը ձեւանայ:]

Լաւուիկն Օրբիւնայինները անոնք են՝ որ արեւուն ճառագայթներուն պլուսայլ կերպով զարնուածքէն կը ձեւանան, ու վեց տեսակ են. Ծիածան, Արշալոյս, Արեւանմանութիւն, Բակ, Զոգիակոսիլոյս, Կրկներեւոյթ:

Արեւու լուսոյն մէջ եօթը գոյն ճառագայթներ կան, որ եռանկիւնի ապակիին մէջէն անցնելու ատեն կ'երեւան. այսինքն կարմիր, նարինջի գոյն, դեղին, կանանչ, բաց կապուտ, մութ կապուտ, մանուշակագոյն: Անձրեւի ատեն երբոր արեւը քովքնտի անձրեւին կաթիլներուն վրայ կը զարնէ, աս եօթը գոյները զատ զատ կ'երեւան



երկինքը՝ կամարածեւ . Ծիւծիւն կամ Ծիւծիւնի ֆօֆի ըսուածը աս է : Ասոր ալ նմանը երբեմն քոլի ամպերուն վրայ ձեւանալով՝ երկու ծիրանի գօտի կ'երեւայ :

Երբեմն մեծ ծոփերու ու դաշտերու վրայ ալ երբոր գօլը շէքը խիստ թանձր է, պզտի ծիածան մը կ'երեւայ :

Առաւօտները քանի որ արեւը հորիզոնէն 18° աստիճան ցած է, իր լուսոյն կարմրագոյն շառաւիղները մեր մ'թնոլորտին վրայ կը զարնեն՝ ինչուան որ արեւը հորիզոնէն վեր բարձրանայ . աս կարմրագոյն լոյսը Արշալայ կ'ըսուի, որ արեւը ելեւէն մէկ ժամէն աւելի առաջ կը սկսի :

'Նոյնպէս ալ իրիկունները արեւը մտնելուն պէս բոլոր արեւմտեան եղերքը կը կարմրի . աս կարմրութիւնն ալ Վերջալայ կ'ըսուի, որ ամառը ինչուան երկուք ու կէս ժամ կը դիմանայ :

Մ'թնոլորտը որչափ թանձր ըլլայ, արշալոյսն ու վերջալոյսն ալ այնչափ մեծ ու տարածուած կ'ըլլայ :

Արեւաստիւնի ան երեւոյթն է, որ երբեմն արեւուն՝ լոյսը իր դիմացի ամպերուն վրայ անանկ կը զարնէ որ ան ամպերուն վրայ ուրիշ արեւներ ալ կ'երեւան :

Բակ արեւոյ կ'ըսուի ծիածանի պէս գոյնզգոյն կլոր շրջանակը, որ ամառ ատեն երբեմն արեւուն չորս դին կ'երեւայ :

Երբեմն արեւուն վրայի բակը երկու հատ կ'ըլլայ վրայէ վրայ համակեզոն, բայց դրօշ կողմը եղածին գոյները այնչափ փայլուն չեն ըլլար :

Լուսինն ալ երբեմն բակ կ'ունենայ, բայց արեւուն բակէն աս տարբերութիւնը ունի որ անոր պէս գունաւոր չերեւար, հապա ճերմակ կ'ըլլայ, մէկ կողմն ալ քիչ մը կարմրագոյն :

Ձողիկաթի լոյս կ'ըսուի ան տկար ըլլալ, որ Մարտ ամսոյն ըսկիզբները արեւը մտնելէն ետեւ երկինքին երեսը բուրգի ձեւով կ'երեւայ . չիմացուի թէ աս երեւոյթը ինչպէս կը ձեւանայ . ոմանք կ'ըսեն թէ մեր մ'թնոլորտին մէջի մանր մարմիններուն ընթացքէն է :

Ամառը տաք ատեն դաշտերու մէջ եղած շէնքը կամ ծովուն մէջի նաւը վրայէ վրայ երկու հատ կ'երեւայ, մէկը շիտակ՝ մէկը գլխիվար, ինչպէս որ ջրի մէջ կ'երեւան . աս երեւոյթը կ'ըսուի կրիտերիտի :

Ասոր պատճառը արեւուն ճառագայթներուն դարնուածքէն է, որ թանձր ու տաք օդուն մէջէն անցնելու ատեն՝ շէնքերը երկերու հատ կ'երեւցնէ :

Հրեղէն Օրբերեայիներ կ'ըսուին օգուն մէջ երեւցած կրակէ երեւոյթները, որ վեց տեսակ են. Փայլակ, Կայծակ, Հիւսիսայգ, Շրջմոյլիկ հուր, Ասուղ ու Երկնաբար :

Երբոր ամպերու մէջ լեցուած երկու տեսակ ելեքարականութիւնը մէկմէկու հաղորդուին, ձայն՝ կրակ ու լոյս կը հանեն. ձայնը կ'ըսուի *Ռոփոս*, լոյսը՝ Փայլակ, կրակը՝ Կայծակ :

Երբեմն առանց սրտամուկքի, երբեմն ալ ամոլ չեղած ատենը երկինքը փայլակ կ'ըլլայ. ասոր պատճառը դեռ չգիտցուի :

Որոտմունքին ձայնը 30 մղոն տեղէն աւելի հեռու չերթար :

Հիւսիսայգը կամ Հիւսիսայգն արշալոյսը լուսաւոր տմպի կը նմանի, գոյնը ճերմակ տեղտեղ փայլուն դօտիներով. ասիկայ երբեմն հիւսիսային կողմը հորիզոնին վրայ կ'երեւայ՝ արեւը մանեղէն իրեք չորս ժամ ետքը : Ասոր պատճառը մազնիստեկան ելեքարականութիւնն է կ'ըսեն, ու երկրադունտիս հիւսիսային կողմերը շատ կ'ըլլայ :

Շրջմոյլիկ հուրը բոցի պէս լոյս մըն է, որ ատեն ատեն գիշերները գերեզմաննոցներու մէջ կամ թաց տեղուանք կ'երեւայ :

Ռամիկները շատ աւելորդապաշտական կարծիքներով աս կրակէն կը վախնան, բայց վախնալու բան չէ. վասն զի ասոր բուն պատճառն է փոսփորեան ջրածին կազը, որ օդին հետ հաղորդուելուն պէս կը բռնկի, եւ ինչուան որ հատնի՝ կը վառի :

Ասուղ կ'ըսուի ան աստղի պէս թուռոլ լոյսը, որ գիշերները երկինքը կ'երեւայ :

Հիմակուան բնաբաններուն կարծիքովը՝ ասուղները մեր մթնոլորտէն վեր երկրիս վրայ պաշտող մանր մարմիններ են, որ աչքով չեն երեւար. ասոնք երբոր մեր մթնոլորտին հետ սաստիկ կը շփուին՝ լոյս կը հանեն կ'ըսեն :

Երբոր ասուղ մը երկրիս ձգողութեամբը ահագին սրտմունքով ու լուսով գետին իյնայ՝ Երբոտար կամ Շոնտար կ'ըսուի :

Աերջի՝ յիսուն տարուանս մէջ վաթսուն հատի չափ երկնաբար ինկած է Եւրոպայի ու Ամերիկայի մէջ. ասոնց մէջ ամենէն մեծն է Անդրիա ինկածը, որ 80 լիպրէէն աւելի կը կշռէ :

Ամէն երկնաբարերուն բաղադրութիւնն ալ գրեթէ նոյն է. այսինքն՝ երկաթ, գայլախաղ, ծծումբ, նիքէլ, մանկանէզ : Ասոնց դրսի գոյնը հանքային ածուխի՞ պէս սև է, բայց մէջը երկաթի պէս փայլուն :

# ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

## ԱԹԽԱՐՅԱԳՐՈՒԹԻՒՆ

Հասարակական գրքեր :

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ աշխարհագրութիւնը կը սորվեցընէ աշխարհիս գիրքը, ու երկրիս ուրիշ երկնային մարմիններուն հետ ունեցած վերաբերութիւնները :

Երկինքին ու երկրիս գիրքը երբեմն երկու գունտի վրայ կը ցուցուի . որոնց մէկը կ'ըսուի Երկրագնաց, մէկալը Երկրագնաց . ու երբեք ալ թուղթի վրայ որ Աշխարհացոյց կ'ըսուի :

Ան գիծն որ երկու կէտի մէջ քաշուած գիծերուն ամենէն կարճն է, կ'ըսուի Ուղիւ գիծ . մէկալն երբ կ'որ գիծ : (Ձեւ 1)

Ան գիծերն որ իրարմէ միշտ նոյն հեռաւորութիւնը ունին, կ'ըսուին Չորագիծութիւն : (Ձեւ 2)

Երբոր երկու գիծ մէկգլմէկ կտրեն, [Անիւն կ'ըլլայ : (Ձեւ 3)

Երբոր մէկ գիծ մը ուրիշ գիծի վրայ անանկ իջնայ, որ տակի գիծին երկու կողմէն ալ հաւասար հեռաւորութիւն ունենայ, ան գիծը Ուղիւցիւց կ'ըսուի, ու երկուքէն ձեւացած անկիւնն ալ Ուղիւց անկիւն կ'ըլլայ, որ իննսուն աստիճանի բացուածք կ'ունենայ : (Ձեւ 4)

Թէ որ անկեան մը բացուածքը ուղիղ անկիւնէն պակաս ըլլայ Սոր անկիւն կ'ըսուի. (Ձեւ 5.) Իսկ թէ որ աւելի ըլլայ, Բար անկիւն : (Ձեւ 6)

Բարբալ ան կ'որ գիծն է, որ շարունակ իր շիտկութենէն ծռելով՝ երկու ծայրերը իրարու կը դպչին : Բարբալի մէջտեղի կէտը կ'ըսուի Կեդրոն . որ շրջապատին ամէն կողմէն հաւասար հեռու է : (Ձեւ 7)

Ամէն բարբալ թէ մեծ ըլլայ թէ պղտիկ, 360 աստիճան կը բաժնուի . ամէն մէկ աստիճանը 60 մաս . ամէն մէկ մասն ալ 60 մանրամաս : (Ձեւ 10)

Աստիճանը սովորաբար այսպէս կը գրուի ( ° ), մասը այսպէս ( ' ), մանրամասը այսպէս ( " ) :

Շարժուիչը բոլորակի մը կեդրոնէն ինչուան շրջապատը քաշուած գիծն է : (Ձեւ 7)

Ան գիծն որ բոլորակին կեդրոնէն անցնելով երկու շրջապատին կը դպչի, ու բոլորակը երկու հաւասար կտոր կը բաժնէ, կ'ըսուի Տրամագիծ : (Ձեւ 7)

Առանցիկ է գունաին մէջտեղէն անցած գիծը : Աս գիծին ալ երկու ծայրերը Ֆէ-է-է կ'ըսուին :

Չորսհիւսիսի Բուրակ կ'ըսուին մէկ կեդրոնի վրայ քաշուած այլեւայլ բոլորակները : (Ձեւ 8)

Արտիտորսի Բուրակն ան է՝ որ երկու բոլորակ մէջէ մէջ այլեւայլ կեդրոնով կը քաշուին : (Ձեւ 9)

## ԵՐԿՐԱԳՈՒՆՏ

Երկրիս ձևին նման գործիք մըն է, որուն վրայ կ'երեւնայ բոլոր երկրիս երեսը, շարժմունքը ու աշխարհագրական բաժանմունքները :

Երկրագունտին վրայ ութը գլխաւոր շրջանակ կայ . չորսը մեծ, չորսը պզտիկ : (Ձեւ 11)

Գունտին մեծ շրջանակներն են, Հորիզոն, Միջերեայ, Հասարակած, եւ Ծիւր խաւարման :

Ասոնք Միջ շրջանակ կ'ըսուին, վասն զի գունտը երկու հաւասար կտոր կը բաժնեն :

Հորիզոնը մարդու մը կեցած տեղին չորս դին երեւցած կլոր գիծն է :

Երկու կերպ հորիզոն կայ . մէյմը Չֆուէ, մէյմըն ալ Իմասուէ : Զգալի հորիզոնը ան կլոր գիծն է, որ մարդ մը դաշտի կամ ծովու մէջ կեցած ատենը երկինքը երկրիս հետ կըսկլոր մը փակածի պէս կը տեսնէ :

Իմանալի հորիզոնը մարդուս կեցած տեղին չորս դիէն 90 աս-

ատիճան հեռու եղած շրջանակն է, որ գունաքը երկու հաւասար կիսադուռնտ կը բաժնէ :

Իմանալի հորիզոնով կ'իմացուի աստղերուն ելլելու ու մտնելու ատենները :

Գունաի վրայ իմանալի հորիզոնը լայն ու տափարակ շրջանակ մըն է, որուն վրայ այլեւայլ գիծեր նշանած են : Աօ գիծերուն մէկը կը ցուցնէ աստիճանի կենդանակերպները, ամէն մէկը 30 աստիճան բաժնուած : Երկրորդ գիծին վրայ նշանած են կենդանակերպներուն անունները եւ ամուռն օրերը : Երրորդ գիծը 32 հաւասար կտոր բաժնած է, 32 հոլերուն չափովը . ամէն մէկ կտորն է 11°, 15' : Չորրորդն ալ 360 աստիճան բաժնուած է, ու չորս կտոր քրած՝ իննսունական աստիճանով :

Իմանալի հորիզոնին երկու բեւեռներն են Չէնիլի կամ Գոֆոլի-նալիք, եւ Նադիր կամ Սուզալիք :

Չէնիլի շիֆշիտակ մեր գլխուն վրայ եղած երկինքին մշտեղի կէտն է :

Նաաիր կ'ըսուի գլնիլի շիտկուլթեամբ մեր ոտքին տակէն անցած՝ վարի կիսադուռնտին մշտեղի կէտը :

Միջրեան ան շրջանակն է, որ բեւեռէ բեւեռ ձգուելով՝ հասարակածը կը կտրէ, ու գունաքը երկու հաւասար կտոր կը բաժնէ :

Անոր համար Միջրեայ կամ Միջրեայի կ'ըսուի աս շրջանակը, որ արեւը վրան հասնելուն պէս՝ աս շրջանակին տակը եղած քաղաքներուն կէսօր կ'ըլլայ :

Գունաին վրայ 24 հատ միջօրեական գիծեր քաշուած են, ամէն մէկը իրարմէ 15 աստիճան հեռու, որ մէկ ժամ կ'ընէ :

Տեղ մը ուրիշ տեղէ որչափ հեռու ըլլալը իմանալու համար երկու տեսակ աստիճան կայ, մէկը Երկայնութեան աստիճան, մէկալը Լայնութեան աստիճան :

Երկայնութեան աստիճան կ'ըսուին բեւեռէ բեւեռ քաշուած միջօրեական գիծերը :

Երկայնութեան աստիճաններով կ'իմացուի թէ մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է արեւելքէն դէպ'ի արեւմուտք :

Աս աստիճանները հասարակածին վրայ նշանած են :

Երկայնութեան առաջին աստիճանը՝ որ Առաջին Գլխից ալ կ'ըսուի, հին աստեղը Գաղղիացիք Երկաթի կղզիէն սկսան համրել. բայց հիմա ամէն ազգ իր գլխաւոր դիտարանէն կը համրէ :

Լայնութեան աստիճան կ'ըսուին հասարակածին շիտկութեամբը քաշուած զուգահեռական գիծերը :

Աս աստիճանները զրած են միջօրէական շրջանակին վրայ :

Լայնութեան առաջին աստիճանը հասարակածն է. մէկալ աստիճաններն ալ անկէ կը սկըսին համրուիլ, ու կ'երթան ինչուան բեւեռները, որ բոլորը մէկէն 90 հաս կ'ըլլան :

Լայնութեան աստիճաններով կը չափուի թէ մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռաւորութիւն ունի դէպ 'ի բեւեռները, կամ թէ մէկ քաղաք մը հասարակածէն որչափ հեռու է :

Հասարակածն ալ շրջանակն է որ երկու բեւեռներէն իննսունական աստիճան հեռու՝ արեւելքէն դէպ 'ի արեւմուտք ձգուած է, ու գունաք երկու հաւասար կտոր կը բաժնէ, Հիւսիսային ու Հարաւային կիսագունեա :

Անոր համար հասարակած կ'ըսուի սա շրջանակը, վասն զի ասոր աակի բնակիչներուն գիշերն ու ցորեկը գրեթէ միշտ հաւասար է :

Գիշերահասարակած կ'ըսուին հասարակածին ան կէտերը, որ ծիր խաւարմանը կը կտրեն. վասն զի արեւը սա կէտերուն վրայ հասնելուն պէս՝ բոլոր աշխարհք գիշեր ու ցորեկ հաւասար կ'ըլլայ :

Ծիր խաւարմանը ան գիծն է որ հասարակածին վրայ քովընտի ձգուած է ինչուան լայնութեան  $23^{\circ} \frac{1}{2}$ . ասիկայ արեւին երկինքին մէջ իր տարեկան շրջանը որ ճամբով ընելը կը ցուցնէ :

Ծիր խաւարմանը ըսուելուն պատճառն ան է, որ արեւն ու լուսինը դիմացէ դիմաց ան գիծին վրայ հանդիպելու ըլլան՝ խաւարում կ'ըլլայ :

Գունեաին վրայի չորս պզտի շրջանակները ասոնք են. Արեւարարչ իեցեցեանի, Արեւարարչ այծեղջեր, Արջային շրջանակ, Հախարջային շրջանակ :

Արեւարարչ իեցեցեանի կ'ըսուի հիւսիսային լայնութեան  $23^{\circ} \frac{1}{2}$  աստիճանին վրայի շրջանակը. վասն զի արեւը իր տարեկան շրջանովը հոս հասածին պէս, կը սկըսի դէպ 'ի հարաւ դառնալ :

Արեւարարչ այծեղջեր կ'ըսուի հարաւային լայնութեան  $23^{\circ} \frac{1}{2}$  աստիճանին վրայի շրջանակը. վասն զի արեւը ինչուան հոս հասնելէն ետքը՝ նորէն դէպ 'ի հիւսիս կը դառնայ :

Բեհային շրջանով կ'ըսուին անոնք որ գիշերահաւասարէն ետքը մէյմը մէկը մէյմը մէկալը արեւ չեն տեսներ : Աս շրջանակները կ'ըսուին նաեւ Արփային ու Հախաշային շրջանով, ու բեւեռներէն 23<sup>0</sup> ½ աստիճան հեռու են :

Երկրիս բեւեռներն են առանցքին երկու ծայրերը . մէկը կ'ըսուի Հիսթային բեւեռ, մէկալը Հարաային :

Գունտին վրայ հիւսիսային բեւեռին ծայրը պղինձէ պղտի շրջանակ մը կայ, որ Ժամական շրջանով կ'ըսուի . ասոր վրայ գրած են օրուան 24 ժամերը, եւ կը գործածուի քաղաքներուն իրարմէ քանի ժամ հեռու ըլլալը իմանալու համար :

Գունտին վրայ հինգ գօտի կայ . մէկը կ'ըսուի Արեցած ֆօթի, երկուքը Բարեխառն ֆօթիներ, երկուքն ալ Յրոպին ֆօթիներ :

Այրեցած գօտին է երկու արեւադարձերուն միջոցը, ուր որ արեւը ուղղահայեաց զարնելով՝ սաստիկ կը տաքընէ : Աս գօտիին լայնութիւնն է 47<sup>0</sup> աստիճան :

Այրեցած գօտիին բնակիչները Երեսօտի կ'ըսուին . վասն զի արեւը դէպ 'ի հիւսիս գացած ատենը՝ շուքերնին հարաւային դին կը ձգեն, հարաւ գացած ատենն ալ դէպ 'ի հիւսիս : Հասարակածին աակի բնակիչներն ալ Անսօտի կ'ըսուին, վասն զի կէսօրը իրենց գլխուն վրայ արեւը շիփշիտակ զարնելով՝ ամենեւին շուք չեն ունենար :

Բարեխառն գօտիներն են արեւագարձերուն ու բեւեռային շրջանակներուն միջտեղի միջոցները . որովհետեւ հոնտեղը արեւը քովընտի զարնելով՝ օգին տաքութիւնը բարեխառն կ'ըլլայ : Աս գօտիներուն լայնքն է 43<sup>0</sup> աստիճան :

Բարեխառն գօտիներուն բնակիչները Միսօտի կ'ըսուին, վասն զի շուքերնին միշտ դէպ 'ի բեւեռ կը ձգեն :

Յրտային գօտիներն են բեւեռային շրջանակներէն ինչուան բեւեռ եղած միջոցները . եւ հոնտեղերը խիստ ցուրտ կ'ըլլայ : Աս գօտիներուն լայնութիւնն է 23<sup>0</sup> . 30 :

Յրտային գօտիներուն բնակիչները Շրջանօտի կ'ըսուին . վասն զի արեւը 23<sup>0</sup> ½ աստիճանէն աւելի հորիզոնէն վեր չբարձրանալուն համար՝ առանց մանալու իրենց չորս դին կը պտտի, ասով շուքերնին ալ միշտ իրենց չորս դին դառնալով՝ շրջաստուեր կ'ըսուին :

3. Արեւը երկրիս ամէն դին հաւասար չղարներ, հապա տեղ տեղ շիտակ՝ տեղ տեղ ալ քովընտի. անոր համար գունան ալ իրեք տեսակ դիրք կ'ունենայ. Ուշեղ, Խոտոր ու Զոսթագիտական:

Գունտին ուղիղ դիրքը անկէ որ երկու բեւեռները ճիշդ հորիզոնին վրայ կ'ըլլան: (Ձեւ 12)

Հասարակածին տակի բնակիչները ուղիղ դիրք ունին. որով երկինքին ամէն աստղերը կը տեսնեն, ու բոլոր տարին իրենց գիշերն ու ցորեկը հաւասար կ'ըլլայ:

Խոտոր դիրք գետոյ կ'ըսուի՝ Թէ որ բեւեռներուն մէկը հորիզոնէն վեր բարձրանայ, մէկալը հորիզոնէն վար մնայ: (Ձեւ 13)

Աս դիրքը կ'ունենան բարեխառն գօտիներուն բնակիչները, եւ իրենց օրը գիշերահաւասարներէն զատ միշտ փոփոխելու հետ է. երբեմն կ'երկըննայ, երբեմն ալ կը կարճընայ:

Զուգահեռական կ'ըսուի գունտին ան դիրքն որ հասարակածը հորիզոնին ՚հետ զուգահեռական է, բեւեռներուն ալ մէկը դէպ 'ի զենիթ՝ մէկալը դէպ 'ի նատիր շիտկած է: (Ձեւ 14)

Աս դիրքը կ'ունենան երկու բեւեռներուն բնակիչները. որովհետեւ գիշերահաւասարէն ետքը արեւը իրենց հորիզոնէն վեր չելլեր, անոր համար վեց ամիս ցորեկ՝ վեց ամիս ալ գիշեր կ'ունենան:

Գունտին վրայի բնակիչները իրարու համեմատութեամբ որը Հանդիպաբնակ կ'ըսուին, որը Շրջաբնակ, որն ալ Հանդիպայ:

Հանդիպաբնակ կ'ըսուին անոնք, որ նոյն միջօրեին տակը կը բնակին, մէկը դէպ 'ի հիւսիս՝ մէկալը հարաւ, ու հասարակածէն նոյն հեռւորութիւնը ունին:

Շրջաբնակ են անոնք՝ որ հասարակածին մէկ կողմը նոյն լայնութեան աստիճանին վրայ կը բնակին:

Հակոտնեայ կ'ըսուին անոնք՝ որ մի եւ նոյն լայնութեան աստիճանին տակը կը բնակին մէկը հիւսիսային դին՝ մէկալը հարաւային. բայց անանկ որ նոյն երկայնութեան աստիճանին մէկը մէկ կողմը իյնայ, մէկալը անոր ներհակ կողմը:

## ԳՈՒՆՏԸ ԳՈՐԾԱԾԵԼՈՒՆԻՆԿԵՐՊԸ

Գունտը շիտկել կ'ըսուի մէկ գունտին դիրքը տեղիմը կամ քաղաքի մը հորիզոնին յարմարընելը:



Գուռնտին վրայ տեղի մը լայնութիւնն ու երկայնութիւնը գտնելու համար պէտք է ան քաղաքը միջօրէական շրջանակին տակը բերել, ու նայելու է թէ նոյն միջօրէականին վրայ ի՞նչ թիւ գրած է. ան թիւը քաղաքին լայնութեան աստիճանն է: Ետքը նոյն շիտակութեամբ հասարակածին վրայ ի՞նչ թիւ որ գրած կայ՝ անիկայ ալ երկայնութեան աստիճանն է: Չոր օրինակ թէ որ Կոստանդնուպօլիս քաղաքին լայնութիւնը ըսածիս պէս փնտռեմ՝ կը գտնեմ 41° աստիճան, երկայնութիւնն ալ 26° աստիճան, 38' մաս:

Քաղաքի մը լայնութեանը դիրքով գուռնտը շիտակելու համար՝ առաջ պէտք է ան քաղաքը միջօրէականին տակը տանիլ, որ լայնութեան աստիճանը իմացուի. եւ բեւեալ լայնութեան աստիճանին չափովը հորիզոնէն վեր վերցընելու է:

Թէ որ ուղինը իմանալ թէ այսչափ լայնութեան աստիճանները քանի՜ մղոն կ'ընեն, առաջ աս գիտնալու է որ լայնութեան մէկ աստիճանը 60 մղոն է. ուստի ան քաղաքին աստիճաններն ալ վաթսուռնով բազմապատկելու է, որ քանի մղոն ըլլալը իմացուի: Օրինակի համար դնենք թէ Չմիւռնիոյ լայնութեան աստիճանն է 38° . 25'. աս լայնութեան աստիճանները 60ով բազմապատկելու որ ըլլամ 2,280 մղոն կ'ընէ. 25 մասին համար ալ աւելցընեմ՝ քսանը-հինգ մղոն, կ'ըլլայ 2305. որ ըսել է թէ Չմիւռնիան հասարակածէն 2,305 մղոն հեռու է: Ասանկ կ'ընեմ մէկալ ամէն ուղած քաղաքներս ալ:

Լայնութեան աստիճաններով կ'իմացուի նաեւ թէ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է հիւսիսէն դէպ'ի հարաւ, կամ հարաւէն դէպ'ի հիւսիս:

Երկայնութեան աստիճաններով կ'իմացուի թէ մէկ քաղաք մը մէկալ քաղաքէն որչափ հեռու է արեւելքէն դէպ'ի արեւմուտք: Չոր օրինակ թէ որ ուղեմ՝ Փարիզին ու Փէքինին իրարմէ ունեցած հեռաւորութիւնը իմանալ, կը նայիմ՝ թէ Փարիզին ու Փէքինին շիտակութեամբ հասարակածին վրայ ի՞նչ աստիճան գրած է. անով կ'իմանամ թէ աս երկու քաղաքները իրարմէ այսչափ աստիճան հեռու են:

Երկայնութեան աստիճանները մղոն ընելու համար՝ բարձրութեան քառորդը ուղած լայնութեան աստիճանին վրայ հաստատելու է՝ հասարակածին զուգահեռական. ետքը նայելու է թէ ան երկու տեղին երկայնութեան աստիճանները բարձրութեան քառորդին որ աստի-

Ճաններուն վրայ կ'իյնան . առ աստիճանները թէ որ 60ով բազմապատկուին , ելածը այնչափ աշխարհագրական միոն կ'ըլլայ :

Թէ որ հեռաւորութիւննին փնտռած տեղերուս երկայնութիւնն ու լայնութիւնը իրարմէ տարբեր ըլլան , անոնց հեռաւորութեան չափը պէտք է կարկինով առնել , ու կարկինին ոտքերը հասարակածին վրայ դնելով՝ նայելու է թէ քանի՛ աստիճան կայ մէջտեղը . ետքը աստիճանները 60ով բազմապատկելով միոն թիւնելու է : Գնենք թէ Զմիւռնիան Կոստանդնուպօլիսէն  $3^{\circ}$  .  $6'$  հեռու է . թէ որ  $3$  աստիճանը 60ով բազմապատկեմ , 180 աշխարհագրական միոն կ'ընէ՛ .  $6$  վայրկեանին համար ալ՝ վեց միոն աւելցընելու որ ըլլամ՝ 186 կ'ընէ . որ ըսել է թէ Կոստանդնուպօլիս 186 միոն հեռու է Զմիւռնիայէն :

Տեղի մը շրջաբնակները գտնելու համար պէտք է նոյն տեղը միջօրէական շրջանակին տակը բերել , ու գունար ամբողջ դարձընել . ո՛ր տեղերն որ ան լայնութեան աստիճանին ասակէն կ'անցնին՝ անոնք են շրջաբնակները : Ինչպէս՝ Կոստանդնուպօլսոյ շրջաբնակներն են Տրապիզոն , Փորթոյ , եւ սերիշ մանր մունր քաղաքներ ու գեղեր :

Տեղի մը հակաբնակները գտնելու համար , պէտք է ան տեղին լայնութիւնը առնել , ու գունար հաստատ բռնած՝ նոյնչափ աստիճան ալ համընելու է հասարակածին մէկալ դին : Ինչպէս՝ Պելկրատ քաղքին հակաբնակ է Գլուխ Բարեյուտոյ :

Հակաբնակներուն ալ հակադրեալ շրջաբնակները իրարու հակոտնեայ կ'ըլլան :

Որոշեալ օր մը արեւը զողիակոսին որ աստիճանին վրայ ըլլալը իմանալու համար , պէտք է նախ ան օրը հորիզոնին վրայ գտնել . առ օրը ո՛ր կենդանակերպին ո՛ր աստիճանին դիմացն որ իյնայ , ան կենդանակերպին նոյն աստիճանը փնտռելու է ծիր խաւարմանի վրան ալ : Ծիր խաւարմանին վրայ գտնուած աստիճանը ուղած օրուան արեւուն եղած տեղն է . զոր օրինակ Օգոստոսի 18ը Ասիւծ կենդանակերպին  $25^{\circ}$  .  $20'$  աստիճանին կը պատասխանէ . առ է Օգոստոսի 18ին արեւուն եղած տեղը :

Տարուան ամէն մէկ օրը ուրիշ քաղաքին մէջ արեւը քանիին ելլելը կամ մտնելը իմանալ ուզողը՝ թէ որ իր քաղքին մէջ արեւուն ելած ու մտած ատենը դիտէ , պէտք է նայի թէ փնտռած քաղաքը որչափ դէպ'ի արեւելք կամ արեւմուտք է . քանի աստի-

ճանի տարբերութիւն որ գտնէ՝ ան աստիճանները չորս վայրկեանով բաղմապատկէ . ելածուր կ'իմանայ թէ որչափ առաջ որ կը ծագի արեւը եթէ ան քաղաքը դէպ'ի արեւելք է, նոյնչափ վայրկեան ետքը կը ծագի արեւը եթէ ան քաղաքը նոյնչափ դէպ'ի արեւմուտք ըլլայ : Օրինակի համար հաս տեղս քանի մը քաղաքներու կոստանդնուպօլիսէն դէպ'ի արեւմուտք ունեցած հեռաւորութիւնը, ու արեւուն ծագած ատենը դնենք .

Ղենեօիկ	14°	820 մղոն	0 .	56'
Ղեննա	11°	660 մղոն	0 .	44'
Հռոմ	12° . 30'	750 մղոն	0 .	55'
Փարիզ	20° . 20'	1220 մղոն	1 ժամ	25'
Լոնտոն	22° . 18'	1338 մղոն	1 ժամ	46'

Թէ որ մէկը առանց իր քաղաքինը գիտնալու՝ կ'ուզէ իմանալ թէ ուրիշ քաղաքի մը մէջ արեւը որ ատեն կ'ելլէ, առաջ ան ուզած քաղաքին լայնութիւնը պէտք է որ գտնէ, ու քաղաքին յարմար բեւեռը բարձրացընէ : Ետքը պէտք է գտնէ թէ ան օրը արեւը ծիր խաւարմանին որ աստիճանին վրան է . ան գտած աստիճանը միջօրէական շրջանակին տակը բերելու է, ու ժամական շրջանակին լեզուակը կէսօրուան վրայ դնելէն ետքը՝ գունտը դարձնելու է դէպ'ի արեւելք, ինչուան որ ծիր խաւարմանին վրայ գտնուած աստիճանը հորիզոնին հասնի . ան ատեն ժամացոյցին ցուցակը կ'իմացընէ՝ թէ ուզած օրը ժամը քանիին արեւը կը ծագի ան քաղաքը : Օրինակի համար վերի դրած քաղաքներուն արեւուն ելած ատենը գտիր .

Յունուար	6 .	Ճ	16° .	0'
Մարտ	26 .	Կ	6° .	10'
Ապրիլ	15 .	Ո	25° .	20'
Օգոստոս	15 .	Ձ	22° .	23'
Նոյեմբեր	8 .	Պ	16° .	0'

Թէ որ լ'մէկը ուզէ աս ալ իմանալ թէ արեւը քանիին կը մըտնէ, վերի գործողութիւնն ընելու է . միայն թէ գունտը փոխանակ դէպ'ի արեւելք դարձընելու՝ արեւմուտք դարձընելու է, որ ծիր

խաւարմանին վրայ գտնուած աստիճանը արեւմտեան հորիզոնին վերայ իջնայ . ան ատեն ցուցակն ալ արեւուն քանիին մտնելը կը ցուցնէ : Զոր օրինակ՝ թէ որ ուղեմ՝ իմանալ թէ Յունիսի 10ին Աղքասնդրիոյ մէջ արեւը քանիին կ'ելլէ ու կը մտնէ, վերի գործադուծեամբ կը գտնեմ որ ժամը 4 . 30'ին կը ծագի, 7 . 30' անցած կը մտնէ :

Երբոր քաղաք մը կէսօր է, ինչպէս Կոստանդնուպօլիս, ուրիշ քաղաք մը՝ զոր օրինակ Վենետիկ, ժամը քանի ըլլալը ասանկ կ'իմացուի : Կոստանդնուպօլիսը միջօրեական շրջանակին տակը բերելու է . ժամացոյցին լեզուակն ալ կէսօրուան վրայ դնելով՝ գունտը դարձնելու է դէպ'ի արեւելք ինչուան որ Վենետիկ քաղաքը նոյն միջօրեակն տակն իյնայ, ան ատեն ժամացոյցը կը ցուցնէ թէ Վենետիկի ժամը քանի է :

Թէ որ ուղէ մէկը իմանալ թէ Փարիզու մէջ ժամը 6 եղած ատենը Փեդրպուրկի մէջ ժամը քանի կ'ըլլայ, պէտք է Փարիզը միջօրեակն տակը բերել . ու բեւեռը լայնութեան յարմար բարձրացնելէն ետքը, ժամացոյցին ցուցակը 6ին վրայ բերելու է, եւ գունտը դարձնելու է՝ ինչուան որ Փեդրպուրկ քաղաքը միջօրեակն տակն իյնայ . ան ատեն՝ ժամացոյցը որ ժամուն վրան որ ըլլայ, Փեդրպուրկին ժամն ալ ան է . այսինքն՝ 7 . 25' : Նոյնպէս Կոստանդնուպօլիսոյ մէջ ժամը 10 եղած ատենը Փարիզու ժամն է 8 . 25' :

Ամէն օր արեւը մէկ տեղի մը հորիզոնին որ կէտէն ելելը իմանալու համար՝ պէտք է բեւեռը ան տեղին լայնութեան աստիճանին չափովը բարձրացնել, ու գտնել թէ նոյն օրը արեւը ծիր խաւարմանին որ աստիճանին վրայ է : Ծիր խաւարմանին աս աստիճանը տանելու է ինչուան արեւելեան ու արեւմտեան հորիզոնին վրայ, եւ որ կէտերով որ հորիզոնին դպչի՝ ան կէտերն են նոյն օրուան մէջ արեւուն ելլելու ու մտնելու կէտերը :

Տեղւոյ մը ամենէն երկայն օրը գտնելու համար՝ պէտք է բեւեռը բարձրացնել, ու թէ որ ան տեղը հիւսիսային կիսագունանին վրայ է՝ խեցգետինին առաջին աստիճանը միջօրեակն տակը ձգել . ժամացոյցը կէսօրուան վրայ հաստատելէն ետքը՝ գունտը դարձնելու

է, որ խեցդետնի առաջին աստիճանը արեւելեան ու արեւմտեան հորիզոնին հասնի, եւ նայելու է թէ նոյն օրը քանի ժամ երկայնութիւն ունի. թէ որ 16 ժամ է, նայելու է որ 12էն ինչուան 16 երթալու քանի կէս ժամ կայ, եւ որչափ կէս ժամ որ գտնուի այնչափ է կլիման. ինչպէս 12էն ինչուան 16, 8 կէս ժամ կայ, ուրեմն որ տեղւոյն որ երկայն օրը 16 ժամ է՝ ութերորդ կլիմային վրան է: Նոյն գործողութիւնը պէտք է ընել՝ թէ որ ուզած տեղդ հարաւային կիսագունտին վրայ ըլլայ, միայն թէ ան ատեն այժեղջիւրին առաջին աստիճանով ընելու է գործողութիւնը:

Թէ որ քաղաքի մը ամենէն կարճ գիշերը ուղեմ գտնել, վերի գործողութիւնը ընելէս ետքը քանի ժամ որ մնայ՝ ան է կարճ գիշերը:

Թէ որ մէկը քաղաքի մը ամենէն կարճ օրը ուղէ գիտնալ, ան քաղաքը թէ որ հիւսիսային կիսագունտին վրայ է՝ այժեղջիւրին առաջին աստիճանը միջօրէին տակը բերելու է, ու ժամացոյցը կէսօրուան վրայ հաստատելէն ետքը՝ այժեղջիւրին առաջին աստիճանը արեւելեան հորիզոնէն ինչուան արեւմտեան հորիզոնը դարձնելու է. ժամացոյցը քանի ժամ որ ցուցնէ՝ ան է ամենէն կարճ օրը, մընացածն ալ ամենէն երկայն գիշերն է:

Հարաւային կիսագունտին վրայ եղած քաղաքին ալ կարճ օրը ու երկայն գիշերը գտնելու համար վերի գործողութիւնը խեցդետնի առաջին աստիճանովք ընելու է:

Թէ որ մէկը իր տեղւոյն ամիսը՝ օրը՝ ժամը՝ գիտէ, ու կ'ուզէ իմանալ թէ նոյն ատեն արեւը որ տեղերուն միջօրէականին վրայ է, բեւեռը իր տեղւոյն լայնութեանը յարմար շիտկելէն ետքը՝ մեծ միջօրէականին տակը բերելու է, եւ ժամական շրջանակին ցուցակը կեցած տեղւոյն ժամուն վրայ դարձնելով՝ գունտը պտրտցնելու է ինչուան որ ցուցակը կէսօրուան վրայ գայ, որ քաղաքներն որ վերի կիսագունտին վրայ միջօրէին տակը կ'իյնան՝ անոնց կէսօր է:

Թէ որ մէկը ուղէ այրեցած գօտիին տակը յեղած տեղուանքէն մէկուն ան օրը գտնել՝ որ օրն որ արեւը հոն ուղղահայեաց կ'ըլլայ, պէտք է ան տեղը մեծ միջօրէական շրջանակին տակը բերէ, ու ա-

նոր վրայ եղած լայնութեան աստիճանը նշանէ . ետքը գունտը դարձնէ ու դիտէ թէ նոյն լայնութեան աստիճանին վրայէն անցնող ծիր խաւարմանին երկու կէտերը որո՞նք են . ետքը նայի թէ ծիր խաւարմանին ան աստիճանը հորիզոնին վրայ ո՞ր ամսուն՝ ո՞ր օրուան կը պատասխանէ . գտնուած օրն է ան օրը՝ որ արեւը ան տեղւոյն ուղղահայեաց կ'ըլլայ : Ինչպէս՝ Մատրաս քաղաքին լայնութիւնն է  $13^{\circ} . 18'$  . աս աստիճանին վրայէն Առիւծ կենդանակերպին  $25^{\circ}$  աստիճանը կ'անցնի .  $25^{\circ}$  աստիճանն ալ հորիզոնին վրայ փնտուելով կը գտնեմ որ Օգոստոսի 18ին կը պատասխանէ . աս օրն է որ արեւը Մատրաս քաղաքին վրայէն ուղղահայեաց կ'անցնի :

Տեղւոյ մը լայնութիւնը եւ ամսուն օրը դիտնալէն ետքը, թէ որ մէկն ուզէ իմանալ թէ արշալոյսն ու երեկոյեան լոյսը ո՞րչափ կը դիմանայ, լայնութեան յարմար գունտը շիտկէլէն ետքը՝ ծիր խաւարմանին վրայ արեւուն տեղը գտնէ, ու հորիզոնին վրայ բերէ, ժամացոյցը շիտկէլէն ետքը, գունտը այնչափ պէտք է դարձնէ որ արեւուն տեղը հորիզոնէն  $18^{\circ}$  վար իջնայ . ժամացոյցին ցուցակը քանի ժամ՝ որ ցուցնէ՝ այնչափ է արշալոյսին միջոցը : Երեկոյեան լոյսին համար նոյն գործողութիւնն ընելու է արեւմտեան հորիզոնին վրայ : Չոր օրինակ՝ Յուլիսի 20ին Աննեաիկ քաղաքին արշալոյսը 1 . 35' կը դիմանայ :

Որոշ օր մը արշալոյսը ժամը քանիին սկսիլը իմանալու համար՝ պէտք է ծիր խաւարմանին վրայ նոյն օրուան արեւուն տեղը գրաննէ . ետքը տեղւոյն լայնութեանը յարմար գունտը շիտկէլ . ժամացոյցին ցուցակն ալ կէսօրուան վրայ հաստատելով՝ գունտը դարձնելու է, ինչուան որ ծիր խաւարմանին վրայ գտնուած աստիճանը արեւելեան հորիզոնէն  $18^{\circ}$  վար իջնայ . ան ատեն ժամացոյցը կ'իմացնէ թէ ժամը քանիին կը սկսի արշալոյսը : Չոր օրինակ՝ Յուլիսի 20ին Աննեաիկ քաղաքին արշալոյսը 2 . 45' անցած կը սկսի :





en



0002287

2013

